

Ե. Հ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ
ՄՇԱԿՈՒՆԱՅԻՆ
ԶԱՐԹՈՒՔԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Е. О. НАДЖАРЯН

**АРАБСКОЕ
НАЦИОНАЛЬНО-КУЛЬТУРНОЕ ПРОБУЖДЕНИЕ**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ե. Ն. ՆԱՋԱՐՅԱՆ

**ԱՐԱՐԵՎԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԹՈՒՆԲԸ**

2659



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

Տպագրվում է ՀՍՄՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագրի՝
պատմական գիտությունների ղեկավար Ե. Հ. Հովհաննիսյան

Քերթը Հրատարակության ևն երաշխավորելի գրախոսների՝
պատմական գիտությունների բնկանտու Ռ. Ա. Սուքրատյանը,
բանասիրական գիտությունների բնկանտու Գ. Ա. Հովհաննիսյանը

Նաչարյան Ե. Հ.

Կ 350 Արարական ազգային-մշակութային զարթոնքը՝ [Պատ.
խմբ.՝ Ե. Հ. Հովհաննիսյան]։ ՀՍՄՀ ԳԱ. Արևելագիտ. ին-ստ.—
Եր.։ ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1988.—499 էջ.

Աշխատությունը նվիրված է արարական եղբրների նոր պատմության
հանգույցային հարցերից մեկին՝ ազգային-մշակութային Ջարթոնքին, որի
տաաճելու ուշադրով բազադրամաաը Լուսավորական շարժումն է՝ «Նահգաա»,
որ պայմանավորված էր կապիտալիստական հարարերությունների և բուր-
ժուական նորերի Արարական արեելը ներթափանցմամբ, առաջին հերթին
բնգրգրել է պատմաաշխարհագրական Սիրիան և Եգիպտոսը։ Ժամանակա-
գրորեն աշխատությունն ընդգրկում է XVIII դարավերինց մինչև XIX դարի
70-ական թվականների վերջերը, երբ սկսվեց արարական ժողովուրդների
ազգային-բազաբական զարթոնքը։

Հասցեացրվում է պատմաբաններին, Մերձավոր և Միջին Արևելքի ար-
կերների պատմությամբ հետաբերբողներին։

0506000000
Կ 703(02)—88 32—112

ԳՄԳ-63. 3(0) 53/6

© Հայկական ՍՄՀ ԳԱ Բնասաակնություն, 1988

Ն Ե Բ Ա Մ Ո Ւ Թ 3 Ո Ւ Ն

Արարական արեելքի երկրների նոր պատմության առանցքային հար-
ցերից մեկը՝ Նահգայի՝ ազգային-մշակութային Ջարթոնքի պրոբլեմն է,
որի լուսարանմանն է նվիրված սույն աշխատությունը։

«Նահգա» արարերնում բառացի՝ նշանակում է «վերելք, վերածը-
նունդ», ծագելով «նահգաա» բառից, որ թարգմանվում է նախ՝ «բնդոսա
կելել, կանգնել, բարձրանալ», ապա նաև՝ «վերածնվել, զարգանալ»։

Արթմ դժվար է պարզել, թե արար մտավորականներից առաջինն ո՞վ
է այդ բարձր շրջանաաության մեջ գրել, այն էլ՝ «Նշարտիվ Թ»-ը։ բովանդակու-
թյամբ, Համենայն զեպո, ինչպես որ եվրոպական Լուսավորականությունը
զոյսթյուն սննր զեա մինչև Վոլտերը, որ առաջինն օգտագործեց «Լուսա-
վորականություն» տերմինը, այնպես էլ արարական Նահգան աշխույժ
երեույթ էր արղևն 1859 թ., երբ շարժման պարագլուխներից Բուրբուս պր-
Բուսթանին հայտարարեց. «Ցանկանում եմ քեզ զարթնեցնել քո թժրբիցը,
իմ ժողովուրդը» (26, 38), առավել ևս 1870 թ., երբ երեելի նահգայական
Սելիմ ալ-Բուսթանին իր առաջնորդներից մեկը խորագրեց «Արարական
Նահգան» (275, 152)։

Սովետական ավաղ սերնդի արարագետներ Ի. Ցու. Կրաչկոփսկին և
Ա. Ե. Կրիմսկին անվերապահորեն բարձր գնահատական են տվել Նահ-
գային, այն զիտեղ որպես «Վերածնունդ» (Возрождение), բաա որում
Կրիմսկին՝ կյանքի բուրբ բնագավառների, մինչ Կրաչկոփսկին հիմնական-
որմ գրականությունից վերարերմամբ (114, հտ. 3, 26—27 և հտ. 5, 176—
177; 116, 144, և 245)։

Երեելով հատկապես այն իրողությունից, որ երեութապես տերմի-
նարանական թվադող այնպիսի մի «անմեղ» բալլ իսկ, ինչպիսին «Նահ-
գաա» ինքնանվան աուսական համապատասխան՝ ավելի հանաի օգտա-
գործվող «Վոլործղենիե» (առավել ևս՝ զուպահեուար երբերմանի հան-
գիտող «Ռրնեաան») բաաով փոխարինումն է, կարող է ևնթաղըն տալ
եվրոպական Ռրնեաանի հետ Նահգայի զուպարման միտում, մեր ա-
բարագետների երկրորդ սերնդի մի շարք ներկայացուցիչներ՝ Ա. Բ. Խա-

իղողվր, Զ. Ի. Ահիւր, Ա. Ա. Գոլիճիճան և ուրիշներ շին վարանել շեշտե-
լու իրենց վերապահոյութունը նրանք արարական աշխարհում արձանա-
գրված պրոցեսներին ինչպես ծավալու ու խորութեամբ, այնպես էլ բովան-
գակութեամբն այս կամ այն աստիճանի սեղմելով, խոսել են մի դեպքում
(«Նահգր» արարական ինքնակատմութեան հակահայտվ ճանգընք որպէս
«Վերեր, վերածնունդ») զեռ վաղ ճանգրվածում պարզապէս «գրական
նորացման շարժման» (116, 5—6), մի այլ դեպքում՝ «Ճշակութեամբն վե-
րելիք» (119, 31), երրորդ դեպքում՝ բովանակման ուղ սկզբող ու միայն
պայմանականորեն լուսավորութեան դարաշրջան» (103, 4) մասին, ըստ
որում Գոլիճիճանի համար Նահգրայի դեպքում իրավամբ «խոսքն առաջին
Հերթին դնում է բաղարական, տնտեսական ու մշակութային տեսակե-
տից արարների անցյալ փառքի ու հզորութեան վերածննդի՝ այդ ժամա-
նակ տարածված գաղափարի և այն գործնականորեն գրելի բերելու բոլոր
փորձերի մասին» (103, 4): Կարճ ասած՝ արարական Նահգա-Որենեսան-
սը, եվրոպական Ռենեսանսի համայնքը լինելով ճանգընք, համաները չէ
բնավ:

Սույն աշխատութեան մէջ մենք «Վերածնունդ» տերմինից նախա-
պատիվ ենք համարում հայկական «Զարթոնք» տերմինը, որն ավելի հա-
պուստ է արտացոլում Նահգրայի բովանգակութեանը և որը բաղաբացի-
ութեան իրավունք է ստացել մեր իրականութեանում տեղի ունեցած և
քնդհանուր գծերով, հատկապէս իր լուսավորական շարժմամբ համանը-
ման երևույթի կապակցութեամբ:

Անհրաժեշտ ենք համարում առաջին Հերթին պարզաբանել, թե
ինչո՞ւ մեր աշխատութեանն իր ընդգրկած արարական երկրամասերով
աշխարհագրականորեն ավելի սակավատարածք է լինելու, քան խորագը-
րով հրահանում է:

Բնականաբար ազգային-մշակութային Զարթոնքի պրոցեսը համա-
արարական երևույթ էր, մի պրոցես, որի ոլորտում ուղ կամ կանոնի ներ-
գրավելու էին արարական բոլոր երկրամասեր անխտիր: Եվ սակայն
այն արարական ամբողջ աշխարհի համար համաժամանակապէս մի պրոցես
չէր կարող լինել ու չէր լինել: Միայն ժամանակակից Սիրիան, Կրեանան
ու Պաղեստինն ընդգրկող պատմաաշխարհագրական Սիրիան և Եգիպ-
տոսն էին, որ XIX դարակազրին համարյա միաժամանակ ոտք դրեցին
տնտեսական, քաղաքական ու մտավոր-մշակութային նոր պրոցեսներին
չեմին և տեսանկիւրեն խզվեցին արարական մյուս երկրամասերից:
«Իրաբը, — գրել է Կրակովսկին — Նահգրայի շարժման, հատկապէս գրա-
կան վերածննդի ոլորտում ընդգրկվեց Եգիպտոսից և Սիրիայից համարյա

մի դար ունը (114, հտ. 3, 101): Ինչ վերաբերում է Արարական թերակազ-
րուն, ապա «մատչելի ամբողջ Նյութից կարելի է կրակակցենել, որ այս-
տեղ... գերիշխում է միջնադարը» (114, հտ. 3, 67 և 87): Պատահական
չէ, որմն, որ մեր ուսումնասիրութեան իբր աարկա Արարական Սիր-
ձավոր արեւելքը որպէս մի ամբողջական սեղմել վերցնելով ճանգընք,
մեր ուշադրութեան առնեցրում մեծավ մասամբ պահելու ենք սիրիա-
կան և եգիպտական վաղ զարթնած երկրամասերը:

Սիրիայի և Եգիպտոսի շրջանակներում էլ մեզ համար ծանրութեան
կենտրոն է մնալու ժամանակակից Կրեանայի տարածքը, զլիսավորարար
Բէյրութ քաղաքը: Եվ ոչ առանց պատճառի:
Արարական ազգային և մտավոր-մշակութային Զարթոնքի ցանկա-
յած երևույթին, առավել ևս լուսավորական շարժմանն անդրադարձած
Հեղինակները կանգնել են երկրորդականի աղջկ. շարժման սկզբնակե-
տում և գլխամասում Եգիպտոս՝ ար, թե Սիրիան տեղագրել:

Սովետական մի շարք արաբագետներ, գերագնահատելով XIX դարի
ստաշին կենին եգիպտական հողատարածքում արձանագրված սոցիալ-
տնտեսական տեղաշարժերի խորությունը, անվազն զրանք գերադրե-
լով պատմաաշխարհագրական Սիրիայի տարածքում արձանագրված
տեղաշարժերին, Նահգրայի սկզբնական բնօրրան Եգիպտոսն են հայտա-
բարել: Ա. Խալիդովի կարծիքով, որինակ, երբ ժամանակներում արաբե-
կան երկրների սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված
պատմամշակութային մի մեծ պրոցեսի շրջանակներում որպէս էապէս
գրական նորացման շարժում, Նահգրան սկզբնավորվել է Եգիպտոսում և
այպ եւրթափանցել Կրեանան, Սիրիա, Պաղեստին ու աստիճանաբար
ընդգրկել մյուս երկրամասերը (116, 5-7): Նահգրան բխցնելով Ֆեոդա-
լական հարաբերութեաների քայքայման սկզբից ու մի բանի երկրամա-
սերում կապիտալիստական տարրերի հաղիվ տեսանելի հաստանալում
և այն ամբողջ «XIX դարի ընթացքում» բնիճանուր ասմամբ «Արարական
արեւելքում» տեղագրող Բերտելսն ու Ի. Կիլբերգը գաղութային ներթա-
փանցման դեմ պայքարին և արարների ազգային ինքնորոշմանը նպա-
տակամղված հասարակական այդ շարժման շրջանակներում բուն իսկ
մտավոր-մշակութային աշխուժացման սկիզբը իրենք ևս բնեռել են
Եգիպտոսի վրա: Նրանք այդ աշխուժացումն աննշել են «Եվրոպական
կապիտալի նվաճողական պլանների դեմ ծավալված պայքարի հետ»,
վերջինս ակնհերտրեն և անշուշտ որ անհրաժեշտ գերադրելով սիրիացի-
կաների կողմից «առաջին Հերթին» հայտարարված «Քրուսացական Ֆեոդալիզ-
մի դատման լծի դեմ» պայքարին (114, հտ. 3, 3—4):

Մեր արարաբանների, հատկապես արարական մասավոր-մշակութային պատմության հարցերով առավել խորը դրազված մասնագետների շրջանում գերակշռողը հակառակ տեսակետն է կրաչկովսկին, ում կարծիքով նահգայի շարժման գլխամասում կանգնած մեծավ մասամբ բրիտանյան գործիչները «սկզբում գլխավոր առաջադրանքը դարձրեցին գրական մակարդակի բարձրացումը և մասնակազմի գիտության ժողովրդականացումը», այլ խոսքով նահգայի հիմնական ոլորտը գրականությունը եղավ (114, հտ. 3, 26, 67 և 92), զբվարին երկրներում րանք է կանգնել, Այնուամենայնիվ նա գտել է, որ մինչև XIX դարի 80—90-ական թթ. ձգվող «լուսավորական դարաշրջանում» «մեծ աշխուժացումը բնորոշվեց «հիմնականում կրթականը որպես կենտրոն Բելյուսթով» (114, հտ. 3, 92), Բեկաեա արել է և մի վերապահություն. նդիպատան ու Միրիան շեղ «հանգրվանում «աշխատեցին առանց սերտ շփման, գիտական ասպարեզում ավելի շատ ստեղծեց նդիպատը, իսկ ինվարտանական և գրական ասպարեզում՝ Միրիան» (114, հտ. 3, 70)։ Կրիմսկին, որ նահգան առաջին հերթին ու հիմնականում գիտել է որպես զեպի գրական վերածնություն առաջնորդող շարժում (116, 245), խոսելով Մ. Ալիի օրոք նդիպատի, որպես երկրամասի, վերածննդի ու եզրիպատի «վերափոխել գրողների» մասին, խոսափել է «գրական վերածնունդ» դարձվածքից և վերջինս անվարան անշակցել Միրիայի հետ, շեշտելով. «XIX դարի 30-ական թթ. արարական նոր գրականության վերածնունդը Բելյուսթ կենտրոնով» (116, 144, 162 և 245)։ Գուլինիայի կարծիքով, նդիպատան ու Միրիան թեպետ «հատասարապես մասնակելի են» Լուսավորական զարգափարախոսության ձևավորման, սակայն ներքին դասակարգային հարաբերությունների սրումից, պատասարական շարժումների աճից և հոգևոր կայնություն արձանագրված դգալի՝ տեղաշարժերից բխած նահգայի՝ «բարդ ու երկար պրոցեսում սկզբում առջինը բայել են սիրիական լուսավորչները» (103, 4—5)։ Ավելի կտրուկ է կերել. «Լուսավորականության բուն իսկ հայրենիքը Միրիան, ավելի ճիշտը կրթանսք եղավ» (119, 35)։

Միրիական առաջնայնությունի տեսակետը դերակշռող է ոչ միայն սովետական արարաբանների շրջանում Արեմտյան արաբագետների և արաբ-բրիտանյա հեղինակների, անկասկած առաջինների որոշակի ազդեցությունը՝ նաև արտասահմանում ուսումնառու եղած արաբ-մահաձեղական մի շարք ուսումնասիրողների համար ևն Զարթների շարժման գործում նախաձեռնարկն ու վճարող սերակառար սիրիական բրիտանյա համայնքները, հատկապես Բելյուսթի բրիտանյա շրջաններն են եղել։ Ոչ թե նդիպատում, ոչ էլ մահաձեղական միջավայրում է, որ նահգան

սկեցին»,—գրել է արաբ մի հեղինակ ու մատը գրել «Միրիայի ու կրթանանի բրիտանյանների», հատկապես «իրանանցի բրիտանյանների» վրա (130, 219)։ Նթն, սակայն, արտասահմանյան հետազոտությունների մեծ մասում կրեռագրականական պատկանելիության միակողմանի մեկնարանությունն է օգտագործվել որպես երևույթը բացատրել փորձելու բանալի, ապա սովետական արարաբանները, իրավոր մեհեմելով նման հայացքը և հանգամանորեն կանց առնելով սոցիալ-տնտեսական ազդեկների ներգործության փաստը վրա, դերատարաբը իրենց հերթին չեն կարևորել այլ, պատմաաշխարհագրական, վարչարարական, ազգային կամ համայնքային և մյուս ազդեցիկները, այլ թվում անհատ լուսավորչների առանձին խմբակների զերը օրինկտիվորեն հասունացած տեղաշարժերն արաբացնելու գործում։ Իսկ դա պատճառ է դարձել, որ Բելյուսթը լրիվ տառան իր արժանին՝ որպես 1840-ական թթ. վերջերից շուրջ երեք տասնամյակ արարական ազգային-մշակութային Զարթների և հատկապես Լուսավորականության ոչ թե սոսկ առաջին ու գլխավոր, այլ համարյա միակ ու հարատևորեն հոգր շեմակայան, որից զգալիորեն ներազդվելու էին մանավանդ Ալեքանդրիան ու Կահիրեն, ի վերջո նաև Գամակոսը։

Սովետական արարաբագիտությունը, ներառյալ այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են Վ. Բ. Լուցկու «Արաբական երկրները նոր պատմությունը» և Կրիմսկու «Արաբական նոր գրականության պատմությունը», ձևակազմ է մնացել արաբների նոր պատմությունը համասարաբական, թեկուզ միայն եզրիպատ-սիրիական աստիճանաշարի պարբերացման ենթարկելու ամեն մի փորձից։ Բացառություն է կազմում Ալիի «Միրիայի և նդիպատում հասարակական-քաղաքական հիմնական հոսանքների գարգացումը» մենագրությունը, որում նահգան մասնատվել է հետևյալ չորս հանգրվանների.

1. XIX դարի արշալույսից, երբ սկզբնավորվեց նահգան, մինչև Բելյուսթում 1847 թ. լուսավորական առաջին րնկերության հիմնադրումը. արաբ ժողովուրդին այս հանգրվանում առաջին անգամ լինելով մանկության եմբողական մշակութային հետ մեկտեղի մտորել կրթողական ինտոթուտաների ու կենսանորմների մասին։ Կազմավորվեց եզրիպատական պետականությունը։

2. 1847 թվից մինչև Արբուլ Զամրիի բռնատիրության սկիզբը. այս հանգրվանում Միրիայում ծագեց Լուսավորական շարժումը։

3. 1870-ական թթ. նդիպատում առաջին թերթների, հատկապես 1878 թ. առաջին լուսավորական րնկերության հիմնադրումից մինչև

1900 թ. եղիպտական ազգային-ազատագրական պայքարի նոր հանգրվանում նշանավորող «այ-Լիվա» թերթի հրատարակումը. այս հանգրվանում Էնվիորվեցին բուրժուական գաղափարախոսությունն ու ազգային ինքնադրամայությունը, արաբական ժամանակակից փիլիսոփայությունն ու սոցիոլոգիան, արաբավեցին Պանիսլավականությունն ու մասնեղական «Են-Ֆորմացիան» («Մոդերնիզմը»), առաջացան տեղական (առանձնա-հատուկ) և արաբական ազգայնականություն (Պանարաբականության) գաղափարները: Այս շրջանակներում 1870—1890-ական թթ. կարելի է դիտել որպես արաբական Լուսավորականության եղիպտական փուլ:

4. XX դարի առաջին քսանամյակը. այս հանգրվանում արագ զարգացում ապրեց արաբ ժողովուրդների ազգային ինքնագիտացությունը, մշակվեցին բուրժուական և մասամբ մանրբուրժուական քաղաքական, փիլիսոփայական և սոցիոլոգիական հայացքները, Արաբական արևելքում հայանվեցին սոցիալիստական գաղափարները (119, 3-4, և 33):

Ողջունիի համարելով Ալեիի իր սեանաիի մեջ առաջինը եղող այս փորձը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ այն բացառապես հասարակական-քաղաքական մտքի զարգացման իրողությունների հիմամբ կառուցված լինելով, լրվել ու ճշգրտապես չի արտացոլում Նահդայի բուրժուականությունը: Բավարարվելով մատնանշելով թեկուզ մի-այն այն փաստը, որ Երկրորդ հանգրվանը գտարյուն սփրիական Լուսավորական և ուրեմն Երրորդ հանգրվանն էլ զտարյուն եղիպտական Լուսավորական հայտարարելը չի հենվում Նահդայի պատմության իրողությունների վրա: Եվ իրար հետևելով է, որ 1847 թ. Նահդայական առաջին կազմակերպություն՝ Սփրիական գիտական ասոցիան ընկերության Բնյութում հիմնադրվելուց մի տարի անց, Կահիրեում իշխանության գլուխ անցած հետագեմ Աբբաս-Հիմի I-ը յճացնելու էր Մ. Ալիի բարենորոգությունները շրջանակներում սկսված եղիպտական մտավոր-մշակութային աշխուժացման ամբողջ շարժումը, նույնպես հիշատել է, նաև, որ 1854 թ. Մոսամ-մեղ Սահդի զուճ բարձրանալու հետ Նահդան վերաշխուժանալու էր և 1863 թվից, Իսմայիլի իշխանության շրջանում, վերածելու էր «Երկրորդ վերածնունդ»: Կա և մի այլ կարևոր իրողություն, 1868 թ. Սփրիական գիտական երկրորդ ընկերության, ավելի ակնհեղություն՝ 1873—1874 թթ. Ա. Խս-հակի ու Կրա համախոհների «Բրականություն ծաղիկը» ընկերության և «այ-Բակադդում» թերթի ասպարեղ իլնելուց հետո իսկական որակով հափեցած լիբանանյան Լուսավորական շարժումը 1878 թ. Աբգուլ Համիդի զուլումի բաղաբականության սկսելուն հետ իրոք էլ զրկվեց իր բնօրրան Բնյութում հարստեկու և վերելք ասպրելու հարավորությունից:

Հետևաբար և իբրանական Լուսավորիչները, առանց երկմտելու, զանգվածայնորեն տեղափոխվեցին Նեղոսի ափերը: Եվ սակայն Կահիրեում թե Ալբասաներիայում մինչև այդ արդեն կազմավորվել էին լիբանանյան Նահդայականների կղզյակներ, որոնք քիչ էին նպաստել տեղի մտավոր-մշակութային կյանքի, հատկապես թատրոնի և հրատարակատեսության առաջընթացին: Աբգուլ Համիդյան զուլումից հետո բանակով թե որակով սովորացած, այդ կղզյակները համարյա մենաշնորհի իրավունքով իրենց ձեռք էր բերեցին Նահդայի գործը: Հետևաբար, Եղիպտոսում լիբանանյան Նահդայականների գործունեությունը, որ համարաբարական Նահդայի բաղաբանաբար լինելով հանդերձ, չէր դադարում իր «սփրիական» առանձնահատուկ երանգները տեսանելիորեն ընդգծելուց: չի կարելի անվերապահորեն ներկայացնել որպես Լուսավորականության «եղիպտական փուլ»:

Այս և այլ իրողություններից ելնելով էլ մենք, մեր մյուս արաբագետների նման, նախընտրում ենք ձևուպատմաբան կողմից Եղիպտա-սփրիական աստիճանաշարի անվերապահորեն կտրուկ պարբերացումից: Ավելին, Նահդան մենք քստ էլուծյան ենթարձակում ենք հասարակական տարանջատ երկու՝ ազգային-մշակութային Զարթոնքի և ազգային-քաղաքական Զարթոնքի փուլերի: Առաջին՝ ազգային-մշակութային Զարթոնքի փուլը, որ սույն ուսումնասիրության առարկան է և որ որպես սկզբնական կառուցված և ստանալով զեպիլ Եղիպտոս (ու դեպի Սփրիա անհատը) ֆյունդամենտալ բնութագրություն գինարշավը, ենթարձակում ենք հետևյալ հանգրվաններին:

1. Ազգային-մշակութային Զարթոնքի նախադրյալների կուտակման ու հաստեացման հանգրվան:

2. Նահդայական շարժման վերընթացի հանգրվան:

3. Լուսավորական շարժման վերընթացի հանգրվան:

Հարկ է նշել, որ արևելագիտական զրականության մեջ ցարդ գոյություն չունի որևէ աշխատություն, որն ընդգրկի Նահդայի ամբողջական պատմությունը: Սա առաջին փորձն է արաբական ազգային-մշակութային Զարթոնքի պորբյուրը քննարկելու բազմակողմանիորեն, հաշվի առնելով երևույթի սոցիալ-տնտեսական նախադրյալները և հասարակական-քաղաքական ու կուլտուր-լուսավորական ասպեկտները: Այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում այստեղ թեկուզ թուցիկ ընդգծել սովետական թե արտասովետական հեղինակների համապատասխան ուսումնասիրությունների պորբյուրին անզրադարձող հատվածների մի քանի բնօրոշ կողմերը:

«Նահգան» տերմինով արար Հետազոտողներն առ այսօր ընդհանուր առմամբ մատնանշում են արարական ժողովուրդների կյանքում XIX դարսահարից արձանագրվել սկսած մշակութային զարթոնքի և առաջընթացի պրոցեսը: Եվ սակայն էյնելով իրենց գիտական աշխարհահայացքի սահմանափակությունից, հաճախ նաև տարբ տարյով հարատևող միեջբերությունական մտայինականների, նրանք Նահգան պատկերացնում են որպես Նամաշխարհային պատմական իրողություններից կտրված և սոցիալ-տնտեսական օրինաչափությունների Հետ անանշակից մի երևույթ: Սակավազուց բացառությունները, մերօրյա առաջավոր մեթոդաբանությունով թրված արար մի քանի Հետազոտողներ, 1960-ական թվականներից սկսած Նահգանի հարցերի նկատմամբ ցուցաբերում են նոր՝ գիտական մոտեցում, սակայն նրանք էլ առ այսօր ընթերցողի սեղանին չեն դրել ամբողջական և ընդհանրացնող մենագրություններ: Ինչ վերաբերում է արևմտյան Հետազոտողներին, ապա նրանք, սկզբնաղբյուրներին մատչելու հարցում իրենց առավելությունը որստերելով փաստական նյութի կույտերով, տեսական եզրահանգումներում համարյա որպես կանոն դրսևորում են կամ պարզունակություն, կամ էլ կանխակալություն, երկու դեպքում էլ Նահգան պարզապես համարելով էմբոյական ազդեցության ու ներդրման պատուը:

Այս պայմաններում դժվար է գերազանհատել սովետական արարագիտության ուղադրով ներդրումը՝ արարական ազգային-մշակութային Զարթոնքի և Հատկապես Լուսավորականության Հետ առնչվող տեսական հարցերի խոր գիտականությամբ մշակման ասպարեզում: Ընդու է, որ հարաբերաբար ուշ, 1970-ական թթ. միայն, այն էլ արարական ազգային-ազատարարական շարժման գաղափարախոսական ակունքները որոնելու կազմակցությամբ է, որ սովետական արարագետներն սկսել են անորոշառանալ Նահգանի հարցերին: Սակայն նույնքան հիշու է, որ այդ հարցերից մի քանիսը, այդ թվում արարական հասարակական-բազարական մտքի զարգացման, հատկապես այդ զարգացման պրոցեսում արարական Լուսավորականության որպես բուրժուական գաղափարախոսություն տեղի, նաև գեղարվեստական ու հրապարակախոսական գրականության՝ Զարթոնքի դրժում խաղացած դերի հարցերը մարքս-լենինյան մեթոդաբանության օգնությամբ բազմակողմանիորեն պարզարանվել են սովետական արարագետների աշխատություններում, որոնց շարքում առանձնանում են Զ. Ի. Լեինի «Միբրայում և Եգիպտոսում հասարակական-բազարական հիմնական հոսանքների զարգացումը», Լ. Ն. Կոտլովի «Ազգային-ազատարարական շարժման կազմավորումը Արարական

արևելքում» և Ա. Ա. Գոլիկինայի «Նոր ժամանակների արարական գրականության ակնարկներ» մենագրությունները:

Արժանի հատուցելով մեր նախորդներին, պետք է ավելացնենք, որ խնդրո առարկա հարցերի սպառիչ պարզարանման համար անհրաժեշտ են հետազոտուրը հիզեր: Իր տեսակի մեջ առաջին փորձը եղող սույն աշխատությամբ մենք շանացել ենք այդ ուղղությամբ մեր համետուրուման ներդրել, ուղադրության առանցքում պահելով Նահգանի մի քանի հանդուցային պահեր: Վերածննդականությունը որպես արարական Լուսավորականության գիտավոր առանձնահատկություն, Եգիպտոսում Մ. Ալիի ժամանակաշրջանում մտավոր-մշակութային և հասարակական տեղաշարժերի ընթացքը և ուղղությունը, լիբանանյան Նահգայականների սոցիալական լուսնայն հարցն ու նրանց սոցիալ-բազարական նկրտումների առանձնահատկությունները, արարական Լուսավորականության և Օսմանականության ու Պանիլումականության փոխհարաբերությունների խնդիրը, արարական ազգային-բազարական առաջին կազմակերպության իսկության և նրա հակասումանականության հարցերը, եգիպտական ժամանակների հոսանքների համակարգումը ևն: Աշխատության էջերում առաջին անգամ լինելով լուսարանվել է նաև ծագումով հայ դրժույնների (հատկապես Ի. Արզարիսի, Զ. Վարդապետի, Բ. Հասունի և Ա. Իսահակի) վճռորոշ ներդրումը արարական ազգային-մշակութային Զարթոնքին և Լուսավորական շարժմանը:

ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԵՎ ՄՐԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՎԱՆԱՐԺԵՐԷ
ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԱՄՅՈՒՄ ԳԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՎ XIX ԳԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

Ա

Սովետական արևելագիտությունը անառարկելի իրողություն է համարում այն, որ ինչպես արևելյան այլ ժողովուրդների, այնպես էլ արաբների մշակույթը և՛ վաղ միջնադարում, և՛ այնուհետև զգալիորեն բարձր էր կանգնած արևմտաեվրոպականից, որ լինական, հնդկական, միջինասիական, իրանական, հայկական ու մյուս մշակույթների նման արաբականը ևս բոլոր բնագավառներում ավելի վաղ զարգացում ապրեց և ավելի հարուստ եղավ, քան Արևմուտքի մշակույթն այդ նույն ժամանակաշրջանում:

Վրահասով հիշքի 923 թվականը, երբ «գիտությունը շրջացավ (մտրդկանց) սրտերից»,—ինչպես դառնությունը հաստատել է XVI դարում ապրած եգիպտացի մտածող Աբդ ալ-Ռահման ալ-Շարանին (116, 23): Իսկ հիշքի 923-ը համապատասխանում է մ. թ. 1517-ին, որը օսմանական սուլթան Ալեխի Յազուլի կողմից Մերձավոր արևելքի արաբական երկրամասերի նվաճման տարևթիվն է:

Բնականաբար մտրդկանց սրտերից գիտությունը շրջանոցը, արաբական մտավոր-մշակութային կյանքը ավազակերծելով խամբընոզը սոցիալ-տնտեսական, անշուշտ նաև քաղաքական աղետալի իրավիճակն էր: Ընդգծելով, որ օսմանյան իրավիճակում շրջավոր ռալայի կրած զուլումն ու ճնշումը երբևէ նախընթաց չեն ունեցել ոչ մի ժամանակ և ոչ մի երկրում կամ թաղամասում, XVII դարի թուրք գրող Քուզեյնի ավիկացրել է. «Մեր մահմեդական տիրույթներին մաս կազմող երկրամասերը... ոչ թե իսկական, այլ անվանական գոտիություններ են լով, քանի որ վերածված են մարմնի, որում կենդանություն չի մնացել» (116, 31):

Վերահիշյալ ալ-Շարանին ևս հարկ է համարել շեշտել, որ օսմանցիք «բերեցին ավանայ շարիք (շատ) ու դատակնքեցին ամենայն բարիք (խեղ)» և որ թուրք կառավարողների ընչաքաղցրության ու ապօրինությունների պայմաններում «երջանիկ է նա, ով սեփականություն (մուլք) չունի» (116, 35):

Սուլթանների մահմեդական տիրույթների օգակում շուրջ երեք դար անեսական, քաղաքական ու մշակութային հողեկտրք ապրող արաբական մերձավորարևելյան երկրամասերի համար, ա՛հա, XIX դարի սկզբը-ներին հնչելու էր նահգայի՛ Վերածննդի ժամը:

Ինչքանով էր այդ ժամը համահնուն արևմտաեվրոպական (XV դարի երկրորդ կեսից աստիճանաբար ծաղկած իտալական, ֆրանսիական, իսպանական, անգլիական, գերմանական են) Վերածննդին, որին, հանգամանքների բերմամբ, արևելյան (հարավարևմտյան) VIII—XII դարերում «վերածնունդ» ապրած ինական, հնդկական, միջինասիական, հայկական ու վրացական) մշակութային իրողությունից ավելի իրենց տեսողաշույնում նրպես ուսանելի «մայրորինակ» ամենայն հավանակալությունը պետք է պահելն արար նահգայականները:

Այս հարցադրմանը պատասխանելու համար վերհիշեցրե՛ց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» հիմնական դրույթներից մեկը, որը ձևակերպված է 1883 թ. գերմաներեն հրատարակության առաջարկում և որը, Ֆ. Էնգելսի խոստովանությամբ, պատկանում է Կ. Մարքսին: «Յուրաքանչյուր պատմական զարարչանի անտեսական արտադրությունը և նրանից անխտափելիորեն բխող հասարակության կառուցվածքը կազմում են նրա քաղաքական ու մտավոր պատմության հիմքը» (1, 10): «Մանիֆեստի» 1888 թ. անգլերեն հրատարակության առաջարկում Ֆ. Էնգելսն այդ դրույթը ձևակերպել է այսպես. «Յուրաքանչյուր պատմական զարարչություն անտեսական արտադրության պայմաններում կառուցվածքը այն հիմքն է կազմում, որի վրա խարտիվում է այդ զարարչանի քաղաքական պատմությունը և նրա մտավոր զարգացման պատմությունը, այն հիմքը, որից ելնելով միայն այն կարող է բացատրվել» (1, 16): Այս իմաստով էլ այնքան, որքան նահգայականների գործունեության գլխավոր զրդիչը և հաջողության հիմնական գրավականը բնականաբար սոցիալ-տնտեսական հասունացած նախադրյալները պետք է լինեին, ապա նրանք, ջանալով կենսավորել մի շարժում, որը, ինչպես օբյեկտիվ պատճառներով, անպակ էլ նրանց սուրբեկտիվ գաղափարով, առավել կամ նվազ սեևտուն ուղարկությամբ

իր հայացքի առջև տեսնույման պահելու էր աշխարհագրականորեն հարակից Արևմուտքում տարբեր ժամանակաշրջաններում և սոցիալ-տնտեսական տարբեր պայմաններում արդեն իսկ ընթացած ու անցյալ դարձած երկու (Ֆինկույ և մեկը մյուսի բնականոն և օրինավոր հետնորդն ու ժառանգորդը կոչոյ) երևույթներ՝ Վերածնունդն ու Լուսավորականությունը, օրինակործրեն տարբ էին տալու հետևյալ ոեւո հանգամանքին. տվյալ ժամանակաշրջանում XIX դարասկզբին, Մերձավոր արևելքի արաբական առավել առաջավոր երկրներում իսկ, Սիրիայում լինի թե եզրգոտում, սոցիալ-տնտեսական բազիսը (Ֆեոդալիզմի ընդլայնում կապիտալիստական հարաբերությունների լոկ նախադրյալների առկայությունը և սոսկ մի քանի խոշոր քաղաքներում մանր բուրժուական գերի գերակշռությունը) ավելի էր պայմանում Վերածննդին, այլ խոսքով առ առավելն համաստիճան էր եմբռոպայի Վերածնունդ պարած հաստատվածների XV դարավերջի և հետագա սոցիալ-տնտեսական իրավիճակին, քան թե Լուսավորական շարժման, այլ խոսքով բացահայտորեն ցածրատեման էր եմբռոպայի Լույսի դարաշրջան պարած հաստատվածների XVII դարավերջի և հետագա սոցիալ-տնտեսական իրավիճակից (բուն իսկ կապիտալիզմի հասուն աակայությունը և բուրժուադիալիզմի գերի գերակշռությունը): Նշանակում է, որ նահեյականները, սոցիալ-հասարակական թե մտավոր-մշակութային դարգացման ներտումները հողի վրա, կարող էին որոշակի ազերս, զուցե թե նույնիսկ ընդհանրություն ունենալ վերածննդականների և Վերածննդականության հետ:

Այս իմաստով էլ մենք տարկելի ենք համարում մեր այն արաբականներին, որոնք, արաբական նահեյ-կերտական Ռրենեսանս պաթը զուգադրման հակահայի ու հեղտությանը բացատրելի միտում գրանդած մեր ավագ արաբագետների մոտ նահեյ-Ռրենեսանս շեղտակի նույնացման որոշակիորեն մշակված ու դարգացված որևէ գրույթի անդրաշխան պայմաններում իսկ, վճռականորեն ամեն մի դուտ փակել են նահեյայի իմաստաստներում Վերածննդական որևէ գիծ ու երանդ որոնելու հետագա բուրբ փորձերի առաջը: Նրանց կողմից հարցի այդպիսի կտրուկ զղվածքը տարակելի է առավել ևս հետևյալ պատճառով. Լուսավորության դարաշրջանի ազգային գրականությունների առանձնահատկությունների շուրջ մեկնություն միայն քանավե՛նք ամեն մի դուտ փակել են նահեյայի իմաստաստներում պայմաններում, նահեյայի պրոցեսում առ առավելն փորքատու լուսավորականություն (պրոպագանդիստիկ) հաստատելու փորձերին հակադրվելով է փաստորեն, որ նրանք նահեյան իր գարազման որոշակի մի էտպում զուգադրել են մենատու Լուսավորականության

(Պրոպագանդիստիկ) հետ, եմպագույն տեղ իսկ միողնելով նահեյ-Վերածննդի համանունություններին: Իսկ նահեյան իր ամբողջության մեջ, հատկապես իր դարգացման դեռ իսկ հանգրվանից, գիտել որդին Լուսավորականություն, նշանակում է այն անընդունելիորեն գերադեհահաստել:

Հասկանալի դարձնելու համար առաջին հայացքով շփոթեցուցել այն հաստատումը, որ ղեպի Լուսավորականություն իր առաջխաղաղացում արևելյան նահեյան մեր կարծիքով շուրջ կեն գար խարսափել է ու ավելի շուտ համեցել՝ հենց Վերածննդական ոլորաններում, կենսական ենք համարում տեսել, այստեղ, թե որո՞նք են եմբռոպական Վերածննդի բովանդակությունը մարքսիզմի գասականների պղած մանրամասնական բնութագրումները և դրանք ինչպանո՞վ են պատշաճում նահեյայական շարժման: Տ. Էնգելսը «Բնության զիպակետիկան» աշխատության մեջ այսպիսի համակարգով է ցցուն դարձրել Վերածննդի «մեծ գարաշրջանի» բովանդակությունը.

I—Սկիզբ է առնում ռամբողջ նոր պատմությունը:


II—Թագավորական իշխանությունը, հենվելով քաղաքացիների վրա, ընկճեց ֆեոդալական ազնվականության հորոլությունը և ստեղծեց խոշոր, ըստ էության ազգությունների վրա հիմնված միպակություններ, որոնք մեջ սկսեցին կարգանալ արդի եմբռոպական ազգերն ու արդի բուրժուական հասարակությունը:

III—Ռիեղին քաղաքացիներն ու ազնվականությունը շարունակում էին տուրուզմորքը, գեմանական գլուղաջիական պատերազմը մարգարետար շնչեց զուլիբ դասակարգային ճակատամարտերը, քանի որ նրանում անպարիղ կան ոչ միայն ապստամբած դուղաջիները,— գրու մեջ արդեն ոչ մի նորություն չկար,— այլ նրանց ևտեկից երեսցին արդի պրոլետարիատի նախորդելը կամիլի որոշը ձեարներին և դուլբի հանրայնության պահանջը շրթներին:

IV—Մլուղանդիպի կործանման ժամանակ փրկված ձեուզերում, Հոտիի ավերակների տակից պեղված անտիկ կոթողների մեջ դարմացած Արևմուտքի առջև ծառայցավ մի նոր աշխարհ՝ հունական հետագաը. նրա լուսավոր պատկերների ստեղծեցանք միջնադարի ուրվականները:

V—Մեուղայում ավելեց արվեստի շուանված ծաղկում, որն ասես կլասիկ հետարի ցուրը լինե, և որին արդեն երբեք այլևս չէր հաջողվում հասնել: Ըուպիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում առաջ եկավ ժամանակակից նոր, առաջին գրականությունը: Անդրին և Իսպանիան դրանից կարճ ժամանակ հետո արբեցին իրենց գրականության կլասիկ դարաշրջանը:

6592



VI—«Հկականակ Շնագրայան դիտանկանների հանձարեղ բնափիլի-
սոստիայական կուսճումներին և արարների շափազանց կարևոր բանց լուկ
պատահական ու մեծ մասամբ ապարդյուն անճեռացած հայտնագոր-
ծումներին» սկիզբ է առնում «բնութիան արզի ուսումնասիրությունը»:

VII—«Հին orbis terrarum-ի շրջանակները փշրվեցին, իսկն սասած՝
հենց հիմա է, որ հայտնագործվեց երկիրը, և դրվեցին ավելի ուշ ժամա-
նակվա համաշխարհային առևտրի ու արհեստից մանուֆակտուրային
անցնելու հիմքերը, որն իր հերթին ելակետ ծառայեց ժամանակակից
խոշոր արդյունաբերության համար»:

VIII—«Խորտակվեց եկեղեցու հողերը գիկատուրան, դերմանական
ժողովուրդներն իրենց մեծամասնությամբ ուղղակի թոթափեցին այն և
բողոքականություն ընդունեցին, մինչդեռ ուսմանական ժողովուրդների
մեջ սկսեց ավելի ու ավելի արմատանալ արարներից անցած ու նորա-
զյուտ հունական փիլիսոփայությանը սեփող կենսափիլից աղատանաու-
թյունը, որը նախապատրաստեց XVIII դարի մատերիալիզմը»:

Յ. Էնգելսի բնութագրմամբ որտեղ էին, ա՛հ, «մինչ այդ մարդկու-
թյան ապրած բոլոր առաջադիմական հեղաշրջումներից մեծագույնի»
դիմագծերը (Տ, հտ. Յ, 44-45: նակ՝ 2, 122-123):

Բնականաբար ավելի քան հակապատմական պարզամտություն կլի-
ներ Ռենեսանսի բոլոր գծերի արտադրանքը, անկախ հարազատության
աստիճանից, որտեղ նահգայի արարական դեմքի վրա: Վերջին հաշվով
այդ գծերն առանց բացառության տարածելի չեն նույնիսկ Վերածնունդ
ապրած եվրոպական բոլոր երկրների վրա: Այդպես լինելով հանդերձ,
Ռենեսանսի հետ նահգայի՝ ընդհանրապես համահնչունությունն ու նաև
այդ համահնչունության աստիճանը որոշելու և XIX դարի արար մտա-
վոր-մշակութային առաջավոր գործիչների վաստակն արդարամտու-
թյանը գնահատելու, բնականաբար նաև նրանց շարժման բնույթը գիտա-
կանական ճշտորոշելու համար անհրաժեշտ է եվրոպական Վերածննդի
դիմագծերի համակարգից շեշտել այն պահերը, որոնց հեռվից կամ մո-
տիկից հիշելնեղ պահեր մեր համոզմամբ հաստատելի են Մերձավոր
արևելքի արարական երկրների իրականությունն և նահգայականների գոր-
ծունեության շրջանակներում:

I—Նահգայով (այլ խոսքով XIX դարով) է որոշակիորեն սահմանաշ-
ված արարական երկրներին՝ իր բնույթով ու բովանդակությամբ նոր պատ-
մություն սկզբնավորումը, քանի որ XVI—XVIII դարերի պատմական
բովանդակությունը չի որոշմանըված միջին դարերի երևույթներից տար-
բերակալող որևէ երևույթով:

II—Նահգայն պայմանավորված էր կիրանան լիտան վրա ու հարակից
հողատարածքում Բեշեր II-ի, իսկ երկրպատում Մոհամմեդ Ալիի կողմից
(առաջին դեպքում ժողովրդային աշխարհազորի գործուն, իսկ երկրորդ
դեպքում ժողովրդական զանվարի համարելիք արջակցությամբ) սպան-
դական ֆեոդալ արևելակնություն՝ մուկատաանի ամիրների ու շեյխերի
և մամուր բեյերի ու մուլթապիաների ամենապարտությանը սղված ջախ-
ջախիչ հարվածից հետո կենտրոնացված լիբանանյան իշխանապետու-
թյան ու երկրպական որոշակիորեն ինքնուրույն փոխարքայության
սուղգծման փաստով: Հենց այդ իրողություններն էին, որ նպաստավորելու
էին արարական «հին orbis terrarum-ի» աստիճանական խորտակումը,
կապիտալիստական հարաբերությունների, հետևաբար և բուրժուական
հասարակության առաջացման նախադրյալների որոշակի կուսուկումը,
ինչն իր հերթին հետագային խթանելու էր լիբանանյան (ու սրբիական) և
եղիպտական ազգությունների կազմավորման պրոցեսի նախատարերը:

III—Նահգայով ուժգնանում էին սոցիալական հակամարտություն-
ները (հատկապես լիբանանյան հողատարածքում), ինչպես XIX դարա-
սկզբից բուրգերության բմբոստ խորտակումը, այնպես էլ դարեկեսին նո-
րածնվող բուրժուազայի հակամարտությունը հողատեր արևելակնու-
թյան նկատմամբ, նաև ընդհանրապես գյուղացիության և քաղաքային
շրջվորության պայքարը հասարակական-տնտեսական իրավիճակի բա-
րեփոխման ի խնդիր: Ուժգնանում էին նաև հակաբնատիրական-հակա-
օսմանյան և հակաազդեմարարական արամագրությունները:

IV—Նահգայականները վերահայտնագործում էին արարական
բազմերես ու բազմարժանդակ անցյալի՝ ջահիլիլայի վեհ պատկերները
և փորձում զբանցով իրենց իրականությունից առմիշտ հայածել «միջնա-
դարի ուլականները», վերածննդի արարների երբմինքն քաղաքական, տըն-
տեսական ու մշակութային փառքը՝ այդ ձանապարհին սուլարար դար-
ձնելով կրոնադավանական ու երկրամասային երկփեղկումների հար-
թում ու ազգային համախմբումը, լուսավորությունն ու լեզվի և զբալա-
նության նորացումը: Նահգայով է սկզբնավորվում արարական նոր ու
բազմահարուստ զրականությունը:

VI—Նահգայի հետ է առնված ոչ միայն եվրոպական գիտական դի-
տելիքների հնարալորին շափ մեծ ծավալի յուրացումը արարների կող-
մից, ինչը և արարական միտքը հետզհետե վերաշաղկապեց բնական գի-
տությունների հետ, այլև՝ գիտական աշխարհահայացքի աստիճանական
վերաթափանցումը արարական միջավայր:

VII—Նահգայով արարելով վերահայտնագործեցին աշխարհը, հատկապես ոչ-մանդական աշխարհը: Մերձավոր Արևելքի արարական երկրամասերը տնտեսական ուշագործվելուց ապրեցին: Ամրապողվեցին տևտարավաշխատական կապիտալի դիրքերը, սկսեցին աճել կոմ-պրագորական և ազգային բուրժուազիայի տարրերը: Աստիճանաբար կազմավորվեցին տեղական-ազգային շուկաները և զլխովին ներքաշվեցին համաշխարհային տևտեսի ոլորտը:

VIII—Նահգայականներին լիքն չհաջողվեց բառիս բուն իմաստով խափտել կրոնի համատարած տիրապետության հիմքերը, ապա զոհն ուշագործ շահերով թուլացավ նախկինում գերհզոր և անհակաճանելի հոյեոր կենտրոնների՝ եգիպտոսում մասնագական աշխարհի, կրթա-նան լեռան վրա մարտնական Կաննուրինի, Բելլուսում տարազավան պարտիարքաբանների և առաջնորդարանների ամենազորությունը: Քրիստոնեական միջավայրում նպատավոր հող գտան «աշխարհավարական» հոյեոր, փոքր ինչ ուշ նաև մատերիստիսական ուսմունքները: Մահմեդական միջավայրում, ի հակազդեցություն աշխարհիկ նահգայի, նախա-ձևնովեց հոգևոր նահգայի՝ Իսլամի Իսլազի շարժումը:

Իրենց հանրագումարով եվրոպական Վերածնունդը կազմող պահե-րը, ինչպես տեսնում ենք, որոշակի մասում և ավելի կամ նվազ բնակա-նությունը արտացոլում, ալիելի միշտ կլինենր ասել նմանակներ ունեն իրենց հանրագումարով արարական նահգան կազմող պահերի մեջ: Նշա-նակում է, որ սրամարանոթեն չի կարող խափով շտաբկվել ի հատագա-գոհուն (այբրուրի) Ռենեսանս-նահգա ամեն մի համանակություններ-ձևելու մի շարք արարականների նախը: Մասնավազ որ սակրնաբարչուր-ների տվյալների օգնությամբ արարական երկրամասերի, հատկապես եգիպտոսի և պատմաաշխարհագրական Աիբրայի սոցիալ-տնտեսական ու պատմա-մշակութային իրավիճակը խորը և ճիշտ պատկերացնելու ու մարքեթմի դիրքերից մտորելու ու վերլուծելու դեպքում էլ ի հայտ կգան ոչ-սակավ հիմքեր, որոնք թույլ կտան ալլապես ու նույնպես հիմնադո-րապես առարկել «արարական շահերտավոր Վերածնունդը եվրոպական Վերածնունդի հումանիշը չէ» բնավ, և կամ թևկուզ՝ նրանց միջև «անալո-դիայի հիմքեր չկան» և այլ նմանատիպ կարուկ կորահանգումների (103, 4: 119, 30-31):

Հանրահայտ իրողություն է, որ եվրոպայում Ռենեսանսի և Լուսավո-րության դարաշրջանները լիքն ունեն միավորող-ընդհանրական գծեր, բայ որում առաջին հերթին՝ շաղկապվածությունը սոցիալ-տնտեսական արտադրի, ապա հենց վերջինիս ներգործությամբ էլ վերածննդականներ

ու լուսավորականները ունեն նաև սկիբրայ տարբերակող-տարանջատող գծեր, հատկապես թագաբացիականություն և հակահեղափոխական հեղա-փոխականություն, ապա և ազգային որոշակիության աստիճանաչափերի տարբերություններ: Վերջինս համեմատական է հենց այն տարբերության հետ, որ Երկու դարաշրջանները միավորող, նրանց համար ընդհանրական սո-ցիալ-տնտեսական ազդակը, այլ խոսքով կապիտալիստական ֆորմա-ցիան հասունության հողի վրա ունեցել է երկու դարաշրջաններում: Իսկ դա չէր կարող աչգակս լինել, քանի որ եվրոպայում Ռենեսանսից ղեկի Լուսավորականություն էվրոպեցին անընդմեջ վերածման պրոցեսից այ ըն-թացել, այլ արձանագրվել է շուրջ երկդարյա «աստիճանականության ընդմիջում», որի ընթացքում սոցիալ-տնտեսական նոր ֆորմացիան՝ կա-պիտալիզմը, աշխարհամասում շարունակվել է իր դարգացման բնակա-նուն ուղին:

Արդ, Յ. Էնգելսի կողմից շեշտված որևեսանական առավել բնութա-գրական պահերի ու մեր կողմից դրանց հարադրված նահգայական պա-հերի բանախնդրի համեմատության ղեկբում անհնարին կլինի շեխտել մի պարագործավ երևույթ՝ նահգայական պահերի օճասունությունը՝ հարաբե-րական ցածրաստիճանությունը: Նվթրապես ամսվազն սոցիալ-հասա-րական երևույթների հողի վրա Ռենեսանսի դարաշրջանի Լուսավորա-կան դարաշրջանից ցածրաստիճանությունը, ինչպես տեսանք, բացա-տրվում ու հականայի է դառնում «աստիճանականություն ընդմիջումը» դրայցնող երկդարյա ժամանակահատվածով, այլ ժամանակահատվածը լցնող սոցիալ-տնտեսական բուն առաջընթացով, նոր՝ կապիտալիստա-կան ֆորմացիայի լիարժեք ծնունդով և բուրժուական հասարակության կազմավորման ավարտով: Իսկ ինչո՞ւմ քայտաթել արտական նահգա-վերածնունդի հիմնական երևույթների ցածրաստիճանությունը կիրառա-կան «մարտիրիակ» Վերածնունդի համապատասխան երևույթներից: Այն բանով, որ XIX դարի անմազն առաջին կեսին արարական երկրամա-սերը սոցիալ-տնտեսական զարգացման իրենց մակարդակով հարաբե-րաբար ցածրաստիճան էին որևեսանական Նվթրապայի, այլ խոսքով եվ-րոպական առավել զարգացած երկրների շուրջ շորս զար առաջ նվաճած մակարդակից: Մասամբ դրանով, անշուշտ, սակայն և անպայման՝ ոչ միայն դրանով, կվելի շուտ և ավելի հաստատակամորեն՝ այն իրողու-թյամբ, որ ինչպես էլ որ նահգայական գործիչները սուբյեկտիվ պանդող բարձրազգակ հայտարարելիս արարներին Վերածնունդ կարանելու իրենց առաջադրանքի ու վճռականության մասին, նրանց կենսավորած շարժումից զոչառած երևույթը՝ նահգան, օրջկտիվորեն չէր կարող լինել

Ռենեսանսի պատճենը, հանդես շղալ որպես էպպես տեղական-արարական երևույթ, որը եթև Վերածնունդ էլ էր, ապա՝ արարական լուսատեսական Վերածնունդն էր: Վերջինս ինչքան էլ մակերեսային թև խորքային համանմանություններ ունենար Ռենեսանսի հետ, անպայման է ավելի շատ պիտի ունենար նաև իրեն սեփական դիմագիծ ավող հիմնախարտխային յուրահատկություններ:

Աշխարհնորական միջավայրի ու նույնիսկ կլիմայի, ցեղային ու կենցաղային, պատմական անցյալի, քաղաքական կարգի, սոցիալական կատույցի, կրոնազգադիարական համակարգի տանձնահատկությունները բաղական ծանրակշիռ ազդակներ էին, որոնցով արարական ֆեոդալական հասարակարգը, որպես սոցիալ-տնտեսական մի յուրօրինակ համակարգ, ինչպես այլ կողմերով, այնպես էլ հատկապես իր հոգևոր հայեանքով ու գաղափարական միջնորդում, էպպես տարբերակում էր կերտական ֆեոդալական հասարակարգից: Եվ ուրևն հենց այդ ազդակների պրիզմայում էլ եկրոպական Ռենեսանսը, ինչքան էլ որ ուսանելի ուսույթիական լիներ առաջին, հիմնականում քրիստոնյա համայնքներից սերած նահաջակականների համար, չէր կարող պարզապես կրիստոնիանիկ է ուստարժվել: Համարարական աստիճանաշարիով է անպայման պիտի գրետորներ, նույնիսկ իր սկզբնական՝ քրիստոնեական միջավայրում, որպես Վերածննդի՝ ուշագրավ առանձնահատկություններով շեղային տարբերակ: Պետք չէ մոտանալ, նաև, որ նահաջական գործիչների շատ շուտով, XIX դարի շուրջ կեսերին, բնականաբար հարթերբար հասունացած և առնանյանացած, աշխարհահայացքային հեղաշրջման իրենց սցորումներին որպես օժանդակ լծակ պիտի բանային արարական իրականության շրջանակներում աշխուժացնել նաև իրենց կողմից որպես հասարակական-քաղաքական ուղղություն որենտեսական աշխարհահայացքային համայնքից այնքան էլ խորը շտարբերվող, դարաշրջանով իրենց շատ ավելի մոտիկ, հետևարար հարթերբար ուժեղ աքժականք պահած և իրենց ստրկիկով դատողությամբ արարական հասարակության համար առաջնայիորեն անհրաժեշտ լուսավորականությունը: Բնականաբար վերջինս նույնպես, վերևում թվարկված քաղաքականների ներգործությամբ ուշագրավ առանձնահատկություններ ստացած, հենց այդ ազդակների պրիզմայում միաշաղկապվելով վերածննդական ոգորումներին, գոնև մեղ գրադիցնող մամանակաշրջանում անխտաստիկներն տեսանելի շափարով դորժվելու էր Վերածննդական տարբերով և նահաջան հետզհետև վեր էր ածելու Վերածննդականության շղարշված լուսավորական շարժման: XIX դարի երկրորդ կեսին, արար-

ական երկրամասերում բուրժուական հարթերությունների սաղմների աստիճանական աճի ու հասունացման պայմաններում, Վերածննդական առաջարկներին նկատմամբ ավելի ու ավելի գերակշռություն ձեռք բերելով հանդերձ, արարական լուսավորականությունը բոլոր դեպքերում առնվող մինչև 1870-ական տասնամյակի երկրորդ կեսը չէր կարողանալու կանգնել սոցիալական սեփական հատան արժատների վրա, սնվելու էր հենց Վերածննդական աշխարհահայացքի սոցիալական արմատներից և ուրևն անխտաստիկներն պահպանելու էր իր Վերածննդական յուրահատկությունը: Հենց այդ պատճառով էլ, նաև նահաջայի՝ թևկող դանդաղընթաց՝ դարացման դինամիկայից, անտարժայիկ էվոլյուցիայից կնկնելով է, որ մենք նպատակահարմար ենք համարում նահաջայի դարաշրջանի մեք կողմից պատկերվող սկզբնական փուլը շիտուլ որպես էպպես Վերածննդական կամ լուսավորական դարաշրջան, այլ՝ դիտել որպես արարական ազգային-մշակութային Չարթների դարաշրջան:

Եվ քանի որ նահաջայի առաջին՝ ազգային-մշակութային Չարթների շիտուլ Վերածննդական առաջարկներին հասարակական-քաղաքական շեքեր հողթահարման գործում կենտրոնական լծակի դերը, գոնև քաղաքիկ մեծություն հատուկենտ նահաջակականների համար, հետզհետև գրավել առաջավոր գործիչներին անվանել վերածննդական լուսավորչներ: Այդ անվանումը անառարկելիորեն առավել պատշաճ է, եթև աչքի առաջ ունենանք արարական լուսավորականության լիբանանյան (ավելի ճիշտ՝ բեշարյան) բնարանի սոցիալ-տնտեսական իրավիճակն ու հասարակական միջավայրը, հետևարար և արար առաջին լուսավորչների սոցիալական լուսությունը, մշակութային առաջարկները և գործունեությունը ղյորաններն ու ուղղությունները:

Բոլոր դեպքերում նշելով, որ մեղ գոն հարկ պիտի լինի երկրորդ և երրորդ դրուկներում, նահաջական լիբանանյան առաջին կազմակերպությունների կազմակերպմամբ, վերտան անդրապոռնալ այս հարջին, անհրաժեշտ ենք համարում այստեղ, կզիպտական իրականության անդրադառնալու, ընդգծել, որ նահաջայի առաջին ու հիմնական օջախներն պատմաաշխարհագրական Սիրիայում և Եգիպտոսում լուսավորական շարժման տարնանությունների սրբյուրն էլ որոշապես պիտի որոնվի հենց այն պարզ ճշմարտության մեղ, որ առաջին նահաջակականների սիրիայցիներն ավելի շատ էին պատմաաշխարհագրական Վերածննդականության մեք: Ամեն համեմատություն պահած, երանց շատ է պատշաճում Յ. Էնգելսի կողմից վերածննդականներին հասցնողոված բնութագրումը. — Գարտ-

չբանն այնպիսին էր, որ «կարբիք էր զգում և որ ծնեց տիտաններ՝ մտքի, ստեղծի և բնակչութեան ուժով, բազմադրժանհրովյամբ և դիտեցականութեամբ», «բուրժուազիայի տիրապետութիւնը Հիմնագրած մարդիկ», որոնք «կաննցած ամեն բան էին, միայն թե ոչ բուրժուականորեն սահմանափակ մարդիկ»: «Ընդհանրական, նրանք ավելի կամ պակաս չափով ստորոված էին համարձակ արկածորոնողները ողով, որ այն ժամանակվա համար բնորոշ էր»: «Այն ժամանակ գրեթէ չկար ոչ մի խոշոր մարդ, որը կատարած չլինէր հետազոտ ճանապարհորդություններ, չխոսէր շորս կամ հիշք չնշողով, չփայլէր ստեղծարարութեան մի բանի բնագրովաներում» (Ճ, խօ. 3, 45: նաև՝ 2, 123):

Անուրանալիորեն մտաւարարույն այսպիսի, թեկուզ և տեղական աստիճանաչափի տիտաններ էին Ռեյնուժում ասպարեզ իջած առաջին նահաջականները՝ մանկավարժ, բառարանագիր, հանրագիտակ և հրատարակատես Բ. ալ-Բոսնիան, ծագումով հոլանդացի Կ. Վան-Ղեյլը, որ բժիշկ, բնագետ, բիմիկոս, մաթեմատիկոս, աստղագրաբան, աշխարհագրագետ, լեզվաբան, գրող ու գրականագետ էր, կամ ծագումով հայ Ի. Արզարիսոյ, որը բերթող էր ու գրականագետ, ժամանակագիր ու պատմաբան, քաղաքական ու հասարակական գործիչ: Նրանք գլխովին տարբերվում էին Կահիրեում ասպարեզ իջած իրենց սերնդակիցներէրց, որոնք համարյա առանց բացառության Մ. Ալիի բարբարոյալներն ու բարենորոգչական նախաքայլերի արգասիքը լինելով, եղիպտական իշխանապետի ստաշգրտությունների շրջանակներից դուրս գալու համարձակությունն ու հնարավորությունն զուրկ էին:

Ավելին. լիբանանյան նահաջականների առաջատարները՝ վերածընդդակական լուսավորչները եթէ դա Վիլհելմ, Դյուրեր, Մաքիավելի ու Ռոմբեր չէին համաշխարհային աստիճանաչափով, սպա այլգործիք էին գտնի արարական չափանիշներով: Բոլոր դեպքերում անուրանալի էր նրանք եվրոպական վերածննդականների նման ստորում էին իրենց ժամանակի բուն շահերով, կենդանի մասնակցություն ունենի գործնական պայքարին, կանգնում էին այլ կամ այն կուսակցության կողմը և պայքարում էին, ումանք՝ խոսքով ու գրքով, ումանք՝ սրով, իսկ ումանք էլ՝ թե՛ մեկով և թե՛ մյուսով միասին» (Ճ, խօ. 3, 45—46: նաև՝ 2, 124): Այլպիսին էր հայեպահայ արարագիր բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակատես և հասարակական-քաղաքական գործիչ Բ. Հատունը, որի կողովաշարս պայքարը սուլթանական կարգերի ու սուլթանապաշտ Պանիսլամականութեան դեմ՝ մահապարտների պրոպանդիստներն ընդհանուր իսկ անկրտույն մնալուց հետո, կասեցվեց թուրք գործակալների կողմից Լոնդոնում

նեկտրութեամբ մատուցված թույնի օգնութեամբ միայն Այլպիսին էր նաև ծագումով զամասկոսահայ արարագիր բերթող, արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, հրատարակատես, բեմագրիչ ու ղեկավար և Բասհալը, որ գրիչ հետ նաև ղեկ ի ձեռին կանգնեց եղիպտական ժողովրդի հակաբուրժուական պայքարի պատենչներում և որպէս արտոբական երկար թափուտույց հետո՝ հյուսիսում, մահապով երթուստարդ հաստատում: Այլպիսին էր, վերջապէս, արարագիր ասորի հրատարակատես, պատմաբան, իրավաբան, ղեկավար, սփիւրջագետ և թարգմանիչ Լ. Սարունջին, բարձրաստիճան կաթոլիկ հոգևորական և ուրեմն նստավածարան, որ կալում էր մարտական կաթոլիկ եկեղեցու գլխում ու նրա կողմից էլ մահովան էր դատարարված, քաղաքական գործիչ, որ իր հարևանությունը արկածապաշտութեան էր հասցնում, իր ժամանակի երևելի դատարար-գիտնական, որ շուրջերկրա բազմամյա ճանապարհորդություն էր կատարել: Այլգործիակ ձուլվածքի ու կոմպոզից տառանջին գործիչներ եղիպտական իրականության մեջ հայտնվելու էին 1870-ական թթ. վերջերին միայն:

Ասած եղանք, արդեն, որ չի կարելի նահանջ դիտել որպէս արարական բուրդ երկրամասներում, նույնիսկ առավել զարգացած երկուսում՝ պատմաաշխարհագրական Սիրիայում և եղիպտոսում համաժամանակյա ու համաստիճան ընթացած մի և աներզմեջ-ամբողջական պրոցես: Այս կապակցությունում հարկ է ի մտի ունենալ, որ Օսմանյան կայսրությունում, իր պատմության ամբողջ նոր ժամանակներում իսկ պահպանված սահմանը հետամնացութեան, սպա և կախիսլ-կիսազաղութային վիճակի պայմաններում, կապիտալիստական հասարակագիր ու սրան յուրահատուկ իրականան նորմերի ու մշակութային երևույթների կազմավորման պարզեան աշքի զարկով իր զանդաղընթացությունում, նաև՝ բաղիսում թե՛ վերջներում հիս ու ետքի երկարատես գոյակցությունում ու հակամարտությունում (105, 3): Միևնույն առանձնահատուկ երևույթը, ներբանագրային իր տարբերություններով հանդերձ, անշուշտ որ բնութագրական էր նույն այդ ժամանակակաշրջանում կայսրության երկրների համար ևս: Սակայն ինչպէս արարական մերձավորարևելյան երկրների համար ևս, Սակայն ինչպէս եղիպտոսում, այնպէս էլ Սիրիայում (ավելի ճիշտը՝ սրա լիբանանյան շերտում), օսմանյան ընդհանուր բաղիսից որոշակի խզմամբ հիմքային տեղաշարժերի հարաբերական արագընթացությունը, և սրա իր արդյունք՝ հասարակական-քաղաքական ու մշակութային կենցաղում բուրժուական նորմերի ավելի արագ թափանցումը, բայ ինքյան ուշագրավ և պատմագիտական վերլուծութեան առարկա դառնալու համար բավական

նաչափ հետաքրքիր հերևյթ են նույնի ուշագրաված ու հետաքրքիրը, հետևաբար պատմաբանի համար շահարգողականը մի այլ բան է: Եզրիպտական հողատարածքում, թևկուզ ընդհանուր օսմանականից փորք ինչ արագընթաց, հոգևոր-մշակութային կյանքի զարգացումը Վարդագավաճ համընթաց լինել սոցիալ-տնտեսական հիմքային համեատ տեղաշարժերին անգամ: Ընդհակառակը, լիբանանյան հողատարածքում, հատկապես Բելյոթ քաղաքի միջավայրում, վերնաշերտային առաջխաղացը որոշ տեղումասերում զգալապես զերգակցեց քաղաօային (եզրիպտական-եից արագընթաց) առաջխաղացը, ավելի հիշուր՝ բազմի ընդհանուր ամամբ բնականոն առաջխաղալու պայմաններում պարզապես առաջ օսանց, իսկ լիբանանյան բավմասամայնք հասարակութային որոշ (քրիստոնյա) տարրերի միջավայրում՝ նույնիսկ առաջ խոլացած: Հենց դա էլ որոշ իմաստով պատճաններին մեկն կարժ, որ արևմտյան հասարակութային կյանքում բուրժուականացման պրոցեսի մակընթացային համաստիճան արձանագրված երկբայ (Վերածնունդ և Լուսավորականություն) ցատրի ևնանում, հասկապես Բելյոթ քաղաքում դրսևորվի միբայլ (Նահգա-Ջարթոնք) ոսայունով: Այլ խոսքով, Նահգան, որպես սղզային-մշակութային Ջարթոնքի պրոցես, իր առավել բնականոն ընթացքով կարող է հաստատվել միայն Բելյոթի՝ իր ժամանակին արարական առավել բուրժուականացած այդ ոստանի միջավայրում:

Անհրաժեշտ է աշխատող շանի մի հանգամանք ևս: Փողոտային զանգվածներին ժամանակին ու նրա առաջագործ խնդիրներին համապատասխանող լուսավորություն մատուցելու և նրանց մտավոր-մշակութային առաջընթացի կայուն ուղու վրա դնելու նահգայական կարևոր առաջադրանք անխուսափելիորեն պիտի նշանակեր, որպես հիմնականի՝ հնավեցել առև արևմտյան նորոյա բուրժուական մշակույթի ու վաղաբանրթութային տարրերի աջակցութայնը, բրբրել կվրդպական գիտական ու տեխնիկական նվաճումների և հասարակական ու քաղաքական կենսաերմերի համրող շանարանը՝ արարական իրականութային ու պայմաններին համասողելի-պատմաստելի ամրողջ անհրաժեշտ-օգտակարը յուրացնելու նպատակով:

Այդ գործում մի երկրամասից մյուսը ու նույնիսկ մեկ երկրամասի սահմաններում մի համայնքից մյուսը հավասարաչափ ջերմեռանգությունը դրսևորվել չէր կարող: Եվ ոչ միայն սոցիալական ու քաղաքական զարգացման մակարդակների տարբերություն, ոչ էլ նույնիսկ տերությունների ներթափանցման փորձերի ուժեղությունն առարատիճանություն

հետևանքով: Կար նաև կրոնի վճարող աղզակի, որը, մասնեղական առավել ականավոր գործիչներին իսկ, անվագն երկփեղկում էր: Վերջին հաշվով նրանք հիմնախարսխային արարական մշակույթին ու քաղաքակրթութայնը և ընդհանրապես արարական աղզային-մշակութային վերածնությունը Իսլամից կտրված պատկերացնել չէին կարող, իսկ արևմտյան-բուրժուական մշակույթից փոխառիկ վերնամասային տարրերը կանխակալությամբ կամ նեղմիտ հաշվարկներով ընկալում էին նախ և առաջ որպես գլատար-բրիտանական (104, 22), հետևաբար էթն ոչ լրիվ խոտիկ, գուն ըստ էության զգուշանալի: Պարագան նույնը չէր քրիստոնյա վերածնեղական լուսավորիչներին, որոնք, նախ արարական հիմնախարսխային ընկալելով մասնեղականությունից որոշասպես քողազերծ, հետևաբար իրենց ևս հարազատ, արևմտյան վերնամասային են էլ, որպես «քրիստոնեական», նայում էին անկախակալ ու անկախական ընկալում որպես համարյա համատիճան հարազատ: Դա նշանակում էր, որ արևելյան-արարական մշակույթի՝ արևմտյան-կվրդպականի հետ անպայման, այն էլ աշխույժ անհշակցում ենթարդող նահգայականությունը չէր կարող չծագել ու լծավալվել նախ և առաջ քրիստոնյա համայնքների միջավայրում:

Այս կապակցությամբ անխուսափելիորեն ծագում է մի հարց. այդ դեպքում ի՞նչ անու տալ աննշակցման այդ երևույթին, հատկապես արարական մշակույթի վրա վերջինիս ունեցած ներգործություն:

Եզրիպտոսում Մ. Ալեի (հետագայում նաև խղիվ Իսմայիլի) բարևնորոգություններով սոցիալ-տնտեսական հարաբերություններում կազիտայինտական արտադրանեղանակի և հասարակական կյանքում բուրժուական փոխարարելությունների սաղմերին հաղորդված աշխույժացման երևույթը սովետական արարագետները որակել են «կվրդպականացում», բառին տալով՝ բացահայտրեն դրական բովանդակություն (116, 148; 102, 41): Փաստորեն նույն կերպ են վարվել նաև արտասահմանյան արևելագետները, հաճախ «կվրդպականացում» տերմինը փոխարինելով «արևմտականացում» հոմանիշով (252, 116): Իբրահիմ Արու Լուրդու, օրինակ, գրել է. «Հակառակ արևմտականացում տերմինի անհամապատասխանություններին, այն թիկես առավել պատշաճն է այն բոլոր տերմիններին, որոնք օգտագործվում են նորոյա Մերձավոր Արևելքում սոցիալական և քաղաքական փոփոխություն պրոցեսը պատկերելու համար: Այն պարտադրաբար չի ենթադրում արևմտյան մշակույթի ամբողջական պատմաստում արարական միջավայրին, այլ՝ պարզապես այն, որ արարական մշակույթի մեջ արձանագրված որոշ փոփոխությունների խթան-

ների իրենց արժանուհիք ունենի Արևմուտքում: Այն պարտադրաբար չի կենթարդում նաև այն վճիռը, որ այդ փոփոխություններն անպայմանորեն դերակրել էին կամ «ստաշադրիական» ուղղություն: Այն պարտապահ առավել կամ նյգա հաջողություն արտացոլում է այդ փոփոխությունների բնույթը: Վերջապես այն որոշ շահով ափելի լայն ընդգրկում ունի, բան շրջանառության մեջ եղող ու խիստ սահմանափակող տերմինները, ինչպես «ինդուստրիալիզացումը», որը մշակույթի միայն մի ասպեկտն է ընդգրկում, անտեսելով մյուսները» (193, 7—8):

Սովետական արարագետներին միակը, որ հանդամանորեն է անգրադարձել «եվրոպականացման» հարցին, կհինն է: Նա, փաստորեն արձագանքելով Աբու Լուղտին, իրավամբ շեշտել է. «Ոչ-անբան ճիշտ, սակայն հավանաբար ամենապատշաճ» կողմ այդ «տերմինը մատենաչուում է միայն այն, որ արարագետն աշխարհի առաջադիմական գորգացումը որոշող սահմանափակ փոփոխությունները տեղի ունեցած այն նույն ուղղությամբ, որով ընթացավ եվրոպայի սոցիալ-տնտեսական էվոլյուցիան: Այդ փոփոխությունները կապված էին եվրոպայի հետ և նպաստեցին արարական երկրներում բուրժուական հարաբերությունների պրոցեսին» (119, 30):

Լեինը սակայն, «եվրոպականացումը» որպես պրոցես դժբախտաբար չի սահմանափակել սոցիալ տնտեսական փոխհարաբերությունների հասարակական կեցության շրջանակներում: Նա համաժամանակյա «եվրոպականացում» պրոցես է հաստատել նաև արարների հասարակական գիտակցության մեջ, արարական մշակութային կյանքում XIX դարի առաջին կեսին սկսված փոփոխությունների ուղղության մասը: Նա աշխարհող է արել այն հանգամանքը, որ «եվրոպականացման պրոցես» տերմինը, արարական հասարակական գիտակցության վրա տարածվելու ղեկավարում, ենթադրել է ապիս ոչ միայն հասարակական-տնտեսական նոր («եվրոպական») ֆորմացիայի գեյի արարական երկրներ թափանցման պրոցես, այլև հոգևոր մշակույթի բոլոր տարրերի գորգացման մակարդակի համաժամանակյա անցման պրոցես» ղեկի մի նոր որակ, քաղաքակրթական մի նոր աստիճան: Իսկ նաև հանդան աղպիսի որակի ու աստիճանի նվաճման հավակնող պրոցես չէր բնավ: Այդ պատճառով էլ Լեինը պետք է բավարարվեր նահագ անվանմամբ, որը, իր իսկ խոստովանությամբ, «ընդհանուրից ընդունված անուն է» (119, 31):

Նահագի համար անխուսափելի՝ արևմտյան-եվրոպական մշակույթի հետ առնչակցման ու նրա ներգործության ենթարկվելու երևույթը, որ ազգային-մշակութային Զարթնիքի պրոցեսին ուղեկցող բազում երևույթ-

ներքի մեկն է միայն, ոչ մի ղեկավար ասն «հիմքը» չէր, որի վրա է իբր բարձրացել նահագն, ինչպես պնդել է Լեինը, գրելով. «Նահագն նշանակալի էր լճացման բազմադարյան ժամանակաշրջանից հետո մշակութային կյանքի աշխուժացումը՝ կապիտալիստական եվրոպայի հոգևոր արժեքների լայն փոխանման (համենայն դեպս ազդեցության) հիմքի վրա» (119, 31): «Եվրոպականացման» պրոցեսն իրականում ոչ այլ ինչ էր, եթև ոչ արարական (իրենց հիմնական դիմագծով մահմեդական) երկրամասերի սոցիալ-տնտեսական ֆորմացիայի (հիմքի) հարաբերաբար արագ նորացման և հոգևոր մշակույթի տարրերի (վերնաշերտի) հարաբերաբար դանդաղ նորացման պրոցեսներին միջև անխուսափելի բնույթն առկա անհամապատասխանությունը կրճատելու ու վերացնելու միտող մի շարժում: Լեինը, որքան արարական երկրամասերի հիմքային-ֆորմացիոն նորացման պրոցեսի («եվրոպականացման») վրա օրյակտիվորեն և ուժեղորեն ներգործում էին արևմտյան եվրոպայում արդեն իսկ հաղթանակած կապիտալիստական արտահարաբերությունները, ապա էվրոպական բուրժուական քաղաքակրթությունն էլ, իր հերթին, նույնքան օրյակտիվորեն, սակայն հասկանալիորեն անհամեմատ թույլ, կարող էր կերպարգել արարական-մահմեդական ֆեոդալական քաղաքակրթության վրա: Ինչ խոսք, որ այդ ներազդումը կարող էր որոշ շահով աշխուժացվել ժամանակի պահանջներից խթանվող առանձին անհատներին՝ նահագայականների կողմից: Սակայն պետք է մոտանալ, որ ինչքան էլ մեծ լինեին այդ անհատները, ինչքան էլ վեհ՝ նրանց ձգտումները և ինչքան նպատակասլաց՝ նրանց գործողությունները, նրանք թեկուզ որոշակի, այլ բուրժուական գեյից անհատ մի գասի (դեռ ոչ իսկ գասակարգի), այն էլ կրտսական կաշխատումներով առավել կամ նվաղ կապկպված գաղափարապետներն էին մեռում և ի վիճակի չէին բոտ կամս «եվրոպականացնել» մշակութային-քաղաքակրթական մի ամբողջ համայնքը, թեկուզ նրա սուկ «աշխուժացման» պրոցեսը: Պետք չէ մոտանալ, մասնավոր, որ Լեին մշակույթը որպես այդպիսին համաժամանաբար կայուն է և հարաբերաբար ինքնուրույն՝ իր նյութական հիմքի տեղաշարժերի ու փոփոխությունների նկատմամբ, ապա արարական-մահմեդական մշակույթը կարող է համարվել իրենց կայունությունը «պահպանողականություն» աստիճանի հասցեքը՝ հոգևոր արձանիքների մի կոտ համայնքի:

Այդ իրողությունը կարող ենք հնչույթմամբ հաստատել՝ հետևելով հասարակական և մշակութային այն տեղաշարժերին, որոնք արձանագրվել են Չգիպտոսում XVIII դարի վերջերից մինչև XIX դարի շուրջ կեսերը:

Օսմանյան թուրքերի տիրապետության հաստատմամբ XVI դարասկզբից անտեսական, բաղադական և մշակութային ընացման ենթարկված արարական երկրամասերի թմբուտ առօրյան XVIII դարավերջին հանկարծորեն հուլումնահարվեց 1798 թ., ղեկի եղիպտոս ֆրանսիական զինարշավով:

Վարիք չկա ընդգծելու, որ եզրպատկան զանգվածների թշնամական տրամադրությունների պայմաններում Բոնապարտի զորարանակը, թեևուզ գիտամշակութային իր չոկատի պատկանելիությամբ, նեղոսի հովտի կիսախալաթ առօրյալում լուսավորական լուրջ առաքելություն զուլիս բերել էր կարող, թևակա Փարիզի պաշտոնատներում ուղղմաբաղաբական նկատառումներով այդպիսի առաքելության հավանականությունը հաշվարկված էր: Պետք է մոռանալ, որ օսմանյան տիրապետության ներքո անցկացրած ավելի քան երկուսուկես դարերի ընթացքում եզրպատուք ու միայն տնտեսական ներթնաց էր սարկել, այլև զրեթև իտպատ դատարկվել էր մըշակութային իր կենսական ավելիչը: X դարից սկսած բոլոր ապագրեզներում արարական աշխարհի գլխաբող կենտրոնի վերածված Կահիրեի թուրքերի օրօք կարողացել էր պահպանել միայն ալ-Աղշարը, սխուլատիկ ստավածարանության և մահմեդական օրենսդրության այլ մեծահզակեակադեմիան:

Ֆրանսիացիք անհայտ զործարկեցին իրենց տպարանական սարքերը, այլ թվում Իտալիայից հատկապես բերված արարական տպատաները: Բոնապարտի կարգադրությամբ 1798 թ. օգոստոսի 29-ից Կահիրեում սկսեց լույս տեսնել զորսումբի ֆրանսերեն պաշտոնաթերթը՝ «Եզրպատուս աուրհանդակ» բաղաբական հնգօրյան («Ե կուրիսի դեմիպատ», ընդամենը 116 համար), որին հոկտեմբերի 1-ին միացավ բանակին ուղկեկող գիտնականների օրգանը՝ «Եզրպատուս տանօրյակը» («Եա ղեկաղ էմբպսեն», իրականում եռամսյա, ընդամենը 3 պրակ): Այս թերթերը որպես ընթերցող նկատու ունեին զինարշավի մասնակիցներին, նաև Փարիզի պաշտոնատներին ղեկավարներին (169, հտ. 1, 45):

Նույնպես Բոնապարտի կարգադրությամբ ու զարձայլ Կահիրեում հրատարակվել է նաև արարակող մի թերթ, որի վերաբերյալ պատկերացումները որոշ աղբտություն պահպանում են առ այսօր: Ժամանակագիր ալ-Ջարաթթիի արարած մի հապտօրում (31, հտ. 4, 238) հիմք ընդունելով ենթադրում էին, որ ֆրանսիական զորահրամանատարը պետք է լույս ընծայած լինի մինչև իսկ արարերեն երկու պարբերական, ըստ որում

մեկը՝ «ալ-Հատաթես ալ-յաումիլիյա» («Ենորաա լուրեր») անվանյալ, 1799 թ. (169, հտ. 1, 48): Արարական զրականությունը պատմազրող ալ-Ֆախուրին, տիրող անորոշությունը վերահսուկա հավանությանը, չի վարանել մինչև իսկ արարականացնելու բոնապարտյան ֆրանսիակող թերթերը, զրանք զարձենլով «Բարիզ Մըսը» և «ալ-Ուշարա ալ-մըսրիյա» (135, հտ. 2, 326):

Ենթադրում է, որ ֆրանսիացիների կողմից հրատարակված արարերեն առաջին ու միակ պարբերականը «ալ-Փանբհն» էր («Ենրաա» կամ «Հորդոք»), 1800 թ. ղեկտեմբերի 6-ին լույս աշխարհ էկած կարճակայց թուրքիկ մի թերթ, որ հիմնականում ֆրանսիական զորահրամանատարական կուլենը ու կարգադրություններ է հասցրել եզրպատուցներին: Թերթի հրատարակելը մահմեդականությունը ընդունելով Արգալլա պարձած ֆրանսիացի գեներալ Ժակ Մընուն է եղել, իսկ իմբացիրը՝ Իումալի Բին Սաաղ ալ-Վահրի ալ-Խաշարը: Վերջինս առ այսօր արարական մտավոր-մշակութիկ պատմության մեջ թուրքիկ հիշատակությունից ավելիին զարմանալիորեն չի արժանացել: Հայտնի է, որ առաջնագործ Սաաղի որդին ինքնուրույն տիրապետել է արարական զրական լեզվին ու թողել զրական ու պատմական մի շարք գործեր (156, հտ. 4, 210), որոնց հրատարակության և ուսումնասիրության գործով ցարղ ոչ որ չի զբաղվել: Դա զարմանալի լինելուց կզադարի կթև սակեք, որ արարական պատմազրությունը որպես կանոն կամ շըջանցում է բոնապարտյան արարակող թերթի հարցը, կամ էլ հնարավոր ամեն ինչ անում՝ թանձրացնելու այդ պարբերականի շուրջ տիրող մթին կետերը:

Տպարանից անմիջապես հետո զորսումբին ուղկեկող 146 գիտնականների և տեխնիկական մասնագետների ջանքերով Կահիրեում բացվեցին եվրոպական տիպի երկու դպրոցներ, օրինակելի ու հարուստ մատենադարան («Բմատություն տուն»), թատրոն, բժշկագիտական ու ղեկագործական կենտրոն, 500 մահճակալով հիվանդանոց և կարանտինային սպասարկություն, ջրիմակայ լարդուտորիա, ստողադիտարան, կենդանազրական արվեստանոց, բուսարանական այգի, բնական պատմության թանգարան, ինժեներամեխանիկական արհեստանոց, կենցաղային իրերի արտադրամասեր, մանուֆակտուրաներ, հողմաղաց-ջրաղացներ են:

Թեևուզև բաղադական հաշվենկատ ակնկալելով, այլ անկասակածելիորեն ծանրաշիտ լուսավորական միտում մատող այդ բոլոր միջոցառումները նարավոր էին լինի, անշուշտ, եթև Բոնապարտի 1798 թ. օգոստոսի 21-ի հրամանագրով կյանքի չկուլել «եզրպատուսի ինստիտուտն» իր լուրսամասնունքներով (մաթեմատիկայի, բնագիտության, քաղաքատնտեսու-

Քյան, գրականության և արվեստի) նվիրողական ակադեմիաների մի իսկական մանրանկարը երոզ գիտական այդ հաստատության նախագահն էր նկարագրական երկրաչափության ստեղծող և Փարիզի պոլիտեխնիկ ինստիտուտի հիմնադիր Մոնթը, նախագահի տեղակալը՝ Բոնապարտը, ով եք բարտուղար՝ մաթեմատիկոս Ֆուրիեն: 48 անդամների բնույթով, բացի Մոնթից և Ֆուրիեից (ի դեպ, վերջինս էր օգնելու Շամպոլիոնին՝ ժանոթանալու եզրույթական հնազարի հետ և վերածանելու Թոզետի բարի սեպագիրը), կային ետ համակերպողական ու նույնիսկ համաշխարհային հռչակի տեք այլ գիտնականներ. բնագիտության և քիմիկոս Բերթոլեն, գրող ու նկարիչ և Փարիզի արվեստների կենտրոնական թանգարանի տնօրեն ակադեմիկոս Վիվան Գենտը, աստղագետներ Նուեն և Քոսթը, բժշկագետ Դեմեյենտը, վերաբույժ կարելը, ինժեներ Լրպենը, գիտական-գործարար Անգրեզին, մաթեմատիկոս Լանգրեն և ուրիշներ (71, հտ. 1, 213: 255, 65—66):

Բունպարտի մտահղացմամբ ինստիտուտը պետք է շանար մի կողմից եզրիտուտում գրույթ բերել բազմադրամական առաքելություն, կոլորպական գիտության և տեխնիկական նվաճումները տարածքը տեղական աղագրանկություն չըրանում ու մյուս կողմից, օգտվելով Էդիպտական նյութից և ասքար-մահնդական մտքի բազմադարյան շտեմարանից, իր նպատքը մատուցեր ֆրանսիական գիտության զարգացման գործին: Ինչ խոսք, որ ինստիտուտի վստահն առավել ուշագրավ եղավ երկրորդ բնագավառում: Ֆրանսիացի գիտնականները ոչ միայն կազմեցին եզրպտական ու ֆրանսիական շահերի ու կշիռների համեմատական մի տախտակ, ֆրանսերեն-արարերեն դրույցարական բառարան, եզրպտական-զլպտական-կոլորպական համադարյալ օրացույց, այլև հավաքեցին ու հետազոտեցին արարական հին դրույցներ, հանգամանորեն ուսումնասիրեցին Էդիպտոսի հնամենի պատմությունն ու մշակույթը, ազգագրությունը, ժողովրդագրությունը և աշխարհագրությունը, հանքերը, բուսական և կենդանական աշխարհը են: Նրանք միաժամանակ հակվեցին Միջերկրական ու Կարմիր ծովերի միջև շրանցքի բացման, նեղուսով կլոր տարին նավարկության, օոոզման սիստեմների բարեկարգման, բմպլեի ջրի մատակարարման, համաձարակների կանխարգելման, նոր կուլտուրաների տարածման և համանրման բազմաթիվ այլ ծրարների վրա, որոնց մի մասն արարյուն իրականություն դարձվեց: Հատուկ ուշագրության առարկա դարձան Կահիրեում և Այերսանդրիայում փոզդյների բարեկարգումն ու լուսավորումը, կյանքի ու գործունեության պայմանների բարելավումը (10, 4: 71, հտ. 1, 213—223: 255, 66 և 80—81): Ավելացնենք, որ ինստիտուտի անդամների հե-

տագրությունների արդյունքները հնադարյան Փարիզում 24 հատորով լույթ էին բնծայվելու (տե՛ս 56):

Էդիպտական հասարակության միակ կրթված դասի՝ բարձրաստիճան հոգեորականության զլխավոր կենտրոն ալ-Աղհարը թշնամաճքով բնդունեց ֆրանսիական ներխուժողներին և լանսաց բունպարտյան կոլին, Շելյուեր, կաղիներ և մուլլա-իմամներ, (պայներ և երկրի երեւիներ), ասացիք ժողովրդին, որ ֆրանսիացիներն իսկական(հավատացյալ) մահնդականներ են: Մի՛թե մենք շարժվեցինք Հոսոմի վրա և շահաբախեցինք պային, որ բրիտոնյաներին մահնդականների դեմ պատերազմի էր հրահրում: Մի՛թե մենք լուճալացեցինք Մավթիի սպայաներին պարպուղու համ պատճառով, որ այդ անհավանները պիղում էին, թե աստված իրենց շարժալի է պատերազմել մահնդականների դեմ»: Վերջին հաշվով կոչն ուներ սոցիալական բնդգծված ներքնածալք, որից այիմները՝ մահնդական մտավորականները, մամլուր օազմաֆետուղ աշնվականության գարերն ի վեր շաղկապված, ուրեմն և նրա լուճերի պաշտպաններն ու ասուր հենարանները դարձած շլխները մանակներ, որոնք զգալի մասամբ սերում էին ուններ և տիրապետող դասի տոհմերից, տվյալ իրադրության մեջ չէին կարող անվազն շղջուշալալ. «Դուր, մարդիկ, հավասար էք սատուն ասալ: Մարդիկ միմյանցից տարբերվում են լուկ իմաստությամբ, տաղանդով (զիտելիքներով) ու բարեզորությունամբ (առաքինությամբ): Սակայն ի՛նչ իմաստությամբ, տաղանդով ու բարեզորությամբ են ալքի բնկնում մամլուրները, որ բոլոր բարիներն և կյանքի համույցները սնդուրանացրել են: Եթե կա բարեբեր հող, սպա կա պատկանում է մամլուրներին: Եթե կա զիեղեցի ստրկուհի, աշխատ նի, բարեշնե տուն, սպա այդ բոլոր պատկանում են մամլուրներին: Սակայն աստված ժողովրդի նկատմամբ գրած է, որդրած ու արդար և նրա օգնությամբ բոլոր Էդիպտացիները (ներկայումս) կուլված են իրենց (արժանի բարձր) տեղը գրավելու: Ամենից իմաստունները, բաշարդաններն ու բարեզորներն (առաքինիներն) են, որ պիտի կատավարեն և ժողովուրդը երջանիկ և լինելու» (31, հտ.3, 405, 81, 9):

Աղհարականները, ուրեմն, որոնք որպես սամենից իմաստուն, բաշագիտակ և առաքինի, առավել իրավունք ունեն զորակիցներն որոնող Բոնապարտի կողմից իշխանությունից եզրպտացիներին մաս հանվող ամբողջ բաժնին հավակնելու ու պատիվների հետ նաև մի շարք ստանձնաշնորհների էին արժանացել, հիմնական զանգվածով հետո մնացին զինարարի ղեկավարներից ու նույնիսկ ժողովրդական զանգվածների հակաֆրանսիական տրամագրությունները բորրեցրեցին:

Այնուամենայնիվ որոշ թվով ազնվականներ, իրադրության հարկադրանքով թե նեղ-գասալին շահերից երևելով, տեղ գտան Բոնապարտի միջավայրում: Դրանց ավագագույնը՝ Եղիազուտի համար սումանյան հունից դուրս և մամուլության իշխանությունից զերծ զարգացման ուղի որոնող մի գործընկեր էր (192, 233), օրենսդեռ-աստվածարանների պարագլուխ Մ. Ալեքսանդրովի (1737—1812), որ համակերպական վարչական խորհրդակցական զիվանի (զիվան ալ-ամ) նախագահ ընտրվեց և ֆրանսիացիների օրոք էլ, ի շարք ալլոց, շարադրեց Եգիպտոսի մի պատմություն՝ «Իստուղուսականների ընդունարան», որի ավարտակետը նապոլեոնյան զինարարվախ Եկարպուրովիությունն էր: Դրանց թվում էին, նաև, շեյխեր Աբդ ալ-Հադի Բին Մոհամմադ ալ-Մահդին՝ զիվանի քարտուղից, իսախլի ալ-Բուրբին, Մուսաֆա ալ-Մալին, Մուսա ալ-Սիրսին, Սուլեյման ալ-Ֆալուսին, Մուսթաֆա ալ-Դամանուրին, Անժեղ ալ-Արիշին, ծուսուֆ ալ-Շուրբանճիթին, Մոհամմադ ալ-Դաուահիլին, Իսմայիլ ալ-Մաքսանին և ուրիշներ (31, հտ. 3, 137): Դրանց թվում էր, մանավանդ, հուշակալոր պատմաբան շեյխ Աբդ ալ-Ռահման ալ-Ջարբրին (1753—1825/6), «Ջարմանալի անցյալ» քառահատոր ժամանակագրության և արժեքավոր մի օրագրության («Մուզհիր») հեղինակը:

Ալ-Ազադի Երևելի ախմեներից ալ-Ջարբրինի օրինակով կարող ենք հիմնավորապես պնդել, որ ֆրանսիական տիրապետությունը համենայն զեպս անհետ չէր անցնելու եգիպտական մտքի առօրյալի համար: Ձիներշալի վերջին հանգրվանում ընդգրկվելով վարչական զիվանի կազմում, շեյխը մտտիկից շփվեց ֆրանսիացիների հետ և գիտություն և սեխնակալի կորուսական մակարդակի վերաբերյալ նրա պատկերացումները հեղաշրջում ապրեցրին: Եթև հուրի ու շինանյութի շապկակողովով տեղափոխման ստորի քր հայրենակիցների նման նրան կա ֆրանսիական սովորական ձևանապայլերի ակզրում հրաշալիք էր թվացել, ապա այժմ նա ազդեցում էր «հիացումների արժանի» դրապարան և այնտեղ թերթում զարմանահրաշ հրատարակություններ, յարթաուորիաներում ներկա էր լինում փորձակումների, «որոնց արդյունքները մերինի նման խելից չի կարող ո՛ր հասկանալ, ոչ էլ բացատրել»: Արևելքի «կրոնական օրենքների Են-Պարվիդո» կամայական գառավահաններին ընտելացած շեյխի վրա նույնչաան հեղաշրջող սոպավորություն էր թողնելու նաև «բանականություն զրա հիմնված» ֆրանսիական գառավարումը (31, հտ. 3, 113—117):

Ալ-Ջարբրինի ընկերն ու համասոհն էր հարաբերաբար կրիտատադր, այլ գառական արարերենի երևելի զիտակ Հասան Բին Մոհամմադ ալ-Աբ-

թարը (շուրբ 1766—1834/8), որ կահիրեից միտոմամանակ փախելուց հետո, Եգիպտական գիտելիքներ ձեռք բերելու մարմնով վերադառնալու էր և գիտություն էր լեզվաբանական խմբից անհատական գծով ֆրանսիական հրատարակչության պատասխանատու աշխատողը: Հաստատելով հանդերձ, որ նրա մասին շատ բիշ բան է հայտնի, Ջ. Մ. Անժեղը հնարավոր է համարել պնդել, որ իր ժամանակակիցներից ամենից շատ էլ համոզվել ազնվարականների միջավայրում փաստագրվող արևելյան եռամսնադրության նեխագրվել է, որ հենց այդ պատճառով էլ Երեսունն անց ալ-Աթթարը անվերապահորեն նետվել է ֆրանսիական գիտնականների շրջապատը և նրանց արարելուն սովորեցնելուն զուգընթաց յուրացրել է այն բոլոր գիտելիքները, որ նրանք կարող էին իրեն տալ: Ա. Մուրարարի վնասությունները, ընկերներին խանդավառությամբ ծանոթացնելով ֆրանսիական հրատարակչությունների լայնահուն գիտելիքների հետ, նա սիրել է կպնել: «Մեր երկիրը պետք է վերափոխվի ու մենք պետք է նվիրույալից վերցնենք այն բոլոր գիտությունները, որոնք մեղանում չկան» (198, 5): Անհրաժեշտ է ավելացնել, որ ֆրանսիական միջավայրի հետ սերտորեն ու զերտորեն շփվելով հանդերձ, ալ-Աթթարը իրականում չի զազարել երկրից օտար ներխուժողների վտարումը կրողները:

Բացառված չէ, որ հանդամանքների բերմամբ զինարարվումներին հետ ինչ-ինչ գործերով անձված որոշ թվով այլ եգիպտացիներ կա, այդ թվում վարչական աշխատանքի միտնումից կամ աստիճանաբար անցած շեյխերը (ինչպես ալ-Մահդին) և լույս բնծայված արաբուլեզու թերթի ընկերացողները, սկսած լինեն մտորող ֆրանսիական մեծ հեղափոխություն՝ բուսապարտյանների միջոցով նեղորի ափ Սացյաված սղերունքների (բշում հուրի կամ հանապետություն, աղտոտություն, հավասարություն են) ու նոր գաղափարների, հատկապես առաջին անգամ լինելով ընդգծվող կեղևոտական հավասարակնություն-ազդության (ալ-ումմա ալ-մարբիյա) զազափարի շուրջ: Սակայն եգիպտական միջավայրում հասարակական թեխնոլոգիայի անարմատագրություն էր, այլ՝ կեղևոտացիների անհաղթահարելի կրկակրանքը կորուսական անորոշ կրուսական նկատմամբ,— պրել է Պատերը (71, հտ. 1, 222): Այդ հակակրանքի աղբյուրը կրկ սկզբում հակաֆրանսիական-հակաբրիտանական կրուսայրենասիրական արա-

մարդուկուններն էին, ապա Հեռագայում կարևոր դեր ունեցան գաղութարարական կամայականություններն ու բռնաժխտեցնները, նաև՝ եզիպտացիների ավանդապահ կենցաղին ու բարոյական նորմերին հասցված կուպու վերավորանքները:

Բոլոր դեպքերում հաստատելով հանդերձ, որ խիստ սահմանափակ եղավ Արարական արևելքում մի օրից մյուսը հայտնված ֆրանսիական հոծամբոս՝ ռազմական հետ նաև դիտամշակութային արշավախմբի տեսչակցումը՝ եզիպտական մտավոր-մշակութային առօրյաին հետ և անհիմն չափազանցություն համարելով ամբողջ Նահդալի որոշիչ մեկնակետ Բոնապարտի դինարշավը՝ ներկայացնելու այ-Քիրատիի փորձը (172, 775), մենք համաձայն ենք պատմադրության մեջ գերակշիռ այն տեսչակետին, ըստ որի եզիպտական ազգային և մտավոր-մշակութային Զարթոնքի շարժման ակունքները որոնելու հարկ է անպայման Բոնապարտի ձեռնարկումը ևս առավելն նախադրյալների շրջագծում մեկնակետ դարձնել:

Գեո 1830-ական թթ. մի շարք ֆրանսիական հեղինակներ շեշտել են, որ «զինարշավի ռազմարկղերից շտապ (եզիպտական միջավայր)՝ բնական եվրոպական քաղաքակրթության առաջին սերմերը» (48, 445; նաև՝ 255, 65): Կլոտ բեյն արդեն հնարավոր է համարել թվարկել ֆրանսիական զինարշավի հետևյալ տեսական անդրադարձները.

1. «Նապոլեոնի հզոր ձեռքը ցնցեց այն սյուները, որոնց վրա Արեվելքը կարծում էր անխախտելիորեն բազմած լինել: ...Եզիպտական զինարշավը Արևելքի համար եղավ այն կայծակը, որ նրան զարթնեցրեց... Մեր ամենազոր բանակների տեսքը, նրանց մեծ հաղթանակները խոր հեղաշրջում առաջացրեցին արևելքյան մտքերում»:

2. «Ֆրանսիացիների հաղթանակները խորտակեցին մամլուների ազդեցությունը, արարներին ցույց տվեցին իրենց ճնշողների թուլությունն ու ստորակայությունը և այսպիսով նախապատրաստեցին արարական ազգության վերականգնումը»:

3. «Նվաճված ժողովրդի հավատքի ու բարբերի նկատմամբ Բոնապարտի ճկուն հարգանքը (արարներին) տրամադրեց ավելի ուշ առավել բազմաժամ շփումներ ունենալ եվրոպայի հետ ու շուտ զուլ դեպի արևմտյան քաղաքակրթությունը» (51, հտ. 1, LIV—LV և հտ. 2, 164—165):

Ֆրանսիական զինարշավի դերին նման մտեղումը մեր օրերում արար մի շարք պատմաբանների աշխատություններում հաստատուն տեսակետ է վերածված: Այդ խոսքի տրայական ներկայացուցիչ կարելի է համարել եզիպտացի Մ. Սարրիին, որի կարծիքով «Ֆրանսիական զինար-

շավը... եզիպտոսում դրեց քաղաքակրթիչ մի շարժման սկիզբը» և «եզիպտական վերածննդի համար ունեցավ դրական արդյունքներ», որոնցից հիմնականները հետևյալներն են.

1. Ֆրանսիական զիտատենիքական ու մշակութային իրավիճակն ու Անտարկումները մտորելու մղող հայտնություն եղան եզիպտացիների համար:

2. Հիմք դրվեց ֆրանս-եզիպտական շփումներին:

3. Մամլուներին հասցված հարվածները հեշտացրեցին բուն բարենորոգիչ Մ. Ալիի դրույթյան տեղ դառնալը (257, 21):

Հորդանանցի 2. Զ. Նուսեյրան, արարական նոր պատմության սկիզբը թվագրելով 1798 և համարյա բառ առ բառ կրկնելով դեռ դարասկզբին սիրիացի Ք. Խալալայի արտահայտած կարծիքը (237, 26 և 30), շեշտել է, որ նապոլեոնյան զինարշավը ոչ միայն «եզիպտոսը խորհրդանշանաբար թմբկահարեց, այլև, առանց զբառ ինչպես արարական երկրներում ազգային գիտակցությունը զարթնեցնելու իր թմբկահարից», սկիզբ դրեց «արևմտականացման» և հենց դրանով էլ սկզբնաղբյուր հատկապես դրատպություն գործը, որը նոր կյանք տալով արարական գաստական մշակույթին, իր հերթին նպաստեց ազգային գիտակցության աշխուժացմանը (252, 35 և 108): Արար այլ հետազոտողների գնահատականը ևս հարաբերաբար զուսպ է, անշուշտ: Նրանք ընդունելի են համարում թրվարկված արդյունքներից միայն մեկը կամ մյուսը: Անգլիահայաստակ սիրիացի Հատրանին, օրինակ, մատնանշում է լուկ Մ. Ալիի սուպարեզ ինսուր հեշտացնելու իրողությունը (198, VII): Կրանանցի Սալիբին կանգ է առնում սույն գիտատեսիքական նվաճումների «խոշորագույն շահագրգռությունն առաջացնելու» ազդակի (128, 188), մինչև Արք այ-Ջալիլի՝ «մի տեսակ թմբկահարի մեջ գտնվող» արարական երկրներին «բնական ցեցում» հաղորդելու փաստի վրա (190, 217): Այլ հեղինակներ, ինչպիսին սուլանցի Ահմեդն է, «Բոնապարտի հանկարծորեն սկսած ու նույն ժամով էլ ավարտված արևածախնդրության» ամեն մի լուրը արդյունք հերթի փորձելով հանդերձ, հարկազուրկ են արձանագրել զինարշավախմբի հետ շփված առանձին մտավորականների աշխարհահայացքում արձանագրված տեղաշարժերի իրողությունը ու նույնիսկ զգալի հավելում կատարել վերջնական արդյունքների դրական հաշվեկշիռում:—Ֆրանսիական ներխուժողների դեմ դինված պայքարում ծայրագույն ռազմիկ եզիպտոսի քաղաքական մտքի, քաղաքական գիտակցության զարթոնքը և «հակառակ որ երբեք չի եղել ժամանակ, կրք եվրոպայի ու Մերձավոր արևելքի միջև շփումը կատարելապես ընդհատված լինի, եզիպտոսի Բո-

նապարտից դրամումը կարող է դիտվել որպես Լեզու աշխարհամասերի միի նոր հարաբերությունների և նշխարաբան մի նոր դարաշրջանի սկիզբը նշող» (198, 1—6)։

Քնկեա զուսպ, սակայն բոլոր զեպերում դրական է նաև սովետական արարագիտության երեց սերնդի կողմից ֆրանսիական զինարշավի ներգործությանը տրված դեմահատականը։ Կրիմեյին, Տիշու է, Շորքը զգուշորեն զրկ է այսպես. «Նեղիպատի վերածնունդը Բոնապարտի 1798—1801 թթ. զինարշավից հետո՝ բարենորոգիչ-տիրակալ Մ. Ալեի կառավարման ներքո (1805—1848)», սակայն նրա աշխատության տարբեր գլուխներում ցանուցիւր պատմության հաստատունները համարելու զեպերում պարզ կդառնա, որ հեղինակի կարծիքով նեղիպատում նահապետի խթաններից է հանդիսացել «մահմեդական թուլացած Արևելքի կողմից» նեղիպական գիտատնխնիական մակարդակին, «Էվրոպական ոգով ամենալուսավորված» ներախլու անհրաժեշտության գիտակցումը, որը համենայն զեպս Բոնապարտի հետ զեմհանգիմանուից էր բըխում (116, 92, 144 և 245)։ Կրակոզովսկի կարծիքով, այնքան, որքան «բեզահարպակա տրաարին խթանները մեծ ազդեցությունը թողեցին XIX դ. արարական գրականության ուղղության վրա», նահապետը նեղիպատի համար զիխումը խթանը պիտի համարել «ֆրանսիական զինարշավից և Մ. Ալեի իշխանության հաստատումից հետո... սերտ կապերը ներուպայի հետ» (114, հտ. 3, 67 և 141)։

Հարկ է նշել, որ սովետական արարագիտների նոր սերնդի զեմահատականը ներքեր էլ միանշան էլ Այսպես, Ռամանովի կարծիքով, «ավանդույթը, երբևէն էլ կանխակալ կարծիքը հաճախ մղում են այդ (անտեսական առ մշակութային—ն. ն.) փոփոխությունները բացատրել որպես... զեպի նեղիպատու ֆրանսիական զինարշավի արդյունքը» (132, 48)։ Կոզլովին, իր հերթին, զրկ է. «Սերնդից հետո զեմհանգիմանումը (հատկապես այնպիսի կարևոր իրադարձություն, ինչպիսին էր Բոնապարտի 1798—1801 թթ. զեպի նեղիպատու զինարշավը) Արարական արևելքի համար ունեցավ կարևորագույն հետևանքներ անտեսական, բողաբական, սոցիալական և այլ սոպակերպիում. այն արագացրեց մահմեդական հասարակության բնգերումը ընթացող կամ հազիվ ընգիշմարվող պրոցեսները» (118, 8)։

Ինչ խոսք, որ զերկաշողն այն տեսակետն է, որ ֆրանսիական զինարշավին անհրաժեշտ է կարևոր տեղ վերադասել «մահապակ նախադրյալների շարքում, ըստ որում որոշիչը պիտի համարել սոցիալ-տնտեսական բազիսում արձանագրված տեղաշարժերը։ Այսպես, Խուլիգովի

կարծիքով կապիտալիստական Արևմուտքի հետ անտեսական և մշակութային շփումների ընգլայնումը, արարական աշխարհի վերնակասական ներգործումը Էվրոպական բարաբան կոնֆլիկտների ոլորտը և զրահետանքով հասարակական գիտակցության մեջ լուրջ տեղաշարժերը, զեպի նեղիպատու ու Սիրիա ֆրանսիական զինարշավի արար-մահմեդական աշխարհի վրա թողած հետևյալական սոպակորությունը և այլահամարների տնխնիական ու գիտական նվաճույնները յուրացնելու անհրաժեշտության գիտակցումն են, որ առաջ բերելին սոցիալ-տնտեսական զողաբանում, որը և պայմանավորեց պատմամշակութային մի մեծ պրոցեսի սկզբնավորումը (116, 5)։

Այդ պրոցեսի սկզբնավորումը Էվրոպական հողատարածքում անպայման պիտի կապակցել Մահմեդ Ալիի անվան հետ։

Գ

Մակեդոնական Կալաուա նավահանգստից անտեսող (այլանայի) միախոտավաճառ Մահմեդ Ալին (1769—1848), իր նման համայնքի հաշիին զորակոչված հայրենակիցների զեպի կալմում, ֆրանսիացիների զեմ կռվելու համար 1799 թ. նեղիպատու արակվից։ 1801 թ. Բոնապարտի զորերից մարքոված նեղիպի ափերին իշխանության համար բուն պայշար սկսվեց։ Մամուլուցները, որպես միասնական զաս, ներտում էին վերհաստատել իրենց տիրապետությունը, թնկեա նեղիպական երկրամասի փաստական կառավարիչ՝ շեյխ ալ-բիլեդի աթոռի համար իրար դեմ նիգակ էին ճոճում էլիֆի և Բաղդադի բնեղի խմբակցությունները։ Թուրքերը, Ահմեդ Կուրչիդ փաշայի զլխավորությամբ, զանում էին մամուլուհների թուլացումից օգտվելով սոպլանի անվանական զերբիշխանությունը փաստական զարձնել։ Կահիրի նեղիպականությունը, որ «օղուզներին» սամանցիներին ու մամուլուհներին հավասարապես ստում էր, մտորում էր իր միջավայրից զեկալարություն առաջ մղելու մասին, մանավանդ որ աներ համար թեկնածու՝ իրենց սոճմածառը մարզաբեից սկզբնավորող մարդկանց զասի առաջնորդ (նեղիք ալ-աշրաֆ) և ժողովրդական հերոս շեյխ Օմար Մոսարրամին։ Օմանյան բաշարուզիների զունը, որի զըլ-խին բախտի բերմամբ բինբաշի զանայով կանգնել էր Մ. Ալին, Էրաղում էր Էվրոպական իրեն տիրույթ զարձնել։ Բազմամասնակից այս զտեսմարտում, ահա, հերթով կողմնորդ յուրաքանչյուրին (և յուրաքանչյուրի առանձին խմբակցություններին) սոճմամասնակա հաճույանելով ու ծառայելով և իր ծրագրերին էլ վարպետորեն ծառայեցնելով, Մ. Ալին և

վերև 1805 թ. Հուլիսին պաշտոնապես հաստիճան իշխանություն գրառված կերտում (198, 6—7):

Նիդրլանդների XIX դ. առաջին կեսի պատմության, այդ թվում և Մ. Ալիքի գործունեության վերաբերյալ արարական սկզբնաղբյուրները չեն պահպանվել, բացի ալ-Ջարաբիի «Անշաիր ալ-ասարից», որի ոգին հասկանալի դարձնելու համար ասեմը, որ հեղինակը 1825 (կամ 1826) թ. Ալիքի կարգադրությանը խնդրամահ է արվել՝ Եվրոպական լեզուներով սակա շուրջ մեկ տասնյակ սկզբնաղբյուրներին էլ հիմնականում շարագրվել են կամ փոխարքայի գործակից-համակեր (հիմնականում ֆրանսիացի, այդ թվում հասկանալի կլոս րեյ), կամ էլ հակառակորդ-հասակեր (հիմնականում անգլոպարոն, այդ թվում հատկապես Պրոկո-Պաստեն, Պուրլեր-Մուսկատ և այլք) գործիչների կողմից:

Մ. Ալիքի անձնագրությունն ու գործունեությունը, նրա ժամանակաշրջանի ներպատուի պատմությունն ընդհանրապես, սովետական արարգեաների կողմից առանձին հետազոտություններն են ներթափանցել: Եթե այդ առաջ ունենալու թեկուզ միայն ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուրների դիժակը, այդ դա պատահական համարել չենք կարող: Եվ սակայն ավելին կա: Մինչև 1952 թ. արարական առավել ազդեցիկ պետականություն գահի վրա Մ. Ալիքի հետնորդների սովետական պատմական կարգադրության կողմից որոշակի տեսակետներ վեր են ածվել դոգմայի, որը անվերապահորեն սարածվել է համարյա ամբողջ արարական պատմագրության վրա: Գա՛ մի կողմից ու մյուս կողմից էլ Մ. Ալիքի (ու մասամբ նաև նրա հետնորդներից Իսմայիլի) նկատմամբ խիստ բարյացակամ ֆրանսիական պատմագրության որոշակի հայացքների արարական միջադաշրում ընդհանրացումը (Մ. Սարրի և քնկ.) պատճառ են դարձել, որ անցած դարի առաջին կեսի երկուտական իրականությունը արարալեզու գրականության էջերում ստանա խիստ բարեկարգ պատկեր, որի սուրյակտիվ գծերի հաղթահարումը բացառիկ ճիգ է պահանջում: Բացառիկ ճիգ է պահանջվում ոչ միայն սովա գրականությունը մեծ զգուշավորությամբ և խիստ քննադատաբար օգտագործելու, այլև հատկապես սկզբնաղբյուրները շրջանակն զգալիորեն լայնացնելու, առաջին հերթին երկուտական, օտմանյան և եվրոպական արարագիտության համար այդպիսի ճիգի գործադրումը կապված է դժվարահաղթահարելի խոլընդոտների հետ:

Բոլոր դեպքերում կարելի է նպարտանալ, որ հակառակ սկզբնաղբյուրների սակավավիճությանը և սովա գրականություն մուրեցուցիչ վի-

ճակին, Մ. Ալիքի գործունեությանը և հատկապես նրա բարենորոգչական ձևերարիունեի ընդհանուր գնահատական տալիս, սովետական բոլոր արարագիտներն անխափր չեն կորցրել զիտական էրակաղբ, հանդես են բերել խորթափանցություն և միարան են եղել փոխարքայի միջոցառումների մեջ ինչպես գրական-առաջադիմական, այնպես էլ ժողովրդականությունն են կազմում արարագիտությունից շատ հեռու կանգնած այն հեղինակները, որոնք Մ. Ալիքի բոլոր նախաձեռնություններին, որպես ըստ իրական գրական գնահատական (սեփական և Ալիքի վրա) նոր պատմությունն րահական ձևերով, 2. Քուրդյանի օճիցիպատի հայկական գալտի պատմությունն զիբբ են): Ինչ վերաբերում է րան իսկ արարագիտներին, ապա նրանց շրջանում տարածախություններում կան միայն ու միայն երկուտական փոխարքայի ձևերակներում լուսավոր-գրակա՛ն, թե՛ սովետա-միտական պահերին գերակշռություն տալու հողի վրա: Վ. Լույցիկ, Ա. Գուրդերը և ուրիշներ Մ. Ալիքի գործունեությունը, առաջին հերթին նրա ռեֆորմները գերակշիռ մասամբ առաջադիմական և մի շարք, ճիշտ է՝ էական պահերով միայն ձուտղիմական են համարել (120, 54, 116, 150, 68թ. 14): Ընդհակառակը, ժամանակաշրջանի առանձին հարցեր հատուկ հետազոտության ենթարկած մեր միակ արարագետը՝ Եվմոսովը Մ. Ալիքի գործունեությանը, այդ թվում և ռեֆորմների սովետական է ավել (107, 177):

Մեր հետազոտության արդյունքները մեզ մղել են դիրքորոշվելու այդ երկու տեսակետների միջնագծում: Այլ խոսքով էլ մեզ չի հաջողվել գրական պահերը քանակականորեն թե որակականորեն գերակշիռ տեսնելու հարցում այնքան համոզված լինել, ինչքան արարագետներին առաջին խումբը, ապա ժողովրդական պահերին գերակշռություն տալու հարցում էլ հարաբերաբար պակաս խոստահայաց ենք եղել, քան՝ Եվմոսովը: Բոլոր դեպքերում մեր վերաբերմունքի վրա անկասկած իր կնիքն է դրել և այն իրողությունը, որ Մ. Ալիքին ու նրա ժամանակաշրջանին մենք նայել ենք ոչ թե ներպատուի ընդհանուր պատմության, այլ՝ միայն ու միայն արարական ազգային-մշակութային շարժների դիտանկունից:

Ժամանակն է, սակայն, որ թուրքի մի հայացքով փորձենք ընդգրկել այն գործունեությունը, որից էլնելով էր, անուշտ, Կ. Մարքսը երկուտար համարում թուրքական կարգության սովյալ ժամանակաշրջանի միակ կենսունակ երկրամասը (4, հտ. 9, 210):

1808—1814 թթ. երկրի կենտրոնիայի հիմնական նյութը՝ գյուղատնտեսությունը բարեկարգելու նպատակով անցկացված հողային բեթոնմբ (մշակելի բույր հողերի կազմաւորը, մամուր բնիքի ավաւաների բնագործումը, իլիթիզամենրի վերացումը, վակուֆ հողերի պատականացումը), համայնական հողատիրութիւնայն խարսխումը և փոխարքայական շիֆթիլիքի ստեղծումն ու օգտագործման համար բաշխումը Ֆելլաւեներին) և հարակից միջոցաւումները (օոոդման ցանցի ընդլայնումը, աքրտուտիլիական միջոցաւումները, գյուղատնտեսական գործիքների ներմուծումը Եվրոպայից, նոր կուլտուրաների տարածումը են), որոնք անհրաժեշտ դարձրեցին մամուրութիւն ուղնացումը (1811 թ.), թեկուզ նշանավորում էին հողային ամբողջ ֆոնդի համակենտրոնացումը ֆեոդալ-բացարձակպետական վարչակարգին ու նրա ներշնչել հենարաններին ձևերը, հետևաբար սոցիալականորեն սահմանափակ էին և շփարագրեցին նորոտարական կարգերը, այնուամենայնիվ ինչ որ շարժում ունեին առաջադիմական բնույթ. վերանում էր ժայրահեղ հետազոտութիւնայն և ֆեոդալական անիշխանութիւնայն կենսատու մամուր բնիքի սոցիալական հենարանը, խթանվում էին գյուղատնտեսութիւնայն բազմակուլտուրայականացումն ու զարգացումը (հատկապես արտահանութիւնայն սահմանված նյութերում) և այն կամ այն աստիճանի շարժարձարումն էր Ֆելլաւեների շահագործումը:

1816 թվականից սկսած անցկացվեցին նաև առևտրաարդյունաբերական վերափոխիչ միջոցաւումներ (արդյունաբերութիւնայն, ամբողջ արտաքին ու ներքին հիմնական առևտրի պետական մենաշնորհի կեթարկումը, նոր ֆարրիկաների ու գործարանների ստեղծումը են), կազմաւորվեցին զինազանցօրեն զինված և պատշահորեն մարզված թվաշատ բանակն ու նավատորմը:

Գյուղատնտեսութիւնայն, արդյունաբերութիւնայն ու բանակի արդիականացումն այն հիմքն էր, որի վրա էր հենվելու Մ. Ալիի նրազանքի՝ Օսմանյան կայսրութիւնայն շրջանակներում ստեղծիլ սուլթանական փտախտավոր պետականութիւնայն վերափոխումն մի նախանուշ, իր տնտեսական ու ռազմական հզորութիւնը բրիտանական Արևմուտքին դիմակալիլու ընդունակ մահմեդական Արևելքի մի մանրակար, բայտ որում փոխարքայի համար «Արևմուտքը» ոչ միայն Անգլիան ու Ֆրանսիան էին, այլև ու մանավանդ Ռուսաստանը: Մ. Ալիի մտքում որոճում էր այն, ինչը Կ. Մարաբը հանձնարեցօրեն կոահում էր ու զրչին հասնում: Բ. Գուրը վերջ էր վերջու կանչեցնելու երկնտարաների առչել՝ կամ յուրացնել նեղօրի ափին Մ. Ալիի ստեղծած մանրանկարի պատճենը և այն կայսրութիւնայն

աստիճանաւալիով ընդհանրացնել նրա իսկ մեծ վեցերութիւնայն ներքուկամ էլ հաշտվել այն մտքի հետ, որ արաւնացու «իսկական գրոխը» գալու է սուլթան-խալիֆի աթոռի վրա փոխարինելու Օսմանի տոհմի թուրք մատանգների գլխից գոռի շքեհանգեւտային շարման» (4, հտ. 9, 202):

Մ. Ալիի տնտեսական ու ռազմական վերափոխութիւնները կենսականորեն անհրաժեշտ էին դարձնում նաև պետական վարչամեթոտի նորացումը, որի ալլապան էլ անհրաժեշտ էր մահմեդական պետականութիւնայն օրինակելի մանրանկարին արդիական դիմագիծ ապու համար: 1829 թ. սեպտեմբերին կյանքի կոչվեց Մեջլիսի օւումմին, որը հիշատակվել է նաև մի շարք այլ անուններով: Խորհրդակցական այդ ժողովն այնուհետև կանոնաւորաբար, համարչա տարին մեկ գումարվելու էր որպես «խորհրդարան», օրակարգի նուրթ դարձնելով երկրի վարչարարական, տնտեսական և այլ բնույթի հարցեր: Ժողովատեղան հետագայում հաճախ էր փոխվելու, սակայն «խորհրդարանին» անգամների շրջանակը մնայու էր նույնը. պետութիւնայն մեծամեծները, նահանգային բարձր աստիճանավորները, երևելի ալիմներն ու շէյխերը նե: Քիկուղ և ամենաբարձր փոխարքայի շուրջ բայտ էութիւնայն մի տնտագարդ, Մեջլիսն սուլթանին նայնիվ իր պարբերականութիւնամբ, ժողովական կարգ ու կանոնով, օրակարգի հարցերի շուրջ էլուլթնեթով և ընդունեղ որոշում-հանձնարարականներով արեւելյան-մահմեդական աշխարհի համար նորութիւն էր: Ավելի էլ կարևոր է այն, որ Մեջլիսը նեխպատական փոխարքայութիւն վարչապետական ինքնուրույնութիւն վերաբերչալ տվալ պահին խիտ անհրաժեշտ լրացուցիչ մի վկայական էր սպահովում, մանավանց որ արդին իսկ առկա էր նաև կոտավալական մի մարմին՝ Շուրա-ի մուավանեթ (Օղեակակաների խորհուրդ), որը փաստորեն վարչապետի պաշտոն կատարող նազիրի (կամ բաշ-մուավինի) զեկավարութիւնայն ներքու ունեք աշքան անգամ, որքան որ պետական պաշտոնատներ (դիվան կամ նիզարեթ) կալին:

Ինչպես հողային, առևտրաարդյունաբերական և ռազմական, այնպես էլ վարչական, սոցիալ-մշակութիւնային և մանավանց կրթական բարենորոգութիւնների համար Մ. Ալիին, եվրոպական մալրցամարի ծնունդ, այլ բայտ էութիւնայն միևէլ ուղնուծութիւն արեւելքի, կամեթոնի համատամար՝ որաշիրտուկների անգրագետ մի առաջնորդ (50, 38), ամբողջովին ապգովինեց օտարապգի մասնագետներին, հատկապես ֆրանսիացիներին, սակայն բանալով նրանց անունով, համաբազով թե մտայնութիւնամբ տեղացիացնելու Ալապան է, որ իր բանակի արդիականացման գործը 1819 թ. նա զտահեց բանապարտյան սպաներ Օկտավ Փոլեֆը որ Ալիին, որ Սուլթանան

բել (հետագայում փաշա) էր դարձել և Ռոշմանին, որ Բրբաճիմ աղայի էր վերածվել։ Քրիստոսյան գործի կազմակերպումը 1825 թ. հանձնարարակն նույնպես ֆրանսիացի Կլոտ բելին, թեև Կլոտ էր մտերմին ու անձնական բնիկալ մամոռջ կրեք տասնամյակ եղավ հայազգի Բոսաբին, որի թաղումը 1833 թ. Մ. Ալին մեծ շուքով կատարել տվեց պատերազմական նախաբար Մահմուդ բելի գլխավորած հանձնաժողովին (250, 58)։ Ալեքսանդրիայի նավաշինարան-գինացործարանի ստեղծումը 1829 թ. բաժին ընկավ սուլտանի ինժեներ Սերիֆի բելին, ում օգնում էր տաղանդաշատ ինժեներ արաբ հաջի Օմարը և ում 1833 թ. փոխարինեց իր հայրենակից Մոնձելը։ Հոգ ալ-Մարսուդի գինագործարանը 1831 թ. հիմնադրվեց շեխ տալաջի Մարեզոյի կողմից, որը Ալին էֆենդի էր դարձել։ Նավաշինացործարան գործի ուսուցումը ղեկավարում էին ֆրանսիացիներ Բեսսոն բելը, Հուսարը և Լեսկոնը, հիդրավիլիայի գործը՝ Լինան դը Բլլեդֆոն բելը։ Երկրագործության արդիականացումը՝ ժուռնալը են (48, 139; 69, 133; 51, հտ. 2, 222; 50, 131—133; 199, 101—103)։

Հնգրդեղուց հետո, որ «երեսը այնքան մեծաթիվ չեն, ինչքան կարելի է կարձել», Կլոտ բելը 1830-ական թթ. համար արձանագրել է եվրոպացի շուրջ 200 բմիչկների և ղեկագործների, 20 ուսուցիչական հրահանգիչների, 20—25 լեզվի գասառուների, սեռական վարչությունում և գործարաններում՝ մեծ մեկ տասնյակ մասնագետների ներկայություն և պատրաստություն (51, հտ. 2, 144)։ Ինչ խոսք, որ օտարերկրացի աշխատողների թիվը սկզբնական շրջանում շատ ավելի մեծ է եղել և կրճատումը, ինչպես շեշուել է նույն հեղինակը, տեղի է ունեցել այն բանի հետևանքով, որ Մ. Ալինի սրտամտ է հնարարության չափ օգտվել իր հպատակներից և պատմվել այն մի տեսակ խնամակալությունից, որի ներքո էր պահվում եզրիտասը այնքան ժամանակ, որ հարկարդված էր համարյա ամեն ինչ եվրոպացից խնդրել» (51, հտ. 2, 145)։ Բոլոր ղեկավարում վկայված է, որ անմիջապես մինչև 1830-ական թթ. վերջը Մ. Ալին այնքան բարեհաճ է եղել օտարերկրացի մասնագետներին, այդ թվում եվրոպական հյուպատոսական աշխատողների նկատմամբ, որ նրանց աններակապելիորեն բարձր աշխատավարձ վճարելուց ու պարգևատրումներով ողջողելուց բացի, աչք է փակել երկրի պատմական հետմյուսները թալանելու նրանց հասնելու առաջ, այն աստիճանի, որ անգլիացի գիտնական Գլիզոնը հարկադրվել է 1842 թ. Հեղձոնում ապազված մի հատուկ գործչկով ուղղելու «Եվրոպացի հնագետներին կոչ՝ եզրիտասի հուշարձանների ուղնչացման վերաբերյալ» (տե՛ս 62)։

Հուսանակել է, որ մեզ համար ուշադրվող Մ. Ալիի մտավոր-մշակութային ընդգրկվածի ձեռնարկումներն են մնալու։

1821 թ. նոյեմբերի 4-ին եվրոպացի մասնագետների օգնությամբ և ֆրանսիական զինարյալախորհրդի սարքերի հիմք վրա, բնիկ դասակարգից, տպագրական գործն ուսումնասիրելու համար 1815—1820 թթ. Բոսանիստ գործողված և վերագրվածի թարխան ութնամյա (տպարանի վարիչ) նշանակված նիկոլա Մասարակիի ղեկավարությամբ, Կահիրեի մերձակա Բուլակ ավանում հիմնադրվեց «Ազգային տպարանը», որը լույս էր ընծայում հիմնականում գասարքեր և արևմտյան գիտատեխնիկական գիտելիքների արարականացնող (նաև թուրքականացնող ու պարսկականացնող) հրատարակություններ։ Այդ գրքերի վրա, ընդհանուր համար պատկանում էր ոճարան-խմբագիրներին (մուսահիթ-մուսարիթ), որոնք առավել առաջատարը նաև պաշտոնավերիի գլխավոր խմբագիրն էր։

Արարական «ալ-Վակաի ալ-մըրրիյա» կամ թուրքական «Եկկաի-ի մըրրիյե» («Եզրիտական-կամ Կահիրեի-անցուգրանք») անուր կրող պաշտոնավերիի շուրջ արարագիտության պատկերացումներն առ այսօր պաշտոնավերիի մեծ մասում, քանի որ արարական, այդ թվում եզրիտական արխիվներում թե գրապահոցներում նույնիսկ մեկ ամբողջական հավաքածու չգոյություն ունի, իսկ առաջին 12 տարիների համարներից շատ քչերն են հասել մինչև մեր օրերը։ Եփոթության խորության վերաբերյալ պատկերացում տալու համար արձանագրենք հետևյալը. տակավին 1831 թ. Փարիզի Ասիական ընկերության տնօրեն Փ. Ռեյնոն պնդել է, որ պարբերական սկզբում եղել է արաբերեն շարքավերիք, ապա մի բանի ամեն հրապարակվել է օսմանիքն և նոր միայն վերջնականապես զարմել է զուտ արարական (75, 238—239)։ Իր հերթին արարական մատուցի առավել հեղինակավոր պատմագիրներից զի Քարրազին, ընդհանրապես, 1910-ական թթ. հաստատել է, որ թերթի սկզբում եղել է զուտ օսմանիքն և լույս է տեսել շարքավ 2—3 անգամ, ապա վերածվել է արաբերեն-թուրքերեն երկլեզվյան հրատարակության և շատ ուշ է դարձել զուտ արարաչեղու (169, հտ. 1, 49)։ Մովսեսական արևելագետների շրջանում մինչև օրս ընդունելություն գտածը վերջին ու նույնպես սխալ տեսակետն է (119, 16; 143, 387)։

Ժան Դեբիի «Կահիրեի թուրքական արչությունների համառոտություն» աշխատության մեջ (տե՛ս 277) մեզ հասած տվյալների, հալի Սարաթի «Արարական արևելքում տպագրության պատմություն» գրքի (տե՛ս 188)

էջերում անկա ֆոտոպատճենին և թերթին առաջին երկու և հիշքի 1247—1249 տարիները ավելի բան մեկ տասնչափ համարների արտատպահանքի ստացմամբ մեկրոֆիլմերի օգնութեամբ մեկ հասցովից որոշակի պատկերացում կազմել «այ-Վակախի» մասին և ուրեմն կատարել մի շարք կաշկոր ճշտումներ:

Նստի այն, որ թերթին իր հիմնադրման օրերին եղել է երկշարքաթաթերթ: Եվ իրոք, առաջին համարի ձևկատարչին մասի անկյունում երշված է հիշքի 1244 տարվա ջումադա ամսի 25-ը, այն է՝ 1828 թ. դեկտեմբերի 3-ը, իսկ երկրորդ համարը թվազրկված է ջումադա սանի ամսի 9-ը, այն է՝ դեկտեմբերի 17-ը: Թերթի 1831 թ. մեր տեսած համարներն արդեն ընդհանուր ամսամբ երկօրյա Հերթամատնութեամբ են, ըստ որում հրատարակվել են բացի ուրբաթից մնացած բոլոր օրերին: 358—365 թվահամարները կրող «վակախները», օրինակ, լույս են տեսնել հիշքի 1247 թ. շատուլ ամսի 9-ից մինչև 28-ը, այլ խոսքով էլ 20 օրում 8 համար: 1832 թ. համարներն ևս որպես կանոն երկօրյա Հերթամատնութեամբ են, բայց ահա 1833 թ. հաճախողեայ է դառնում յոթօրյա Հերթականությունը, այլ խոսքով նախկինի 3-ի փոխարեն թերթը շարաթը հրատարակվում է միայն երկու համարներով:

Այս և այն, որ ինչպես առաջին երկու, այնպես էլ հաջորդ մի բանի տարիներին մեր տեսած բոլոր համարները երկալեզու են, ըստ որում արարականների նկատմամբ գերակշիռը օսմանաբան նյութերն են: Արաբ հեղինակների կողմից շրջանցվող այդ իրողությունը դաժմանալի լինելուց կզգադարի, եթե հաշվի առնենք Կահիրեի վարչապետության վերին ուղղությանում տվյալ ժամանակաշրջանում տիրող մթնոլորտը և իրավիճակը: Ավելացնենք, սակայն, որ մեր կարծիքով հրատարակելիներն արարքերն լեզուն երկրորդական համարելու միտումով չէ, որ նյութերին մեծամասնությունը ներկայացրել են թուրքերին, քանի որ Հենց առաջին համարի առաջին իսկ էջում արարքերին զբաղեցրել է որոշակի տեղ:

Բոլոր գեպերում արձանագրենք, որ առաջին համարը բացվում է թուրքալեզու մի «առաջնորդողով»:

«Ջուռնալի զիվանն ստեղծելով, մեր բարեգով տիրակալ Ասաֆը (փոխարենը՝ Մ. Ալին, որ այստեղ պատմված է Սողոմոն իմաստունի մեծ վեղիքի անունով—Ն. Ն.) արդար Տավերին (վեհապետին) վաչկի իր սովորությամբ ցանկություն հայտնեց այդ պետական պաշտոնատանը կենտրոնացնել զավատական-շրջանային պաշտոնատար-գործակալներից ու պարկված տեղեկագրերը, զրանք լիննարկման զննել, տարածել և հրատարակել հաջորդ զարձնելով ուժ որ պետք է, որպեսզի պաշտոնատարն—

յը կարողանա զազափար կազմել այն ամենի մասին, ինչը որպես օգտակար պետք է ի մտի ունենալ և ինչից որպես վնասակար պետք է խուսափել: Թեպետ Ջուռնալի զիվանը համապատասխանում է այդ նպատակներին, այնուամենայնիվ արդար Տավերի (վեհապետի) մտքին բարի ներշնչանք կկամ լայն հասարակության արամագրությունները զննելու այդ տեղեկագրերը և արդեն իսկ սպազորվող տերերին ավելացնելու հաջորդումները Մեղլիս-ի Տավերիի (այլ անվանք Մելլիս-ի այլ-ի Տավերիի, այն է՝ Մեծ մեղլիս—Ն. Ն.) և Գիվան-ի խղիվիի նիստերի վերաբերյալ, ինչպես նաև Հիջազի ու Սուդանի վիլայիթներից և ուրիշ շրջաններից հասած տեղեկությունները: Նորին զերազորությունը գտավ, որ նման մի հրատարակում օգտակար պիտի լինի պետության երեկինների համար, որոնք այնտեղ տեղեկություններ են գտնելու հանրային հարցերի շուրջ: Ահա, թե ինչն՝ Ալլահի օգնության ապավինելով, ձևնարկում ենք սույն հրատարակության, որ ստացավ Վեկախ-ի մըթալին անունը» (43, 3—12—1828):

Այս «առաջնորդողին» հաջորդում են նյութերը, որոնք խորագրերում երկալայացված են որպես թերթի «Կահիրեի արհեստանոց» (մահրուսա վարչապետն) հասցված «արտագրումներ» այս կամ այն պետական սպասարկության շջուռնալից»: միշտ է, երկու շարաթ անց, հիշքի 1244 տարվա ջումադա սանի ամսի 9-ին, այն է՝ 1828 թ. դեկտեմբերի 17-ին լույս տեսած երկրորդ համարում շջուռնալային արտագրումներ» արդեն խորագրերում չեն երևում և «այ-Վակախն» փոքր ինչ ավելի թերթի կերպարանք է ստացել, այնուամենայնիվ ավելի բան անհրաժեշտ է խուսել պարբերականի հիմքը հանդիսացող «ջուռնալներին» մասին:

Մ. Ալին կարգադրել էր իր Փոխարքայական դրասենյակում (Մախլիթ-ի տեխնիկ կամ Շուրա-ի մուավալիթ) առաջին իսկ օրից պահել Հավադսևթ-ի լեվմիչի զեֆտերի (Մասուս ամենօրյա անցորդաբերի), որը օսմաներինով վարում էր Ֆախրը և էմին էֆենդինները: Հենց այդ մատյանն էլ հրատարական և երկրի վարչական կյանքում շափազանց տարածուն զարձրեց տեղեկագրի-հաշվետվությունները, որոնք խառնելից (արևելի բիլ հավանականութեամբ՝ ֆրանսերենից) փոխարկի բառով ներկայանում է թուրքերին կողմում էին շջուռնալը (արարական հոգնակին՝ չերանիլ, շուռնալաթ): Շուտով Փոխարքայական գրասենյակում ստեղծվեց նաև մի հատուկ Գավաններ և տեղեկագրերի բաժանունը (էրալիմ էլ շուռնալ կալեմի), որը մասովին (փոխարքայի օգնականի) պաշտոնով վարում էր Հիջալեթ բեյը: Այդ բաժանունների հիմքի վրա փոխարկվել նստավալը միջնարկում նույնիսկ ստեղծվեց (մինչև

1828 թ. սկզբները) Տեղեկագրի դիվան (Ջուռնալ դիվանը, Դիվան ալ-ջուռնալ), որի առաջադրանքն սկզբում մայրաքաղաքի թե զավառների պաշտոնատեններից ուղարկված տեղեկագրերի հիմամբ Կահիրեի, Վերին Եգիպտոսի և Ստորին Եգիպտոսի պետական դիվանների աշխատանքը վերահսկելն ու կարգավորելն էր Ալեկլացններ, որ իշխանության բոլոր լծակները իր ձեռքում կենտրոնացնելու հարցում Մ. Ալիի խտտապահանջություն հետևանքով, պետական բոլոր դիվաններն ու համայն սրանց կրկնող մեջլիսները պարտավորվում էին կանոնավորաբար Փոխարքայական գրասենյակի ուղարկել տեղեկագրեր կամ հաշվետվություններ, որոնք աստիճանաբար վեր էին ամփոփում ամենօրյա ջուռնալների (յաումի-յի ջուռնալը)։ Եվ ուրեմն Ջուռնալի դիվանի առաջադրանքներից մեկն էր զստնալու ամենօրյա տեղեկագիր-հաշվետվությունների համադրումն ու նրանց նյութների բնղհանքատուր։

Փոխարքայական գրասենյակին զուգահեռ զույգություն ուներ նաև մինիստրության տիպի կորիվական դիվան (Դիվան-ի խոփի) կամ Եգիպտոսի բաղաբացիական գործերի դիվան (Դիվան-ի մուլքի-ի Մըր), որ իր կենտրոնավայրի անունով կոչվում էր նաև Միշնարբոզի դիվան։ Սա սկզբում շուններ հատուկ բաժանմունք, թեպետ, ինչպես բնղհանքապես Իբիվանի, այնպես էլ սրա զատական (դաավի) գրասենյակի հաշվետվություններից կազմվում էին ջուռնալներ։ Վերջիններս հիմքում ավելհանձնաչաք ընկնում էին այն ջուռնալները, որոնք ոստիկանական տեղա-մասերի պետերը պարտավոր էին խոփական դիվանի մինիստրի հանգամանք ունեցող տնօրենին ներկայացնել իրենց ձեռնահաստությունից դուրս ընկնող գործերի՝ պետական հանցագործությունների, ուհիւրների, սովազակությունների, անբարոյականությունների և անվանաբկումների վերաբերյալ։

Որքան Փոխարքայական գրասենյակի Ջուռնալի դիվանի, նույնքան և ավելի կորիվական դիվանի ջուռնալներն էին, որ պաշտոնակրթի լրատվություն հիմնական աղբյուրներն էին դառնալով որպես բոլոր ջուռնալները համադրող ու խտացնող ապագիր մի ջուռնալ։ Այստեղ նշենք, որ ըստ երևույթին առաջին նրեք տարիներին թերթի էջերում Փոխարքայական գրասենյակի ջուռնալները նկատմամբ կորիվական դիվանի ջուռնալներին նյութների գերակշռությունը պետք է բացատրել այն դարմանքը, որ Ռեյնոն գրսևորել է ի տես «ալ-Վակաի ալ-մըրրիյալի»՝ համարներում ոստիկանական լրատվության առատության (75, 239)։

Փամանակակիցներից զր Գաղալվենն ու Բարոն 1837 թ. Փարիզում յույս տեսած «Յումանյան Բ. Դուսն դեմ Սիրիայում և Փոքր Ասիայում Մ. Ալիի 1831—1833 թթ. մղած պատերազմի պատմություն» վերջում, որպես պաշտոնական փաստաթղթեր, հրատարակել են «Սիրիական բանակի տեղեկագրերը», որոնք ներկայացված են «բյուլետեն» բառով (48, 453)։ Այդ «բյուլետենները» կազմվել են Կահիրեում և տեղում էլ յույս ընծայվել, բանի որ, ինչպես վկայում են ֆրանսիացի ժամանակագիրները, իրենց գրքում ներկայացված 10-րդ «բյուլետենը», ի տարրերություն մյուսների, մինչ այդ սերբեն չի հրատարակվել (48, 455)։ Արդ, խնդրո առարկա «բյուլետենները» ուսմամանակատից հաղորդումների որպես աղբյուր մատնանշում են ինչպես գործակներոնի բյուլետենը (ըստ որում ֆրանսերեն «բյուլետեն» բառը պարսկատառով), այնպես էլ «Սիրիական բանակի ժուռնալը» (ըստ որում ֆրանսերեն «ժուռնալ» սկզբնաբառը մեծատառով)։ Հասկանալի է, որ վերոնշյալ բոլոր ղեկներում փոքրատառ «բյուլետենը» պետք է հասկանալ որպես մեղ ջուռնալ «ժուռնալը» (Սիրիայում գտնվող բանակի կամ նրա գորակներոնի ջուռնալներ), որպես ակնաբկություն Փոխարքայական գրասենյակի արխիվում առ այսօր պահպանվող ռաղմական ամենօրյա ջուռնալ-տեղեկագրերին։ Այդ ղեկում ֆրանսերեն մեծատառ «ժուռնալը» ինչո՞վ տարբերելի փոքրատառ «բյուլետեն» — ջուռնալից» և ինչպե՞ս հասկանալ այն Մի՞թե դա չի ակնարկում սիրիական ճողատաբաժնում եղիպտական զորահրամանատարության նախաձեռնությամբ թիչ թե շատ կանոնավորաբար յույս ընծայված մի պարբերականի։ Այսպիսի պարբերականը, էթեն այն իրոք եղել է, եգիպտական զորքի ավազ թե կրտսեր սպայական դասի օմանսերեն, իսկ շարքային արաբախոս ղեկվորների կայսերակն մեծամասնության անգրագետ լինելու պայմաններում, կարող էր զր Գաղալվենի ու Բարոնի կողմից հաճախ նշվող «Կահիրեի թուրք-արաբական դազետ» նման էրկիզվածք լինել։ Սակայն այն կարող էր լինել նաև ֆրանսիական, իսկ նրաբային արաբախոս ղեկվորների կայսերակն ֆրանսիական ծագմամբ բարձրաստիճան ղեկվորականների և սիրիական ճողատաբաժնում լատինատառ սպազարկան հնարավորությունների առկայությունից անկախաբար, սովալ պահին Մ. Ալիի համար շահագանց կարևոր էր Եվրոպական հասարակական կարծիքը հակասությունական իր ձեռնարկման նկատմամբ բարոյացակամ դարձնելու հարցը։ Արձանագրերը, որ Սիրիայի զբաղումից անմիջապես հետո և հատկապես Պոլսի ֆրանսերեն լըր Մոնիտոր օտտոմանի» զլխավոր խմբագիր, մոլեսանց թուրքտուր և արաբտայաց Ալեքսանդր Բլակի հակաեգիպտական կայսերներին

բարբերներ նահանգել ու օտարմանափակվել էր հոգեւորական աղմուկների աշխարհում, իսկ վարչատնտեսում տարածվածք արարելների և պարսկերենի յուրօրինակ մի խառնածնութուն էր: Մ. Ալին, ահա, Փոխարքայական գրասենյակից թև դիմաններին ու մեջլիսներից հնարավորին շափ դրաք մղելով բառասպառնով թև քերականութունը իր համար անհասկանալի այդ լեզուն, փաստորին պետական լեզու հռչակեց իրեն հարազատ թուրքերենը (105, 43): Եվ եթե հիշա է, որ փոխարքայական հրամանները և ընդհանրապես պետական կարգադրությունները, որենքները և հրապարակման ենթապահ սլու փաստաթղթեր լույս էին տեսնում երկու լեզուներով (թեպաւ արարելներն քնագիրն ստորագրվում էր ու հետևում թուրքականին), ապա արարելներն դիմումագրերը հատուկ բարտաղարների կողմից պետք է անպայման թուրքերեն թարգմանվեին, որպէսզի ընթացք ստանային:

Մ. Ալին չի կարելի դասել ժողովական լուսավորչալ կառավարողներին թվին, — պնդել է բազադիտակ գիտնական Այնը (10, 71): «Կարք լկա համաժին Եգիպտոսի փոխարքային տեսնել թաղարակբութւյան մի առաքելը: Հարկ է նրա մէջ տեսնել մի մարդու, որ, ոչինչ չսովորելով իրեն ժնունդ տված (օսմանչյան) հասարակութւյնից և որևէ մղում լքատանալով իրեն շրջապատող (կոյտական արար) ժողովրդից, հակապական վարպետութւյամբ գործեց նախ իր բարձրացման, ապա և իր պահպանման օգտին», — գրել է Մ. Ալին մերձավորագրույն աշակերտներից և պաշտոնական կենսագիրն կուտ բնչը: «Մ. Ալինը մարդասեր սուրբացին, դա բնավ էլ այդպես չէ», — կտրուկ շեշտել է կոյտական համալսարանի հիմնադրմանը աշակցած և ընդհանրապես նեղուսի լուսավորութւյան դրավածքին բաշտադեղակ շվեյցարացի մանկավարժ Վ. Գորը, հակադրվելով փոխարքայի մշտնախթանի միտումները դերագիտատող կերպագրեցներին և ընդգծելով, որ փոխարքան դպրոցներ էր բացում ոչ թե ժողովրդական զանգվածներին լուսավորելու «մարդասերական» նկատառումներով, այլ պարզապես իր սեփական օգտով, բազարական ու առգծական հոգի վրա իր հզորացման սիրուն (213, 42): «Եգիպտոսի համար Մ. Ալին ինչ արեց» բառ ինքյան պերճախոս խորագրով իր հոգվածում իշյամի արար իսլահականների պարագլուխ Մ. Արզուն փոխարքային մեղադրել է ազգամատուցութւյան մեջ, նաև այն բանում, որ նա մարդկանցից պարզապես կան է «իր տիրապետութւյան գործիքներ» և «ամբողջ երկիրն իր ու իր տո՛մի համար վերածել է տիրույթի» (116, 161):

Ի ղեկ, մերօրյա արար հետազոտողները համաձայն են ժամանակակիցների համարյա միաձայն հաստատման հետ: Եգիպտոսում Մ. Ալինի օրոք նահանգն «պետական գործ էր և պետութւյան համար մեծ դերու

բերվում», — գրել է ալ-Մակդիսին (183, 9): Փոխարքայի «կրթական քաղաքականությունն սկսվեց արդիական բանակ ու նախատորմ ստեղծելու նրա ջանքերի որպէս մի հլուրը» պարզապես, — ներակայցրել է պատմաբան Անանդը (198, 9—10):

Անհրձմիտ են նաև սովետական մի ամբողջ խումբ արարագետներ, որոնց տեսակետի առաջին նրբանկատ տարբերակը կարելի է տեսնել Ալինի հետևյալ գնահատականի մեջ. «Եգիպտական փառալի վերափոխութւյունները նպատակ ունեին ոչ այնքան հասարակական հարաբերութւյունների առաջադիմական կարգացումը, որքան գրանց ամբարանութւյան հարցերին նվիրված իր հետազոտութւյան մեջ է. Իվանովը գրել է. «Տեսնական, ուսմական ու տեխնիկական բարենորոգութւյուններն, որոք Մ. Ալին անցկացրեց Եգիպտոսում, բոլորն էլ ենթարկվում էին մեկ առաջադրանքի և բխում էին նրա իսլամաօտրական քաղաքականութւյան բուն իսկ էությունից: Չկա այլևի թլուր բան, բան՝ Մ. Ալինի համոզված «եվրոպականացեող» դարձնելու նրբանկատ արժող փորձերը: Նրա վերափոխութւյունների էությունն այն էր, որ հաղթահար մահճակական երկրների ազգամատնիխական հետամնացութւյունը՝ ոչինչ լքափոխելով կարճ սոցիալական, քաղաքական ու բարոյական կատարելութւյուն: ...Մ. Ալին մի բան էր ուզում. եվրոպացի շախախել կերպական դեկորով» (107, 177): Այս իմաստով էլ բնութագրական են իր 1839—1840 թթ., օրինակ, բոլոր տիպի կեղտոտական ուսումնարաններում սովորող 2761 սուրբ 1956-ը, այլ խոսքով ավելի բան 70 տոկոսը, բամբի էր թեկնում ազգական ուսումնարաններին (223, 139 և 219): Բնութագրական է, նաև, որ լուսավորութւյան ամբողջ սխտամբ մինչև 1836 թվական է, նաև, որ լուսավորութւյան ամբողջ սխտամբ մինչև 1836 թվական էր ենթարկվում էր պատերազմական նախարարութւյան, որի կազմում 1837 թ. է, որ ստեղծվեց մի-նիստութւյան տիպի կրթական հիման (Մեղադրիսի գիտնիք)՝ հանրային կրթութւյան առանձին վարչութւյուն: Սկզբում ալ-Քահթապի և Արզի բարձրագույն այդ խորհրդի ներք մշտական անդամներն էին կուտ բնչը, 2. Չրաքանը և Մ. Կնիբրջանը, մինչ 2. Հեկեկյանը վեց խորհրդական: անդամներին մեկն էր (69, 123; 223, 192—193; 198, 10; 156, հա. 4, 23):

Արար լինելու համար պետի ասել, որ Մ. Ալին կրթական թեկնուց և սոցիալական միջոցառումներն օբյեկտիվորեն որոշակի հոգ էին նախապատրաստելու Եգիպտոսի ազգային-մշակութային, ֆրանսիացի գիտնա-

հնարավորություն, ոչ էլ տրամադրություն ունեին առավել կամ նվազ քայցատալություն հանդես գալու իրենց երիտասարդ ընկերակիցներին այս կամ այն աստիճանի հեղափոխական կարգախոսներով: Պահպանողականների թեկուզ հարաբերաբար թուլացած, սակայն դեռ առկա դերակալության պայմաններում հիմնական կարգախոսները (Օսմանականության հավատարմության պայմաններում և օսմանյան ընդհանուր առաջին թեկուզ շրջանակներում՝ հասարակական և ազգային-մշակութային ջարթների ու առաջադիմության անհյուսիսաբարձր գիտությունն ու գիտելիքն են, հետևաբար և հրամայական անհրաժեշտությունն է ավելի ու ավելի ձգուել դրանք ձեռք բերելու են) նրանց համար և շարունակում էին մնալ առաջնայնորեն իրագործելի, հետևապես առավելաբար տարփողվող նպատակակետեր, սակայն գոնե երիտասարդների մաթի ու ոգու հեղափոխականացման նախանշաններն արդեն իրենց խիստ զգացնել էին առկա:

Գլխավորաբար առևտրավաշխատական՝ եվրոպական կապիտալի ձեռնարկումներին պատասխող, հետևաբար որպես առևտրական արևմտյան արդյունաբերողներին արտահանություն համար հույժ կուսակող և նրանց հայթայթած պատրաստի արտադրանքը ներքին շուկայում իրացնող, այդ ճանապարհին էլ հատկապես հույժի մատակարարների համար վարկառու-վաշխատու հանդիսացող բուրժուազիայի զազափարսախոսների միջավայրում, այլալ չհանդիպանում, սեղանական արդյունաբերության հետ առնչվող բուրժուաների սակավթվովության ու թուլության պայմաններում, նրեցների պատահականացումը կարող էր առաջին հերթին դրսևորվել երկրամասի առևտրատնտեսական իրավիճակի ժխտական դեհահատման գծով, մասնավոր որ ընկերությունն առաջադրում էր իր ժողովածուներում առաջ օգտակար անհեղափոխական ընդհանուր բնույթի, հատկապես այն մասին, ինչ առնչվում է կյանքի, գյուղատնտեսության, արդյունաբերության և ստևորի տարրեր կողմերի հետ» (40, 1868, № 1, 1):

Այդ տեսակետից բնութագրական են ընկերության հավաքներին ներկայացված և «Ժողովածու» պրակներում լույս տեսած երկու՝ Ս. Կասաբի 1869 թ. ապրիլի 4-ին «Արդյունաբերության վիճակի մասին և Մ. զի Ֆրեյի 1869 թ. դեկտեմբերի 19-ին «Առևտրի մասին» դեկուցումները, որոնք փաստորեն մեկը մյուսի լրացումն էին և որոնցում բնադրաբանում էր Սիրիայում եվրոպական պետությունների տնտեսական քաղաքականությունը, երկրի տնտեսական հետամնացությունը վերացնելու նպատակով մասնավոր նախաձեռնությունների այդ լուրջ խոչընդո-

ար: Զեկուցողները չէին վարանում ընդգծելու սիրիական գյուղատնտեսության, արդյունաբերության և անտառի ողբերգական վիճակը, այն փաստը, որ երկրամասն աննախընթաց արագությամբ դեպի տնտեսական անկում և աննախադեպ աղքատացում է դնում: Զեկուցողները նաև չէին վարանում ախտաբուժումն ևր կատարելու: Մ. Կասսարի կարծիքով, օրինակ, երկրամասի տնտեսական անկման պլանավոր հայտարարներին տեղեկ տեղական արհեստագործության անկման որոշիչ պատճառն այն էր, որ ըստփողանց մեծ քանակությամբ ներմուծվում և արտահանվող բարձր գնով լավ վաճառվում էին եվրոպական այնպիսի ապրանքներ, որոնց համար սիրիական էժան ձեռք բերված հումքն էր օգտագործվում և որոնք, հասկանալի է՝ ալեյի ցածր որակով, պատրաստվում էին նաև տեղում (40, 1868, № 10 և 1869, № 4):

Ալեյացիները, որ 1869 թվականից հետո ընդհուպ մինչև 1873 թ. վերջը, երբ գուտարեց գոյություն ունենալուց, Սիրիական երկրորդ բնկերության գործունեության վերաբերյալ, բացի սնուղազակի անխաղիներից, սկզբնաղբյուրները ոչ մի մանրամասնություն չունեն: Միակ ակնբախ իրողությունն այն է, որ բնկերությունը առաջինից շատ ալեյի սեևտուն ուշադրություն է ընծայել կայսր զորական զարգացման հարցերին: Եվ դա հասկանալի է, քանի որ 1860-ական թթ. անգամների թվում արդեն իսկ կային ստեղծագործական առավել կամ նվազ փորձ ու վաստակ ունեցող մի ամբողջ խումբ՝ բանաստեղծներ, արձակագիրներ ու թատերադրողներ:

Պետք է ասել, որ զրական սեևտերից ավելի պահին բացառիկ ուշադրություն արժանացող թատերագործությունն է եղել: Արաբական նոր գրականության արժանազան պատմագրողները, այդ թվում Կրիմսկին, զարացարիչ են այն փաստով, որ բնկերության նախագահության անդամներից երեքը թատերագիր էին: Նրանք ուշադրության չեն արժանացրել այն հետաքրքրական պարագան, թե լուսավորական առաքելության հովանավոր երիտասարդ գրողների շրջանում ինչու է միանգամայն այդքան հրապուրիչ դարձել թատերագործությունը, որն արաբական գրականությունը մինչև այդ որպես սեև չգիտեր և որը արաբական դպրության պատվաստվող ստեղծագործական բացառիկ ճիշդ ու աշխատանք էր պահանջում:

Իրականությունն այն է, որ նահապետական շարժման առաջին օգնորները համոզվել էին, որ եթե լուսավորությունը դասասնակներին հուրաբերելու համար առաջին հերթին սահմանափակ էր համապատասխան կազմակերպություն, իսկ այնուհետև, մարդկանց ամենօրյա հոգևոր սնունդ ու հասարակական պահանջները զարմնելու համար՝ նաև պարբերական

մամուլ ու վերջինիս էջերում էլ նոր տիպի գրականություն, ապա գրականության ճանապարհով լուսավորական ներգործության առավել ազդու միջոցը կարող էր միայն ու միայն թատրոնը լինել:

Միքելանջո միստիներական և այլ քրիստոնյա դպրոցներում, նաև մահմեդական միջավայրում, թատերական (անշուշտ հոգևոր կամ կրոնահայրենասիրական) ներկայացումներ հավանաբար կազմակերպվել էին դեռ մինչև XIX դարը, սակայն կլորպական տիպի ու որու թատրոնի բնկերությունն ստեղծվել է Սիրիական առաջին բնկերության անգամ, սալոացի Մարուն Նակիկաշի (1817—1855) նախաձեռնությամբ:

«Երազման թատրոնի հայր» (137, 70) Նակիկաշը համարադույն գեմբերից մեկն է շեշտելու եզրպատկան և սիրիական նահապետակներին միմյանցից տարբերակող մի գիծ. այն իրողությունը, որ առաջինները կաշկերված էին իրենց երկրի ֆեոդալական մնացող առարայի և Մ. Ալեյի շուսավորականության հետաքրքիրով: Վերհիշենք, այստեղ, այ՝ Քահաթի ուղեգրությունում կլորպական թատրոնին տրված և արաբական իրականության մեջ առաջինը եղող բարձր գեմաստեղական փաստը: Ֆրանսերեն և իտալերեն լեզուներին քաջգիրտան նույնպես արձանագրել է. «Տեսա թատրոններ, որոնց նպատակն է մշակել և կատարել լարթթել մարդու բնությունը: Նա ուսուցողական նպատակներով նաև պարզաբանել է թատրոնի տարտեսակները. «ուպերա» (օպերա) և «պրոպա» (արձակ), բոս որում վերջինի իր «կոմեդիա» և «արամիթիա» ենթատեսակներով: Նակիկաշի գրառումները մեկուղ և ալեյի քան երկու տասնամյակ անտիպ են մնացել (չբանց լույս էին տեսնում 1896 թ.), «Արզաթ Լուրնան» պիեսների իր ծագվածուին որպես ներածություն, սակայն հեղինակը դիմել է գործնական քայլի, թատրոնը զարմրելու կուսավորականության զենք. 1845 թ. Մոլիերի արաբականացած «Փայտը», իսկ 1850 թ. «Հազար ու մեկ գիշերներից» մի որված՝ «Հարուն ալ-Ռահիդը» իր իսկ հորինմամբ բեմ հանելուց հետո, 1851 թ. կառուցել է թատրոնի տեսակ շինք ու ներկայացրել մոլիերական «Նախանձառք», նույնպես աշտարոնի մշակված-տեղականացված (121, 377: 76, 458—460: 114, հտ. 3, 76: 156, հտ. 4, 139—140):

Մարունի մահից հետո թատրոնի շնքը թեպետ վերածվել է կեղևիցու, սակայն բնկերի հասարակայնության շրջանում թատերաբերությունը չի հանգել: Կրտսեր Նակիկաշը՝ բանաստեղծ-թատերագիր Նիկույան (1825—1894) 1858 թ. բեմականացրել է իր իսկ գրած «Ալ-Շեյխ ալ-Ջահիլ» («Ջահիլ ահիլը»), «Ալ-Մուսի» և «Ռարիա» պիեսները, ներ-

կայացուցմանը սկսելով Արդուլ Մեծիդին փառաբանող մի ուղերձով (116, 478): 1863 թ. ալ-Բուսթանիի դպրոցում բեմադրվել է Ֆենևունի «Տնկ-մակը»՝ Սուլեյման ալ-Բուսթանիի մշակմամբ: Միջրիական երկրորդ ընդհարման ջանքերով 1868 թ. ներկայացվել է նաև Սելիմ ալ-Բուսթանիի «Կարս և Լեյլա» տաղաչափյալ դրաման և «Ալեքսանդր Մակեդոնացին ու Ստատիրան»:

1860-ական թթ. թատրոնը Մսփանցել է նաև մահմեդական միջավայր 1867 թ. Արդուլ Ղանի Սելիմ Ռամազանը հրապարակել է Հարի-րիի թեմաներով «Մարուջեյի խաբանան» կատակերգությունը, իսկ տրի-պոլիցի հնաոճ բերթող Իրբահիմ ալ-Ահդարը (1826—1891) գրել է երկու պատմական դրամաներ՝ «Երկակոտոչը» (արարներն այդպես են կոչում Մակեդոնացուն) և «Իրն Զիյոունը Անգալուղիայում» (156, հ. 4, 219):

4

Վ. Ի. Լենինը Կոմունիստական ինտերնացիոնալի II համագումարի համար շարադրված և 1920 թ. հունիսին հրապարակված «Աղջային ու զաղուփային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուղղագծում» գրել է. «Առավել հետամնաց պետությունների և ազգերի վերաբերմամբ, որտեղ գերակշռում են ֆեոդալական կամ նահապետական-դյուզադիական հարաբերությունները, պետք է առանձնապես նկատի ունենալ առաջին»՝ որ անհրաժեշտ է բոլոր կոմունիստական կուսակցությունների օգնությունը բուրժուազեմոկրատական ազատագրական շարժմանը այդ երկրներում... ներկորդ՝ անհրաժեշտ է պայքարել հողերակառուցման և այն ունակցիոն ու միջնադարյան տարրերի զենմ, որոնք ազգեցություն ունեն հետամնաց երկրներում, երրորդ՝ անհրաժեշտ է պայքարել պանիսլավիզմի և նման հոսանքների զեն, որոնք փորձում են նվթրական և ամբրիկյան իմպերիալիզմի զեն ուղղված ազատագրական շարժումը միացնել խաների, կալվածատերերի, մուլաների և նմանների զիրքի ամբացման հետ» (6, հտ. 31, 171):

Առաջին հերթին նշենք, որ 1860-ական թթ. սկզբներին, երբ պանիսլավական զոդափարախոսությունը, որպես բաղաբանական վարդապետություն, լիբանանցի ալ-Շիրիվալի կողմից առնվազն մի հեգամյակի ընթացքում թել-թել հյուսված, ասպարեզ նետվեց և անմիջապես որդեգրվեց սուլթանապաշտ թուրք և այլազգի մատվորականների կողմից՝ մինչև 1880—1890-ական թթ., երբ ալ-Աֆղանին դորձավ գլխավոր տե-

ստանն ու բարոզիչը և մինչև 1920 թ. հունիսը, երբ հրապարակվեցին լենինյան թեզիսները, այլ խոսքով վեց տասնամյակի ընթացքում Պանիսլավականությունը իր տեսությամբ թեև պրակտիկայով ենթարկվել էր մի շարք անհաստ կերպարանափոխությունների, առանց սակայն իր էությունը փոխելու նշանակում է, որ Լենինի առաջին կարելի է բոլոր պանիսլավականների վրա տարածել ընդհանուր բնութագրականը, որը վերաբերում է բուն էություն. այն, որը խոսքով է կոմունիստական կուսակցություններին տրվող պանիսլավականների զեն պայքարելու անհրաժեշտության հանձնարարականի մեջ: Պայքարի հանձնարարականի զեն զգալի է երակայնել, որ Լենինը Պանիսլավականությունը դիտել է որպես անկասկածելիորեն հետադիմական տեսություն Այլ կերպ չէր էլ կարող լինել, երբ համաշխարհային պատերազմի տարիներին զբոսնակական իմպերիալիզմի կողմից հաջողապես օգտագործված (այլ խոսքով զբոսնակական իմպերիալիզմին հավատարմորեն ծոռայած) Պանիսլավականությունը սովյալ պահին բուկոլորազուցային կան երիտասարդ պանիսլավական թշնամիների ձեռքին զարձակ էր հակասովետական զործուղությունների արգելումով զեն (102, 12):

Այս խոսք էական պահը արևելապետական զրակառուցման մեջ որպես կանոն զարմանալիորեն շրջանցվում էր նվ ահա, այդպիսի շրջանցման, նույն ստան նաև լենինյան պարզ ու հստակ մտքերի մեջ խորամուխ չլինելու հետևանքով պանիսլավականների դործունեության մեջ «հակասականություն», ավելի շուտ «երկակիություն» հաստատելով մեր մի շարք արևելազեմոնքեր ընդհանրապես Պանիսլավականությունը վերազորում են «հակասական» կամ «երկակի» բնույթ (95, 34, 131, 94): Քյուրիմացյունները կայանում է այն բանում, որ Լենինի իր պանիսլավականներին հետապնդած նպատակների մեջ հաստատել է նրկու հիմնական, սակայն միաշաղկապված, պահեր. առաջինը՝ առաջադիմականը՝ «խրոպական և ամերիկյան իմպերիալիզմի զեն ուղղված ազատագրական շարժումը», և երկրորդը՝ հետադիմականը՝ «խաների, կալվածատերերի, մուլաների և նմանների դիրքի ամբացումը»:

Ուշագիր մտանցման դեպքում հեշտ է նկատել, որ բյուրիմացյունյան գլխավոր աղբյուրը լենինյան թեզիսների երրորդ դրույթն առաջին երկուսից կատարյալապես խզված ու տարանջատված, նաև՝ հակապանիսլավական պայքարի անհրաժեշտությունը շեշտող տողից մերկացված ընթերցելն ու մեղբերելն էր Իրականում Լենինը, աչքի առաջ ունենալով 1920 թվականի մահմեդական Արևելքը, պանիսլավականների մոտ ոչ մի «առաջին» ու «առաջադիմական» նպատակագրում չի հաստատել, այլ

Հաստատել է միայն ու միայն մեկը՝ «երկրորդը», Հետադիմական նպատակները: Կոմունիստական կուսակցությունների Համար գործունեության ասպարեզ, ստրատեգիա ու սակտիկա սահմանվում, նա Հիմնականում արդեն իսկ զադուխականցված քաղաքականությամբ արդարացիորեն տարրերակել է նախ՝ իմ պիրիվյազմի գաղափարին տիրապետության կամ գաղութականացման փորձերի (անշուշտ նաև դեռ չգաղութականացված երկրներում տեղական Հետադիմական-միջնադարյան կարգերի) դեմ մտադնշող բուրժուա-դեմոկրատ տարրերին, որոնց պետք է աշակցել (առաջին կետ), ապա՝ կղերաֆեոդալական Հետադիմական և իրենց ազդեցությունը պահպանած տարրերին, որոնց դեմ պետք է պայքարել (երկրորդ կետ), վերջապես՝ Պանիսլամականության ու նմանօրինակ Հն-տազգեմ մյուս հոսանքների հետևող տարրերին, որոնք փորձում են գաղութականացված կամ գաղութականացման վտանգի ներքո գտնվող երկրներին բուրժուա-դեմոկրատ տարրերի հակահիմ պիրախտական պայքարը ծառայեցնել իրենց դատասպարտելի նպատակներին՝ կղերաֆեոդալական տարրերի խախտված դիրքերի ամրապնդմանը (երրորդ կետ):

Քյուրիսմացությունն իրեն սնող պարարտ Տող էլ ունի: Ձևազրկվելով իր մտապայտատական ստացիան ոտք դրած եվրոպական կապիտալիզմի և արևելյան (հատկապես իր հողելվարքն ասպրող, հետևաբար և օրհասական ճիզեր ի գործ դնող օսմանյան) ֆեոդալականության բիրտ դեմահանդիմանման, նշանակում է՝ իմ պիրիվյազմի հարստուն էրապուրիայի և արևելյան որբան իշխանազորված կամ իշխանազորվելու վտանգի առաջ անդեմ կղերաֆեոդալական վերնախավի, նույնքան և գաղութային տարկացման ենթարկված կամ ենթարկվելու վտանգի առաջ կանգնած ժողովուրդների հարստուն դեմագրություն ժամանակաշրջանում, արևելյան ֆեոդալականության անհողողություն և կղերաֆեոդալական վերնախավի շահերի նվիրագործմանը հետամտող Պանիսլամականությունը որպես գաղափարաբարդարական վարդապետություն կարող էր հրապարակել ու մոլորեցնել (և, ինչ խոսք, մահճեղական միջավայրում բուրժուա-դեմոկրատական հոսանքների քուլտիվացիայի պայմաններում հրապարակել է ու մոլորեցրել) ժողովրդական հետամնաց զանգվածներին: Եվ սակայն մի՞թե դա կարող է հիմք դառնալ, որպեսզի մերօրյա պատմաբանը Պանիսլամականությունը էություն գնահատականի հարցում լինի կրկնահասցք, մանավանդ էլ նախ ևսուրբ այն իրողությունը, որ իր հակագաղութարարական քարոզի զուգանակներին ու հիմնական նպատակակետին անկախաբար, պանիսլամական գաղափարախոսությունը, Բուլամի Հիմամբ միավորվելու իր զավանանքում իսկ, հակասության մեջ

էր նահաջական (նշող մեծամասնությունը բնկուղ և քրիստոնյա) գործիչների բուրժուա-լուսավորական ազգայնական գաղափարախոսության՝ հայրենասիրության հիմամբ միավորվելու զավանանքի հետ:

Եթե համաշխարհային առաջին պատերազմի վաղորդյանի և հատկապես ետհոսմաներիցան իրավիճակի կապակցությամբ Պանիսլամականության «հակասական» կամ «երկակի» բնույթի վերաբերյալ գաղափարախոսություններ լինիչան թեկուսները շուրջն որպես հենարան, ապա այդ գաղափարախոսությունները գիտական դեահաստականի վերածելով ընդհանրապես Պանիսլամականության, որպես գաղափարախոսության թե շարժման (հասկացան նրա ծագում ժամանակաշրջանում և արարական մտախայտում) գործունեության առաջին հանգրվանում) այդպիսի բնույթ վերագրելու պատմական էշմարտության կուպիտալիզմից ինչպե՞ստե՞ս համար առաջին օրին մինչև վերջինը դիտվող նպատակը եղել է ու մնացել իր քարն ապրած ֆեոդալական կացութային և ֆեոդալ ազնվականության իշխանության վտանգազերծում-պահպանումը, բոտ որում նպատակին հասնելու արդյունավետ միակ միջոցը համարվել է մահճեղական ֆեոդալական խարխուլ պետականությունների՝ օսմանյան մականի ներքո համախմբումը, այլ խոսքով՝ օսմանյան հարձակումն ճարճատող կառույցի և սուլթան-խալիֆի ստանող իշխանության ոչ միայն ամրապնդումն ու ծավալում-տարածումը, բոտ որում ոչ թե սոսկ թուրքալեզու ժողովուրդներին համախմբումը, ինչ որ Պանիսլամականության իրողուն էր լինելու, այլ՝ համամահճեղական մի կաշրտության շրջանակներում: Պարզ ասած, թեթ Օսմանականությունը «պաշտպանական» էր իր բնույթով, ապա Պանիսլամականությունը բացահայտորեն ու ծարատախճանի սպասանախի-հարձակողական էր:

Չարկ է ընդգծել, որ Պանիսլամականությունը, կ՝ որպես գաղափարաբարդարական վարդապետություն, կ՝ որպես շարժում (մանավանդ իր օրյեկտիվորեն հակաբուրժուական, հետևաբար հակաազգայնական նպատակալիզմությունով), բոտ էություն հակազորքեր էր կրթի այս կապակցությամբ արձանագրել իրականում արարական գաղափարախոսական ոլորտում ոչ այնքան պանիսլամական, որքան գոնե կրեոլապես նրանից ցածրաստիճան օսմանական մտավիճակն աշխտոջ ունեցող Ղևնի առարկությունը բարարական Չարքոնք՝ տերմինին աղգային-բաղարական լիցք տալու ամեն մի փորձի: «Շիշարժան մի կարևոր կետ այն է, որ ծամանակի մահճեղական առաջնորդները նախընտ-

քում էին արարներին նախազգուշացնել՝ նախապատրաստվելու Արեւմտա-
քի ներխուժման դեմ, բան թե բարելազել նրանց՝ տապալելու թուրքական
վարչակարգը: Մասնեզական առաջնորդները, ինչպես և արարական
Մերձավոր Արեւելքի ազգաբնակչությունը ճնշող մեծամասնությունը, հավա-
տարքով մնացին Օսմանյան կայսրությանը՝ նրանք մտադրություն չունենին
թուլացնելու «գոյատևող իսլամական միակ հզոր կայսրությունը»: Այլ
խոսքով «արարական Ջարթոն» տրանսբրով արքայած զարնվածք սկզբ-
քում գարթոնը էր ընդզեմ թուրքական վարչակարգի շարունակություննե-
րի, փաստաբան էր քոնստիտյունի, և ցանկություն՝ այն բարեկարգե-
լու, այնինքն վերջ տալու վաս կառավարմանը, արարներին չնորհելու
թուրքերի հետ հավասար իրավունքներ և ավելի լայն շահի բազայական
և բազաբաշխական ազատություն: Օսմանյան կայսրությունից անջառ-
ջկելով կամ նրա կործանմամբ արարական անկախ ու զերիշխան կայս-
րություն ստեղծելու այլընտրանքը մասնեզականների ճնշող մեծամաս-
նության մտքում չէր ծագում որդես ցանկալի կամ հնարավոր» (276, 58):
Եթե Օսմանականությունը «հայրենիք» թե «տղտղ» իր հասկանա-
թյուններով իսկ պարզապես զեմընթաց էր արարական Ջարթոնից, ապա
Պանիսլամականությունը պարզապես հակադարթոնը էր: Արիշ
հարց, որ հիմնականում եզրագրական իսլամության շրջանակներում և
աշխարհիկ թե հոգեւոր ֆեոդալ-ազնվականության որոշակի մե խափն
շահեթից ու Բայամի ամբողջությունը հետնկարից ելնելով, պանիսլա-
մականները, ալ-Աֆղանիի դիմավորությունը, կաշմից դուրս են եկել
այլաբացիական զանգվածի հակաֆեոդալական տրամադրություններն ու
տարերալիքի բնկանները մղելկրոն դրույթների օգնությամբ ուղղելու
տարերկրացի «անհավատները» դեմ: Իրանով իսկ նրանք փաստորեն
օգնել են գլոտաշխական զանգվածների մասնակցությունը լայնացնելու
բուրժուա-դեմոկրատ, հիմնականում եկվոր մտավորականության ու աե-
նարիկ սպայությունը և հաստատելու Վամստեղ շահեթով, թե-
կազ և տարեր նպատակազգումներով բորբոքող հակազգութարարա-
կան պայքարի սոցիալական հենարանը եմ վերջինիս լայնացնելով,
պանիսլամականները դրանով իսկ միամտանակ ակամայից որոշապես
լայնացրել են միջնադարյան խավարմությունը, հետևարար և իրենց
իսկ զագափորատությունը մասնաւոր իսլամի կուսավորականության
ներգործություն սոցիալական ոլորտը: Արիշ հարց, դարձյալ, որ հակա-
զգութարարական պայքարի հաջողությունը պարզամտորեն իրենց
իզեակի՝ օսմանյան խալիֆ-սուլթանի իշխանության ամբարանական գրա-
վականը համարելով և ուրեմն այդ պայքարը հոգեւոր բարոզի ամենա-

գոր փութի օգնությամբ ամեն կերպ բորբոքելով, այս դեպքում ևս նրանք
ակամայից հետնկարում աշխուժացնելու էին իրենց իզեակի թե իրենց
իսկ զերեզմանափորին՝ ժողովրդական զանգվածների ազգային ինքնա-
գիտակցության զարթոնքը:

Արեւելագիտական գրականության մեջ Պանիսլամականության ծնուն-
դը ու զարգացումը ավելի հաճախ կապացվում է Մոհամմեդ Զեմալ
ալ-Գին Մաֆդարի ալ-Աֆղանիի (1838/9—1897/8) անվան հետ (131, 7
և 89): Եթե զա, ինչպես տեսնելու ենք, միայն մասամբ է հիշտ, ապա
արզեն համարյա ամբողջությամբ անհիմն է այն պնդումը, որ ալ-Աֆղա-
նին միամտանակ ըստ կոթիյան մի այլ շարժման՝ Խալամի «աշխուժա-
ցիայի» առաջին ու դիմավոր գագափարատես վարդապետն է եղել (102,
8: 104, 22):

Հակասակ մի շարք հեղինակների ետնդուն շահեթին (138, 239;
228, 6—8; 233, 108—112), ալ-Աֆղանիի կյանքին վերաբերող շատ ու
շատ աղյալներ խիստ հակասական են մեծում: Առ այսօր շափազանց
մինն են հաստակապես նրա զեմընթաց ու գործունեությունը ինչպես վաղ, այն-
պես էլ վախճանական պատկերն ու դրավզները:

Ըստ է. Ջ. Բրաունի և այլ հեղինակների, նա ծագումով պարսիկ,
հետեւարար շիք էր, սակայն աֆղան, ուրեմն սուննի էր ձեւանում ոչ միայն
շահեթական կուսավորության հետապնդման դեմ ապահովագրվելու հա-
մար, այլև՝ ուղղափառ մասնեզականների շրջանում ունկնդրությունը գրա-
նելու նպատակով: Համենայն դեպես նա քնդհանուր ամամբ համարվում
է Քարուլի մերձակա Աստաբազով ամառում ծնված աֆղան (102, 8), որ
իր ծագումը միտոֆիակացնելով տանելով է Մոհամմեդ մարգարեի արա-
րական քորաշախական ցեղի հաշեմական տոհմի հետ և այդ ձևով էլ
ապահովվել Հուսեյնի տոհմանունով և սեյիդ արողտով: Նշենք, որ
այդ միտոֆիկացման արդյունքը դուր է եկել և անվերապահորեն ըն-
դունվել է արար հեղինակների մեծամասնության կողմից (135, հտ. 2,
421—422):

Ալ-Աֆղանին Քարուլում հոգեբուրականների միջավայրում ստացել է
հարուստ ազնվատոհմիկին վայել հիմնավոր կրթություն: Սովորել է ոչ
միայն լեզունը (որնք իր թափառունների ընթացքում բազմանալու
էին՝ աֆղաներեն, պարսկերեն, արաբերեն, օսմաներեն, ֆրանսերեն,
անգլերեն, ռուսերեն), այլև՝ մասնեզական իրավունք, փիլիսոփայություն,
տրամաբանություն, պատմություն, դիվանագիտություն, մաթեմատիկա,
աստղաբաշխություն, բժշկագիտություն: Են 1856—1857 թթ. գիտելիք-

ներք խորացնելու նպատակով եղել է Հեղհաստանում և Հիւզարում (169, հտ. 2, 294):

Կյանքի առաջին երեք տասնամյակները նա անց է կացրել Հիմնականում Աֆղանստանում, բոտ որում իր բազարական գործունեությունն սկսել է վաղ, 19—20 տարեկանից ծառայելով էմիր Գոսա Մոհամմեդի արքունիքում և տարբեր առաջադրանքներով լինելով միջինարևելյան մի շարք երկրներում:

Հենց այդ ժամանակ էլ, որևէն ոչ թե 1870-ական թթ. սկզբին, ինչպես երբեմն պնդում է (131, 89), այլ՝ 1860-ական թթ. սկզբին նա առաջ է բաշել Աֆղանստանի, Բելուջիստանի, Կաշգարի, Զարգանդի, Բուխարայի և Կոկանդի մահմեդականների վարչաքաղաքականորեն միավորելու ծրագիրը, որի իրականացումը պայմանավորվում էր օսմանյան սուլթանի բարեհաճ հովանավորությամբ և Հեղհաստանի օսմանյան կան որոշ շրջանները ֆինանսական օժանդակությամբ (253, 50)։ Այդ ծրագրի առաջացման գործում գուցե թե իր ղեկն է ունեցել իսլամացեալ Մ. Սաևֆանյանցի կողմից ենթադրված մի ազգակ. Իրանի, Իրաքի, Աֆղանստանի, Հեղհաստանի, Քուրբախյի և այլ սերկրների հետ ծանոթությունը այլ-Աֆղանիին թույլ ավելց գազու գիտակցել նրանց մոտ հասարակաց խնդիրների սակայնությունը։ Տնտեսական ու մշակութային հետամնացությունը, հոգեկան լճացումն ու ապատիան, բնակալեւների և օտարերկրացիների տիրապետությունը ամենայն հավանականությամբ խոցեցին այլ-Աֆղանիին և նախասահմանեցին նրա ապագա գործունեության ուղղությունը» (131, 89):

Եվ սակայն այդ ծրագրի առաջացման գործում նույնքան հավանական կարող է լինել առկայությունը արտաքին իրաւանների։ Իր սուր ծայրագ ցարական Ռուսաստանի զեմ ուղղված և ուլյայ պահին Անգլիայի գաղութարարական շահերին խիստ պատշաճող այդ ծրագրերը կարող էր ներշնչել, առնվազն բաշելելովն Լոնդոնից։ Բանն այն է, որ այլ-Աֆղանիի հովանավոր Գոսա Մոհամմեդը, Բարակզայ իշխանատոհմի Հիմնադիրը, Աֆղանստանի էմիր հռչակվելուց հետո Երկրի միավորման իր շահերում և անգլիական գաղութարարների ներթափանցման փորձերի զեմ իր պայքարում, մինչև 1842 թ. պարտություն կրելը, հենվել էր Ռուսաստանի աջակցության վրա։ 1842 թ. աֆղան ժողովրդի հակաանգլիական հաղթանակի շնորհիվ իր արտորավայր Հեղհաստանից վերադարձած և Կանդահարը, Արևելյան Սիստանը, Հերատն ու Ճարխանյան Ամու Դարիան իր իշխանության ներքո արգեն իսկ համախմբած, Գոսա Մոհամմեդը 1850-ական թթ. Երկրորդ կեսին իր միավորելու կոանդն արգեն ուղ-

ղի էր զեպի հյուսիս։ Այս կապակցությամբ անտեղի չի լինի արձանագրել, որ իրանական պատմագիտության մեջ ոչ առանց հիմքի այլ-Աֆղանիի գործունեության ակունքներում անգլիական հովանավորության տարրեր որոնողներ են եղել:

Ի զեպ, արարական ազգային-մշակութային Զարթոնքի շարժման բոլոր հետազոտողները միաբան պնդելով, որ 1870-ական թթ. եզրպատկան միջազմարում այլ-Աֆղանիի գործունեությունն իր սուր ծայրով հակաբրիտանական նպատակավորվածություն է եղել, շեն փորձել դրա ակունքները որոնել սելյուդի հյանքի նախընթաց՝ բարուլյան հանգրվանում, այն էլ այն ղեպարում, երբ նման փորձի համար թվում է թե սակա էր անհրաժեշտ էյակետը՝ աֆղան ժողովրդի հակայական զուհերի զեմով հերոսական պայքարն անգլիական գաղութարարների զինված միջամտության զեմ։ Այդպիսի փորձ չի կատարվել ըստ Երևույթին հենց այն պարզ պատճառով, որ այլ-Աֆղանիի գործունեության խնդրո տարրական հանգրվանում հաջողության որոշակի հույսով կարելի է անգլիասիրության տարրեր որոնել։ Այս պայմաններում ավելի բան զարմանալի է, որ Մ. Գաբրուբի նման մի յուրջ հետազոտող առանց որևէ կովանի այլ-Աֆղանիի հարկերից հեռացումը բացատրել է այն բանով, որ իրր սելյուդը Գոսա Մոհամմեդի կողքին պայքարած լինելով անգլիական ներխուժողների զեմ՝ «անգլիացիների գործակալ» էիր Ալիի զահ բարձրանալուց հետո իր կյանքն ապահովագրելու համար է ապաստան որոնել Հեղհաստանում (181, 142):

Քո՞ղ, որ տրամաչանություն չկա «անգլիական գործակալ» էիր Ալիի գաղտաստանից փախչող «հակաանգլիական» սելյուդի միտոժամանակ բան իսկ անգլիացիների տիրությունում անմտանգութություն որոնելու այս պատմության մեջ։ Վերջինս իրականում զեմթեթաց է նաև պատմական հշմարտությանը։ Բանն այն է, որ Լոնդոնի հեա հակացարական ներգաղնություն շրջանում Գոսա Մոհամմեդին հավատարմորեն ծառայույց հետո, այլ-Աֆղանին ավելի բան վեց տարի որպես պլատական այլմ ժառանգ է նաև 1863 թ. զահ բարձրացած էիր Ալիին և միայն 1868 թ., երբ էմիրն արղեն ավելի ու ավելի բախման մեջ էր մտնում անգլիացիների հետ, մինչև վերջ շարժարբանված ինչ որ «խառնակություններ» զրգամբ վտարանդիվ է Հեղհաստան, որտեղից էլ ճամբվել է ղեպի Պոլսու և եզրպոսու (25, 21—24):

Բնականաբար հետաքրքրական է և այն հաղորդումը, որ 1868 թ. միառժամանակ Հեղհաստանում բնակվելուց հետո, այլ-Աֆղանին 1869 թ. Հիւզարի և եզրպոսուի վրայով հայտնվել է Պոլսում, որի բրիտանական

հովանավորություն վայելող վերահասակի շահերի ու նկրտումների հետ սերտ պորտուկապ ուներ իր ծրագիրը: Պատահական չէ, որ նա շատ շուտ մերժել է սաղաթագամ Ամին Ալիի միջավայրին և փաշայի հանձնարարություն էլ նշանակվել մեղխութի մատթափ անդամ (169, հտ. 2, 295: 25, 25):

Հարկ է նշել, որ բացի փոքրատառ լինելուց, ալ-Աֆղանի պանդուխտականությունը տվյալ պահին զեռ կռու, արմատացած և հարատև համազունք էլ չի եղել, որպեսզի համապատասխաներ սուլթանական վերահասակի ակնկալություններին: Եվ իրոք, Պոլսում հայաստանցի շուրջ վեց ամիս անց, օսմանյան նորաստեղծ «համայնարանի»՝ «Ծար ալ-Ֆունուռնի» միջավայր ազատ ելք ու մուտք ունեցող սելյուղ 1870 թ. ղեկ-տնմարտին այնտեղ հանդես է եկել «Գիտություն և արհեստների առաջընթացը» թեմայով մի դասախոսությունը (25, 25—27): Գրանուած օսմանյան մարաթաղաք թափանցող լուսավորական հովերին այս կամ այն շարժով առաջատար բացելը, թեկուզ մարտերի հետևող լինել հավակնողի ղեկորում անպատելի, կարող էր անմիջ մի հրապարակ, շատ-շատ անցողիկ մի մոլորություն թվալ: Ավելի ծանրակշիւր մահմեդական աստ-վածաբանական միջնե վերջին ստորակետը սրբազորմամբ զոգմաներից շեղումն էր, որով աչքի էր ընկնում սելյուղի կուլյոր: Օրինակի համար, խիստ բարձր գնահատելով գիտնականների «ստորեկական» ղեկը և բանականությունը առաջնորդող նրանց ստանալ-արհեստը գերադասելով մարդարների ներշնչանքով առաջնորդող ստանալ-արհեստին, նա գտել է, որ ի հեճուկս ըստ ժամանակի և պայմանների հարափոփոխ մարդարական պատվիրանների, գիտական սամանուներն ու հայտնագործությունները հավերժական են ու արեղերական: «Բոլոր ժամանակները չէ, որ մարդարների կարիք ունեն, — հայտարարել է նա ու շարունակել, — միշտ զեռ միշտ և ամենուրեք անհրաժեշտ են գիտնականներ, որոնք ընդունակ լինեն մարդությունը զուր քաշելու խավարումություն հանձնից և ղեկու ծաղկման ու բարգավաճման ուղու վրա» (253, 47):

«Հերահիլուսական գաղափարներ տարածող» (119, 107) և մոլենուց ալիմներին կատաղությունից կանաչեցնող այգյաթի կուլյոր հասկանալիորեն անրթմ և անսպիտակ դավանամոլություն ենթադրող Պանիսյանականության հետ անհամատեղելի էր, կուլյոր, որի շուրջ բորբոքված կրքերի և հատկապես «Կակիտ» թերթի բուռն քննադատության պայմաններում է, որ ալ-Աֆղանին ղեկավար Մեթառ ուխտագնացության պատրված կով խուսափեց իսլամի բժախնդիր պաշտպանների հուլածաներից և մայրաքաղաքից հեռացավ: Ի միջի ալլոց հնարավոր է ենթադրել, որ պըր-

պրտուն մտքի և անհանցիստ ու համարձակ խառնվածքի տեր սելյուղի շուրջ մթնոլորտը շիկացնելու գործում իրենց բաժինն ունեցած լինեն նաև հանձնիչ ալ-Աֆղանի հարձակ մրցակցի մի հեղինակություն անստեղ ալ-Շիդիակի խժքծանքները, զուցի թե՛ մասնություն գիրը:

Անգ հայտնի են այն հանգամանքները, որնցում ալ-Շիդիակը մարտական հայածանքներից փախելով ապաստան որտեղ եղիվորում և 1820-ական թթ. վերջին դարձավ Մ. Ալիի պաշտոնավերջի արարական բաժնի երրորդ խմբագիրը՝ ալ-Աթթարից և Եհհար ալ-Գինից հետո 1834 թ., հրապարակելով իր եղբոր կյանքի արժեքած բողոքական ուսմանը: Եւ տեղափոխվեց Մալմա և միսուններին գործակցեց թարգմանելու Աստվածաշունչը, ըստ որում 1851 թ. իր թարգմանությունը նոր կտակարանը լույս տեսավ Լոնդոնում, որտեղ, նա, Քենդրիքի համալսարանին կից Աստվածաշունչի թարգմանության ընկերության հոտուկ հրատարակ, Էդլ էր ալվել քան մի տասնամյակ առաջ: Մալմայում 1859 թ. նա ճշտարակինց արարելեի համալիններին նվիրված «Հեռաբերական բուրբ իմաստների համահավաքը» բացատրական բառարանը, որին հետագայում հաջորդելու էին մեկ տասնյակ գրքեր: «Գիշերների գաղտնիքը» համալիններին և թեկավոր խոսքերի բառարանը (Պոլիս, 1867), ձևաբանություն և շարահյուսության հարցերին նվիրված և օսմանյան թե խղիվական կառավարություններից որպես պետական զբոսընթերի զասպիրք հրամանագրված ձևաբանը՝ «Ենդրարիլի բավարումն ու ցանկացողի ըղձանքը» (Պոլիս, 1871), ստուգաբանական «Բառարանի լրտեսը», որ Ֆիրուզաբադի բառարանի ընդարձակ քննադատություն է (Պոլիս, 1887) ևն:

1846 թ. ալ-Շիդիակի կյանքում տեղի ունեցավ կարևոր մի շրջադարձ. մզկորա շրջագալության էլած թուեխոյան Ահմեդ բեյին ձուլված իր ներքոքը պատճառ դարձավ, որ հատուկ ուղղմանավով որպես պատվու հյուր Մալմայից գնա «Լուսավորչայ բունակալ» արբունիրը, ստանախոշոր պարզևազումար և այլ կապակցությամբ մահմեդականությունն ընդունելով ու Ահմեդ անունը վերցնելով վերադառնա կզդի: Ի ղեկավարնեղապետական գրականության մեջ ալ-Շիդիակին հավաստափոխության մղող զրգապատճառների շուրջ ստեղծված բավականին ծավալուն կուլյորից դժվար չէ եզրակացնել, որ ավագ եղբոր և ունեղրված-հայածված ու Դամականում շքավորության մեջ մահացած հոր նակատադրից, նաև իր ղեկ ձեռնարկված համահանքներից մարտնականության (և ընդհանրապես բրիտանուներության) ղեկ կուտակված զայրուլիին ու ատելուլյան (156, հտ. 4, 262) անպայման հարկ է զուգորդել Զարիս-Ահմեդի

անկղբունքայնությունն ու շահամոլությունը (116, 237), առանց սակայն մոռանալու իր դեմ հետագա ամեն մի զավի ու սոսնձությունն զեմ Իսլամի ամենազոր վահանով (իսկ մի փոքր ավելի ուշ՝ նաև անղեցեցի կնոջ շնորհով բրիտանական հպատակություններ) ապահովագրվելու միտումը: Հենց սպրած իրարարձությունների դրոշմը պիտի համարել, երևալի, այն հանգամանքը, որ արաբական զբաղանդության պատմարան Հաննա ալ-Ֆախուրիի բառերով սասժ՝ ալ-Շիդիակը ոչ միայն «անսկզբունք» էր, այլև «թավականին թունոտ նկարագրի տեր», «չար մարդ», որ սկսելու թեև (ուրիշներին) ծագրի ու ծանկի (ենթարկելուց) հաճույք էր ստանում» (135, հտ. 2, 416—417):

1850-ական թթ. ալ-Շիդիակը Փարիզում էր և 1854 թ. արաբազետ Գ. Դյուկայի հետ արաբերեն լեզվով հրատարակում էր «Եվիթեր, եգիպտոսի և Միրիայի արաբների օգտագործման համար ֆրանսերենի բերականությունը», իսկ հաջորդ տարին՝ իր կիսաուղեգրական «Մայլ առ բայլ Ֆարիակի հետքերով» վեպը, որի հերոսն ինքը հեղինակն էր և որում մեզ համար հետաքրքրականը՝ եվրոպական առօրյայի պատկերումն ու համեմատումը արևելյան-արաբականին հետ, կատարված էր զսպումքամբ և քննադատարար: Եշենք, որ ալ-Շիդիակը 1852 թ. հեղինակել էր ծավալուն մի աշխատություն, որի վերջնական հրատարակություն (Քուսիս, 1866) խորագրին էր «Մալիմայի տեսարման վայրերի նկարագրությունը և նվիրյալայի գիտությունների գաղղղիկ բացահայտումը» և որում ամփոփված էին ներդրական տեխնիկական առաջընթացից իր տպավորությունները: Արտ լուրջոտ իրավամբ է շեշտել, որ ալ-Շիդիակի այս մատյանը, ի տարբերություն արաբական այլ ուղեգրությունների, հասակագին ալ-Քահաֆիի նախընթաց և Մարրաշի հետագա զբրերի, ավելի շուտ ընթացելու ու մակերեսային տպավորություններին, բան թե որոշակի սկզբունքների շարադրման և արաբների միջավայրում սրուպագանդման էր միտում (193, 105—106):

Արդեն իսկ մեծահռչակ, ալ-Շիդիակը 1853 թ. Փարիզում լույս ընծայեց Ռուսաստանի դեմ Աբդուլ Մեջիդի ռազմական «սիրանքները» գովերգող մի ներքող, որում կոչ էր անում օսմանյանների ցարին՝ դեմ համամահմեդական սրբազան պատերազմ հայտարարել: Եվ ուրեմն պատահական չէ, որ 1860 թ. սուլթանական հատուկ հրավերով (135, հտ. 2, 415) նա քնակություն հաստատեց Պոլսում և հիմնադրեց Իսլամին ու երա խալիֆ-սուլթանին անմնացորդ ծառայելու առաջադրող իր օրաթերթը՝ «ալ-Ջաուաիթը» («Պատասխաններ» կամ «Նորություններ»), որ շուրջ քառորդ դար, մինչև 1884 թ. էր գոյատևելուս Կոստյովն այսպես և դեա-

հասուկ ալ-Շիդիակին. «նա կըլավ մահմեդական աշխարհի այն մեծամիտ հասակակալների գործիչներին մեկը, ովքեր հիմքը դրեցին այն գաղափարների, որոնք կազմեցին հետագա պանիսլամական տեսությունների հայացքների գումարը» (113, 244): Կոստյովը սխալված էր լինի եթև պնդել, որ «ալ-Ջաուաիթը» Պանիսլամականության գաղափարների շատագրվման ու տարածման առաջին և զիխավոր օջախը հանդիսացավ ոչ միայն արաբական իրականության մեջ, այլև ամբողջ մահմեդական աշխարհում:

Ալ-Շիդիակի քարոզած օուղղափառ Պանիսլամականությունը, որպես կրոնաքաղաքական ավարտուն գաղափարախոսություն, հանդուժ էր երկու հենասյունների վրա: Առաջինը՝ առանց խտրության բոլոր մահմեդականների հոգևոր-կրոնական ընդհանրություն, կամ որ նույնն է՝ Իսլամի վերագալային և վերջասակագրային էություն վճարողության ընդդեմում էր: Երկրորդը՝ մահմեդական հոգևոր-կրոնական ամբողջ ընդհանրության համար խալիֆի ղեկավարության ներքո քաղաքական համայնքման բացարձակ գերադրումն էր վարչաքաղաքական ամեն մի միավորի ու միավորման:

Գծվար չէ համոզվել, որ այնքան, որքան բոժ՝ գտարյուն Պանիսլամականության ղեպրում այդ երկու հենասյունները սիամյան երկվորյակների նման անբամանելիորեն միաշաղկապված էին և XVI դարասկզբից էլ խալիֆի անհակահաճախելի հանգամանքով օսմանյան սուլթանն էր հանդիսանում: Այսպես, ապա 1850-ական թթ. վերջերին կամ 1860-ական թթ. ալ-Մեջիդի պանիսլամականությունը դեռ այն մեծատատվող չէր, քանի որ թեև ուղեկ երկրորդ հենասյան զմով սուլթանն ուղղություն որոշակի խոնարհում կատարելով և իր նպատակահետին նրա օրհնությունը անգլոստանի համարելով հանդերձ, նա սու առավել իր անմիջական տեսացանուխ (ավելի շուտ իր գլխավերում որպես ամպոսումսի) բարձրացող աստղերի՝ Գոսա Մոհամեդի և Շիր Ալիի իշխանատե՛ն նկրտումները, հետաքար և զրանք շահագիտորեն բորբոքող բրիտանական գաղութարարների հաշվարկները Իսլամի օգնությանը բավարարելուն էր հետամտում:

Ալ-Շիդիակի համար նպատակակետ բոլորովին այլ և անհամեմատ մեծածավալ էր ու կենտրոնանում էր Օսմանյան կայսրության համամահմեդական պետության վերածնելու շուրջ: Ի զեպ, դի Քարաքզին հաստատելու համար, որ Աբդուլ Ազիզ սուլթանն ինքն անձամբ հոգում էր իր մականի հակողությունից զուրս մնացած մահմեդականների շրջանում իր խալիֆայության կապը ձգտելու արամագրությունն աշխուժացնելու գործը և

գավառների նորոթյունները Արևելքում տարածելուն, որ նա չի խուսափել կուլթ ունենալու արարական աշխարհում և ընդհանրապես մասնագական երկրամասերում կրոնական խավարամտության և ավատատերական հեղձուցիչ տորթոյի դեմ, ի նպաստ կնոջ ազատագրման և առաջադիմության նդ (135, հտ. 2, 418) :

Այդ բոլորն այդպես էր, անշուշտ :

Եվ սակայն, ինչպես արևելագիտական գրականության էջերում մի անգամ չէ, որ շեշտված է, նահաջական գործունեությունն ու լուսավորական արժանիքները ալ-Շիրիական ոչ թե իղևալից, կուտ ու նպատակագրայն համոզմունքներից էին բխում, այլ արարական աշխարհում իրեն արդեն իսկ պարտադրած նոր ժամանակին համընթաց բալլելու, ժամանակի մարդ լինելու, ըստ որում պատշին ու անփոխարինելի ետրարար զուրա գալու տենչից: Եվ հենց այդ պատճառով էլ շիրիական նահաջական արժանիքները որսնորդել են ոչ թե հարստներին, այլ՝ լոկ պարբերականներին, ըստ որում բնորոշումներում մինչև իսկ հականահաջական ծանրակշիտ գործողություններով: «Եկանկամ շնորհալի զրոտ, խորը զարգացած ոչ միայն արարական իմաստով, ալ-Շիրիակն ըստ երևույթին չի գուրգուրացել ոչ մի սկզբունք, այլ կարողացել է առաջնորդ պաշտպանել այն, ինչ նրան ավելյա պահին անհրաժեշտ է թվացել», — գրել է Կրաչկովսկին (114, հտ. 3, 124): Իսկ այն, ինչ պաշտպանել է հատկապես իր հասունության ամբողջ նասակում, կր իր հուշեր կարող էր անթան օգնել գրական տեղաշարժերն աշխուժացնելու, նգել է մի սկզբունք, ավելի շուտ մի իղևալ, որ նահաջի սրբազնագույն սկզբունքին և իղևալին դեմընթաց լինելով, օրջնկոխիորեն ալ-Շիրիակին հնացրել, նույնիսկ հակադրել է Զարթոնի շարժման, պատճառ դրանավով, որ նա մինչև իսկ դիտվի որպես հակադարձների շարժման ոգևորի Իսկ դա՞ չէր կարող հենց այդպես էլ չլինել: Արարների մտայնության աշխարհականացման շանքերին հակադրվելով համատարած մասնագրականացման հետամտել, բաղաբական ու քաղաքացիական ազատությունների բարոյին հակադրվելով սուլթանական րոնաարիական վարչակարգի ամրապնդումը ըստագովել և չլիզբունքայնության դիրքերից աղնվականավարի պաշար մղող իր հակառակորդների անսկզբունքայնորեն և լրտեսավարի օսմանկան պահնորդության մատենի՝ բնականաբար նշանակում է ազգային-մշակութային Զարթոնի շարժման միակամեվելու, անսկզբունքանում պատկանելի տեղ զբաղելու իրավունքից զզալիորեն զրկվել:

Ի միջի այլոց իրողություն է, որ ալ-Շիրիակը որպես կանոն չի կարողացել հանդուրժել, որ որևէ ասպարեզում արար որևէ մտավորական

իրեն կանխի ու հուշակվի: Դի Թարրազին հարկ է համարել ընդգծել, որ նա իր թշնամանքն այս կամ այն կերպ զրևորել է ժամանակի բոլոր հեղինակությունների դեմ, սկսած Հասունից և ալ-Ցաղիչիներից մինչև Ռ. Դահադի, Բ. ալ-Բուսթանեն, Ա. Իսահաբ, Լ. Մարունչին ու վրյունները (169, հտ. 1, 62), մանավանդ որ, ինչպես դիտել է ավել Արդ ալ-Ղանի Հասանը, նրանք, համարյա առանց բացառության բրիտանեյա նահաջականներ, առավել կամ նվազ կորովի րևնադատում էին իսլամաճոլ իր հոանը (173, 74—75, 108, 151—152, 167—171):

Ալ-Շիրիակի բաղաբական-հրապարակախոսական գրոնունեության առավել բնութագրական պահները մենք, որ հետաքրքրական է նաև արարական ազգային զարթոնքի պատմության համար, Ռ. Հասունի հետ նրա փոխհարաբերությունների հարցն է:

1861 թ. ծխախոտի մարտային վարչության պես կարգված Հասունը հաջորդ տարի, որպես մեծ վեդիք Ֆուադ փաշայի անձնական բարոտուղար, մասնակցեց Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսին: Եվ սակայն Պոլիս վերադարձից կարճ ժամանակ անց նա ձեռքբերվեց ու բանտարկվեց: Պաշտոնական, օստիկանություն կողմից հորինված պատճառարանները՝ իբր Հասունի գեղատեսչությունում բացահայտված շարահանությունների «փաստը» (156, հտ. 4, 248), նպատակ ուներ մուրեքեցնել հասարակական կարծիքը և բողաբել ծրագրված հաշվհարդարի իսկական զրգացառանգը. հասարակական-քաղաքական տեսակետից հայազգի գործիչ «վտանգավորությունը»: Ասենք, որ արևելագիտների կողմից համարյա ընդհանրորեն բեղունված ենթադրության հիմամբ, թուրքական սուրիանությունը հաշվհարարի գիծելու համար ձեռք էր բերել նաև կենսակետերն անհրաժեշտ տիմամվորում: Ժառնության մի գիք, որ ստորագրել էր ալ-Շիրիակը: Վերջինս, ցանկանալով մենաշնորհի վերածել օսմանյան վերնախավի համակրանքն ու հովանավորությունը. նաև ստատա-ձեռնությունը, չէր կարող զրգական-հրապարակախոսական ասպարեզի իր լիսավոր ու բրիտանյա ախոսանի՝ Հասունի հետ հաշվհարարը կյանքի նպատակ շարձնել: Ավելին. գաղտնիք չէր, որ արարների, կառչին հերթին բրիտանյա արարների ինքնուրույնության ըստագով Հասունը, ալ-Շիրիակի սուլթանաարիական և իսլամաճոլ Էստդին հրապարականորեն հակադրվելու և իր նկատմամբ նրա թշնամարին մամուլով հակահարված տալու հնարավորությունից զուրկ, հորինում և ձեռագիր վիճակում Պոլիս արարական շրջաններում տարածում էր կծու ծաղրով գրություններ: Հետաքրքրությունից զուրկ չի լինի նշել, որ

Հասունը զեռ այն ժամանակ ալ-Շիրիական զատապարտում էր ու մինչև մահ զատապարտելու էր որպէս արարների ազգային ըզմանքների դավաճանելով ստրկամտորեն սուլթանին ծառայող, իսկ ալ-Շիրիական էլ Հասունին մեղադրելու էր որպէս օսմանյան պետութեան ու ժողովրդին դավաճանելով օտարներին ծառայողով (173, 152 և 169):

Հասունին մահացու հարձակ հասցնելու սուլթի որոնող ալ-Շիրիակը այն շուտով հայանագործեց: Հայազգի հրապարակախոսը 1859 թ. հորինել էր «Իսլամի վրայից բողոծածուկովի վերացումը» (սճար ալ-իսլամ) և ալ-Իսլամ) վերնագրով մի գրքուկ, որը իսլամական մոլեռանգ հետազոտութեան զեռ սուր և բուռն բանակնական իր եզով, նաև Մահմաձեզ մարգարեի անձի և ուսմունքի զեռ իր քննադատութեամբ՝ կայսրութեանում մահապատժի արժանի արարք էր: Անստորագիր գրքուկը, որ երկար ժամանակ թաքուն չըլտում էր արար բրիտանյանների միջավայրում, 1861 թ. ի վերջը բնկավ ալ-Շիրիակի ձեռքը: Չուշացավ համապատասխան զեկուցագիրը և Հասունն անմիջապէս ձերբակալեց:

Պետք է սասել, որ ալ-Շիրիակի մատնութեանը պարզապէս օսմանյան իշխանութեանների ձեռքն էր տալիս Հասունի վտանգավորութեան շոշափեի կայացուցը: Ինչ խոսք, որ սասուն այդ էլ, ինչպէս իրաքումը նշել է Կրաչիովսկին, Հասունը ոստիկանութեան ուշադրութեան կենտրոնում էր բարևորոտութեանների կողմնակից շրջանակների հետ իր սերտ կապերի պատճառով (114, հտ. 3, 154): Չմոտանալով, որ Թղզալլայի հայկական ծագումը հանրահայտ էր և որ Հասունն արդեն այն ժամանակ, թիկնուզ և ոչ մամուլի էջերում, չէր թաքցնում իր համոզումները, որ արարների մշակութային ու մյուս բնագավառներում վերածնությունը կարող է հնարաւոր դուռնով միայն ու միայն թուրքական վարչակառավարման սխտեմից զուր գալու զեպրում, ըստ որում նա, ազգային լիակատար անկախութեան կարելիութեան գիտակցմանը հասած լինելով, արարների համար ճշտորոշում էր եվրոպական տերութեանների, իսկ պատմաաշխարհագրական Սիրիայի համար՝ առաջին հերթին Թուսաստանի պրոտեկտորատը (114, հտ. 3, 455):

Դժբախտարար և՛ սկզբնադրուները, և՛ Հասունի կյանքին և գործունեութեան անդրազարձած հեղինակները լուռ են այն հարցում, թե հայազգի գործին ինչպե՞ս փրկվից թուրքերի հաշիվհարգարան և ապաստան գտավ Թուսաստանում: Հնարավորություն չունեցն նաև ճշտորոշելու Թուսաստանում Հասունի երթուղին: Իր քերթվածներից կարելի է կասկել, միայն, որ Փոթիում ափ զուրս գալով, նա շարժել է ոչ թե զեպի հյուսիս, այլ՝ Թիֆլիս: Դժբախտարար հայտնի չէ, թե նա եղե՞լ է, ար-

զուր, նաև Հայաստանում: Հայտնի է, սակայն, որ զեպի ցարական մայրաքաղաք Նրս ճանապարհն անցել է Մոսկվայով, որտեղ այն ժամասեակ հայկական աշխույժ գաղթօջախ կար: Կրիմեոյն ենթադրութեամբ հնալանական է, որ Թ. Հասունը... լի թրոսցել այցելելու Հայկական երբ-բանցը, հայոց եկեղեցի, բոլոր հայերի համար հուշակավոր արեւելյան լեպուսների կազմայան ինստիտուտ, որտեղ սովորում էին աշխարհի շորս ծագողներն սովորած հայկական գաղթօջախները, այդ թվում և Հայկազց ուղարկված մեծ թվով թոշակառու հայ պատանիներ» (116, 228):

Տվյալներ չկան ստուգապէս ու մանրամասնորեն պարզելու համար, թե Պետերբուրգում ինչե՞լ է զբաղվել վտարանդի գրողը: Հայտնի է, որ ես այնտեղ արտագրել է Ասիական զեպարտանետի արեւելյան ինստիտուտում պահվող մի շարք արտքական գրագրեր: Սակայն մի՞թե ձեռագրեր բազմացնելու համար էր Հասունը ձգտել զեպի ցարական մայրաքաղաք: Լենինգրադի հանրային գրադարանում պահպանվում է Հասունի գրչաքական արվեստը փաստագրող մի նոտարքի վկայութեան մի մեծ թերթի մեկ երեսի վրա մանրադուռն տառերով շորս կվեռարաններից հրաշագեղ մի արտագրութեան: Սակայն մի՞թե մարզանց զարմացնելու համար էր Հասունը կտրել հսկայական տարածք ու հասել մինչև Ալեքսանդր II-ի արքունիքի դուռ:

Հարցին ճիշտ պատասխանելու գործում մեզ կարող է օգնել հետալա հանգամանքը, որը սրատեսորին եկատել է Կրաչիովսկին. այդ ժամանակ միայն սամամանփակ թվով արար գաղթականներ էին ձգտում Թուսաստան, այն էլ կամ անտերական շարժումներով՝ զիխավորաբար ուղղափառ հոգևոր ճեմարաններում սովորելու: Հասունը ո՞չ անտերական էր, ո՞չ էլ՝ որպէս հայ-կաթողիկե, ռուսական օրթոդոքսութեան համակիր Քաղաքական զրգապատճառներով վտարանդող արարներն էլ մինչ այդ միայն մեկ ուղղութեան գիտնելու. արեմտյան եվրոպայ, հատկապէս Ֆրանսիա կամ Անգլիա: Առաջին անգամ էր, որ Հասունի ճանապարհով Թուսաստանը հայտնաշխում էր արարազգի բաղաբական վտարանդիների և հայամականների քարտեզի վրա:

Մեր կարծիքով ի զուր է Կրաչիովսկին զեվարացել հասկանալ տայն զրգապատճառները, որոնք նրան մզեցին փախչելու Թուսաստան» (114, հտ. 3, 161): Թեկուզ և այն պատճառով, որ փախուստի ուղեգիծը Հասունի համար կարող էին մշակած լինել ուրիշներ, զիվանագիտական շրջանների, որոնց հետ սերտ կապեր ունէր Հասուն տոհմը, կամ էլ պատրիարք և ցարական կայսրութեանում հեղինակավոր ժանտութեաններ ունեցող

թելու նրանց ազգային ու մշակութային վերածնության համար (155, 98)։

Նախորդ պարբերականներում, ինչպես սովորական երևույթ էր ժամանակին, Հասունը և՛ խմբագիր-հրատարակիչ էր, և՛ գրաշար ու սրբագրիչ, և՛ տպագրող ու ցրիչ։ «Միքաթ ալ-անուալի» համար նա արդեն ուներ մի շարք աշակիցներ, իրեն համայնօժ հասկապես հայեցողի մտավորականներ՝ Ջիրբախի Կալալը, Արզալա Մարրաշը, նաև Լուխ Մարունչին և ուրիշներ։ Թերթը լույս էր տեսնում իր ժամանակի համար բավական մեծ տպարանակով (միայն Լոնդոնում տարածվում էր 450 օրինակ)։ Ճիշտ է, որ Անգլիայում այդ օրերին զգալի թվով արտերներ և արքերեններ իմացող փոքրեր կային, սակայն հավանական է, որ հակառակ օտմանյան գրաբնական պատենդներին, տպարանակի որոշ մասը տարբեր ճանապարհներով հասցվում էր Արարական արևելք (114, հտ. 3, 157; 169, հտ. 1, 108 և հտ. 2, 248)։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զենքի հաղթանակը նոր լույս ու լիցք հաղորդեց Հասունին, որ նյութական զբժավությունների հետևանքով դադարեց «Միքաթի» փոխարեն 1879 թ. հրատարակ հանեց ծայրի ի ծայր չափած ու պերճաբան անվամբ մի երկշաբաթեթերթ. «Հալլ ալ-մասալաֆայն ալ-շարբիյա ուսլի մրօրիյա» («Արևելյան և Աջիպտական հարցերի լուծումը»), որում արաբականի կողմից աշխուժոճուն արձարձում էր նաև հայկական հարցը (93, 235)։ Պարբերականի հաղորդական շուրջ 300 էջերում, ինչպես իրավամբ նշում են արաբական մամուլի հարցերին անդրադարձած հեղինակները, չափազանց ուշադրով են 1878 թ. ռուսական զորքերի կողմից Կարսի բերդի գրավմանը նվիրված հատվածները (114, հտ. 3, 157; 169, հտ. 1, 109 և հտ. 2, 251)։ «Քուսի» անգամ են ուսանելու ուղղմի զուտ էկեթ թուրքերի զեմ և չարդու և փշրել նրանց։ Ռուսական զորու ալսօր ծածանելով է Կարսի վրա ու փուրքերն անցյալի գիրեն են դնացել։ Այդպիսին է բունակալի անխտասփելի զախճանը և ոճրագործներն անպալման ուշանում են։ Եվ մի՛ թե իրենց համար էլ լավ էլ լինի, և՛թև արդար լինեն ու մեղ հետ վարվելին այնպես, ինչպես համասունների հետ» (182, հտ. 2, 21)։

1880 թ. անժամանակ կորվեց անվանի զրոզի և հրապարակախոսի կյանքի թելը։ Արարական շրջաններում տարածված ավանդության համայնացի՝ իր զուլուրի քաղաքականության ղեմ արարական սփյուռքում լույս տեսնող մամուլի, առաջին հերթին Հասունի հրատարակությունների օտը գրոհներից մտահոգված Արզուլ Համիդի կողմից ուղարկած գործակալներն են թունավորել Հասունին։ Կրաչիովսկին թևակտ մի դեպքում գրել է,

որ «գժվար թե հատուկ (հավաստի—Ե. Ն.) հիմք ունենա» այդ ավանդությունը (114, հտ. 3, 156), սակայն մի այլ առիթով ավելացրել է. «Քուրթական կառավարության հետ պայքարում իր բուն կյանքն ավարտեց Լոնդոնում, քստ երևույթին ոչ-առանց փաղաճահի մանկավանդներից մեկի կողմից զաղուտորեն մատուցված թույնի ճանակցության» (114, հտ. 3, 141)։ Կրիսիսին իր հերթին գրել է. «Այս մեղադրանքի համար սպացույցներ չկան, սակայն, ճիշտն ասած, այդպիսի քայլը համապատասխանում է Համիդի քաղաքականության ոգուն» (116, 233)։ Ի ղեկ, պատմաբան Յուսուֆ Իբրահիմ Տաղբեկին վկայակոչելով իրանական «Ժողովուրդի ճայն» թերթը (27—10—1914) թունավորման որպես հեղինակ Միդհատ փաշային է մատնանշել, սակայն անմիջապես էլ ավելացրել է, որ «Ռեզալայի կյանքին մտան ծանոթ» պատմաբան Իսա Մասուլֆը «չի հաստատեր այս կարծիքը»։

Հասունի ստեղծագործությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելն այսօր իսկ գժվար է։ Նրա հրատարակած աշխատություններից ոմանք մեկ օրինակով իսկ չեն հասել մեզ, իսկ մյուսների օրինակներն էլ թանգարանային հազվագյուտ ցուցանմուշներ են։ Այդ փաստը զարմանալի լինելուց կզարդարի եթև ասելը, որ սուլթանական գրաբնեությունը այնքան խաթիվ էր հետաքննողով՝ Հասունի հիշատակն անգամ, որ նրա անունն արաբական գրականության պատմության էջն իրաված պարբերական մամուլում լույս ստեած նրա հոգվածները եւ, դեռ չխոսելով այն մասին, որ նրա թերթերի ամբողջական հավաքածուներն էլ անգոր են։ Եվ վերջապես նրա մի շարք հեղինակությունների անտրիպ ձեռագրերը ցանուցիք մնում են առանձին անհատների մոտ։

«Հասարակ-լու-լիսաման», օրինակ, մեզ է հասել ու նույնիսկ գրույկի հրատարակված լինելու վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան։ Մինչև դարասկիզբը բրիտանոյա արաբների միջավայրում տարածված ձեռագիր օրինակների հետքերը վաղուց կորել են։ Մոսկվայի համալսարանի արաբերենի դասախոս սերիպցի Գ. Մուղղաթը մի օրինակ բերել է Ռուսաստան ու ցանկացել «Քողաղեթումը» ոտուերենի թարգմանել ու հրատարակել, սակայն անհայտ պատճառներով չի կարողացել իր ծրագրերն իրականացնել (114, հտ. 3, 325)։ Չեռագիր այդ օրինակն է հավանաբար փոխանցվել 1852 թվականից Ռուսաստանի Արասքին գրքոճի մի-նիստրոսկյան գիտական բաժանմունքում արաբերեն լեզու և մահմեդական իրավունք ավանդող սիրիպցի Ի. Նուսիֆային, որ 1888 թ. Պետերբուրքում ֆրանսերեն լեզվով հրատարակված իր «Մոհամմեդ» աշխա-

սուբյան էջերում լայնորեն օգտագործել է մարզաբերի ու նրա ուսմունքի հասցեին Հասունի քննադատական շատ մտքեր, սակայն Քուրբակյան ղեկավարության պահանջով զբեր բոլոր օրինակները հավաքվել են ու ուղեկցվել, բացի մեկից, որը գաղտնորեն պահվել է Ասիական զեպար-տամենում, 1894 թվականից հետո այնտեղից էլ անբերովանալու հա-մար (116, 227, մեթ. 50)։ Ի միջի այլոց, արարական մատենագիտու-թյաններից հայտնի է անանուն մի հեղինակի 1895 թ. ընդհատական մի ասպարանում լույս տեսած «Հասարակ-լիստան ան նահարաթի ալ-Շամս» («Քաղաքածակութի վերացումը Գրամական արհեստի վրայից») 284 էջանոց մի գիրք (159, 2004), որի ինչպես խորագրի համանունությունը Հասունի գրքույկի խորագրի հետ, այնպես էլ ստորկան՝ 1860 թ. սերիական կո-տորակները, որոնց հետաքննությունը կատարող հանձնաժողովի քաբ-ուուղարն էր Հասունը, մեզ հայտնի են այն մտքին, որ զբերի հեղինակն ու տպարանը թարուն են պահվել ոչ-ստանց պատճառի և որ աշխատու-թյունը գուցե թե պատկանում է Հասունի գրչին։ Եվ պարզո՞ք «Հասարակ-լիստան ան ալ-Իսլամը» խնդրո գրական գրքի մի հատվածը չէ։ Գծարա-տարար արարական հիմնական գաղափարներում կատարված որոնում-ներն ապարդյուն անցան. չհաջողվեց այդ գրքից որևէ օրինակ հայտնա-բերել։

Մեզ չի հասել Քուրբակյան բանասիրի արձակվելուց անմիջապես հետո իր ղեմ հորինված յուրացումների մեղադրանքը հերքելու նպատակով լույս բնծայված բրոշյուրը, որի միայն խորագիրն է հայտնի։ Վեղապա- Հասունի տեղը իրեն ձեռնադրմաներից ազատելու։ Գրապահոցներում անգո են նաև մատենագիտություններից հայտնի նրա մի քանի այլ գրք-քույկներ, հասակայն աստվածաշնչական «ճաշից ուլ-անաշիղը» («Նբգ երգոց») և «Ռիսա Արմինիան» («Ողբ Հայաստանի»)։

Եվ վերջապես հետաքննող ճակատագիր ունի նաև Հասունի՝ Արդ ալ-Կադերին ձեռնված «ալ-Նաֆասաթ» ժողովածուն։ Ելեկով այն փաստից, որ զբերի վերջին էջերում (80—83) Ղուրանի 23-րդ սուրայի ումունական կապերին վերաբերող առաջին ? տողերի տառերի խաբը դասավորու-թյամբ Հասունն ստացել է ալ-Շիդիակին սպանել ծաղրի նեթարող ու նրա բարոյականը ձաղկող ալ-Շոյալիքի մի նախադասություն, նաև այն իրողությունից, որ պարսերի տակ լմնավել, ալ-Շիդիակն իր հերթին ծաղ-րական մի քառախաղով Հասունի մատյանի խորագրեր ներկայացրել է որպես «իժից արտաթորված թունոթ թուր», կրավովակին «ճաֆասան» հասկացել է որպես «շուն, քամ» (114, հտ. 3, 158), իսկ կրիսակին՝ որպես «ենեղամիս (օձաբար) ցալար» (116, 230), այն ղեպտում, էրբ

հարկ էր ընկալել որպես «ժայթքումներ, պոռթկումներ», ինչ որ ավելի կպատշաճեր և՛ Հասունի խառնվածքին ու ոճին, և՛ մատյանի բովանդա-կությունը։

Առաջին հայացքից կարող է թվալ, որ «ալ-Նաֆասաթ» ժողովածուն, որ հեղինակի լոնդոնյան պարբերականներից առաջ է լույս տեսել, առ առավելն պանսլավական ալ-Շիդիակին վերաբերող իր երկու էջերով և Ալեքսի ժողովրդի հակազաղթաբարսական պայքարի ղեկավար Արդ ալ-Կադերին ձեռնված ներթողով միայն կարող է ստեղծել արարական հա-տարական-բազմակիս իրականության հետ և որ Արդու Ազիզի գա-հակամար նվիրված երկու խրեռնոգրամների (էջ 70) ու բանտից սուլ-թանին հասցեարկված երկու դիմումագրերի (էջ 78—80) հրապարակու-մըն էլ ապացույցն է այն բանի, որ Հասունը տվյալ պահին գաղափարա-կան որոշակի նահանջի իսկ գնով ձգտում էր հարգաբերել Պոլսի վերա-գարծի իր նախապահը։ Երկրից ու ժողովրդից հետո իր գործունեության ակազավարդյունավետության գիտակցումը, Պոլսում որպես պատանդ իրողված ընտանիքի և հատկապես միամորիկ իր Ալբերտ որդու մաշող կարոտը, Քերև և թուրք լիբերալ գործիչների հետ ֆարիզյան իր հան-դիպումների ներգործությունը գուցե թե 1867 թ. Հասունին ժամանակա-վորապես մղել են մտածելու իր վերադարձի հնարավորություններն մասին։ Եվ սակայն մի՞թե հասարակական-քաղաքական նկատառումներ չի ունե-ցել հեղինակը, էրբ արարականացրել է Կոնիոլի առակները (էջ 5—69), էրբ Ռուսաստանին ձեռնված քերթվածներում (էջ 74—75) սարկացված ժողովուրդների և ավերակ քաղաքների սուլթանական Արևելքին հակա-դրել է ցուրտի իդեալականացված մի երկիր, որտեղ բոլորն ապրում են անվատագրության մեջ, երկուլիցն ու սարսափից զերծ, որտեղ փոխաբ-բաների բանությունների մասին միայն հեղինակներից գիտեն...

Հասունի փայլուն դիմակարն, անշուշտ, ավելի ակնբախ է հետմա-հա (1901 թ.) Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում լույս տեսած «ալ-Մու-շամմարաթ» («Բռոնց») ժողովածուում, որը, բոս արարական մա-մուլի տվյալների, բովանդակում է քերթվածներ և հինգ թատերգու-թյուններ։ Քերթվածները հիմնականում Խլամի՝ որպես կրոնի ու հա-տարական-քաղաքական ուժի՝ ղեմ ուղղված հակահատուցյուններ են, 1860 թ. արշունահղությունների վերջուղով՝ օսմանյան տիրապետության ղեմ պայքարի կռիւր, մեղադրանք ընդդեմ ալ-Շիդիակի և Գամակոնի կոտորածներում Քուրբերի մեղսակից հրեաների, վերջապես Կարսի բեր-դի գրավման կապակցությամբ ռուսական հաղթական ղեկի գովերգը։

Հարկ է ավելացնել, որ Հասունը անչափ օժանդակել է Լվորպական

արևելագետներին՝ արաբական վաղ շրջանի գրական հուշարձանները (ալ-Ախթալ, Ջուլ-Ռուսմա, ալ-Ջարիր, ալ-Ֆարազդակ ևն) հայտնաբերելու և հրատարակելու գործում, ըստ որում անձամբ 1872 թ. Լոնդոնում լույս աշխարհ հանելով Հաթեմ Թալի բերթողագիրքը (169, հտ. 1, 109)։

Ռ. Հասունն իր ուրույն տեղն ունի և նշանակալից հետք է թողել արաբական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ։ Կրաչկովսկին նրան իրավամբ համարել է «XIX դարի երկրորդ կեսի արաբական ազգային-գրական վերածննդի խոշորագույն գործիչներից մեկը», «առաջին երիտարաբներից մեկը» (114, հտ. 3, 321 և 141)։ Որպես հրապարակախոս նա զգալի ներդրություն է ունեցել նահայալական շարժման ներքում արմատական հայացքների աղմուսավորման և բնձյուղման գործում, թեկուզ լոնդոնյան իր վերջին երկու ծանրակշիռ պարբերականների լույս բնծայումից առաջ Արաբական արևելքում թերթների թվաքանակն արդեն իսկ սկսել էր արագորեն աճել և հասարակական-քաղաքական ու մտավոր-մշակութային տեղաշարժերն էլ Լուսավորական շարժման բունկումը անխուսափելի էին դարձրել։

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ւ Յ

ԲԵՏՐՈՒԹՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ՎԵՐԸՔԱՅԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԿՈՒՄԸ

Ա

1870-ական թթ. սկզբից ինչպես մերձավորարևելյան արաբական երկրների ընդհանուր պատմությունը, այնպես էլ մանավանդ արաբական ազգային-մշակութային Ջարթոնրի բնթացքը անմիջականորեն առնչվելու էին օսմանյան պետության ներքին թե արտաքին իրավիճակի հետ, այն փաստի հետ, որ կայսրությունը մինչև կոկորդը խրվել էր տեսասական ու քաղաքական տափնապի մեջ։

Արբունդի շուրջ համախմբված պահպանողական ֆեոդալների, հոգևորականների և աստիճանավորների մեծամասնական ճակատը, որ օսմանյան լուսատիրական հետադիմության միջնաբերդն ու ամեն մի նորամուտության մահացու թշնամին էր, կայսրության իրավիճակի բարելավման հետևյալները չէր կարող չկենտրոնացնել կեղծման ու ճնշման ավանդական քաղաքականությունը իր լատազույն տարրերակալ կիրառելու վրա։

Պարի երկրորդ քառորդից մեծամասնական ճակատի ներքում աճել էր իրավիճակից ավելի ու ավելի խուճապահարմողների մի խավ, որը, ոչ առանց թ. Պոան «բարեկամ» սերունդների ներդրություն, բարենորոգությունները կայսրության գոյապահպանման համար կենսականորեն անհրաժեշտ էր համարում։

Բարենորոգչականների այս՝ փոքրամասնական ճակատը, իր հերթին, միասնական չէր և ժամանակը նրա երկփեղկումը տեսանելիորեն խորացնում էր։

շարժումը կանգնած էր նաև աստիճանաբար այնի ու ավելի խառացող թուրքական գրաքննական վերահսկողության հարուցած զոհարարությունների առաջ։

Սուլթանական ֆեոդալ-բռնակալական վերնախավը և խավարանոց հագեցրած հայտնիությունը, որոնք թիշ բան չէին սրել կայսրությունում ռազմաբարձր ինտելեկտի, հպատակ մոլորադրների շրջանում ոչ միայն մշակութային առաջընթացի, այլև հասարակական-քաղաքական գործունեի գործում գրեթե և պարբերական մամուլի խաղաղացած դերից աճաբեկված, 1850-ական թթ. արդեն իսկ ձեռնարկել էին հրատարակչական գործը վերահսկելու միջոցառումները։

Ըստ ինքյան պերճախոս է այն փաստը, որ իբր օտարերկրացիներին նկատի ունեցող այդ միջոցառումներն առաջին հերթին ուղղվում էին դեպի իրանական հոգաբարձուները ևրոց էր 1840 թ. հուլիսի 15-ին Ռ. Գուրջ կողմից սիվանագլխավոր ընդհանրացուցչություններին հասցեագրված մի հուշագրում շեղված էր. «Բարեկամ սերնդիչունների առանձին հպատակներ, որոնք գտնվում են Անանյի երկրամասում, առանց տեղական իշխանություններից թույլտվություն ստանալու տպարաններ են բացում, սեղական լեզուներով գրքեր և վերքեր հրատարակում ու տարածում։ Այդ գործնակները պետություն չհանրի զեմ ուղղված հայտարարելով, Ք. Գուրջը նույնը առաջին շրջաններին հարկադրում էր թույլտվություն ստանալու համար կանխօրոք զինել տեղական իշխանություններին, ներկայացնելով նաև հրատարակելի նյութերի ձեռագրերը։

Եթե հենկենք այն փաստի վրա, որ 1856 թ. հուլիսին Ռ. Գուրջը հարկադրվում էր իր կարգադրությունը կրկնել, այս կարող ենք ասել, որ Անանյում ոչ ոք լրջորեն չաշխի չէր նստի կառավարական առաջին կարգադրության հետ։

1857 թ. փետրվարի 15-ին հրապարակված Տպարանական օրենսդրությունը երկրում փաստորեն գրաքննական դրույթուն էր հաստատում։ Տեղերում տպարաններ բացելու և օրեն գիրք ու պարբերական հրատարակելու համար վայրերի թույլտվությունը նախապայման էր դառնում։ Թափեղանությունը վաղորդվում էր հասարակության կամ պետության շահերի համար վնասակար ամեն մի հրատարակություն բռնադատելի, տպարանը փակել և օրենսգրանցների քրեական պատասխանատվության ենթարկելու Օրենքն արդեն իսկ գործող տպարաններին պարտադրեցնում էր վեցամսյա ժամկետում իրենց իրավական դրույթունը կարգավորելու

ինչ վերաբերում է արդեն իսկ լույս տեսնող պարբերականներին, դրանք թեկուտ չէին խափանվում, սակայն օտարահպատակների համար ստիպողական էր դառնում արտաքին գործերի մինիստրության թույլտվությունը՝ տպարան բացելու և թերթի ու գիրք հրատարակելու համար, բացարձակ ամեն մի հրատարակություն նախապես պետք է գրաքննվեր։

1864 թ. նոյեմբերի 15-ին սուլթանի ստորագրությամբ հրապարակված տպարանական նոր օրենսդրությամբ տեղեկում ամեն մի նոր թերթի համար անհրաժեշտ էր դառնում կանխօրոք ձեռք բերել նահանգապետ վայրի և լուսավորության մինիստրության թույլտվությունը, բացարձակ հրատարակելու պետք է լինեք երեսուն տարին լրացրած, նախկինում չդատված և մուրատեր օսմանահպատակ։ Ճիշտ է, նոր օրենսդրությունը պաշտոնապես նախնական գրաքննություն չէր հաստատում, սակայն լույս տեսնող թերթի յուրաքանչյուր համարից մի օրինակ հրատարակչի ստորագրությամբ պետք է նաև ձեռք բերել գրասենյակին՝ օժերին անդորրը խախտող՝ կամ «պետության անվտանգության սպառնացող», «հասարակական բարոյականին զեմբիթաց» կամ «մտքերը պղտորող», «երանին վիրավորանք հասցնող», սուլթանին ու նրա առձեռնիցներին, նաև կառավարության կամ տեղական իշխանություններին քննադատող նյութերի համար սահմանվում էին 25 կարգի պատիժներ, ըստ որում ծանրագույնը՝ երեք (իսկ կրկնահանգանքի դեպքում՝ վեց) տարի բանտարկություն։

1867 թ. մարտի 16-ին մեծ վեպի Այի փաշայի հրամանով օրենսդրության կիրառումը խառացվեց և նահանգապետներին իրավունք տրվեց իրենց հայեցողությամբ պատժամիջոցները ծանրացնել։ Ինչպես դեռևս է ավելի Օսմանյան կայսրությունում մամուլի և գրատպության պատմության հետազոտող Փելլայակովը, այդ կարգադրությունից հետո մամուլի վերահսկողությունը փաստորեն սկսեց իրականացվել պաշտոնական միջանկի օրենքներով, թերթերի գոյությունը իշխանությունների լիաճանաչության կախված դարձավ և մամուլը դիմադրիվեց (105, 143)։

Վարչական այս միջոցառումներին և պանիստանական-չիդիական հզոր բարոյախոսության զուգընթաց, մերձավորարևելյան արարական երկրամասերի հասարակական կարծիքի վրա ավելի անմիջական ներգործություն կատարելու միտումով սուլթանական վերնախավը անհրաժեշտ գտավ նաև վիլայեթների կենտրոններում պաշտոնաթերթեր հրատարակելու։

Սիրիական վիլայեթների կենտրոններին առաջինը Գամասկոս էր, որ 1865 թ. նոյեմբերի 19-ին Ռեշիդ փաշայի նախաձեռնությամբ ունե-

ցավ իր պաշտոնական օրգանը՝ «Սուրբյա» շաբաթաթերթը: Արարերեն և թուրքերեն լեզուների միջև հավասարապես բաժանված շորս մեծազոր էջերով լույս տեսնող այդ պարբերականը, որը խմբագրում էին Ազիր Եսազիև և Մոհամմեդ Քուրդ-Ալին, փաստորեն պաշտոնական հաղորդագրությունների ու հայտարարությունների հրատարակման և սուլթանին ու նրա աստիճանավորների օրհներգման մի ամբիոն էր: Ուշագրավ էր միայն այն հանգամանքը, որ Սրբիայի գլխավոր կենտրոնն իր պատմության մեջ առաջին անգամ լինելով օժտվում էր տպարանով, որի կազմակերպության համար Բելյուսթիք ժամանակավորապես հրավիրվել էր Խ. ալ-Խուրիին (169, հտ. 1, 67, 188, 105):

Գրական արարերների քաջագիտակ և օսմանյան պատմության խաչահուռտ նահանգապետ Ջեզաֆ փաշայի որոշմամբ 1867 թ. հրատարակելով նաև Հայկալի նույնպես երկխոսված «Ղադիր ալ-Ֆուրքան» («Փառչքահամ Եփրատ») թերթը, որը իր գոյության երկրորդ տարում և շուրջ մեկուկես տարով վերածվելու էր երեքլեզվյան (արաբերեն, թուրքերեն և Հայերեն) «ալ-Ֆուրաթի»: Արա արաբական բաժնի խմբագիրը սկզբում «Մեծից Մուսոնֆազազիկն էր, իսկ կարճ ժամանակ անց, շուրջ հինգ տարի, Արզ ալ-Ռահման ալ-Կաուակիրին (169, հտ. 1, 69; 156, հտ. 4, 54):

1867 թվականին Տաուսյան փաշայի նախաձեռնությամբ ծնունդ առավ նաև ինքնավար կիրանան լեռան մուֆասսիրֆուլյան պաշտոնական օրգան «ալ-Լուրնան» («Լիրանան») շաբաթաթերթը, շորս մեծազոր էջերով:

Իր տեղում արժանագրեցինք, որ Տաուսյանը նպատակակետ էր դարձրել 1840—1860 թթ. արյունալի իրադարձություններով հողվարքի մատնված կիրանան լեռան ոչ միայն վերակենդանացումը, այլև՝ կենսունականացումը: Օրգանական ստատուսով ճշտորոշված աշխարհագրական սահմաններում, գոնե, վերակենդանացումը, ինչպես ընդգծել են լիրանացի թե՛ օտարազգի շատ հեղինակներ, մինչև 1867 թվականն արդեն իսկ իրականություն էր դարձել (128, 177; 242, հտ. 2, 190; 170, 21): Մնում էր կենսունակացման հարցը: Կիրանանյան «բրիտանոյա ազգայնականություն» տեսարաններից Պ. Նուշայմը դիպուկ է նկատել, որ վերակենսունականացման համար ինչպես տվյալ պահին, այնպես էլ հետանկարում «ամենալուրջ հարցը... սահմանների ընդարձակումն էր», քանի որ «լիրանացիներն... իրենց փոքր երկրում խեղդվում են» (231, 544—545): Բանն այն էր, որ սուլթանական կառավարությանը բրիտանական դիվանագիտության աջակցությամբ հաջողվել էր եմպապական սերովյուններին պարտադրել լիրանանյան խեղանգամ մի օսմանա-

գծում և կամայականորեն ու համարյա կիսովին անդամահատել պատմականորեն լիրանանյան հողատարածքը, սիրիական վիլայիթներին թողնելով Բալսարկի շրջանն ու Բիկալայի հովիտը, Ռուդի ալ-Ռայան ու Մարզ-Ալունը, համարյա ամբողջ ժովափը՝ Տրիպոլի, Բելյուսթի, Սալայա և Սուր նավահանգստային քաղաքներով (բացի Ջունիի շրջանում ժովափնյա մի փոքր շերտից): Տաուսյան փաշան, որ 1864 թ. սեպտեմբերին մի երկրորդ՝ հեղամյա ժամկետով սուլթանական Ֆերմանով և տերութունների համատնությամբ մուֆասսիրֆ էր վերահաստատվել, ինքնավար կիրանան լեռը պատմականորեն լիրանանյան հողատարածքների համախմբմամբ ինքնավար կիրանան երկրի վերածելու ուղղությամբ աշխատելու համար իր դիրքերն ամրապնդված էր համարում, եվ ուրեմն Թ. Գուան առջև համառորեն բարձրացնում էր իր կառավարմանը վստահված երկրամասի սահմանների ընդարձակման հարցը (170, 232):

1867 թ., ահա, Տաուսյան փաշան նախաձեռնում էր ինքնավար երկրամասի հասարակական-քաղաքական ու մտավոր-մշակութային վերածնունդ միտող իր ծրագրերի շրջանակում կարևոր տեղ զբաղեցրած լուս ալը ծրագրերի իրականացման բուն իսկ կարևորագույն օժանդակ համարվող միջոցառումը՝ պաշտոնաթերթի հրատարակությունը: «Լիրանան» շաբաթաթերթը ուշագրավ էր և պատմական ուրույն հայացք ու քաղաքական համարձակ զավանսներ էր մտնում ուր նույնով իսկ, քանի որ աներկմտորեն մեծծելով պաշտոնապես պարտադրված «Ջեբել Լուրնանը» («Լիրանան լեռը»), առաջադրում էր պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական լայն առում ունեցող, սակայն տվյալ պահին անզոր, ուրեմն և ցանկալի ու հետամտելի «ալ-Լուրնանը» («Լիրանանը»):

Բնականաբար պաշտոնաթերթին ի վիճակի չէր բացահայտ հրապարակախոսությամբ շատագուցվելու այն, ինչն իր անվամբ առաջադրում էր և ինչը փաշան հետապնդում էր պաշտոնական դիմումագրերով: Եվ սակայն «ալ-Լուրնանը», ի տարբերություն Գամսակոսի ու Հայկալի (և ընդհանրապես օսմանյան մյուս) փաշայությունների թերթերի, պիտի չլիներ սուլթանական կառավարության օսմանական բարոզի տարածումը և ոչ-թուրք հպատակների օսմանականացմանը նպաստող գործիք (129, 74), ոչ էլ սոսկ վարչակառավարական միջոցառումների տեղեկատվական որոշակի նպատակավորվածություն: Այլ խոսքով սուլթանի գերիշխանության ենթակա մի երկրամասում լույս տեսնող պարբերականի համար պարտադիր կանոնները, թերթը պետք չէ խու-

եթև դանց ատենք Ա. Գոլգորեին, որ ակնարկել է «օտարականին հարկ վճարելուց հրաժարվող» և «տեղացի կառավարիչ պահանջող» ժողովրդական զանգվածի կողմից «թուրքական ծառայության մեջ գտնվող Տաուտ փաշայի» դեմ «շղթայազերծված ապստամբության» ներգործության անվանականությանը (48, 199): Արտասահմանյան հեղինակների մտտ հեղինակն զտեղ տարբեր բացատրություններ, սկսած «մարտնականների լուռ դիմադրությունից կորովազրկված» լինելուց մինչև «Լեռան որոշ ֆեոդալ զենվարների» հետ դիմաբախումը, երկրամասի «ներքին գործերին օսմանյան միջամտությունից» մինչև տերություններից, առաջին հերթին Ֆրանսիայի «ներկայացուցչությանը խզումը» (214, հտ. 2, 185; 128, 180): Մեր կարծիքով ճշմարտությանը ամենից մոտիկ է կանգնած քերտուանյան մարտնական ազնվականական տոհմից սերած հասարակական գործիչ ու պատմաբան Ն. Դահազը, որ ընդգծել է Տաուտյանը հրաժարվեց՝ ոչխարաչանալով ձեռք բերել (ինքնավար կերանան լեռան) հողատարածքի ընդարձակումը» (209, 26): Ա. Քարբիբը ևս, որ արխիվային փաստաթղթերի վրա առավել հակված հեղինակներից մեկն է, հաստատել է, որ Տաուտյանը մուսթաֆայի պաշտոնը թողնելից այն բանից հետո, երբ օսմանյան կառավարությունը մերժեց ընթացք տալ հարակից պատմականորեն լիբանանյան հողատարածքի ներգրավմամբ ինքնավար երկրամասն ընդարձակելու իր պահանջին (170, 232): Հետաքրքրական է հայկական աղբյուրներով վկայված այն փաստը, որ կերանան երկրի ստեղծման ծրագիր հայազգի պետական գործչի համար եղել է ոչ միայն լիբանանյան և առաջին հերթին քրիստոնյա լեռնականների պատմական բախտի տեսակետից կենսական: «Շատ հատկանշական է, — գրել է Ս. Վարդապետյանը, — անոր հայերը կերանան տեղավորելու քաղաքակրթությունը և այս ուղղությամբ թափած ջանքերը: Ամբողջ օսմանյան պետության մեջ կերանանը, ըլլալով քրիստոնյաներու մեծամասնություն կազմող միակ վայրը, Տաուտ փաշան աշխատեցավ կարելի եղած շափով հայերը հոս տեղավորել: Իր իսկ թելադրությամբ, շատ մը հայ ընտանիքներ կերանան հաստատվեցան»: Այս իմաստով էլ ոչ միայն ուշադրության, այլև արխիվային որոնումների ու հաստատման արժանի է Լևանտի ծովափում, հարավային կիբանանից, գրեթե պաղեստինյան ծովափից մինչև կիլիկյան դաշտավայր միավորող «քրիստոնեական կիսապիսի կառավարություն» ստեղծելու և այն օսմանյան կայսրության ազգային քրիստոնյա փոքրամասնությունների համար ապաստանարանի վերածելու նրա ծրագիրը (93, 210):

Ի զիպ, պահպանողական նահայտականների և կիրանան լեռան մուսթաֆայական իշխանությունների միջև առաջադրանքների թե նրանց կենսագործման միջոցների հարցում բացարձակ միասնության դրսևակնագնման վկայություն կարելի է համարել այն փաստը, որ Լեռան երկրորդ կառավարիչը՝ նույնպես հայազգի Ֆրանսո-նասրի փաշան, 1868 թ. սցոտտային «ժամանակավորացի» զազարեցնում էր «ալ-Լուբնանի» հրատարակությունը՝ հօգուտ «Հադիվաթ ալ-ախթարի»: «Լիբանանը» մուսթաֆայի վասալ փաշայի ու նրա փեսա Կոպիլյան Աֆենդիին նախաձեռնությունը վերերևալու էր 1891 թ., Բասթադյում, որպես արքան կրտսեպաշտոնական օրգան, Լեռան վարչական խորհրդի անդամ Իբրահիմ ալ-Ասուազի խմբագրությամբ (169, հտ. 2, 205): Ավելացնենք, որ զի Քարբային «ալ-Լուբնանի» ետադատյան զազարումը բացատրելի է անտեղի ու տնտեսության նկատմամբ նոր մուսթաֆայի բացատրիկ հակումով (169, հտ. 1, 73), ինչը որ համոզել է: Մենք հակված ենք զեպի այն ենթադրությունը, որ Ֆրանսո-նասրի փաշան պարզապես հաշտվում էր ինքնավար Լեռան համար մտավոր-մշակութային որպես կենտրոն Քեյրուբը ճանաչելու մտքի, որ և նույնն է՝ իր հպատակների հասարակական ու մշակութային կյանքի վրա պահպանողական նահայտականների ներգործության փաստի հետ:

Իսկ զպ՝ անխուսափելի էր, թեկուզ միայն այն պատճառով, որ Լեռան շրջանակներում ու հարակից ծովափնյա հողատարածքում, հակասակ որոշակի տեղաշարժերի, թիչ թե շատ մեծ բնակավայրերից և ոչ մեկը զարգացման այնպիսի մակարդակի չէր հասել, որ սոցիալ-տնտեսական կյանքի իր ընթացքով և մտավոր-մշակութային իր ետուզեով սակայն կյանքի իր ընթացքով և մտավոր-մշակութային իր հերթին կառավարում էր մի կարևոր զիջում, ավելի շուտ՝ զգալի մի նահանջ. իր էշերը օգոստոսի 13-ից սկսում էր կիսով արարերենի ու ֆրանսերենի միջև ընդհանրաբանությամբ, որ «Խալամի հանրագիտարանը» ալ-Խուրիի թերթն ընդհանրապես նրկվելովյան է ներկայացրել (213, հտ. 2, 465): Ինչ խոսք, որ արարերեն-ֆրանսերեն երկլեզվայնությունը եթե պաշտոնական «ալ-Լուբնանի» զեպում իր միտումով դրական երևույթ էր, ապա նահայտական «Հադիվաթ» համար նույնպիսին չէր բնավ ու հենց այդ պատճառով էլ չէր կարող լիորացնել նահայտականների շրջանում 1860-ական թթ. սկզբներից ծայր առած ներքին խմբումները, պահպանողական և առաջամետ հոսանքների երկփեղկման նախանշանները:

1860-ական թթ. տարվածարի ավելի ակնբախ էր դառնում նաև նահաջայականների և միսիոներների միջև առաջադրանքների թե դրանց իրականացման միջոցների հարցում երկփեղկման խորացումը։ Նահաջայականների շրջանում նոր միտումների արգին առնվազն մի ամբողջ տասնամյակ առկայության վկայությունը, ինչպես դիտել է ավել ալ-Փիրատին, դեռ 1850-ական թթ. կեսերից փաստորեն գրեթե չէր թ. ալ-Բուսթանի՝ «մտավոր հարաձուռ անկախություն» ցուցաբերելով և «միսիոներներից մեկուսի կանգնելով», իսկ մեծազդեցիկ Սմիթի մահից (1857 թ.) հետո՝ «միսիոներների հետ իր սերտ կապերին վերջ տալով», թեկուզ և «բարեկամական այլ ոչ մտերմիկ» հարաբերությունները շարունակելով (268, 166—168)։

Միսիոներների կողմից 1863 թ. մարտի 1-ից լույս ընծայվող «Ախրար աս ինթիլար ալ-ինչլիլ» («Աստվածաշնչի վերաբերյալ լուրեր») 1866 թ. հունվարի 1-ից փոխարինումը «ալ-նաշր ալ-շահիլլա» («Ամսօրյա հրատարակություն») պատկերազարդ, թեպետ հիմնականում հոգևոր-կրոնական, սակայն դիտարկում և գրական նյութերի էլ տեղ ավելում ամսաթիվերով, իրոք էլ խոսում էր այն նասիին, որ ազգային-մշակութային Ջարթոնքի պրոցեսն ինքնուրույն միջոցներով ու հունով տանելու նահաջայականների ավելի ու ավելի ակնբախ դարձող միտումին ի պատասխան, բողոքական բարոյգիները կարծես թե սթափվում էին ու հիմնավորապես նահանջում դեպի քրիստոսոստոսական կաթոլիկությունը, պարզապես որոշ լուսավորականության օգնությամբ փորձելով հողը լրիվ չկորցնել իրենց ուսնների տակ։ Պատահական չէ, որ 1869 թ. Բեյրութում ծնունդ էր առնում նաև «Վազատացյալի արեգակ» գիտական ու գրական ընկերությունը, որպես լոնդոնյան նույննունու կազմակերպության մի մասնաճյուղը, որի շուրջ միսիոներների ու նրանց տեղաբնիկ քաղաքացիների ջանքերով խմբվում էին բողոքական կոլեջի և միսիոներական մյուս գաղթյունների սովորողներն ու մտավորական մի շարք երիտասարդներ (156, հտ. 4, 70)։ Այլ խորքով շուրջ երկու տասնամյակ տևած համերաշխ գործակցությունը կարծես թե ավարտվում էր և այն փոխարինելու էր գալիս մտքերի ու տրամադրությունների տիրապետման ի խնդիր մրցակցությունը։

Այդ մրցակցությամբ միսիոներները բնականաբար ստանց տեղական ուժերի չէ, որ մասնակցում էին Բաղմաթիվ նահաջայականների կողքում, նրանց համեմատելի դեպու կատարելապես լրված էին նրանց կողքին շարունակում էին անհողող կանգնած մնալ մի ամբողջ խումբ երիտասարդ մտավորականների, որոնց առավել երևելիները Սարգիս

տոհմից Շահին, Իբրահիմ, Ամին, Սելիմ և հալի եղբայրներն էին նրանց հայրը՝ հաթթար Բին Սարգիս Աբնահ գյուղաքաղաքի երեկել տնտեսականներից էր, ուսումնասեր մի մարդ, որի մահվան առթիվ ն. ալ Յադիբին հեղինակել է իր նշանավոր եղբերակներից մեկը (169, հտ. 1, 122)։ Բողոքականության հարելու, նա իր որդիներին ուսումնասության էր ավել Աբեյում վան-Գիլիի ղեկավարությամբ բացված դպրոցը, որն ավարտելուց հետո Սարգիսները պիտի կատարելագործվեին թիլլոթի ուսումնարաններում։

Իբրահիմ Սարգիս (1834—1885) հեղինակել է տնտեսական բուրժուական պահանջներին պատասխանող բաղմաթիվ աշխատություններ, այդ թվում «Ամբողջական պատասխաններ» խորագրված երկու գրքեր՝ նախահարգական և տնտեսագիտական բնույթի, «երկու եղբայրների նվեր» երկու լիզուններ ուսումնասիրողներին՝ արարեբներ-անգլիկների գրուցարանությունը (Շահին եղբոր հետ), նաև՝ հին աշխարհի պատմությանը նվիրված «Շարահայրյալ մարգարիտներ», Ալեքսանդր Մակեդոնացուն կենսագրող «Ձայն ահեղազուր» ևն։ հալի Սարգիսն (1842—1915), իր հերթին, շարտեղ է ինչպես «Սրբազան Երուսաղեմի օգտամտություն», այնպես էլ խոհարարական գրքեր։ Իբրահիմ եղբոր օգտամտության կազմելու գործում օգնող Շահինը (1830—1870), որ Ամին (մահացած 1896 թ.) եղբոր գործընկերն է եղել արատքին տուտրի ասպարեզում, 18 տարեկանից ղեկավարել է միսիոներների 1848 թ. բացած պարնեզում, 18 տարեկանից ղեկավարել է քաղաքային գաղթյունը, իսկ այնուհետև Բ. ալ-Բուսթանիին գործակցել է քաղաքային գաղթյունը հիմնադրման գործում (169, հտ. 1, 122—124; 159, 1018—1021)։ Իբրահիմ Սարգիսն էր, ահա, որ Շահին եղբոր աջակցությամբ խմբագրում և հալի եղբոր ղեկավարած տպարանում լույս էր ընծայում միսիոներների հետադայում շարաթիվերի վերածվելիք «ալ-նաշրա» մտագրները, որը, ինչքան էլ հողոր ճշտորոշ առարկություն ունենար, համեմատյան դեպու չէր կարող ի սպառ կտրվել մտավոր-մշակութային առարկությունից։

Մրցակցությամբ նահաջայական մակառից մասնակցում էին ոչ միայն պաշտնողականներից ավելի ու ավելի հետաքուռ առաջամտները, որոնց պարզալուր թ. ալ-Բուսթանին էր, այլև մասնավոր վերջի-հիս միջավայրում աճած, սակայն հենց նրանից էլ ստորհանարար տարանջատվող մի ամբողջ խումբ երիտասարդ մտավորականների, որոնք նահաջայականների «հանդուրն» (չառիսու համար «հեղափոխական») թեև էին կապվելու։ Այդ երևույթը կարելի է կուսհի այն իրադրությունից, որ միսիոներների ու Սարգիսների «Ամսօրյա հրատարակության» լույս ըն-

ծայման օրն իսկ հրապարակի վրա հայտնվում էր համարյա նույնանուն մի այլ հանգեմ՝ «ալ-Շարիբա ալ-շահրիյա»։ Վերջինիս հրատարակիչ-ամբաստանը ոչ թե անուն ու հեղինակություն ունեցող մի գործիչ էր, այլ՝ միահիսնիների շրջապատում աճած ու նրանց, այնուհետև Տառաշյան փառային որպես գրաշար ու տպագրիչ ժամեղակած երիտասարդ Յ. ալ-Շալֆունը, որ ութ ամիս գոյատևելի իր հանդեսի էջերը տրամադրելու էր արարական և արևելյան միջնադարյան գրական ու պատմական երկերին, նաև՝ եվրոպական նոր գրականության, այդ թվում հատկապես Ա. Գյունայի՝ Սելիմ Սաարի կողմից թարգմանված «Կոմս Մոնտեի Կրիստոֆին» (169, հտ. 1, 67)։

Մի կողմից միահիսնիական միջավայրից ելնել դեռ ոչ ուսումնական թրթվակն լուսավորության, ապա գոնև ազգային-մշակութային լուսավորականության առաքելության հողի վրա անպայման խզվող և ինքնուրույնացող նահապականների 1870-ական թթ. թվաշատացման, մյուս կողմից պահպանողական և առաջամտ նահապականներից մտարանջատող եզրերների միմյանցից էլ ավելի հեռացման զուգընթաց առաջմետնների միջավայրում «հանդուգների» հայտնվելու ապացույցը պետի տեսնել տասնամյակի առաջին երկու տարիներին Բեյրութում մեկ տասնյակից ավելի պարբերականների հրապարակ իշխելու փաստ, անշուշտ նաև ուղղության հասցում այդ հրատարակությունների միջև ակներև տարբերությունների և նախաձեռնողների փոխհարաբերությունների մեջ։

Հասկանալի է, որ ալ-Շիդիակի պոլսական թերթում սուլթանապաշտ-պահիլամական, նաև նոր-օսմանական թերթում ունեցող մասուլի թուրքակենտրոն-պանօսմանական՝ բոլոր զեպերում հակահանդաշյական բարոզի աշխուժացման և Բեյրութի, ընդհանրապես սիրիական մահմեդականների մոտ գտած անկախածելիորեն բարյացակամ արձագանքի պայմաններում «Հաղկիվալ ալ-սարարի» զեպերակրի ոչ թե բացահայտ ու ճակատային հակահարված առաջը խուսափանքը, ինչ որ մասամբ հասկանալի էր ու արգարանալի, այլ անհրաժեշտ շափուլ թեկուզ քողարկելու ու կողջացնել հակազդեցությունից իսկ ձեռնպահ միջոցներ չէր կարող նախ և առաջ պահպանողականներին և առաջամետների տարանջատումը լիտրացնել նահապականների միջավայրում։ Եվ արդյո՞ք 1870 թ. սկզբներին միահիսնիներից համարյա լքված Սիրիական երկրորդ ընկերությունը հենց այդ տարանջատման խորանքով օւ հետևանքով չէ, որ ընկնել է հոգեկարի մեջ, համարյա կենսազուրկ գոյություն բարձր համար մինչև 1873 թ. վերջերը, ինչպես որ

ժամակալաշքանի մի սկզբնադրուր, ինչպես տեսնելու ենք, ենթադրել էր սուլիս։

Ի դեպ, ինչպես այլ, այնպես էլ այս կապակցությունը լիարողանալով արարական հայրենասիրական մտքի զարգացման ակնբախ աստիճանահարթավանդներ, գոնև որոշակի բարեխղճում տեսնել, Կրիստոֆին թերթի մի արագ թվաշատացման իրողությունը սովել է անընդունելի թրթաբարձրուն, պնդելով, որ «հեղիվիդուալիստ շատ զրոգների մոտ պահանջում ենք առաջացավ սեփական տպագիր օրգան ունենալ» (116, 607)։ Հուսարակական-բազաբական անուրանալի զսպանկներ ունեցող կրոնյիս առանձին գործիչների անձնապաշտությունից բխեցնել՝ նշանակում է տասնամյակից տասնամյակ ոչ մի էական տեղաշարժ չնկատել Բեյրութի հոգևոր կյանքում, մի բան, որն իրականում չի բխում հեղինակի ինչպես ոգուց, այնպես էլ մասնավանդ մեծ ջանքերով ի մի բերած հարուստ նյութից։

Եվ ինքը, թեկուզ դեռ առանձին անհատների մոտ, բոլոր զեպերում «սարակական տրամադրությունների և նկրտումների ասպարեզում որոշակի տեղաշարժների, հայրենասիրական զավանսքի տեսանելի բարեխղճման ապացույցներից մեկը պետի համարել այն, որ մասուլի բուտությունում էր։ Ալ-Լուրնանի» զաջարումից հետո Բեյրութ վերադարձած ալ-Շալֆունը 1870 թ. հունվարի 1-ին ասպարեզ էր նետում մինչև դեկտեմբերի 24 գոյատևելի մի նոր՝ «ալ-Ջուհրա» («Արուսյակ») ութ էջանոց շաբաթաթերթը, որը առաջադրում էր պատմական, գրական և այլ գիտելիքների տարածմամբ մշակութային առաջընթացին նպաստել (169, հտ. 2, 8—9)։ Ալ-Բուսաֆնին նույն օրը լույս էր ընծայում «ալ-Ջինան» («Պարտեզներ») բավականին ծանրակշիռ ու մինչև 1889 թ. շարունակվելիք գրական, գիտական, պատմական ու հասարակական-բազաբական կիսամյա շանդեթը (169, հտ. 2, 45—47)։ Փետրվարի 25-ին հալել Ամրյան հրապարակում էր վեց ամիս ապրելիք գրական ու պատմական, այլ հոգևոր-կրոնական թերթում ունեցող «ալ-Միհմազ» («Սեփան») կիսամյա (169, հտ. 2, 9—10)։ Մայիսի 11-ին Լուիս Սարունջին ընթերցողներին էր հասցնում «ալ-Նաշա» («Մեղու») «սրալիզու բանավիճող» (156, հտ. 4, 56), հիմնավոր բարենորոգությունները շատագուրջող (169, հտ. 1, 72) և 31-րդ համարից հետո իշխանությունների կողմից խստիվ արգելվելիք 16 էջանոց շաբաթաթերթը, որի մեծամիլ աշխատակիցների ստորագրած նյութերը վերաբերում էին գիտությանը, տեխնիկային, գրականությանը, պատմությանը, լեզվին, փիլիսոփայությանը, քաղաքականությանը և տնտեսությանը (169, հտ. 2, 47—51)։ Վերապահ հուսիս

11-ին ալ-Բուսթանին իր կիսամսյա հանգեփին միացնում էր «ալ-Ջան-նա» («Պարտեզ») քաղաքական, անտերական ու գրական շարաքաթեր-թըր, որը երկրորդ անգից հոսորդայի վերածվելով պահպանվելու էր մինչև 1886 թվականը (169, հտ. 2, 10—11):

Ի միջի ալլոց, ի հերքումն Կրմսկու «ինգիլիզուստական պահանջումների» տեսակետի, ալ-Շալֆունու ու Սարունջին 1871 թ. հունվարի 9-ին համատեղ ասպարեզ էին նետում բազբաբական, գիտական և տնտեսական 16 էջանոց մի հոսքյա՝ «ալ-Նաշաճը» («Առաջդիմություն»), որի խմբագրմանը մասնակցում էր Սիրիական երկրորդ ընկերության բացորոշապես հակասամանյան-հեղափոխական տրամադրությունների երգիչը՝ Ի. ալ-Ցաղիչին: Վերջինիս ներկայությունն իրողությունից անկախարար պերճախոս փաստ էր այն, որ հակառակ նյութական և ալլ զրծվարությունների, թերթը հենարաններ չէր ունենում «ուժեղների» շրջանում և չէր վարանում խտրով քննադատելու համայնքներին երկպառակելու գործում թուրք աստիճանավորների դեքը, համարձակությունը որակազուրկ էր թերթի արգելումով (169, հտ. 2, 51—52): Ըստ ինքյան պերճախոս էր նաև երկու հրատարակիչների համագործակցությունը, վկայությունն այն բանի, որ առանձին անհատների հասարակական մասնադրությունների համաստիճան բարելլըման, հետևարար նրանց հասարակական-քաղաքական նկրտումների համակցման զեպետում «ինգիլիզուստիստները» շտապում էին միավորվել ու համատեղ հանրես գալ հասարակաց կարգախոսով: Իսկ ալ-Շալֆունու և Սարունջիի միաձուլումը օրինաչափ երևույթ էր:

Յուհաննա-Լուիս Քին Յուսուֆ Սարունջին (1838—1909) իր ժամանակի ոչ միայն առավել զարգացած, այլև արտակարգորեն զուսեզեղ զեմքերից մեկն էր: Մազմամբ ասորի և ասորական կաթոլիկ եկեղեցու վարդապետ, նա Հոսոմում աստվածաբանության և փիլիսոփայության զոլուորի աստիճան էր ստացել և 1860-ական թթ. Բելյուսում վարել իր համայնքի առաջնորդությունը: Գերագանց տիրապետելով, բացի առերեքներին, արաբերենից, հայերենից, թուրքերենից, նաև լատիներենին, իտալերենին, անգլերենին ու ֆրանսերենին, նա թվարկված բոլոր լեզուներով (բացի հայերենից) հեղինակել է ու հրատարակել աշխատություններ, որոնց թվիլը մի քանի տասնյակի է հասնում: Հետաքրքրական է, որ նա Վրդիլիոսին լատիներենից փոխադրել է իտալերենի ու հրապարակել, ուսումնասիրել է «Իրլանդական ցեղի ծագումը» և իր հետազոտությունը լույս ընծայել անգլերեն, օսմաներեն և սովորեցրել թուրք պետական գործիչների (այդ թվում Բելյուսի մուսսաբիֆ, սպապա սպորա-

զում Քյամիլ փաշային) և նրանց համար թուրքերեն շարագրել է վարչարարական աշխատություններ: Նշենք, որ մեծ մասամբ արաբերեն իր հեղինակությունները հիմնականում նվիրված էին փիլիսոփայական, բարոյագիտական, գեղագիտական, իրավաբանական, կրոնադավանական հարցերի, սակայն որպես արաբականության բառազուրկ, երան ստավի-յապես հուզում էին Անանտի արաբների կյանքի բախտորոշ իրադարձությունները, որոնց արժարժումը հեղինակն անկասկած համարում էր իր ժամանակակիցների համար ուսանելի: Պատահական չէ, որ ծավալուն երկերով նա անդրադարձել է Հալիպի 1850 թ. հակաթուրքական խռովություններին, իբրև նաև լեռան ու Գամասլուսի 1860 թ. արյունալի զեպերին, 2, 78—81):

Մի ամբողջ համայնքի հոգևոր պետի պաշտոնին զուղըմաց Սարունջին ղեկավարում էր նաև սեփական բարցաված մի դպրոց, արևելյան լեզուներով մեծաթիվ գրքեր հրատարակող մի հրատարակություն և թեկուզ կարճակյաց, միմյանց հաշորոշ գրական-գիտական-հասարակական պարբերականներ, որոնց չէրբում իրեն զրսեոքում էր որպես նախարարիզուտ և անհողողոջ հրապարակախոս, մանավանդ արաբական երկրամասերի և արաբական ազգությունն առաջդիմության ջերմեռանդ ջատագով: Դի թարրազիի քնուսթգրմամբ իրենց «ծայրահեղականության» պատճառով թուրքական իշխանությունների կողմից կախակյալող արաբական առաջին թերթիքը հանգիստցող իր հրատարակություններում Սարունջին, լինալիլով պահպանողական թե բուսթանիական նահալյականներին, անխնա մարտնչում էր հատկապես մահմեդական և բրիտանյա կղերաֆեոդալական հետադիմության, այդ թվում մարոնական ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ազնվականություն զեմ (169, հտ. 2, 72—77):

Սահել Բելյուսի կառավարությունը վարած իր սոճիի ազնվականությունից և մարոնական մոնոսեղությունից վաղուց խզված ալ-Շալֆունու, իր հերթին, «ալ-Լուրանե» զազարումից հետո Բելյուս վերադառնալով վերաբացել էր իր սուլարանը և ստեղծել նոր հրատարակություն («ալ-Քուլլիյա»), որը մեկը մյուսի ետևից ընթերցողի էր հասցնում գրական, պատմական, աշխարհագրական, փիլիսոփայական, գիտական և այլ բնույթի գրքեր, որոնց ընդհանուր թվաքանակը վախտուն էր հասնելու (159, 1140: 169, հտ. 1, 120—121): Ալ-Շալֆունու հրապարակ էր հանում նաև իր ստեղծագործությունները՝ «Սիրալիբ գրոցներ կեր», «Գաղափարների ներթափանցումը զվարճախոսությունների մեջ»

և «XIX դարի երևելիների վերաբերյալ տեղեկությունների մարզարտա-
շար» Ուշագրավ է, որ հրատարակչությունը ալ-Շալֆունի համար եղել է ոչ միայն, ավելի շուտ՝ ոչ այնքան գործի մեջ նետված իր դրամատիզա-
լիչ շահարկելու ու մեծացնելու միջոց և ընթերցող հասարակության պա-
հանջմունքներին պատասխանող սովորական լուսավորական ձեռնար-
կում։ Որպես նահաջականների միջավայրի գաղափարականորեն նվե-
հատեն, հատկապես «ալ-Լուրնանի» շուրջ սիրող միջնդարձում հակա-
օսմանյան գաղափարներով հագեցած և քաղաքականորեն հասունացած
ներկայացուցիչ, ալ-Շալֆունն առանց երկմտելու նախապատվություն
էր տալիս այնպիսի գրքերի, որոնք ընդհանրապես սիրիական, առանձ-
նապես լիբանանյան ազգաբնակչության հասարակական գիտակցության
բարձրացման գործում կարող էին ներգործություն ունենալ։

Գծվար չէ հաստատել, որ Սաբունչիի և ալ-Շալֆունի համագոր-
ծակցությունը ոչ թե երկու հրատարակիչների պատահական մի շահնե-
կերություն էր, այլ՝ համաման հասարակական առաջդրանք ունեցող
նահաջական երկու գործիչների նպատակասլաց մի միություն, որին
այնուհետև հարելու էին արժատական տրամադրությունների բոլոր երի-
տասարդ մտավորականները, միությունը նահաջակական շարժման շրջա-
նակներում տալու համար ինքնուրույն և արզեն իսկ առկա մյուս հո-
սանքներից խստիվ տարբերակվող մի հոսանքի բնույթի։ Եվ պատահա-
կան չէ, որ Սաբունչի-Շալֆուն միության «ալ-Նաշա՛ր» համարվում է
հետագա արժատական մամուլի մայրօրինակը (156, հտ. 4, 56)։

Տվյալ պահին, ինչ խոսք, իր սեփական ուղու վրա հաստատագրե-
րեկած նահաջական շարժման շրջանակներում Բ. ալ-Բուսթանիի «ալ-
Ջիանն» կիսամյան, «ալ-Ջաննան» եռօրյան և 1871 թ. մարտի 3-ին
գրանց Սելիմ ալ-Բուսթանիի անունով ավելացած «ալ-Ջունեյդան»
(«Մարտիզիլ») քաղաքական և առևտրական երկօրյան, որը 2 էջով լույս
էր տեսնում երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ օրերին (169, հտ.
2, 22), փաստորեն միջին դիրք զբաղեցնող ալ-Նուրիի պահպանողական
(պայմանականորեն «աջ») և սաբունչի-շալֆունական «ճանդուգն»
(պայմանականորեն «ձախ») թերթերի համեմատությամբ, վեր էին
ածվել լիբանանյան մտավոր-մշակութային կյանքին շեշտ և ուղղու-
թյուն տվող կենտրոնական օրգաններին իսկ զա՛ պատահական չէր,
րեպով, քանի որ ալ-Բուսթանին նահաջականների անհակահանույն պա-
րագլուխն էր, նահաջի՛կ՝ Լուսավորականությանը փառապատկումը պաշ-
մանավորող նախադրյալների կենսավորմանը առավել մեծ ծառայու-
թյուն մատուցած գործիչը, ավելի ճիշտ՝ Լուսավորականությունը որ-

պես գաղափարախոսություն կրող և որպես շարժում գործարկող
«ճանդուգններին» ծնողը և միայն ու միայն այդ իմաստով, ուրեմն և
որոշակի վերագահություն՝ «արաբական Լուսավորականության հայ-
րը»։—ինչպես գրել է Լեիկը (119, 57)։

Եվ իբրք, մատենագիտական ցուցակների վրա հակվող ամեն մի
հետազոտողի կարող է զարմացնել այն փաստը, որ ալ-Բուսթանիի ան-
վամբ մեզ են հասել ոչ թե գեղարվեստական-ստեղծագործական իրենց
ժանրակազմությամբ աչքնեցող և արաբական դպրության անդաստանում
նոր էջ բացող երկեր, այլ՝ միայն ու միայն, թեկուզ օժվիկանոսի շրջա-
վազով, սակայն վերջին հաշվով բառարան մենցող «Օժվիկանոսի շրջա-
վազը» երկհատորյակը (և դրա համառոտ տարբերակը՝ «Օժվիկանոսի
տրամագիծը»), մի երկու քերականագիտական ու մի երկու Նաշվապա-
հական մասույան, մի շաբթ թարգմանություններ (բառ որում Վերինդն
կուրդյոյն) կողքին հոգևոր-գաղափարական քարոզական բազմաթիվ մատ-
յանները), մեզ ծանոթ երկու-երեք հրատարակային դասախոսությունները
գրքույկի տեսքով և վերջապես բողոքական դավանության համար նա-
հատակված Ա. ալ-Շիդիակի վարքը, իհարկե շմոտանալով հանրագի-
տական բառարանի առաջին հատորներն ու հրատարակված չորս անուն
պարբերականները (156, հտ. 4, 269—270; 159, 558—559)։

Դա այդպես է, անշուշտ։

Եվ սակայն, ինչպես իրավամբ գիտել է տվել դի Քարրազին, Բ. ալ-
Բուսթանին եղել է «գիտական նահաջի գլխավոր հրամանատարը»
(169, հտ. 1, 90), նահաջականների մի ամբողջ սերնդի «մուսլիմ
Բուսթունը», բառիս բուն իմաստով ուսուցիչը ոչ միայն միսիոնարական
դպրոցներում թե իր «ազգային» ուսումնարանում, գիտական թե գրա-
դարաններում և իր «ազգային» ուսումնարանում, այլև՝ մանավանդ մամուլում, ազատ հրատա-
րակախոսության դպրոցում։ Կրաչկովսկին, ընդգծելուց հետո «գրական
վերածննդի երկու սյուներից» ալ-Յադիլիի գերբ՝ գառական լեզուն տա-
րածելու և սիրիացի մտավորական երիտասարդության պորթուգալյան ուժե-
րուն իւր տալու գործում, իրավամբ շարունակել է. «Ալ-Յադիլիի գոր-
ծունեության պակաս թողածն ամբողջացրեց այս ասպարեզում երա-
կրասեր գործակից ալ-Բուսթանին. իր հանգիստներով, ավելի աշխույժ
հասարակական գործունեությամբ, վերջապես գիտական մեթոդի վրա
հիմնված արաբական առաջին հանրագիտարանի ստեղծմամբ, նա հա-
ջողոր սերնդի շրջանում նախապատրաստեց յուրաքանչյուր գրողական մի-
ջավայր, որը թեև անցրեց գրականության հետագա զարգացում» (114, հտ. 3,
հերթին նպատակեց... ընթերցող միջավայրի զարգացման»)

26—27); Իր Հերթին Գիրքը հաստատել է, որ «հենց Ռեյտովում ն. ալ-Յադիչի շուրջ աճած գործերի մի այլ խումբ, որի ազդեցությունը վերջի վերջո գերակայություն ձեռք բերեց ալ-Յադիչի ազդեցության նկատմամբ և XIX դարի երկրորդ կեսի ընթացքում արաբական գրականության մեջ Սիրիային գերակշիռ դիրք տվեց», հիշտ է՝ թեպետ «հարեց արաբները հին գիտելիքներն աշխուժացնելու յազդիչական նպատակներին», սակայն «միտմամանակ շահագ յուրացնել արևմտյան գրականության ու գրական տիեզերականի արժեքավոր տարրերը: Այդ զարցրի առաջնորդն եղավ Բ. ալ-Բուսթանին, գրական գործունեության բազում քննազավառների այդ առաջամարտիկը» (216, մասն 1, 750—752):

Ալ-Բուսթանիի թերթերը 1870-ական տասնամյակի սկզբի արաբական հասարակական-քաղաքական և մտավոր-մշակութային կյանքի նոր իրավիճակի հարազատ հայելին, նոր երևույթների անաղարտ պատկերողներն էին. բառագովում էին առաջընթաց և, թեկուզ շահիպալը, բարենորոգություններ, ջանում էին անվազն ցույց տալ, թե ինչպե՞ս էին ապրում լուսավորյալ ժողովուրդները: Նրանք հատկապես մեծ ներգործություն ունեին սիրիական, առաջին հերթին լիբանանյան հասարակական կարծիքը ինչպես նահաջայական «աչերի» պահպանողական հասանքի մեկնիչյան ազդեցությունից զերծելու, այնպես էլ հատկապես հնտաղեմ-խավաբամիտ հոսանքներից պատվարելու տեսանկետից: Այդ հոսանքներից առաջինը, «Հադիթիթ ալ-սիրայիթ» գոյությունից անկասխարհաբ, այժիշ էր ստանում քողերական միախնդրների 1871 թ. հունվարի 1-ից չորս էջով և դարձյալ Իբրահիմ Սարգիսի խմբագրությամբ հրատարակ նետած պատկերազարդ «Փառաք ալ-սուրհ ալ-մունիր» («Առավոտյան լուսաստղ») ամսաթիթից և հունվարի 10-ից ութ էջով նրան հետևած «ալ-նաշրա ալ-նուբուդյա» («Շաբաթօրյա հրատարակություն») շաբաթաթիթից: Երկրորդ հոսանքին լուրջ թևակոխություն էին բերում 1867 թվականից լույս ընծայվող «Ալմալ շարիբաթ մար Մանսուր զը Պոլ» («Մուրթ Մանսուր զը Պոլի ընկերության գործեր») եռամսյան, 1870 թ. հունվարի 1-ից սապարզ իջած «ալ-Մաշրաս ալ-վատիկանի ալ-ար ալ-յասատիլլուն» («Իրանական հայերի վատիկանյան ժողովածու») հանդեսը և մանավանդ սրան նույն թվականի սեպտեմբերի 3-ից հաջորդած «ալ-Բեշր» («Ավետարեք») շաբաթաթիթը (1872 թ. դեկտեմբերից՝ չորս մեծագիր էջով), ինչպես և կրթահամայնքային այլ միջնադարաման հրատարակություններ, որոնք լուսավորական բարոյի ներքո իրականում խավաբամիտությունն էին ամրապնդում (169, հտ. 1, 70—73 և հտ. 2, 18—21):

Բուսթանիական մամուլի համար հիմնական հոգսերից մեկը ալ-Շիդիակի պրոսական թերթի վնասակար զաղափարախոսությունից սիրիական ազգաբնակչությունը պատվարելն էր: Ասենք, որ Բ. Հասունից «ազատված» ալ-Շիդիակին չէին անհանգստացնում արաբական երկրամասերի կենտրոններում լույս տեսնող պաշտոնաթիթերը: Նա մի կերպ հանդուրժում էր նաև կիսապաշտոնական, Կրիսոկու բառերով ասած՝ «առտաձյական» ալ-Խուրիթի «խիսա թուրքանպատ» թերթին (116, 576): Բայց ա՜ն հանձին գիտնական-բանասեր Բ. ալ-Բուսթանիի, նա անմիջական վտանգ էր տեսնում լեղվարան-բանասերի մեկնիչյան իր հեղինակությունը, իսկ հանձին նրա թերթերի՝ անխոսափելի ախոյաններ իր թերթի արաբական աշխատանքում հասարակական-քաղաքական կյանքի օրենսդիր-առաջնորդի հանգամանքին և պանիսլամական քարոզի հաջողությունը: Եվ ոչ առանց հիմքի:

Բանն այն է, որ բուսթանիականները եկն ի վիճակի չէին բացահայտով գրոհելու ալ-Շիդիակի հասարակական-քաղաքական հայացքներ վրա, ապա կարող էին անսրբի կացնա՛նքնել նրա արաբագետ-բանասեր խորքորմա հավակնությունները: Եվ ա՜ն 1870—1871 թթ. ֆրանս-պրոսական պատերազմի կապակցությամբ առաջնորդող հողվածներով թե զեղոններով իր քարոզի աշխուժացրած ալ-Շիդիակը 1871 թ. հրատարակում էր նա «Գունիթ ալ-թայիթ» («Ինքնուսույց») խորագրված արաբերենի բնթվանաթյունը, որը որոշ իմաստով հանդուցյալ էր. ալ-Յադիչի բերականագիտական «քրիստոնեական» ձեռնարկների «մահմեդական» հակակշիռն էր և որը անմիջապես օսմանյան ու եղիպտական կրթական միեխտությունների կողմից հանձնարարվում էր որպես պետական զարգացող զուսպիրը: Չոր բանասիրական գործը հաջողպես շարունակող երիտասարդ Իբրահիմ ալ-Յադիչին, անկասկած ալ-Բուսթանիի քաջալիբաներով, «ալ-Չինհանում» հանդես էր գալիս մի հողվածով, որում սպանիշ բննադատությունն սկսելով ալ-Շիդիակի 1867 թ. լույս տեսած «Գիշերների զաղտիքը» բառարանագրական աշխատանքից, հասնում էր մինչև «Ինքնուսույցը», շնորհալով հայանյիվ բրբրել նաև, գոնե բանասիրական հողի վրա, հեղինակի հասարակական-քաղաքական հայացքները զրևորող առանձին գրական ստեղծագործություններ: Ժամանակակիցների վկայությամբ «խոցված ու կատաղած» ալ-Շիդիակը այլ կը չէր պոնում, քան որպես պատասխան շարագրել 110 մեծագիր էջերով իր ամբողջ գիրք՝ «Մուվան ալ-շաշի ֆիլ-նազ ալա Իբրահիմ ալ-Յադիչի» («Իբրահիմ ալ-Յադիչիի հերթիտ գործում թախտողների զվարճանք») խորագրով, որը 1872 թ. Պոլսում

լույս էր ընծայում որպէս զպոի լրագրող Միխայիլ Էֆենդի Արզ ալ-Սեյիդ ալ-Մըսրիհ հեղինակութիւն, թնայեալ գրքի հեղինակի խնկութիւնը ժամանակակիցներից ոչ որի համար գաղտնիք չէր: Եվ ոչ միայն այն պատճառով, որ զպոի էֆենդին Կահիրեում ծանոթ էր որպէս անգղերեկի ուսուցիչ և ոչ երբեք զրոգ ու մանկանդ թանասեր (նրանից մեզ ճատած երկու անուն գրքից հռչակավորը երկհատոր հաստափոր մի ճատան է հռչակագրութեան վերաբերյալ), որ նրա հերքողական էլ լույս էր տեսել շիդիական տպարանում: Կար նաև սկներերուն շիդիական ունի իրողութիւնը, գրքում անպարկեշտ, գրավոր խոսքում անթույլատրելի արտահայտութիւններով անարգում էր հանգուցյալ Ն. ալ-Յազիշիի հիշատակը, խծածվում էր նրա գրական ու գեղարվեստական վաստակը, շմտուեսալով, անշուշտ, Բ. ալ-Բուսթանիի անձն ու գործը և վերջապէս «երեսխա» Ի. ալ-Յազիշիի հողովածը (116, 575—580; 159, 1323):

Բէյրութի Նահդայական շարժման շրջանակներում բուսթանիական հոսանքը ամենամարդաշատն էր: Նրանում կենտրոնականն այնն էր. ալ-Բուսթանիի շուրջ համախմբված էին հոր աչ թաղուկը հանդիսացող Սեյիմը և եզրորոգի Սուլեյմանը, շէյխ Յ. ալ-Ասիբը, գրական հավանուցիւններ ունեցող բուրժուաներ Փաղալլա Գաղզուգին, Արզալլա Շերիխ և Խալիլ Ռեզալի, գրողներ Շահին Սադիբը, Իբրահիմ Բիհուլը և Խալիլ Սարգիսը, Դահդահ, Շուքրը և այլ առետրավաշխատն տոհմների գրասեր ներկայացուցիչներ: Սակայն այն շուրջ զգեբրում էին նաև մի ամբողջ փաղապոջ երիտասարդ մտավորականներ, հիմնական մասով Սիրիական երկրորդ դիտական ընկերութեան, այնուհետև նաև նորաստեղծ «Գրականութեան ժողովը» ընկերութեան անդամներ: Սրանց շարքում գերակշռողը հասկանալիորեն մեզ ծանոթ տոհմերի նորահաս ներկայացուցիչներն էին. ալ-Յազիշիներից Իբրահիմն ու Խալիլը, ալ-Բուսթանիներից Սեյիմն ու Սուլեյմանը, ալ-Խուրիներից Փրանսիական հյուպատոս Նասմանը, Նակկաշիներից Սեյիմը, Բեյճումներից Հասանը, Քուենյիներից Միշելը և այլք: Նրանց կողքին, սակայն, հայտնվել էին նոր տոհմանուններ կրող բազմաթիվ երիտասարդներ. Ադիբ Իսհակը, Յակուբ Սարուֆը, Փարես Նըմը, Հալսպից Փրանսիս և Արզալլա Մարաշուներ, Տրիպոլիից Զորը-Յանի Պապասուպուտն, Ալեքսանդրիայից բանկի տնօրէն Ռուֆայիլ Խուրիս և ուրիշներ:

Երիտասարդ այդ սերունդը, որ իր գրական-մշակութային և հասարակական-քաղաքական միտութիւնը մեծավասամբ բուսթանիական մամուլի ավազանում ստացած լինելով, իր հասցեին հաճախ էր լսելու «ալ-Բուսթանիի գրական խմբակի տղաներ» անվանումը, իրականում

ավելի ու ավելի անբավականութիւն էր զգալու այն հանգամանքից, որ ոչ միայն «մուսլիմի» թերթերում համարյա որպէս կանոն Սեյիմից շարադրվող ու հաճախ նաև ստորագրվող (156, հտ. 4, 249) առաջնորդողները միայն զնպից զնպք էին դրսևորելու քաղաքացիական որոշակի համարձակութիւն (116, 583), այլ «մուսլիմի» ինքը ավելի ու ավելի էր փարհուլ Օսմանականութիւնից և գործը հասցնելու էր մինչև Արզալլա Համիդի հետ որոշակի ներդաշխակութեան:

Նոր սերնդի հասարակական-քաղաքական հայացքներն ու իդեալը և հանուն այդ իդեալի ծավալած գործողութիւններն արգարամտորեն զնահատելու համար անհրաժեշտ է նախ և առաջ զոնն ընդհանուր գծերով պարզել, թե որո՞նք էին բուսթանիական այն հայացքները, որոնցից անբավական ու դժգոհ էին և ուրեմն գրանցից ավելի ու ավելի վճռականորեն խզվում էին «Գրականութեան ժողովը» ընկերութեան առավել արմատական անդամները՝ Ա. Իսհակի գլխավորութեամբ:

Բ

Իր ժամանակին Լ. Զուրեհեկը, «ալ-Զինան» հանդեսի էջերում մեկուկես տասնամյակի ընթացքում հրատարակված հոդվածների վերլուծությամբ, վեր է հանել Բ. ալ-Բուսթանիի ավագ որդու և գիտական ու հրատարակախոսական գործում զխաժոք աշակցի՝ Սեյիմի (1848—1884) հասարակական-քաղաքական հայացքները (տե՛ս 274): Հանդեսի հավաքածուների ղովարամատչելիութեան պայմաններում կէինը, հայր ալ-Բուսթանիի հայացքները պարզելիս, ստիպված է եղել հենվելու որդուն նվիրված ուսումնասիրութեան մեջ շարադրված ավալներին (119, 57—58): Հարկադրաբար որդեգրված այդ հենարանը մենք ևս կատարելապէս վստահելի ենք համարում ոչ միայն այն հիմանը, որ բուն իսկ հոր՝ Բուսթանիի հայացքները հետազոտելիս, Արու Մանենն ևս հանգել է այն եզրակացութեան, որ «ալ-Զինանում» առաջնորդողները ստորագրում էր որդի Սեյիմը, սակայն փաստորեն գրսևորում էր խմբագրապետ հոր հայացքները (195, 295): Կա մի այլ՝ անառարկելի իրողութիւն, որի հատկին է միայն առկա Արու Մանենի հաստատման մեջ:

Ինչպէս «Պարտեզները» («ալ-Զինան»), այնպէս էլ «Պարտեզը» («ալ-Ջաննա») թե «Պարտեզիկը» («ալ-Ջուննեյնա») Բուսթանիների տոհմական «բոստանն» էին և որպէս կանոն ղովար, եթէ ոչ անհուսալի գործ է հոր, սրբո թէ տոհմի այլ անդամների կողմից այդ «բոստանում» անձնապէս ներմանված մտավոր-մշակութային բոլոր հունդերը ճշգրիտ

պատկանելիությանը զատորոշել փորձելը, մանավանդ որ տպագրված նյութերի զգալի մասն իրոք էլ անտորագրի էր: Այդ պատճառով է, որ վերոհիշյալ պարբերականները «բուսաբանական» անվանելիս մենք հակված ենք ոչ թե սոսկ ավագ ալ-Բուսանիին, այլ՝ հավաքաբար տոհմի բոլոր անդամներին նկատի ունենալու, հետևաբար և Երուսթանիական հայացքներին՝ ներքո միավորելու անվազան հայր և որդի Բուսանիների հայացքները:

Արդ, ի՞նչ հայացքներ էին գրանք, սոցիալական ի՞նչ խմբից կարող էին ծագել և ի՞նչ խմբի հասցեագրվել:

Այնքան, որքան «ալ-Ջինանի» հավաքածուներին անմիջականորեն հաղորդվելու հնարավորությունից զուրկ ենք եղել նաև մենք ու ձեռքի տակ ունեցել ենք երկզարթաթևերի համարներից աննշան մի մաս, այս՝ անաչին ու մեզ համար էական հարցին պատասխանելու համար ապավինելու ենք ժամանակակիցներից արևելագետ Ֆոն Քրեմերի հետաքրքիր վկայությանն այն մասին, որ «ալ-Ջինան» «անձեղ հանդեսը» Բեյրութի ազգաբնակչությունը երկու երրորդը կազմող և «սուևուրի կամ մի այլ զարմուռների նվիրված», հետևաբար «ընդհանուր առմամբ ունեվոր» քրիստոնյաների տներում աղթագրքի կողքից անպակաս էր: Եթև շնտանանք, որ Ֆոն Քրեմերին «ամենից շատ զուր էր գալիս սիրիական քրիստոնյաների պարզ, իսկապես նահապետական կյանքը», որից նա «ալ-Ջինանին» անբաժանելի էր համարում, մեկ էլ այն, որ Բեյրութում «անգո էր կիրթպական մեծ քաղաքներում բույն զնոզ որքան զղվելի, նույնքան էլ վատնզավոր պրոլետարիատը» (119, 582), ապա հասկանալի կդառնա ավատատիրություն-դրամատիրություն կոմպրոմիսի գոյր զեղ-մանացի դրամական բարձրի հասարակական-քաղաքական իրնզուր, որի նմանակը ընդհանրապես սիրիական, հատկապես Բեյրութի քրիստոնյաների շրջանում գտած լինելու ուրախությունն էր գրսևտրում նա, այլ իդակին էլ պատշաճող հանգու հայտարարելով «ալ-Ջինանը»:

Բարսի Ֆոն Քրեմերի իրնզուր, ինչ խոսք, բուրժուական էր, սակայն Մարքսի և Էնգելսի կողմից «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» մատնանշված. «բուրժուականից զարգացման այն աստիճանը», որում կապիտալիստները զեն չեն հասել տիրապետության, հետևաբար ի վիճակի չեն «խորտակել բոլոր ֆեոդալական, նահապետական, իդիլիական հարաբերությունները», առ առավելն «միապետության հարկատու երրորդ դաս» են, հետևաբար զեն ձեռնող չեն տվել իրենց իսկ կոած գները հենց իրենց զեմ ուղղող պրոլետարիատին (1, 35): Առաջ անցնելով ասանք, որ Սկլիմ ալ-Բուսանին իր ստեղծագործությունները եղա-

փակող «Մամիյա» վեպում (1884 թ.), Արևելքին շպատշաճող արևմտյան տեսնությունների թվին էր գասելու պրոլետարիատի գաղափարախոսությունը՝ սոցիալիզմը, որպես միտական հերոս ընտրելու էր «սոցիալիստ-պրոլետարի», որը կազմակերպելու էր սիրո հարցում երջանիկ իր սիրտյանին սպանող «սոցիալիստների մի ավագակախումբ» (103, 44):

«Ալ-Ջինանը» գասակարգային թև «ազգային» դրամակցության մակարդակով, ուրման և հայրենասիրական ոգու շեշտագրման գծով «Էադիկաթի» համեմատությանը անկասկած մի աստիճանի բարձր էր կազմանած: Միաժամանակ, սակայն, մի տասնամյակ առաջ «Նաֆիրի» էջերում բացահայտված Օսմանականությունն էլ նրա էջերում էլ նոր աստիճանաձգվել էր բարձրացված: Ինչո՞վ բացատրել պարագորսային թվացող այդ իրողությունը:

Եթև մտանայինք, որ խոսքը զենու է նահգայի կենտրոնական սյունիքից մեկի ազգային-մշակութային կարևոր մի ձեռնարկման մասին, ապա հեշտագույն բացատրությունը կլիներ հրապարակագիր ալ-Բուսանիի՝ մրցակից ալ-Խուրիին միավզելու և իշխանությունների կիսապաշտոնական խոսակի հանգամանքը յուրացնելով լրագրական շուկային մենատիրույն եռանդից կառչելը: Սակայն պարագոքս սոսկ բուրժուական միջավայրի համար սովորական «մարդկային թուլություններ» ազդակով բացատրելու համար հարմարներից չէ և պահանջում է խորամուխ լինել ինզորի հասարակական զուպանակների մեջ:

Նաֆիրի» նյութերի հետազոտումը Աբու Մանենին հիմք է տվել պնդել, որ 1860—1861 թթ. ալ-Բուսանին համայնքային միասնությունը հակադրում էր հայրենասիրական միասնությունը, սակայն «սառի զզուշություն» վերջինս բողոծածիցու էր Օսմանականությանը: Ավելին. ըստ Աբու Մանենի, 1860 թ. կոտորածներից անմիջապես հետո և ֆրանսիական ռազմական միջամտության պայմաններում ալ-Բուսանին «օսմանյան վարչակառավարումը համարում էր երաշխիք»՝ մի կողմից սիրիական քրիստոնյաների համար «ընդզեմ մահանգական կամ դրուզ արբենիվություն», մյուս կողմից էլ ընդհանրապես Սիրիայի և սիրիական արարների համար «ընդզեմ օտար միջամտությունների և տիրապետության» (195, 293):

Աբու Մանենի հաստատման օգնությանը զգվար չի լինի «Նաֆիրի» Օսմանականության մեջ իրոք էլ հաստատել նահգայականների և թվաշատ թև համոզմունքայնությունը («Երաշխիք ընդզեմ...»), և՛ փոքրամասնական թևի տակտիկայնությունը («սառի զզուշություն»): Օսմանականության նկատմամբ երկակի վերաբերմունքի 1860—1861 թթ. հաս-

տատապես երկմիասնականացումը դժվար չէ բացատրել Յուազ փաշայի քննիչ հանձնաժողովի ներկայությամբ և տեղաբնիկ թե քուրդ շարքաբարբերների նկատմամբ խիստ պատժամիջոցներով, ֆրանսիական զինարշավի հարցում որոշ մայրաքաղաքների (առաջին հերթին Բուսթանիեն-բին սրտամոտ Լոնդոնի) հակառակամտությունը ու մյուս հանգամանքներով, որոնք առավել կամ նվազ աստիճանի ճշտորոշում էին նաև «Հադիկաթ ալ-ախբարի» դիրքորոշումը:

Այդ հանգամանքները 1870 թ., «ալ-Ջինանի» լույս ընծայման օրերին առկա չէին: Սակայն տվյալ պահին դժբախտաբար առկա էր մի այլ հանգամանք, որ բուսթանիական Օսմանականությունը «ալ-Ջինանի» էջերում էլք կարող նոր որակի չհասցնել և համոզմունքայնություն չհանգեցնել, աննվազն շխտընդոտել 1870-ական թթ. սկզբների «մուսլիմի» մոտ բողոքել սկսելիք Արաբականության հետագա փթթումը. դա՛ ալ-Բուսթանիի և օսմանյան աստիճանավորության որոշ ներկայացուցիչների նախորդ տարիներին ավելի ու ավելի բարելավված հարաբերություններին Բեյրութի վայրի Մեհմեդ Ռեշիդ փաշայի օրոք որոշակի սերտացումն էր, ինչը ժամանակի մամուլի նյութերով փաստագրված է, նույնիսկ՝ հետագային վերածումը սրտակցություն, ինչը դեռ կարիք ունի համապատասխան նյութերով մանրամասն փաստագրման:

Ճիշտն ասած, նախընթաց ժամանակաշրջանում ալ-Բուսթանիի և օսմանյան իշխանավորների փոխհարաբերությունների վերաբերյալ մեր պատկերացումները բավականին աղոտ են: Համենայն դեպս հաստատորեն պետք է, որ նա Հաթթի-հուսայունը զնահատելով որպես բրիտանականների «աղատուություն շնորհող» ակտ, հրապարակակնորեն շնորհակալություն է հայտնել և իր համարարությունը հավաստել Արզուլ Մեջիդ սուլթանին (26, 40), ինչը որ բնականոն ու հասկանալի երևույթ էր 1850-ական թթ. վերջերի բեյրության նահաջակական միջավայրի համար: Հայտնի է, նաև, որ ալ-Բուսթանին իր զուլա գործող բառարանի երկու հատորները (տպ. Բեյրութ, 1867 և 1870) լույս է ընծայել Արզուլ Աջիդ սուլթանին գովարանող մի ջերմ ընծայականով, իսկ սուլթանն էլ հեղինակին պարգևատրել է «Մեջիդիեի» երրորդ կարգի շքանշանով և 250 ոսկեդրամով (169, հտ. 1, 90: 157, հտ. 2, 27): Որպես օսմանյան մտավորական առօրյաում սովորական երևույթ, դա ևս, ինչ խոսք, բոս ինչպես մեծ բան հուշել չի կարող:

Ալ-Քիբրուլին, միսիոներների հետ նահաջակական գործչի փոխհարաբերությունները հատուկ հետազոտության ենթարկելիս անբրազառնալով նաև թուրքական իշխանությունների հանդեպ նրա վերաբերմունքի

հարցին, հաստատել է, որ ալ-Բուսթանին ոչ մի առիթ չի փախցրել օսմանյան սուլթանին թե նրա տիտղոսավոր ներկայացուցիչներին իր համարմունքները ցուցադրականության աստիճանի բացահայտորեն կրաշավադրելու (268, 170): Այդ խոնարհումներն էլ, անկասկած, այնքան անբնականոն չէին արար մտավորական հպատակների միջավայրում և կարող էին թելադրված լինել ինչպես համոզմունքից, այնպես էլ, ինչ-որ չափով, տակտիկայից:

Փորք-ինչ ավելի նշանակալից է ժամանակի մամուլում վկայված այն փաստը, որ Բեյրութի օսմանյան աստիճանավորները անտարբեր չեն եղել բուսթանիական «ազգային դպրոցի» նկատմամբ և նույնիսկ վայրեն հարկ է համարել անձամբ լինել կրթարանում ու նրա հիմնադիր-տնօրենին խորհուրդ տալ՝ «իրեն սկզբունք դարձնել հայրենիքի և պետության շահերին ներգաղչնակ ճիշտ հայրենասիրությունը» (195, 295): Այս փաստըն էլ առ առավելի կարող է հուշարար լինել այն մասին, որ թուրքերը գուցե թե քան բուսթանիական Օսմանականության մեջ համոզմունք-տակտիկա երկմիասնականությունը որսացել էին և փորձում էին նահաջական գործչին կանգնեցնել էպպես ու բացառապես համոզմունքային Օսմանականությունն ուղու վրա:

Հավանական պիտի համարել, որ 1870 թ. այգպիտի ուղու վրա ալ-Բուսթանիի ոտք դնելու գործում իր որոշակի զբն է ունեցել համազոր-ժակցությունը Բեյրութի նահանգապետ Մեհմեդ Ռեշիդ (Մոհամմեդ Ուլուզդի) փաշա Շիրվանիի հետ, համազորժակցությունը, որը շարունակվել է անվազն մինչև 1871 թ. սեպտեմբերին վայրի պաշտոնազրկումը վիել է անվազն մինչև 1871 թ. սեպտեմբերին վայրի պաշտոնազրկումը մեծ վեզիր նշանակված Մահմուդ Նեղիմի կողմից: Մ. Ռեշիդի «բարբար ձեռք ուղի հարկից Պարտեզների առաջ» և նա է ալեգպանը, որ «սունկեց Պարտեզի ծառերը», մի քանի տարի անց բառախալով խոստովանել է անձամբ ալ-Բուսթանին իր «ալ-Ջինան» և «ալ-Ջաննա» թերթերին ակնարկելով (33, Գ տարի, 1873, 363):

Այն փաստը, որ Ռեշիդ փաշային նահանգապետի պաշտոնից նստեցնելու մեծ վեզիրը ծայրահեղ հետադիմական էր և որ շուրջ հինգ տարի անց, արդեն ուրիշ էջանդի (արտաքին գործերի մինիստր) դարձած, փաշան մասնակցելու էր Արզուլ Աջիդին տապալելու գործին, կարող է այն պարտանքի առաջացնել, որ ալ-Բուսթանիի հովանավորը առաջադեմ բարենորոգչական գործիչներից էր, հետևաբար և «մուսլիմի» մոտ Օսմանականության հիմնավորման հարցում նրա ներգործությունը կամ Օսմանականության հիմնավորման հարցում նրա ներգործությունը կարող էր զրական երանգներ ունենալ: Իրականությունը բողոքովին այլ էր. Ռեշիդ փաշան պարզապես հակադրված թանգիմաթական էր, վերնախա-

վային-մակերեսային վերափոխություններով սուլթանական-թուրքական տիրապետությունը վաճառավորելու գործի շեքով կողմնակից, իր համոզմունքներով ամեն մի իսկական բարենորոգության, առաջին հերթին սահմանադրության ծրագրի կատարի հակառակորդ։ Որպես այդպիսին էլ նա, Մուրադ V-ի գահակալությունից երկու շաբաթ անց, ռազմական միևնույն շուտան Աուտի փաշայի և այլ հակասահմանադրականների հետ սպանվեց միջնատական Չերքեզ Հասանի կողմից, Միդհատի իսկ ազարանում, կառավարության անդամների փոթորիկու մի նիստի ժամանակ։

Ըննց այդ տեսակետից էլ առանձին հետաքրքրություն կարող են ներկայացնել մինչև 1871 թ. սեպտեմբերը՝ մինչև Ռեզիդ փաշայի Բեյրութից մեկնումը «այ-Ջինանի» հասարակական-քաղաքական բնույթի հայացքները, որոնց վերաբերյալ բարեբախտաբար որոշակի նյութ տեսնելը Գանեղով, որ կաշարությունը թաղանթականների ղեկավարման ներքո բարեշրջվում է, այ-Ռուսթանի հանձն էր օսմանյան պետության նկատմամբ հավատարմություն քարոզում,—այդ նյութերից կեննելով գրել է Աբու Մանեն և անմիջապես էլ ավելացրել. «Նա հավանաբար մեկն էր այն սակավաթիվ սիրիացի քրիստոնյաներից, որոնք եվրոպական որևէ մեկ տիրապետություն աննպատակ էին համարում Միրիայի ապագայի համար» (195, 295)։ Այլ խոսքով, ըստ Աբու Մանենի, այ-Ռուսթանին 1870-ական թթ. սկզբին արդեն Օսմանականությունը իրան էր դարձրել և բացառապես համոզմունքի թելադրանքով ժառանգորդվելով քաղաքական և բարոյաբարխոսության՝ սուլթանական-մահմեդական գերիշխանության երկրորդական-քրիստոնեական ամեն մի այլընտրանքին հրդվյալ հակառակորդն էր։

Իրականությունն այդպե՛ս էր, արդյոք, և դրական պատասխանի ղեկավարում մի՞թե չի խաթավի այ-Ռուսթանի տեղը արաբական լուսավորականության առաջամարտիկների ղլխամասում, որտեղ, այն էլ առավել պատվո անկյունում, սովորաբար հակված են նրան տեղադրել շատ արաբազետներ։

Հասկանալի է, որ այ-Ռուսթանի հիմնական մտավոր-մշակութային իրավոր արաբական նահա-Վերածունդն էր, մշակութային վերածնությունը՝ Սիրիայի շրջանակներում և սիրիական ամբողջ ազգաբնակչության աստիճանաշափով։ Այս իմաստով էլ «այ-Ջինանի» բնականաբար պիտի ունենար լուսավորական որոշակի առաջարկներ. նպատակ Սիրիայում, նաև արաբական մյուս երկրամասերում, գիտելիքների տարածման և ընդհանուր առաքելության, ըստ որում. «Նշմարտություն

ու երկրի շահերը» սկզբունք դարձնելով ոչ թե ծառայել կրոնազգայնական որևէ խմբի, այլ. տևապես կանգնել «հայրենիքի (վաթան) և ժողովրդի (զաում) կողմում» (33, Ա տարի, 1870, 515—516)։

Ինչ խոսք, որ մշակութային վերածնությունը այ-Ռուսթանի կարծրով ինքնանպատակ չէր, բնայ։ Այդ վերածնությունը մեր պայմանավորված սիրիացիների ընդհանուր առաջնությամբ, Սիրիայի լավագույն սպազան, որի հիմքը, ըստ այ-Ռուսթանի, սիրիական ազգաբնակչության շրջանում հավաքական ինքնագիտակցության զարթոնքն էր։ Հրամայական անհրաժեշտություն եղող ինքնագիտակցության զարթոնքն էլ պետք է հանգեցնեք արաբական ինքնության նվաճման։ Այդ ինքնությունն, իր հերթին, ոչ այլ ինչ էր, եթև ոչ արաբական ազգին պատկանելություն։

Այ-Ռուսթանի մոտ արաբական ինքնության՝ արաբական ազգին պատկանելիության հանգող կենտանները հասկանալիորեն բավականին շփոթ են ու խառնափնթոր, սակայն և այնպես կարելի է նրա պատկերացումները ինչ-որ շափով հաստակացնել։ Նրա կարծիքով «մեզանից (սիրիացիներից—Ն. Ն.) շատերը սկզբնապես էլ պատկանել են արաբական ազգության (չինսիյա)»։ Ուրիշները, ճիշտ է, ունեցել են որիշ «բացյալ ցեղային ծագում», սակայն ներկայումս պետք է կարողանան «քարձրից նայել անցյալ ցեղային ծագման և ընդունել ազգային մեկ ինքնություն (կամ՝ մեկ չինսիյա-ազգություն), այն, որ «վերջինն է գերակշռել մեր երկրում և որի լեզուն ու սովորությունները մենք որդիորդել ենք»։ «Դա արաբական ազգությունն է (չինսիյա)».—համոզված պնդել է այ-Ռուսթանին (33, Ա տարի, 1870, 673—674)։

Ազգը (ուժմա),—գրել է նա,—հարկ է սահմանել որպես մի ժողովուրդ, որը միավորված է մեկ ազգության (չինսիյա) մեջ և որ լրացնում է «մի երկրում ապրելու և մեկ ու նույն լեզվով խոսելու» պայմանը։ Նրա կարծիքով այս հիմամբ են ազգ կազմում ֆրանսիացիները կամ գերմանացիները (33, Ա տարի, 1870, 642)։ Նույն հիմամբ էլ այ-Ռուսթանին մեկ և նույն երկրում ապրող ու մեկ և նույն լեզվով խոսող սիրիացիներին դիտել է որպես ինքնություն ազգ։ Ինչ վերաբերում է արաբական ազգին, ապա այ-Ռուսթանին չի կասկածել, որ սիրիացիներն արաբներ են, այլ խոսքով սիրիական ազգը մասն է կազմում մի ավելի մեծ՝ տերիտորիալ ու լեզվական հողի վրա միասնական արաբական ազգի։ Արաբական ազգը չի կորել, այլ լավ կորել է կորցրել և նվազել,—պնդել է նա, համոզված, որ այդ ազգը կարող է վերականգնվել շնորհիվ «միության, հայրենասիրական միասնության (ուսրա վոթանիյա) հա-

մայատասխանող ազգային միասնության (ուսար ջիսիայա)» (33, Ա տարի, 1870, 675)։

Արարական ազգային միասնության հիմամբ հայրենասիրական միասնություն ստեղծելու և արարական ազգը վերականգնելու իդեալից էլնելով էլ ալ-Բուսթանին հակադրվել է ինչպես սիրիական կոնֆեսիոնալիզմին՝ կրոնազավանական բազմազան համայնքների ինքնուրույնության իրողության, այնպես էլ մանավանդ օսմանյան՝ Բուրջբքի առաջնայնության մոլորափոխ (սուննի) մասնագիտությունների գերակշռությունն սովոր համայնքայնությանը։

«Ալ-Ջինանի» առաջնորդողներից մեկում, որը խորագրված է «Դարի ոգին», ալ-Բուսթանին XIX հարյուրամյակի համար բնութագրական է համարել հավասարության, լիակատար ազատության և առաջադիմության՝ մարդկային պատմության մեջ նոր էր բացած Ֆրանսիական մեծ հեղափոխության այդ և այլ գաղափարների տիրապետությունը։ Դարի ոգին ֆելագրում է հետևել քաղաքական այդ սկզբունքներին, իսկ կրոնի միջատմությունը աշխարհիկ այդ հարցերին՝ դեմ է դարի ոգուն։ Կրոնն բոս ինչպես «չի արդելում աշխարհիկ հարցերում հետևել դարի ոգուն», — պնդել է նա, զոնելով, սակայն, որ հանգամանքների բերմամբ սոցիալական և քաղաքական կյանքն սկսել է հենվել կրոնական միասնության վրա։ Ժամանակն է, սակայն, որ դարի ոգուն համապատասխան այդ միասնությունը փոխարինվի հայրենասիրական միասնությամբ (33, Ա տարի, 1870, 385—387)։

Կրոնազավանական միասնությունը, ինչպես էլ զուսպ և զգուշավոր, չէր կարող դուր գալ ընդհանրապես մասնագիտական պահպանողականության և մասնավորապես պանիսլամական հետադիմության։ Եվ պատահական չէ, բնավ, որ ալ-Բուսթանիի հայացքները ալ-Շիդիակի «ալ-Ջաուսիթ» էջերում հաճախ են խիստ բնադատության ենթարկվել՝ հատկապես սիրիական-մասնագիտական պահպանողականության միջնաբերդ Դամասկոսի այլմաների, այդ թվում շեյխ Քաշիբ ալ-Ջուսսիբի կողմից։ Հետաքրքրությունից զուրկ չի լինի նշել, որ խավարամիտ իր ընդդիմախոսներին ալ-Բուսթանին անվանել է «ճշման և բռնակալության զորաբանակ», միաժամանակ շեշտելով. «Ես չեմ վախենում նրա գրոհներից» (33, Ա տարի, 1870, 641)։

Ալ-Բուսթանին մի անգամ չէ, որ վերադարձել է դեպի համայնքայնության հարցը և ընդգծել, որ կրոնական միասնությունը մեկ տասնյակից ալիքի միմյանց կոկորդ կծողը եսամբ համայնքների միջև մասնատված սիրիացիներին դատապարտում է հետամնացություն և առաջ-

նորում դեպի արդես ու կործանում։ Մականյ դա նախկին կառավարողների քաղաքականության հետևանքն է լով, — պնդել է նա, — անցյալից ժառանգություն մնացած և ներկայումս հայրենասիրական միասնությունը փոխարինելի մի ախտ (132, Ա տարի, 1870, 643—645)։ Եթե սիրիացիք առաջադիմություն են նկրտում, ապա չունեն «հաջողության մի այլ ուղի», քան՝ հրաժարվել կրոնազավանական միասնությունից և «հարել հայրենասիրական միասնության, միավորվել արարական միասնության (ուսար արաբիյա) մեջ» (33, Ա տարի, 1870, 674—675)։

«Հայրենասիրական միասնությունը» «արարական (արարների) միասնության» հետ նույնացնելն արդեն աննախընթացորեն նոր քաղաքական մի ամբողջ զավանանք, ֆելուզ սաղմնային վիճակով՝ Արարականության իսկ էր, որը զարմանալիորեն չէր պատշաճում նահաջակականների մեծամասնության (այդ թվում և հենց իր՝ ալ-Բուսթանիի) կողմից որդեգրված քաղաքական զավանանքին՝ Օսմանականության, քանի որ վերջինիս համար «Հայրենասիրական միասնությունը» նույնատեղում էր օսմանական (օսմանցիների) միասնությունը։ Հետո՝ նշանակում է, որ ալ-Բուսթանիի Օսմանականությունն իրականում 1870-ական թթ. սկզբին չի ունեցել այն որակը, հետևաբար և «ալ-Ջինանի» վրա օսմանյան աստիճանավորների (այդ թվում Թերթի հովանավոր Ռեշիդ փաշայի) ընդհանուր առմամբ անկասկածիլ ներգործությունն էլ չի եղել այն ուժի, ինչ նկատարել է Աբու Մաննեն։

Այդ այդպես լինելով հանդերձ, նահաջակների մշակութային իր իդեալը հետապնդելիս ալ-Բուսթանին չէր կարող, հակապես օսմանյան աստիճանավոր զավանակություն հետ ներդաշնություն պայմաններում, իրեն քաղաքական իդեալ Օսմանականությունը շարժանել։ Եվ սակայն արարական-մշակութային և օսմանական-քաղաքական իդեալներն անխոստափելիորեն խաչաձևվելու էին, քանի որ լուսավորական նահաջակների համար մշակութային իդեալն անպայման ազգային-մշակութային էր վերաճելու։ Լուսավորականությունը հանգած նահաջակականությունը, մերժելով կրոնազավանական միասնությունը, հայրենասիրական միասնության ճանապարհին ի վերջո անպայման պիտի կանգներ «սիրիական ազգ-արարական ազգ-արարական միասնություն» հասկացությունների ճանաչման և որդեգրման փաստի առաջ։ Իսկ այդ հասկացությունները զեմընթաց էին Օսմանականությունից բխող և կայսրության միջնադարաբարյոք հասարակական-քաղաքական առօրյայում առավել կամ նվազ շարժով այլ անպայման կրոնազավանական (մասնիդական) միասնությունն ենթադրող հայրենասիրական-օսմանյան միասնությանը։

Այս կապակցությամբ արձանագրե՞նք, որ իր առավել բարեօճե՞ն նոր-օսմանական տարբերակում իսկ թուրքական Օսմանականությունը ոչ միայն յամբողջական զգալիցվող «Նալբանդարական միասնությունը» հակադրում էր ճնշված ժողովուրդների ինքնուրույնացման միտող ազատագրական շարժումներին (129, 83—84), ինչը որ զեռ հասկանալի էր, այլև ն. Քեմալի գրչով նախ տեսականորեն հիմնավորվում էր «ուսմենի» օսմանի» շրջանակներում թուրքերի տիրապետող դիրք գրավելու իրավունքը (124, 128—129), ապա և ի վերջո անխուսափելիորեն օսմանականացվում էր Պանիսլամականության, ենթադրելով թուրքերի ղեկավարության ներքո կայսրության բոլոր մահադականների միավորումը (249, 331—332):

Եվ այստեղ է, որ թեկուզ զմիարությունը, փորձում ենք հասկանալ որբերգական այն երկփեղկումը, որին անխուսափելիորեն մատնվել է ալ-Բուսթանին, երբ նախասահպանակ՝ 1850-ական թթ. վերջի և 1860-ական թթ. հավանաբար համադրմանը այն իր Օսմանականությունը 1870-ական թթ. սկզբին ավելի ու ավելի անպատշաճ է դուրս եկել իր ազգային-մշակութային իդեալին: Այդ երկփեղկման մեջ էլ, համենայն դեպս, ալ-Բուսթանին զո՞նե մի կարճ ժամանակ մնացել է «մուսլիմ» վարպետ և ուսուցիչ՝ քանի որ նրա համար Օսմանականությունը, 1870-ական թթ. առաջին տարիներին, շվերածվելով տակտիկականի (ինչպիսին լինելու էր երեկվա իր սաների՝ «Գրականության ծաղիկ» անդամների համար), ժամանակավորապես ստացել է յուրօրինակ բուսթանիական բովանդակություն: Նա հարցը լուծել է կայսրությունը պատկերացնելով Ամերիկայի Միացյալ Նահանգների ուրպի մի պետականություն: Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի պետականության շրջանակներում եվրոպական ազգային տարբեր ծագմամբ մարդիկ սիրենց ազատ կամքով ընդունել են ազգային մեկ՝ ամերիկյան ինքնություն (չինսոյա), կազմել մեկ՝ ամերիկյան ազգ (ուսմա) և ունեն մեկ հայրենիք (զեման), որը կազմված է բազմաթիվ նահանգներից (վիլայա): Վերջիններից յուրաքանչյուրը, սակայն, ունի որոշակի ինքնուրույնություն և ղեկավարվում է սեփական օրենքներով, քանի որ ունի որույն շահեր, որոնք նույնական չեն մյուսների շահերի հետ (33, Ա տարի, 1870, 644—646):

1871 թ. սեպտեմբերից մինչև 1872 թ. հուլիսը, այլ խոսքով Մ. Նեղմ փաշայի մեծ վեզիրության օրոք, բուսթանիական մամուլը դադարեցրել է հասարակական-քաղաքական հարցերի քննարկումը: Ալ-Բուսթանին ինքն իր լուսվորներ հենց այդ օրերին բացատրել է գրաքննական խստություններով (33, Գ տարի, 1872, 541 և 579): 1873 թվականից

սկսած և հատկապես 1874—1876 թթ. «ալ-Ջինանի» էջերում սկզբնական շրջանից շատ ավելի հաճախ են սկսել հայտնվել կայսրության իրավիճակի վերաբերյալ դատողություններ, ընդհանրապես այնպիսի նյութեր, որոնք թույլ են տալիս պարզել ալ-Բուսթանիի հասարակական-քաղաքական դավանանքը:

Հայր է անմիջապես նշել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում, երբ սուլթանական մայրաքաղաքում արտակարգ աշխուժություն էր տիրում և կարևոր իրադարձություններ էին խմբվում, ալ-Բուսթանիի Օսմանականությունը դժբախտաբար արդեն կորցրել էր իր «մուսլիմականությունը» և վեր էր անվել պետական-պաշտոնական Օսմանականության համարյա պատճենին: Նա կայսրության միասնության և այդ նախապարհով էլ հզորացման ջերմ ջատագործ էր դարձել (33, Ե տարի, 1874, 110): Օսմանյան լծի ներքո հեծող ժողովուրդների համար «մարդկային հասարակության մեջ հարգարժան դիրք գրավելու» համար պայմանը նա արդեն տեսնում էր սուլթանի գերշխանության ներքո մնալու մեջ և զրոյն էր. «Եթե պատահի, որ հայերը, հույները, սիրիացիներն ու մյուսները սկսեն անջատվել Օսմանյան կայսրությունից, ապա նրանք կվերածվեն անկենտրոն նահանգների և անընդունակ կլինեն քաղաքական որևէ ռզուա նվաճելու և կամ ամուր կանգնելու վտանգի դեմ հանդիման»: Դրանից ելնելով էլ ալ-Բուսթանին գտնում էր, որ այդ ժողովուրդները պետք է բարձր գնահատեն սուլթանի քաղաքական իշխանությունը. «Մենք ազգային տարբերությունները պետք չէ ուշադրության տանենք, երբ խոսքը գնում է քաղաքական հարցերի մասին: Մեր դրությունը հիասթաշել է, մենք Իսթանբուլ ունենք» (33, Ե տարի, 1874, 110—111): Պնդկելով, որ «հաստատ երաշխիքներով և սեփական կենտրոնով այժմյան իրադրությունը ամենից ձեռնառուն է արևելյան ժողովուրդների համար», նա հարկ էր պատրաստել է հայտարարել. — Ես ցանկանում եմ պահպանել այժմյան դրությունը, ձեռնպահ լինել պատակաման ամեն մի փորձից, մնալ մի մասը օսմանյան ազգ կոչված մեծ ազգի (ուսմա), որը թեպետ և ցեղային (աշնա) շատ խմբերից է կազմված, սակայն միասնական է շահերի խնդրում: Ըստ որում ալ-Բուսթանին միաժամանակ փաստորեն թելադրում էր ստոյիկյան համբերատարությամբ տանել թուրքական բարբարոսական լուծը. «Մենք չենք լսել, որ գործերի իսկական վիճակին ծանոթ իմաստուն մարդիկ իրենց օսմանյան պետություններից նախապատիվ համարեն մի այլ պետություն, ինչպես էլ որ կա-

ոավարչի կամ մեջլիսի անարդարությունից տառապելիս լինեն» (33, Ե տարի, 1874, 111):

«Միութեանը ուժ է,—գրում էր այ-Քուսթանին 1875 թ. և շարունակում.—Պատակաման և անբասան մեջ ժողովուրդները ոտնատակ են արվում ազգաների կողմից, նրանց իրավունքները կորչում են ուժեղի բռնությունից և նրանք նվաստացվում են օտարների կողմից» (33, 2 տարի, 1875, 577): Մի տարի անց, վերադառնալով նույն մտքին, նա գրածյալ օսմանյան միասնություն կենսակենսություն էր մատուցելում, զգուշացնելով այն բանից, որ «զավթումների սրբահար և հարստություն ծարավի» տերությունները «չեն խնայի երկպառակոված որևէ երկրի՝ նրան տիրելու, նվաստացնելու և տնտեսապես ստրկացնելու համար» (33, 2 տարի, 1876, 650):

Հետաքրքրական է, որ 1870-ական թվականների սկզբին այ-Քուսթանին ընկերային հայացքների հողի վրա ևս զգալապես ավելի առաջավոր է եղել, քան տասնամյակի կեսերին 1871 թ., օրինակ, նա դատապարտել է «ազգի (ուսման) շահերին հող շահանող և ժողովրդին (շարք) օտուության ու խեղճության մեջ զցող... բռնակալական կառավարությունը» (33, 3 տարի, 1871, 141) և իր պարտքն է համարել իշխանավորներին հիշեցնել անհատի թե ազգի իրավունքները հարգելու անհրաժեշտությունը, մասնավորապես որ «իրավունքների դարաշրջանի սկիզբը նշող» ֆրանսիական մեծ հեղափոխության «ողիթ թափանցել է Արևելք և մենք այն զգացել ենք» (33, 3 տարի, 1871, 573—574; 274, 150): 1873 թ. իր համարձակությունը էլ ավելի խորացնելով, նա չի վարանել ընդգծելու իր «ժողովուրդն այժմ էլ պայտեման ձեռնածը նետելու բարձրատեսի՛ն ևս պաշտոնատարների և սանիտ նրանց, որ իրավունք չունեն ճնշելու» (33, 4 տարի, 1873, 362):

Այ-Քուսթանի՛ հասարակական-քաղաքական հայացքների հողի վրա նահանջի ակնբերությունը, որումն, հարկ է հաստատապես թվագրել 1870-ական տասնամյակի կեսերով, կրթ սուլթանական կայսրությունում տնտեսական, հասարակական ու բարձրակարգ տաղանայն իր զգաթնա-կետին էր հասել, ֆինանսական ճգնաժամն աննախընթացորեն խորացել էր և համապատասխանաբար աշխուժացել էին տերությունների միջամտությունները, ժողովրդական հուզումները հաճախակիացնել էին և սահմանադրական շարժման նոր իրան ստանալու հետ համախառնվել և վճռական դրոշի էր նախապատրաստվում օսմանյան պահպանողականություն-հետադիմությունը: Գերախաղաք փաստերը խուճում են այն մասին, որ «ժուլայիմի» վրա 1870-ական թթ. սկզբներից ավելի ու ավելի

չի ներգործություն ձեռք բերողը ոչ թե միջհաստականների, այլ՝ նրանց հակառակորդների ճակատն է եղել: Նահրայականություններից դեպի Լուսավորականություն այ-Քուսթանի առաջնադասը Մ. Նեղիմի և ընկերությունների կողմից ոչ միայն կանգ է առել, այլև շրջադարձ է կատարել դեպի պահպանողականություն: Առավել ուշագրավն այն է, որ այ-Քուսթանին սկսել է սուլթանական-բացարձակապետական վարչակարգը ավելի պահին կայսրության ժողովուրդների համար ամենակատարճ հայտարարել: «Մենք ձգտում ենք հասնել այն մակարդակին, որ կարողանանք կիրառել սահմանադրական կառավարում, սակայն օսմանցիները դեռ բավականաչափ միավորված կամ լուսավորված չեն նման բանի համար»,—գրում էր նա 1875 թ. (33, 2 տարի, 1875, 195):

«Արդի Միտիայի ամենից ազդեցիկ մարդը»,—ինչպես բնութագրել է հիսուն տարի սիրիական իրակառության մեջ ապրած միսիոներ Զեորպը (172, հտ. 2, 483), որից տեսական կարգախոս ու շարժման ազդեցան էր սպասում Լուսավորականություն իտտոլ մի ամբողջ երիտասարդ սերունդը, վերածվել էր կարիքնետայն լուսավորականի, որ միանգամ ընդմիջում իր համար հասարակական-քաղաքական իդեալի վերածելով ոչ թե կտրուկ քայլերով, այլ միայն ու միայն աստիճանաբար հաստատելի սահմանադրական միապետությունը (119, 58), երևիլ է մատուցել հանրությանը մի ամբողջ խմբի հետ փաստորեն հիմնավոր փաստարկեր էր հայթայթում Արզուլ Համիդի հակասահմանադրական-հակախորհրդարանական շիհադին:

Հետաքրքրական է այն վկայությունը, որ Միտիայի նահանգապետությունը վարելիս Միջհաստ փաշան 1879—1880 թթ. հաճախ է այցելել «այ-Զինանի» խմբազրատուն, նյութապես աշակցել է թերթին և փորձել է այ-Քուսթանի միջոցով արաբական հասարակական կարծիքին հասցնել բարենորոգչական, հաստապես սիրիական երկրամասերի տնտեսական զարգացմանը նպաստելու կողմից իր զաղափարները (169, հտ. 2, 45): Այս և այլ վկայություններն աչքի առաջ ունենալով այ-Քուսթանի պնդել է, որ փաշան անկապաժ մասնակցություն է բերել նախապատրաստմանը «այ-Զինանի» մի շարք համարների, որոնցում շարադրվել են հասարակական և պետական կարգի վերաբերյալ իր հայացքները (155, հտ. 1, 126): Դա չի բացառվում, անշուշտ՝ եվ սակայն դա բնավ չէր կարող նշանակել, որ այ-Քուսթանին վերածվում էր համոզված սահմանադրականի, խորհրդարանական կարգի անվերապահ կողմնակիցի: Նա, թեև կողմ է մշտապես ցանալով իր տեսակետը հիմնավորել «Լուսավորական» փաստարկով, ինչպես ընդհանրապես Օսման-

յան կայսրութեան, այնպէս էլ հատկապէս արարական աշխարհի համար մինչև վերջ էլ անկապտակահատմամբ ու նույնիսկ վնասարեւր էր գտնելու սահմանադրական վարակարգը: 1881 թ., օրինակ, երբ Եգիպտոսում վաթսնիակները պահանջում էին խորհրդարանական կարգ հաստատել, նա խորհուրդ էր տալիս «նախապատմութիւնը տալ կրթութիւնը տարածելուն ու մշակել արդարադատական սխտեմը բարեկարգելու միտող օրենքներ, քան թէ ստեղծել ներկայացուցչական ժողով» (33, ԺԳ տարի, 1881, 578): Եթե,—պնդում էր ալ-Բուսթանին նաև այնուհետև,—ժողովուրդը (հասլի) գիտելիքների համապատասխան մակարդակ չի նվաճել, որպեսզի ընտրույալ խորհրդարանի միջոցով մասնակից լինի իր հարցերի լուծմանը, ապա խորհրդարանական կարգից «վնասն ավելի շատ կլինի, քան՝ օգուտը» (33, ԺԳ տարի, 1883, 150 և 193):

Բուսթանիական հայացքների հետ ծանոթանալու հուսովի միջոցներից մեկը, անկասկած, որի Սէլիմից մեզ հասած զեղարկեստական ժառանգութիւնն է, որի հիմնական մասը, հոր շնչի ներքո ավարտուն վիճակ ստացած, լույս է տեսել ոչ թէ առանձին գրքով, այլ՝ «ալ-Զիհանի» էջերում: Այդ ժառանգութեան մաս նաև կազմում դիտական ու գրական հանրամատչելի հոդվածներ, քերականական ու գեղարվեստական թարգմանութիւններ (այդ թվում՝ Բոնապարտին փառարանող Ֆրանսիայի մի պատմություն), հինգ պատմվածքներ (1870 թ. «Նետարձակում առանց նետի», 1871 թ. «Խազիր ու կլլա», «Նեշիբ ու կաթիլքա» և «Ֆերիդի հարսանիքը», 1873 թ. «Ղանեմ և Ամինա»), սոցիալական թեմայով վեց վեպեր (1870 թ. «Սէրը Սիրիայի ալգիեներում», 1873 թ. «Ասամ», 1875 թ. «Ներկա զարի դուստրը», 1877 թ. «Շաթիխ», 1878—1879 թթ. «Մալամ» և 1882—1884 թթ. «Սամաթ») և պատմական թեմայով երեք վեպեր (1871 թ. «Զեւուգիա», 1872 թ. «Պուտր» և 1874 թ. «Սէրը Սիրիայի նվաճման ժամանակաշրջանում»):

Կրահիօվսկուց քերտոյախոս» անվանված (114, հտ. 3, 27) Սելիմ ալ-Բուսթանին,—գրել է նրա ժառանգութիւնը հանգամանորեն հետադասած գրականագետ Գոլինինան,—իր գրական երկերում «ոչ թե իրական կյանքից կերպարներ է գնացել, այլ՝ բարոյից սյուսմէն, ուրիշ խոսքով նրա պատմվածքների և... վեպերի սյուսմէները միշտ բացահայտ պատկերավորումն են լեզի բարոյական որևէ թեզի և պարտադիր կարգով լուսնդակել են խրատական օրինակ» (103, 41): Նրա վեպերը,—իբր հերթին հաստատել է գրականագետ Մոհամմեդ Յուսուֆ Նեշմը,—«վարվեցողութեան կանոնների շուրջ դասախոսութիւններ են՝ վե-

պի ձևով գրված» (184, 40): Այլ խոսքով գրողի ստեղծագործական մեթոդն ըստ ինչքան անշափ հեշտացրել է նահայտականի իբր իդեալն ու գրան հասնելու համար զծած ուղիները բացահայտելու գործը:

Այն, ինչը նեշմը համարել է «վարվեցողութեան կանոն», իրականում ուրիշ քան չէ, եթէ ոչ Ս. ալ-Բուսթանի իդեալը հասարակութեան բարոյակթիկական նորմերի, հասարակական բարքերի բարելավման ասպարեզում: Այդ իդեալը արարների համար նվաճելի՝ ազատութեան, հավատարութեան և արդարութեան սկզբունքներով զինավարժ հասարակական կյանքն է, որին հասնելու զխափոր ու վճարող միջոցն էլ գոտոխարանութիւնն է, լուսավորութիւնը: Գրողի կարծիքով արդիականութեան հիմնական ուղղութիւնը իրենց դարն ապրած բարքերի ու սովորութիւնների փոխարինումն է ժամանակաշրջանին ու նրան բնորոշ բարքաբարկութեան համապատասխանող բարքերով ու սովորութիւններով: Այդ վերափոխութիւնն, ինչ խոսք, անխուսափելի է դարձնում ցիտութեան, տնխնիկայի, մշակութի և կենսածների հարցում Արեւելից անհամեմատ առաջ գնացած Արեւուտրից փոխառումը:

Փոխառման հարցում ալ-Բուսթանին, դասապարտելով հնի ու ավանդականի մոլեռանդորեն կույր պաշտպաններին, նույնքան խիստ դատապարտում էր նաև որպես նոր՝ Արեւելքին անպատշաճ սովորութիւններ ու մոլութիւններ տարածողներին, ընդհանրապես եվրոպականը կիղեով, այլ ոչ թէ միջուկով յուրանդեմներին նա բարոյում էր Արեւմուտրից ողջները միայն բազաբարկութեան նվաճումները, լուսավորական առաջավոր զազափարներն ու սկզբունքները (103, 43—44): Բուսթանցական է այն, որ եթէ «Հազիկաթ ալ-ախարըր» առաջին խմբից ու հարատևորեն որպես թերթին հրատարակում էր ֆրանսիական պատահական երկերի, հատկապէս բուլվարային բնույթի վեպերի թարգմանութիւնները, ապա հայ ալ-Բուսթանին ձեռնարկում էր «Ռոբիեզըն Կրուզոյի» արբաբականացման (այն էլ համեմտելով հակադրական հակութիւնական սեփական գոտողութիւններով), մինչ որդին հակվում էր «Ծթիլլույն» վրա (116, 278):

Անհրաժեշտ է նշել, որ Ս. ալ-Բուսթանին բացարձակապէս աշրաթող անելով իբր ժամանակի սիրիական սոցիալ-դասակարգային իրականութիւնը և կանխակարգն ավելի շուտ իդեալական պատկերացնելով եվրոպական բուրժուականը, կրակը կենտրոնացրել է սոցիալական ստորաշրջի, սոցիալ-դասակարգային հիմնական պայմանների հետ կարճ մե անտուշակից իր հայրենակիցների (ըստ որում այնքան, որքան սոցիալական թեմայով երկերը որպէս թատերաբեմ բացառապէս քրիս-

ստեղծական միջավայրն ունեն՝ հիմնականում սիրիական քրիստոնեական համայնքների՝ շրջանում պարզապես բուրժուական բարոյական նորմերը հաստատված տեսնելու ուղղությամբ: Գրողի համոզմունքով հասարակության կյանքում ամեն ինչ մտապարզապես իր տեղը կունենի, եթե լուսավորությունը նպատակամղվի նախ և առաջ զեպի ընտանիքը, հասկապես զեպի երիտասարդ արական սերունդը: Անհրաժեշտ է այդ սերունդին սովորեցնել առաջնորդվելու բանականության հրահանգներով, մարդկայնորեն վարվելու շրջապատի, առաջին հերթին տղամարդուց զխավորվող ընտանիքի ու մերձավորների հետ, ձեռք բերելու շատ անպարկեշտ՝ արճեստ, լինելու գործունյա և աշխատասեր, ապրելու իր հնարավորություններին ու պայմաններին համաչափ՝ տարբեր վերաբերմունքով: Համապատասխան երկարելով, ընտանիք կազմվելու գիտակցական սիրու առկայության դեպքում միայն, կհնչի էմանսիպացիոն գիտելու որպես ազգի առաջընթացի կարևոր պայման են (103, 43—44): Հետաքրքրություն առաջ էր ցույց տալիս նրա սոցիալական թեմաների արծարծումը սահմանափակելով սիրիական քրիստոնյաների միջավայրով, Ս. ալ-Բուսթանին այդ միջավայրից էլ իր հայացքի կենտրոնական էր վերցրել առևտրականների և ժառանգողների շրջանակը, լույսնայն մատնելով հիմնականում այդ շրջանակից ներս բուրժուական իր իդեալը հաղթանակած տեսնելու միտումը:

Հասարակության սոցիալական ստաշընթացի բուսթանիական գաղափարները մտապարզապես այսպիսին է որդի Սելիմի երկրպագ բխող նյութերով Ալյաբանն էլ, սակայն, բավական է ասելու, որ սոցիալական հարցերն ավելի շատ բեկուցել են որդի, քան թե հայր ալ-Բուսթանիի տեսադաշտում, որ որդին, որպես բուրժուա-լուսավորական հայացքների կրող, հորից ավելի բեռնավոր է եղել, հետևաբար և ավելի ինքնուրույն: Հասկանալի է, որ Ս. ալ-Բուսթանին, հասարակության քաղաքական բարեշրջման հարցում հաճելով հոր հայացքների շառավղում, որպես նահապետականների երիտասարդ սերունդի ներկայացուցիչ, հարաբերաբար ավելի էր համենաում բուն իսկ արաբական հասարակության քաղաքական էվոլյուցիայի հարցի վրա: Հետաքրքիրն այն է, որ իբր գործողության բեմ գլուղական միջավայրն ընտրած սոցիալական միակ վնասում՝ «Սայամյում», առաջին և վերջին անգամ հայտնվող սոցիալ-գաղափարագալին «կոնֆլիկտ» փաստորեն լույսնայն միասնություն է սոցիալ-հասարակական (արաբա-բուրժուական) կոնֆլիկտին: Սոցիալ-գաղափարագալին կոնֆլիկտն այստեղ իր շակերտներն ստանում է հետևյալ իրողությունից. եթե համանման մյուս երկրներում կոնֆլիկտը շու-

շափվում էր նույն՝ առևտրական (կամ ժառանգական) զասի ներքում, այլ խոտքով բախման մեջ մտնող գրական և բացասական կերպարները որպես կանոն նույն զասին պատկանող արարներ, հետևաբար նրանց գրականության կամ բացասականության հայտարարներն էլ զխավորապես լավ կամ վատ գաստիարակությունից բխող սոցիալ-կենցաղային պահերն էին լինում, ապա այստեղ գրական հերոսն ու հերոսուհին արքայ դուզալիներ են, իսկ ժառանգ հերոսը՝ թուրք աստիճանավոր, թեկուզ է վերջինիս որպես արքայական հանգես են բերված սենյակի արարներ (103, 45): Սաացում է, որ եթե սոցիալ-գաղափարագալին կոնֆլիկտը գոյություն չունի սիրիական քաղաքում և այստեղ իդեալականին պակասող բուրժուական բարոյական նորմերի համատարած լինելն է, ապա սիրիական դուզում սոցիալական ստրկության փոխարեն, սոցիալ-գաղափարագալին «կոնֆլիկտ» աղբյուրն իրականում օսմանյան աստիճանավորների կատալանություններն են, որոնց կարծես թե հարկադրաբար մեղափակում են արքայ հարուստները: Արաբական հասարակության քաղաքական էվոլյուցիայի հաջորդականները ավելի շուտ արծարծվելու էր Ս. ալ-Բուսթանիի պատմական վնասում, թեպետ այն հաստատորեն շաղկապվելու էր սոցիալականին, քանի որ գործն իրեն հիմնական առաջարկներ էր դադանում «շարադրել պատմական անցողորմները և հաստատել բարոյական սկզբունքներ» (77, 4): Ալ-Բուսթանին իր գրական գաղափարներն այլուր ավելի պարզորոշորեն էր ձևակերպում. «Պատմական խորհիկաների հաստատան է շարադրել անցյալի զեպերը, բացառել դրանց պատմականներն ու հետևանքները, որպեսզի մարդիկ զուգորդեն զրաքն սոցիալական իրազարմություններին հետ ու զրանցից փորձ ձեռք բերեն, իրենց մտքերը գիտելիքներով լուսավորեն ու կրթեն» (28, 80): Պատասխան չէ, և հեղինակին ուշադրությունը գրավելու էր արաբական պատմաքաղաքական վաղ իրավիճակը՝ Բուլամի նախօրյակից մինչև Արքայականների իշխանության գլուխ գալը, այլ խոտքով արարների պատմության իբր թե խոքը երկփեղկուսներից զերծ, տեսնական ու մշակութային ծաղկման և հաղթանակների ժամանակաշրջանը: Այն, զուգորդվելով արդիականության հետ, պետք է հուշեր միասնության վերականգնման, սեփական արժանապատվության գիտակցմամբ և հայրենասիրական ռզու վերազարթնմամբ՝ փաստվոր անցյալի կրկնօրինակման անհրաժեշտությունը:

Վիպագրողի կարծիքով հերոսական ժամանակաշրջանի համար բնորոշ ազատագաղտության, նահապետական փոխհարաբերություններ-

րի, Գառակապե հավասարության և արդարության սկզբունքների, փոխադարձ (այդ թվում մասնավոր կրոնադավանական) հանդուրժողության և փոխօգնության արժանիքների արարական իրականության մեջ վերահաստատամբ միայն արարների ազդային վերածնությունը հնարավոր էր գտնելու: «Եթե արարները կամ օսմանցիները մեր ժամանակներում վարվեին այնպես, ինչպես արդարադատները (առաջին շրջախալիքները—Ն. Ն.), ապա իրենց զբոսնումն էլ բոլորովին այլ կիրենք»,—գրել է նա վեպերից մեկում (28, 113), ավելացնելով, որ Արարիքը խալիֆի «Շեյխը ինչպես բոլորից մեկը» սկզբունքը հավասարության վերաբերյալ՝ արժանի է «սուկե տառերով որպես պատվիրան զբովելու զորահաճմանատարների, կառավարիչների ու նույնիսկ սուլթանների համար» (28, 41):

Ս. ալ-Բուսթանին գտնում էր, որ այնպես, ինչպես արևմտյան քաղաքակրթությունից ամեն ինչ չէր, որ պատշաճում էր արարական արդիականության, նույնպես էլ անցյալից ամեն ինչ չէր, որ կուրորեն պետք է կրկնվեր ժամանակակից կյանքում: Այս տեսակետից հեղինակի բարոզախոսության համակարգում առանձին հետաքրքրություն ու կարևորություն է ներկայացնում արարների միասնության հարցը: «Ալ-Ջիսնանի» առաջին համարներից մեկի «Արարական Վերածնունդ» ըստ ինքյան խոսուս խորագրից կրող առաջնորդը ըստ նա գրել է. «Արարական ազգը վաղն իրեն կվերադարձնի այն, ինչ կորցրել է երբևէ, և այդ՝ միության հասնելու ճանապարհով, ազդի նվիրվածության ուժով, ինչը որ համապատասխանում է հայրենասիրական և ոչ թե կրոնական համերշխություն» (33, Ա տարի, 1870, 84): Նշանակում է, որ վիպասանը որպես առաջընթացի հիմք արդիականության համար անընդունելի էր հայտարարում հավատքի հողի վրա միասնության սկզբունքը, որը արարների անցյալ հաղթանակների նախապայմաններից էր եղել: Միասնության կրոնական հիմքը,—գրել է ալ-Բուսթանին իր վեպում,—սակավ հաջողություն և շատ վնաս կրերի նրանց, սովոր հավատքի հողի վրա միասնությունը միջոց են դարձրել Արևելքում պետություններ ստեղծելու կամ մի այլ հավատի առաջնորդին թուլացնելու, վախենալով վերջինիս ուժեղացումից և նկրտելով իշխել նրա վրա» (28, 24):

Գոյնիկնան այս կապակցությունը գտել է, որ «Նիշտ է, ալ-Բուսթանին այս դիտողությունն անշնչ էլ խաչակրական արշավանքներին, սակայն այն, ինչ խոսք, կարող է անուղղակի ակնարկ լինել XIX դարի եվրոպացիներին, որոնք մշտապես նպաստել են Սիրիայի ազգաբնակ-

չությունյան շրջանում կրոնական զգվտաց հրահրելուն» (103, 55): Մեր կարծիքով Գոյնիկնան այս դեպքում, ցանկալին իրականության հետ շփոթելով, ալ-Բուսթանինի վերադրել է եվրոպական գաղութարարների նկատմամբ թեկնուզ ոչ բացահայտ բննադատական վերաբերմունք, այն զեպրում, էրր խնդր առարկա սողղի արանքում հարկ էր տեսնել միայն ու միայն արարական միջավայրում ալ-Շիդիակով սկզբնավորվելով աշխուժանալու միտող և սուլթանի արբանյակների կողմից արգեն իսկ վարդապետության վերածված Պանիսլամականության համարյա բացահայտ բննադատությունը:

Ալ-Բուսթանինի մոտ Պանիսլամականության փոխարեն եվրոպական զիվանագիտության բննադատությունը հաստատելու Գոյնիկնայի հակումը ավելի քան զարմանալի կդառն, եթե ասենք, որ նահրայական դրողի «Արար պետք է հարի իր հայրենակիցներին» (28, 6) քարոզը պարզաբանելիս (թեկնուզ արարականության սկզբի «արարը» շակերտից զուրս թողնելով ու զարձակելով արար բրիտանյան») նա ավելցրել է. «Մանավաճ որ ալ-Բուսթանին այլ էչերում ևս մի անգամ չէ, որ ընչզգն է կրոնական միության զազգաբար պիտանի եղավ լուս միջնադարում: Մեր օրերում, սառն է նա, միասնության հիմք պետք է լինի ազգային, ինչպես որ դա տեսնում ենք եվրոպական պետություններում» (103, 55): Ալ-Բուսթանինի Գոյնիկնայի կողմից շարադրված վերջին հաստատումն ըստ ինքյան կսակած չի թողնու, որ խնդր առարկա բննադատությունը եվրոպացիների հասցեին չէ ընավ, քանի որ նրանք որպես օրինակ են վկայակոչվում ու հակադրվում ուրիշների: Վերջիններս ալ-Բուսթանին թեկնուզ և բացահայտորեն չի անվանակոչել, սակայն ակնարկը պարզորոշորեն վերաբերում է սուլթանական թուրքիայի գերիշխանության Խալանի դրողով ժավլաման՝ ալ-Շիդիակի տխրի ջատագովներին:

Այս կապակցությունը ավելացնենք, որ մեր արևելագետների շրջանում ոչ միայն Գոյնիկնան է մոռանում առաջին հերթին Պանիսլամականության առաքարհում արարական միջավայրում ալ-Շիդիակի զերակալությունը ալ-Աֆղանիի նկատմամբ, ապա և հատկապես այն իրողությունը, որ այդ օսմունքն իր ձևնդյան օրվանից ունեցել է կրկնակ (և երկու դեպքում էլ հակաարարական) հետադին նպատակաձգվածություն: Այս եվրոպական գաղութարարության և թուրքական բռնատիրության միջև գտնվածատում շանտամի՞ գտնմարան այդ երկրամասերի շրջանակներում պաշտպանականից դեպի ամբողջ մահմեդական աշխարհ

Քորձակողականի վերածելու սպառնալիքով ամբաստանեցի սուլթանի դիր-բերը, հանգամանք, որը ճիշտ է ընկալել ու դեռ 1860-ական թթ. առաջին կեսին խարանել է կիրոպական պրոտեկտորատը շարյաջ նախապատիվ փորձերով համարող Ռ. Հասունը: Միզհատ փաշան, օրինակ, 1876 թ. հզնածամային օրերին «զգուշացնում էր Ռուսաստանի ներկայացուցչին, որ Քուրբայի հետ հավանական պատերազմը (ռուսների համար) հեշտ չի լինելու», քանի որ «Ռուսաստանի մահմեդական հպատակներին, իր կարծիքով, նույնպես անմասնակից պիտի չլինային խալիֆի դեմ պատերազմի զեպրում» (134, 90—91): Եվ այդ աբաբական սկզբնավորված ազգային-մշակութային Զարթոնքի հովերի դեմ մահմեդական պարսներին հասցնել նրանց հետամնացությունն ու մուսուլմանության արյամաններում իր ընարերությունը խիստ ներգործուն մի երազանք, արաբական խալիֆայության ամենահզոր ժամանակների ընդգրկումը կրկնող մի նոր խալիֆայության ստեղծման երազանք, որը 1860-ական թթ. վերջերին ճիշտ էին ընկալել ռուսախնայական նահապետականները: Ավելացնենք, որ Գուլիստան, մոտանալով, որ Ս. ալ-Քուսթանիի «Սերը Սերիայի այգիներում» վեպն ավարտվել է 1870 թ., այլ խոսքով այն ժամանակ, կրթ թավշարել երիտասարդ ալ-Աֆղանին Պոլսի Գար ուլ-Ֆունունի միջավայրում էր դեռ և բուսախնայականներն էլ զբժվարին պայթույթ էին մղում Պանիսլամականության գլխավոր զազափարսոստ արաբ ալ-Շիդիակի (ու թուրք ն. Քեմալի և ընկերության) դեմ, որդի ալ-Քուսթանիին այսպես է գնահատել. «Այսպիսով ալ-Քուսթանիին, թեկուզ թուսիցի, ձևակերպել է արաբական ազգային միասնության սկզբունքները, որը ալ-Աֆղանիի համամուսուլմանական միության գաղափարի հետ մոտավորապես միաժամանակ ծագեց: Վերջինիս, ինչպես հայտնի է, յուրահատուկ էր հավատահանրությունը գականությունը. նա մտորում էր, որ համամուսուլմանական միության կհարեն նաև արևելյան քրիստոնյաները, այնպես որ երկու տեսնեցնեցնեն այդ ժամանակ դեռ անտազոնիստական չլին» (103, 55):

Ի զիպ, թո՞ղ Քեյրուսթի հիմնականում քրիստոնյա բուրժուանների գոն սերիական ամբողջ, այդ թվում մահմեդական ազգաբնակչությունն իրենց և իրենց ուշ կամ կանուր թևարկության գալիքը մահմեդական բուրժուանների անտարաստական հակակշռին ենթարկելու վաղեմի երազանքը, որ լիբանանյան նահապետականների գլխավոր ներշնչարաններից մեկն էր եղել, բուսախնայականները 1870-ական թթ. կապիտալիստական հարաբերությունների որոշակիորեն քայքայած մակարդակի, հետադարձ և նահապետ հասունության որոշակի աճի դրամամբ էլ

ապիկի ու ալեկի պիտի բացվեին զեպի սերիական այլահավատները, կախիկից եռանդուն պիտի ջանային նրանց ընդգրկել մշակութայինց բացի նաև հասարակական վերախոսուցման միտող իրենց շարժման ներքրությունը: Պերճախոս է, օրինակ, այն փաստը, որ «ալ-Քիսանի» համար որպես ճակատադարձ լուրումը ընտրվել էին սրբազան հպոսներում Մոհամմեդ մարգարեին վերագրվող խոսքերը. «Հայրենիքի նկատմամբ սերը հավատքից է բխում» («Հուր ալ-վաթան մին ալ-իկան») Քերթում սովորական երեսյթ էին դարձել առանց հավատի խորության բոլոր սերիացիներին հասցնողովժո միասնության կոչները, իսկ Ս. ալ-Քուսթանի «Վալը» վերնարված իր հողվածն սկսում էր և ավարտում «երեսական երկպառակությունը դեմ շարժելուն» պահանջով, քանի որ «առանց դրան մենք չենք հասնի ցանկալի նպատակակետին» (182, հտ. 2, 87):

Ի զիպ, այնքան, որքան ալ-Քուսթանիի հակասահմանադրականությունը համահեշուն էր համիրյան պաշտոնական քաղաքականությունն, իսկ խուրթականներին համար պաշտոնատեներին չհակասականալը սրբուրուպան կանոն էր դարձել, այս Օսմանականությունը զավանանք ընտրած պահպանողական նահապետականները «մուսուլմանի» քարոզին հակազդելու ուղիները, սահմանադրասեր իրենց ելույթներին համար հրապարակ էին որոնելու:

Հիշատակության արժանի նախաձեռնություններից մեկը «Ախան ալ-Հալ» («Երազվեակի խոսնակը») քաղաքական, ստեղծական և գիտական թերթն էր լինելու, որ 1877 թ. հոկտեմբերի 18-ին հրատարակ էր իջնելու որպես եսորյա (փորք ուշ երկրորային, իսկ 1895 թ. որաթերթի վերածվելով շարունակելու համար մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը): Հրատարակիչը Խալիլ Սարգիսն էր, որ տպարիչի տպարանն սկսելով 1860 թ. միսոններին իստ, 1868 թ. Սելիմ ալ-Քուսթանիի հետ հիմնադրել էր «ալ-Քուսթանի», իսկ 1872 թ. սեփական «ալ-Ազաբիլի» տպարանը, որտեղ և Սելիմ եղբոր օգնականությունը յույն էր ընծայում «Ախան ալ-Հալը»:

Խալիլը Քեյրուսթում հայտնի էր ոչ միայն որպես Սարգիս երևելի տունի զրազետ ներկայացուցիչներից մեկը և հաջողակ տպարանատեր, այլև որպես 1872-ին յույն ընծայված «Սաիդն ու Սուազան» վիպակի և 1874 թ. տպագրված «Երոստաղեմի պատմություն» հեղինակ: Ինչ խոսք, որ նա նույնքան ծանոթ զեմբ էր նաև որպես Լուիզ ալ-Քուսթանիի ամուսին, այլ խոսքով «մուսուլմանի» Քուրթուսի փեսան: Եվ ահա, որպես տպարիչ ըստմանվելով իր աներձագի ու որպես խմբագիր՝ աներհորից, նա

Հանդես էր գալիս բաղաբաղական-հասարակական իր սեփական թերթով՝ Ենչաան էլ որ Կրիմսկին, Հարթմանին վկայակոչելով, պնդել է, որ «այ-Ռուսթանի փեսայի սեփական թերթ հիմնադրելը չէր նշանակում Ռուս-բլուս ալ-Ռուսթանից որևէ խզում» և որ Սարգիսը պարզապես «զավում էր լրագրական շուկայի պահանջարկից» սիրիացի բնթերթատեսների մեծամասնությունը (116, 616), այնուամենայնիվ «Լիսան ալ-Նալի» հրատարակումը սիրիանոսական նշանակալից համարել:

Բանն այն էր, որ անկասկածելիորեն պահպանողական միջավայրի համար սիրիաբնակից խոսնակ հանրաստեղծ թերթը չէր կարող խոսնակը շինել նաև սիրիական բրիտանոյանների շրջանում զգալի զանգված կազմող այն տարրերի, որոնք սահմանադրական շարժմամբ ու բարենորոգություններով կայսրությունը տեսքի բերելու և այդ ճանապարհով էլ արաբների առաջընթացն ապահովելու բարդի կողմնակիցներն էին: Սրպես կիրառաշարժական օրգան, «Հաղիկաթ ալ-աբբարը» վճռակա-նորեն հետո էր մնում սահմանադրական թո՛ղորհից, Բահակի «այ-Քակազդումը» դադարել էր, իսկ 1877 թ. աշնանային այդ օրերին աներ-զակ «մուսլիմեն» էլ ամբողջ կանգնած էր համոզված հակասահմանա-դրականների ճամբարում՝ նշանակում է՝ թելուրթի հասարակական կյանքի բեմում ազատ էր մնում սուկ բարենորոգությունների և սահմանադրության շատազգով սամանակների ամբողջ, որը և շտապում էր զբաղեցնել ինչպիսի, աշակցություններ էր պատրաստում սահմանադրությունը, բազմապես չհրատարակության էր պատրաստում սահմանադրությունը, և համանման այլ մասյաններ (156, հտ. 4, 262; 159, 1874):

Ի. Սարգիսն իրեն կարգաբախտ էր դարձրել ըստ ինչպան պերճախոս՝ «Հնարավորը զուրի բերել հնարավորության սահմաններում» բնաբանը (116, 616): Եվ մի՞թե այդ բնաբանի բառախաղն՝ ակնարկություն չէր այն իրավիճակն, որ ալ-Ռուսթանի պարզապես հրամարվել էր հնարավորը զուրի բերելու առաքելության լծվելուց:

«Լիսան ալ-Նալի» աշխատակիցների թվում էին Ջրբիա Զուեյնը, Յ. ալ-Ասիրը, Ամին-Եֆրեմ և Արզալյա ալ-Ռուսթանիները, Յուսուֆ Կի-կանուն, Նեջրի Մաշալանին, Ռիզզ Հազզազը, Ռաշիդ Աթալան, Սեյիտ ալ-Շալիֆունը, Սաիդ Յադ ալ-Աբլը և որչի, հիմնականում համոզմունքով Օսմանականությունից կառույց բուրժուա մտավորական գործիչներ (169, հտ. 2, 27—33): Վկայված է, որ 1878 թ. սկզբներին թերթի էջերը բառիս բուն իմաստով ողողվել էին բնահանրապես Սիրիայում և մասնավորաբար լիբանանյան հողատարածքում բարենորոգությունների ան-

կրթածիշտությունը մատնանշող հողամենեքով: Հենց այդ հողամեններն էլ պատճառ են դարձել, որ ապրիլի 1-ին իշխանությունները չորս ամսով «Լիսան ալ-Նալը» կախակալել են: Այդ ամիսների ընթացքում Սարգիսը յույն էլ ընծայել պատմական ու գեղարվեստական բովանդակություններ «այ-Միշկաթ» ամսագրի շորս համարները, իսկ այնուհետև, թերթի վերադարձումից հետո, պատշաճելով սուլթանական գրաքննության սեղմումներին, այլևս չի փորձել հնարավորը զուրի բերել հնարավորության սահմաններում (169, հտ. 2, 60—61):

Եվ սակայն բուսթանիականների, այդ թվում և անպայման նրանց ոլորտում մնացող սահմանադրականների խմբի դավանանքը, բնկող և խորիականներից ալիլի առաջավոր, սոցիալական թե՛ հասարակական-բազմաբանական շափավոր բարեշրջում (էվոլյուցիոն) բարոզից առաջ չէր գնում և ոչ մի չի պայմանում չէր հայտնում թո՛ղ թե՛ հեղափոխական (սուլտո-թալի) հայանականություն թե՛ հնարավորության, այլև՝ սոցիալական թե՛ բաղաբաղական կարող արժատական բարենորոգություններով թե՛ կող և աստիճանաբար, այլ հիմնովին փոխելու գաղափարի հետ: Գա 1870-ական թթ. կեսերին չէր կարող բավարարվում, մանավանդ որ, ինչպես անասնը, պարագլուխ սոմուսլիմը՝ հակասահմանադրականության հողի վրա օրենկտիվորեն հետզհետե ներդաշնակվում էր ատելի Արզալ Համիդի հետ:

Տիրող կարգերի գոյապահպանման անհրաժեշտության վերաբերյալ բուսթանիական բարոզից ոճգոհներն անխուսափելիորեն վերաթվելու էր պարարտ Նողի, որում պիտի բանակապես անկեն ու որակազույց զարգա-նային ազգային-մշակութային հարթակին շարժման արժատական թե՛ ներկայացուցիչները՝ Վկրիյներս, յիսխովի Ք. ալ-Ռուսթանիի հասարակական թե՛ դիտական ու գրական մեծ վաստակը, համամայն էին այն հարցում, որ շուրջ վաթսուսուսյա իրենց ղեկավարը, թո՛ղ ղեկավ պահանջողականություն վայրբեցնեց իր գաղափարախոսությունը, թե՛ կող սուկ իր սկզբմիականություն պատճառով չէր կարող հավանել առաջնորդի, գրական-մշակութայինի հետ նաև ազգային-բազմաբանական պարզալիս այն գեղին, որը սոցիալ-տնտեսական ու հասարակական-բազմաբանական սիրիական իրականություն էր պահանջը դարձրել և որը նահազայականների ազգային իդեալների նոր մակարդակից էր թելադրում: Հարցի լուծումը փութացնելու էր կենսունակ ու բազմաբանազույց և պարական ազգային-հայրենասիրական մտքի զարգացման ուղեիչները մեկը հանդիսացող «այ-Քակազդում» («Առաջ») թերթի հրատարա-

մության, նույն ոգով հողմածներ ստորագրելով սկզբում «ալ-Ջինաներ», այնուհետև «ալ-Քահազզոմ» էջերում (119, 59):

Գծքախտաբար սկզբնաղբյուրներում համաստի վկայություններ չեն պահպանվել այն մասին, թե հասարակական-քաղաքական ու մտավոր-շնչակուսության ի՞նչ միջնուրատ էր տիրում կազմակերպություն և ներսում: Եվ, սակայն, նահայի պատմությունից հայտնի մի շարք բառ էուժիան կողմնակի հանգամանքներ և վերջին տարիներին հայտնաբերված մի քանի նշումներ կարող են օգնել մեզ այդ միջնուրատը բավականին հիմնավորապես պատկերելու:

Չնեց սկզբից արձանագրերը, որ ոչ միայն արտասահմանյան, այլև սովետական արաբագիտության էջերում որոշակի խառնաշփոթ է նկատվում արաբական ազգային-հայրենասիրական միտքը համակարգելու, արաբական ազգայնականությունը որպես հոսանք առանձին կազմակերպությունների շրջանակներում ճշգրտորեն սեղադրելու և այդ կազմակերպություններին էլ, որպես արաբական հասարակական-քաղաքական մտքի հուն, համապատասխան բարձրակարգման ենթարկելու և ըստ արժանվույնի գնահատելու հարցում: Այդ խառնաշփոթի հիմնական աղբյուրը մեզ հասած վավերական փաստաթղթերի սակավամիությունը և մամուլի հարողորմների կցկտուրությունն են, եսև՝ ոչ պակաս շափով՝ իրազարժություններին ժամանակակից-մասնակից կամ հարաբերաբար մտքի կանգնած արաբ գործիչների հուշագրական գրականության ակերբախ սուբյեկտիվությունը:

Խառնաշփոթից առավել տուժած գործիչներից մեկը արաբական հասարակական-քաղաքական մտքի մշակների առաջատար, արաբական կուսովորականության կենտրոնական այուններից Իսահկն էլ Այդ հարցում խիստ միտակալ զոր է ունեցել այն հանգամանքը, որ 1882 թ. հուլիսին եզրկատական մոլեկրոն մահմեդական սպաները Ալեքսանդրիայում հրկիզել են Իսահկի բնակարանը (20, 501), իսկ ուղիղ երկու տարի հետո, մահվանից մի քանի օր անց, հիսուսյան կղերի զրգամբ, մուկկրոն կաթոլիկ ամբոխը մերձերկրության Հադեթ Կանունում քարուքանդ է արել նրա տունը (21, 20): Վանդալական այդ արարքների հետևանքով հրո ճարակ են գարձել զորդի ոչ միայն ամբողջ արևիմբ, այլ թվում ձևազերբը, այլև լույս ընծաած գրքերն ու թերթերի համաբաժանները: Այլուշը Բեյրութի, Կահիրեի և այլ կենտրոնների գրապահոցներն ու արխիվները մաղելուց հետո փաստաբանով է հաստատել, որ Իսահկից լուկ նշխարներ են մեզ հասել (21, 9 և 21), կարծես մի շար

ձևեր համատրեն որոնել է ու փորձել ոչնչացնել նրա ամեն մի հիշատակ:

Իսահկը թիչ չի տուժել և այն հանգամանքից, որ ժամանակաշրջանի վավերական սկզբնաղբյուրների սակավամիությունն ու զովորմատելիությունն պայմաններում հետազոտողներին մեծանասնություն համար գիտավոր աղբյուր գարձած հուշագրությունների հեղինակները, գերակաբար կամ կաթոլիկ-մարոնական, կամ էլ մահմեդական, ընդհանուր առմամբ իրեն արգաբը չեն հաստցելու: Ինչքան էլ տարօրինակ թվա, քրիստոնյա և ծագումով հայ Իսահկի հիշատակի նկատմամբ ավելի հարգալիք են եղել ժամանակակից թե՛ հետագա արաբ մահմեդական հեղինակները, որոնց կարելի է կշտամբել միայն այն բանում, որ պարզապես ջանացել են նրա կերպարը փորքինչ սովելել և տեղե, որ պարզապես ջանացել են նրա կերպարը փորքինչ հզուտ իրենց կողմից կուրքի վերածված ալ-Աֆլախիի, Օրաբի և Արաբի: Ինչ վերաբերում է մարոնական և ընդհանրապես կաթոլիկ հեղինակներին, ապա, եթե բացառենք առավել կամ նվազ շափով Իսահկի մամբարի հետ առնչված հատուկներ սարգկանց, նրանք չեն վատանել միևն իսկ ոտնձգություն կատարելու վաղամեոիկ գործչի հիշատակի դեմ, մասնավաղ ու կաթոլիկ եկեղեցին, հանձին առաջին հերթին հիսուսյան միաբանության, զորդի մահից հետո էլ շարունակում էր նրան համարել իր երզվյալ հակառակորդների պարագլուխը և համատարանություն դարաշտելու վախի մեթոդներով պայքարում էր նրա ժառանգության և համայնոների դեմ, ոչնչացնում այն ամենը, ինչը կարող էր ծառայել Իսահկի հիշատակի հարատևմանն ու նրա գաղափարների տարածմանը:

Կաթոլիկ եկեղեցու բունամիջոցներից չեն խուսափել նաև Իսահկի թողման արտադրության կապակերտվյալ կղերաֆեոդալական հետազան ատրիբիտի և բուրժուալոտատարական առաջավոր մտավորականության միջև ծայր առած փոթորկոտ պայքարի օրերին շարագրված երեք պամֆլետներ, որոնք, թևկուզ տպագրել, մեզ համար ունեն արխիվային վավերագրի արժեք: Բանն այն է, որ անմիջականորեն չկատարի հիսուսյան միաբանության հերթին նրա ամենամարտական ջոկատի՝ հիսուսյան միաբանության, իսկ կողմնակիրոնն եսև օսմանյան վարչակարգի դեմ ուղղված իրենով, ընդհատակյա այդ հրատարակությունները մեզ են հասել մեկ կամ երկու օրինակով, քանի որ թուրքական իշխանությունների և կաթոլիկ բարձրաստիան կղերի կարգադրությունը հաստատապես բռնագրավել ու ոչնչացվել են:

Առաջինը, անստորագիր ֆրանսերեն տպագիր մի պամֆլետ, արարական սկզբնաղբյուրներում թեպետ Երբեմն հիշատակվում էր, սակայն համարվում էր անհետ կորած և փաստորեն գիտական շրջանառությունից դուրս էր մնում: Անգլիական միջավայրի արտադրած էլի Քեյզլդորֆին է պատկանում Բեյլյոսի ֆրանսերական Նյուպատոն Պատրիսիոնիսի կողմից 1884 թ. սեպտեմբերի 6 թվակիր մի զեկուցագրով Փարիզ ուղարկված և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության արխիվում սահմանվող միակ օրինակը հայտնաբերելու և ընագրով (Քեկուլ պատանջ խորագրի ու որպես «Հավիվիված») հրատարակելու պատիվը (233, 89—99): Երկրորդը «Քաշր ալ-Բաշիր ուս ջամի'յաթ ալ-Ֆարշիր» («Ալ-Բաշիր հանգեսի և հիսուսյան բարոզական ընկերության դիմակազերծումը») խորագրով անստորագիր պակետիտի մի գրքույկ է (տե՛ս 29), իսկ երրորդը՝ «Քարաշիրու'լ-Ֆաշր ուս մասարբաթու'լ-Բաշիր» («Արշալույսի ցուրերը և ալ-Բաշիր հանգեղև գազարբառությունները») խորագրով և նույնպես անստորագիր, սակայն տպագիր մի գրքույկ (տե՛ս 30): Նշենք, որ արաբական սկզբնաղբյուրներում Իսահակ համարունների վերագրվող և առանց խորագրերի ու սոսկ թուռցիկ հիշատակվող այդ պամֆլետների իրենց հակակաթոլիկական քննադատության արժեքն այստե՛ստով այնպիսի խստությունը են բանադրված եղել, որ Իսահակ գաղտնիներինց Յուսուֆ Սաբդուր խուսափել է իր «Արաբական տպագրության բառարան» հանրագիտական բազմահատորյակում գրանք թեկուզ սոսկ հիշատակելուց: Ինչպես առարկա երեք պամֆլետները, ահա, այն ամուր կովանն են, որոնք թույլ են տալիս երրոմի պատկերել «Փրականության ծաղիկը» կազմակերպությունը, այն էլ որպես ոչ թե սոսկ գրական մի խմբակ, այլ՝ իրականում արաբական հասարակական-քաղաքական առաջին կազմակերպությունը:

«Զահրաթ ալ-ագարը», որպես XIX դարի վերջին քառորդի գրական խմբակներից մեկը, արաբարանական գրականության էջերում հասկանալիորեն չի շրջանցվել: Եվ սակայն, որպես կանոն, սովորական հիշատակմանը չեն հետևել նրա գործունեությունը պատկերող անհրաժեշտ մանրամասնություններ, հետևաբար և գնահատականներ: Դրա հետևանքով կազմակերպությունը արարագետներին համար ըստ էության մնացել է առեղծվածային մի գոյություն: Եվ իբրև, սովետական և արտասահմանյան արարագիտական ամբողջ գրականության, այդ թվում և արաբական սովարաթիվ հրատարակությունների միմյանց կրկնող տվյալները, հազիվ մի երկու էջի վրա խոսանալով, առ

այսօր թույլ էին տալիս ստանալ հետևյալ պատկերը.—«Փրականության ծաղիկը» զուտ գրական խմբակը որոշ իմաստով «Բեյլյոսի օրհրական գիտական ընկերություն» (1868—1873) ժառանգործի ու նրա գործունեությունը նոր որակի բարձրացրած շարունակությունն է եղել: Սամանյան իշխանություններից «Քրազե սեհիհ» ստացած լինելով, այն Ասադ փաշայի օրտոնս հայացքի ներքո գործել է որպես պատանջային արտունավ ընկերություն: Հավանաբար 1872—1873 թթ. սահմանագծին Ս. ալ-Բուսթանիի նախագահությամբ հիմնադրված խմբակի անդամների շարքում 1873 թ. հայտնվել է Իսահակը և շուտով դարձել նրանց փաստական ղեկավարը: Խմբակն ունեցել է փոքրաթիվ գործունե լեզվաբաններ, որոնց լրիվ ցուցակը մեզ չի հասել, թեպետ, թեպետ որ է կենսագրել, որ անդամների թվում անպայման եղել են Սիրիական երկրորդ ընկերության արժատական արամագրություններ ունեցող կրիտասարք գրողները: Թղթակից կամ պատմի անդամների նույնպես մեզ չհասած պատկանելի ցուցակի մասին ես կարելի է որոշ պատկերացում կազմել՝ աշխ առաջ ունենալով գիտական նույն ընկերության համանման անդամների ցուցակը: Սառույց է, նաև, որ 1874 թ. տարեկերչից առաջ «ալ-Թակազդում» թերթը, Իսահակի խմբագրապետությամբ, դարձել է կազմակերպության օրգանը: Ընկերության վախճանի վերաբերյալ տվյալներ չկան:

Գծվար չէ նկատել, որ «Զահրաթ ալ-ագարի» այս սահմաններում զգժված պատկերն իրականում հանրագիտարանային ուղղվածությամբ պակի չէ, ընավ: Համենայն դեպ մենագրությունից մենագրություն շրջող վերահիշյալ տվյալները ոչ միայն հիմք չէին տալիս գիտական կարգահանգումներ կատարելու, այլև, հատկապես օսմանական իրողի սովալության պայմաններում, կարող էին խմբակի րնութիի և առասպաղաններին վերաբերյալ մինչև իսկ թյուրմայություններ առաջացնել: Իրականում մի անգամ չէ, որ հենց այդպես էլ եղել է: Կուովում, օրինակ, հարկ չի համարել Սիրիայում և ընդհանրապես արաբական աշխարհում հասարակական մտքի պատմության մեջ զգալի հետք» թողած լուսավորական կազմակերպությունների թվում հիշատակելու «Զահրաթ ալ-ագարի», ուրեմն և «նոր գաղափարների ու հայացքների առավել արդյունավոր ջատագով» թերթերի թվում «ալ-Թակազդում» անուրը (113, 146—147): Ավելին, կրկնելով հանդերձ կրկին կողմից Իսահակի արդարամտորեն տրված «արաբական ազգայնակամության առաջին իսկական մունեթիկ» գնահատականը և համաձայնելով արաբ հեղինակների այն պնդման հետ, որ Իսահակ է առաջինը արժարել

սարարական պետականութիւն» ստեղծման գաղափարը, Կոալիցի
փաստորին ինքնահակամարտան մեջ է ընկել: Հաստատելուց հետո, որ
մտաւորական Ա. Իսահակը... XIX դարի 80-ական թթ. կանգնեց օսմանա-
կանութեան և իւլամական միավորման գիրքերում» (113, 249), նա
պնդել է, որ շատ ուրիշների նման Իսահակը եւ «մնաց համոզված օս-
մանական» և որ ժամանակաշրջանի արաբ գործիչների օսմանաւիրա-
կան կելովները «հարկադրական չէին և օտակ գրաբնական նկատու-
ումներով պայմանաւորված չէին» (113, 257):

Ի դեպ, Կոալիցի մեր ո՛չ առաջին, ո՛չ էլ միակ արարագոյնն է, որ
սակա տվյալներից կենելով «Զահրաթ ալ-աղաբն» ամբողջութեամբ
գուրք է թողել արարական հասարակական-բաղաբական մտքի պատ-
մութեան էջերում իրենց կարեւոր հետքը դրոշմած լուսավորական կազ-
մակերպութիւնների շղթայից: Գոյննան և կեիքը եւ այլ շղթան պատ-
կերել են «Գիտութիւնների և արվեստների տարածման սիրիական ըն-
կերութիւն» (1847) — «Սիրիական գիտական ընկերութիւն» (1857) —
«Արեւելյան ակադեմիա» (1852) օղակներով (113, 146: 119, 80—81,
103, 7), ըստ որում կեիքը Իսահակի մասին խոսելիս բանն այնպէս է
ներկայացրել, որ նա պարզապէս զեկուցումներով հանդես է եկել կար-
ծես թէ իր հետ անմիջական կապ չունեցող մի շրջանակում՝ «սեւշի
(Բելքութիւն—Ե. Ն.) Գրականութեան ծաղկում ընկերութիւնում», որի
միջավայրում էլ «ի հայտ եկան նրա հրապարակախոսի և ճառագետի
անթերի ընդունակութիւնները, մտքի համարձակութիւնը» (119, 59):

Այլի առաջ ունենալով միջնահայկան սիրիական գիտական երկու
ընկերութիւնների մերձակցութեան վերաբերյալ Չիչլայանի պնդումը
(156, հտ. 4, 78—81) և Կարճեղիակու բաղաձայնակամութիւնն անդ պրեզ-
ման նկատմամբ (115, 73), Կրիստիկն, անշուշտ բանալով լուսին այդ
ընկերութիւնների ծննդան ու վախճանի թվագրման հարցում տիրող
խառնաշփոթը, դարգացրել է հետևյալ տեսակետը. — Բելքութիւն լուսա-
վորական շարժումն ընթացել է միասին, այլ խոսքով 1847 թ. և
1868 թ. ընկերութիւններն ու «Զահրաթ ալ-աղաբն» միևնույն և պար-
զապէս անվանափոխված կազմակերպութիւնն են, ավելի շուտ՝ նրա
տարբեր հանգրվանները: նա գրել է. «Թուրքական կառկածներն
պայմաններում Սիրիական գիտական (երկրորդ անգամ ծնունդ առած)
ընկերութեանը երկամյա արգասաւոր գոյութիւնից հետո արգելվեց և
հարութիւն առավ 1873 թ., արգելն զուտ գրական Զահրաթ ալ-աղաբ
ցուցանակի ներքո», այլ խոսքով պարզապէս «Գրականութեան ծաղիկ»

անունը «եկամ փոխարինելու» նախկին՝ «Սիրիական գիտական ընկե-
րութիւն» անունը (116, 546—547 և 581):

«Յաշը ալ-Բաշիր» պամֆլետի հեղինակը, ահա, պարզորոշ հաս-
տատել է, որ «Զահրաթ ալ-աղաբն» ոչ թէ Սիրիական գիտական ըն-
կերութեան անմիջական-օրինական ժառանգորդն է ու շարունակութիւ-
նը, այլ՝ նրա երկպառակտումից ծնված որակապէս նոր և նրա որպէս
լուսավորական գեհնաօտից առաջարկներից շատ ավելի բարձրակարգ
և հասարակական պարզորոշ նպատակաձգվածութեան ունեցող, Լուսա-
վորական առաքելութեան ծառայագրված մի կազմակերպութիւն: նա
գրել է. «Մեզ խեթ այլով էին նայում այն ժամանակ, երբ (Սիրիական)
գիտական ընկերութեան շրջանակներում համարված, հոգ էինք տանում
մեր ինքնակրթութեան և պատրաստում էինք նմիբիւ մեր հայրենա-
կիցների զարգացման գործին: Այդ ժամանակ մեզ չէին ներում ոչ
միայն այն, որ չէինք թաքցնում մեր դժգոհները (կաթութիկ) եկեղեցուց,
հօսանու ներքո գործող պարոնները (սալաթ) մտավոր սնունդից,
այլև հատկապէս այն, որ իբր թէ մտղորած-աղանդավոր (բողոքա-
կան) ուսուցիչներ էինք հետուում և մեր հերթին մտղորվելով՝ հետանում
էինք մեր (կաթութիկ) համայնքից: Միեւնոյն իրականում մեր գլխավոր
հօսքը գիտութիւնն ու գիտելիքներն էին և կրօնն ու զավանական վե-
հերը գուրք էին մեր հարցերից, բանի որ մեր մեջ կային բրիտանական և
մասձեղականներ, մարտնականներ և դրուզներ, հայն-ուղղափառներ
և հայն-կաթութիկներ, ասորիներ, հայեր, բողոքականներ: Իսկ երբ օգոստ-
իսցինք (Սիրիական) գիտական ընկերութեան հովանքներին հաճախե-
լուց և վճանակներին հիմնեցինք մեր նոր («Զահրաթ ալ-աղաբն» —
Ե.) ընկերութիւնը, բանի որ մեր գիտելիքները բավարար էինք համա-
րում Սիրիայի փառքն ու Նուշայի վերականգնելու գործին նմիբիւլու և
երկրի ժողովրդին զարթնեցնելու համար, արդեն մեզ համարում էին
ոչ թէ սուլթանական մտղորվածներ, այլ՝ մասձեղու մեղքի մեջ իրված
կառկածելիներ, որոնց հետ հարաբերութիւնները նույնպիսի մասձեղու
մեղք են» (29, 20):

Պամֆլետի հեղինակը միաժամանակ բավականին բացորոշ է
գարծրել այն իրողութիւնը, որ «Զահրաթ ալ-աղաբն» անդամները
նկարծեալին տարակարծութիւնների հողի վրա են հետադիւ Բ. ալ-
Բուաթանիի միջավայրից, հետագայում էլ շատ հավանաբար նույն հողի
վրա հրածնաւ տալով նաև իրենց նախագահին՝ Ս. ալ-Բուաթանիին: նա
վրա հրածնաւ տալով նաև իրենց նախագահին հողը շրջում այն բանի համար, որ անցյա-
րով է. «Մեզ փարիսեցի էին հողը շրջում այն բանի համար, որ անցյա-
րում իբր անկրախտորեն բար ենք վերցրել (մեր) ուսուցիչն (մուսլիմին),

«Քարաշիրուլ-Ֆաբր» պամֆլետը կարևորությամբ ընդգծել են ընկերության բացառապես գրական լինելը ու կրոնի հետ նաև քաղաքականության նկատմամբ անտարբերությունը, «Բաշը ալ-Բաշիր» պամֆլետը հաստատել է բոլորովին այլ բան: Անանուն հեղինակը, որ առավել հաստատականորեն է հանդես եկել «Չափաքաջ ալ-աղաթի» վերջավայրի անունից, բանաստեղծական զեղումով մանրամասնել է գրական մի զավանանք, որը թույլ է տալիս հասարակական-քաղաքական բավականին պարզորոշ ենթատեսք տեսնել: «Մեր գրականությունը մեր անապատն է և մեր վրանաստեղծին, մեր աղբյուրը և մեր արմավենին, թավաշմազ ուղտերի երամակն ու եզնիկները, մանավանդ մեր աննականությունը և մեր թուրը, որոնք այս երկրին վերադարձնելու են Քրիստոսի թվարկությունից առաջ և մարգարծի հիշրայից էլ հետո նրա ունեցած ուժն ու փառքը: Կ' խալիֆայությունը, և՛ մնացած բոլորը՝ նրանցից (նկատի ունի օսմանյան թուրքերին—Ս. Ն.), ուլթեր նվաստացնում են արարների որդիներին և ոսկու փայլից կուրացած, բարձրացնում են ու պատվում (հիսուսյան) քարոզիչներին: Քարոզչական ընկերություն երևելիները չեն հասկանա մեզ, ինչպես որ չեն հասկանա նրանց (եվրոպացի—Ս. Ն.) տերերը, որոնք ուզում են մեզ տրել, նաև (այն) տերերը (ակնարկում է թուրքերին—Ս. Ն.), որոնք իբր մեր նշարյաններ են հավատացյալների համայնքի ներսում մեր (արար մահ-մեղական) եղբայրների հետ եղբայրության շնորհիվ, սակայն իրականում տիրում են մեզ: Մեզ կհասկանան արարների որդիները, որոնք սփռված են այս ծովից մինչև այն ծովն ու մշտա ծովը: Եվ մենք գրականությունը հիշում ենք արարների որդիների համար, առաջնության և կեսօրին, երևիդյան և խոր գիշերին: Եվ երբ հարկ է լինում, հավաքվում ենք ու հիշում գրականությունը՝ նրանց (արարների որդիներին—Ս. Ն.) համար, որպեսզի խոսենք այն մասին, թե ի՞նչ և ինչպե՞ս ենք այս երկրին վերադարձնելու մեր հայրերի ու եղբայրների փառքն ու հաղթանակը» (29, 22):

Երեք պամֆլետներն էլ ոչ մի անգամ Իսահակի որդես «Չափաքաջ ալ-աղաթ» կազմակերպություն նախազանի շնորհատակելով հանգրծած, նրան բնութագրել են որպես ոչ միայն ընկերության կենտրոնական սյունը, այլև՝ Սիրիայի մեծագույն զավակներից մեկը: Ֆրանսերեն պամֆլետի հեղինակը, օրինակ, մեծ հուզականությամբ գովքն է հյուսիս Իսահակի՝ «այդ անկեզմ ու նվիրյալ բարեկամի, շերմորեն վե՛՛ նրա սրտի, այնքան անկեզմ ու համակերթի նրա կերպարի, այնքան մեծ ու առատաբաշխ նրա իմացականության» (233, 89—90): «Բաշը ալ-Բա-

շիր» հեղինակն ավելի պատկերավոր է եղել, Իսահակի մահվան կապակցությամբ գրելով. «Արտասովում էին կրթանանի մայրիները, որովհետև կայծակնահար ընկել էր իրենցից մեկը, ամենից հաստարունը. Աղիբը: ... Թեպետ ծագումով հայ, նա ամենից տաղանդավորն էր այս երկրի զավակների շարքում, այս երկրի, որի որդիներն իրենց ծագումով շատ ու շատ ազգություններից լինելով, զավակներն են Սիրիայի ու ծառայում են նրա և արարների փառքի համար: Իսկ ո՞վ կարող էր իրավամբ ավելի բարձրաձայն ասել, քան հանգուցյալ Աղիբը.— Ես այս երկրի զավակն եմ ու նրա բոլոր զավակների եղբայրը և նրա բոլոր զավակներից ավելի եմ աշխատել իր փառքի համար: ... Եվ Աղիբը (նաև ետմահու) շարունակում է որպես ուսուցիչ սովորեցնել մեզ.— Այս երկրի զավակներին բաժանում է եկեղեցին, բաժանում է տղես, կույր ու մողեսանց կոբը...: ... Միասնական լինել ոչ թե ծագման ու զավանությունից հուշի վրա, այլ՝ վե՛՛ նպատակների ճանապարհով քայլելիս, միմյանց հանդիմակելով ու ձեռք ձեռքի օգնած աշխատելով այնպես, որ այս երկրին վերադառնան իր փառքն ու հուշակը» (29, 5): Հեղինակն այլուր, խորանելով Իսահակի հիշատակը ժողովրդական զանգվածի շրջանում վարակաբեկելու եկեղեցու փորձերը, հաստատել է. «Մի, Աղիբն անկրոն ու անհավատ չէր այնպես, ինչպես եկեղեցին է ուզում հավատացնել: Նա քրիստոնեական ուսմունքի ամբողջ գրական իր արյան մեջ էր կրում այնպես, ինչպես մահմեդական ուսմունքի ամբողջ գրականը, նաև արեելքից թե արևմուտքից հավատացյալ թե անհավատ բոլոր փրկիտոնեաների ուսմունքի գրականը: Սակայն, չլինելով կրոնի թշնամի, նա անհաշտ թշնամին էր կրոնի իրենց ազիտությունը, ազահությունը, անբարոյական մտություններին և անմարդկային վայրենույններին ծառայեցնող բարձրաստիճան հողորականների, որոնց ձեռքին տիկնիկի են վերածված հասարակ քահանաները» (29, 13): Ինչ վերաբերում է բուն իսկ «Չափաքաջ ալ-աղաթ» կազմակերպության և ընդհանրապես արար մտավորականության համար Իսահակի նշանակությանը, ապա պամֆլետի հեղինակը, մի անգամ ևս խոսելով «մոլեկրոնություն և ատեություն» քարոզիչներին, շարունակում է. «Քարոզիչները լավ գիտեին, թե ո՞վ էին ուզում տապալել. Աղիբին, որ մեր տղեղն էր և մեր լեզուն, մեր սիրտն ու ձեռքը, նաև՝ մեր բունցըրը, (Աղիբին), որ ավազների իմաստությունը ճոխացնողն էր, հասակակիցների ուսուցիչը, կրտսերների համար օրինակ-կերպարն այն բանի, ինչ վաղը հազար-հազարներով է լինելու արարների որդիների շրջանում,

ինչ մինչև վերջերս, իր մասը, միակն էր, եղակի ու բացառիկ» (29, 22): «Քարա՝շիրու՛լ-ֆաջը» պամֆլետի հեղինակը ևս, արարերենի պերճազեղ արտահայտամիջոցներով ու բառախաղով, արտակարգ գնահատական է տվել Իս՛հակին. «Ենրան լսելիք բարեկամ ունկնդիրներին երանությունն էր պատում, իսկ շարակամների հոգու մեջ երկվայել խորշակն էր բարձրանում: Ոչ որ նրա շափ չէր ընթերցել և չկար մի գիրք: զխուսվյան ինչ մարզին ուզում է վերաբերի, որ նա իր գրածներին նման չիմանար: Նրանից անցյալ ժամանակների իմաստությունն էր հորդում և նա մարդարերի նման գողանկում էր վազվա օբը: Եվ երբ նա խոսում էր գալիքի մասին, նրա խոսքը հորդում էր աղյուլելի նման և պայթում ինչպես ժովամրբիկ: նա վերածվում էր արշալույսի ցուրի, որը լուսամտում էր ամենից ընկճված ու մտիթ հոգեկերևոյ իմաստությունում էր նրանց: Արշալույսի նման նա բարձրացավ զեպի երկնականամարի գնկիթը և այժմ իշել է հորիզոնի ետին, որպեսզի նորից ծագի որպես ցուլ, հենց որ անհրաժեշտ ժամը հնչի» (30, 32):

Փրանսերեն պամֆլետի հեղինակը պակաս շռայլ չի եղել իր գնահատականներում և խոսքը հիսուսյաններին ուղղելով, շեշտել է. «Սակայն նախ՝ ի՛նչ մեղադրանք էիք հարուցում մեր սիրելի Ադրիի գեմ: Զեր աշխին նրա առաջին ոճերը մեր սիրելի Զահրաթ ալ-ադար ընկերության ամենից գործունյա, ամենից հասնզուն և ամենից ազգեցիկ անգամնային մեկը լինելն էր: ...Չեմ կարող ասանց հուզմունքի վերհիշել այն երկար ժամերը, որոնց ընթացքում մեր տարաբախտ բարեկամը մեզ պահում էր իր շրթներից կախված, մեզ նվամեղով իր առնացի գեղճախոսությունում: նրա ներդաշն և ընդմիջարկչալ շեշտները, նրա հեշտախոս, փայլուն ու ճշգրիվուց նրբացած պերճախոսությունը մեզ հիացնում էին ու կախարհում և երբ իր բոցավառ խոսքերի վերջում նա մեզ էր ուղղում իր հուզի բանք...» մեր ընկերների ծափահարու նյութերը թափվում էին կարկուտի նման: Եվ դուք ուզում էր, որ այդ ժամերը մեր ամբողջ հիացմունքին շարժանանա՞»: Ալեուհեսև, իր զեզումները ևս կես էջ շարունակելով, որպես եզրակացություն հեղինակն ընդգծել է. «Սկիզբը մեր ընկերության հայտատուներն էր» (233, 32):

Որք պամֆլետներն էլ բացահայտել են արարագիրտության համար շափազանց կարևոր մի նորություն ևս. դա՞ «Զահրաթ ալ-ադար» ընկերության ընդհատակայնության և հակամասնայն նպատակամղվածությունն, առնվազն այդ ուղղությամբ հակասակորդների կողմից նրա գեմ ներկայացված մեղադրանքներին է վերաբերում:

Կազմակերպության ընդհատակայնության վերաբերյալ հետագիմտության մեղադրանքների մասին վկայություններն ավելի պարզորոշ գտնում ենք «Քարա՝շիրու՛լ-ֆաջը» և Փրանսերեն պամֆլետների էջերում: Առաջինն այդ կապակցությամբ գրել է. «Եվրոպայում մնա՞ց, որդյուն, որևէ երկիր, որանց (հիսուսյան—Ս. Ն.) քարոզչական ընկերությունն իր մեքենայությունների ցանցը հյուսած, այդ մեքենայությունների գեմ մարտնչող իր հակառակորդներին վանբերի խուլ զեղանկերում հռչակած, հակառակ դեպքում հորինովի մեղադրանքներով ու խարոյրսի մասնություններով նրանց բռնակալների ոտների տակ նետած շինի: Եվրոպայից հետո ընկերությունն այժմ, ա՛հա, Արևելքի է ընտրել իր ստոր մեքենայությունների ասպարեզ և ս՛ամ, էթն ոչ՛ մարեր կբրբիլու, հոգեկերևոյ ազնվանելու և սրտաբը նրբացնելու ձգտող այնպիսի մի ընկերության գեմ, ինչպիսին մեր Զահրաթ ալ-ադարն է: Մեր ընկերությունը ցերեկի լույսի ներքո գործող սրտունյալ մի ընկերությունն պարտադրանքներում հավաքվելով իշխանությունների գեմ պայթյուն գազանի թարսուցներում նախաժողով իշխանությունների գեմ պայթյուն պարտադրանքների մի խումբ: նրանք լավ գիտեն, որ իշխանությունները, ինչքան որ էլ հշմարտությանը հաջող լինեն, ապա հարույր անենք, ինչքան որ էլ հշմարտությանը հաջող լինեն, ապա հարույր անենք: կրիվված իրենց ստար գուն մեկ անգամ ու մեկ հողոց կողմից ամ կրիվված իրենց ստար գուն մեկ անգամ ու մեկ հողոց կողմից կրիվվելով որպես հշմարտություն: Սա Փրանսուսի անունը կրող ընկերությանն, թե՛ Նուզայի շարազեա ընկերներին վայել գործ է. թե՛ղ ընթերցողը գաութ» (30, 14): Փրանսերեն պամֆլետի հեղինակն, իր հերթին, ընդգրճակ գաղափարություն կատարելով մասնակախոսության վերաբերյալ ընդգրճակ գաղափարություն կատարելով մասնակախոսության վերաբերյալ գեմ հարուցեցիք այն նույն մեղադրանքը, ինչը և մեր ընկերության գեմ. իրք մեր ընկերությունը գազանի մի կազմակերպություն է. ամուր մասնակախոսության գեմ հարուցեցիք այն նույն մեղադրանքը, ինչը և մեր ընկերության գեմ. իրք կի գազանի ընկերություն չենք: Սակայն էթն մեր Զահրաթ լիցի, կրեք կի գազանի ընկերություն չենք: Սակայն էթն մեր Զահրաթ ալ-ադար ընկերության ներսում նախընտրում ենք անհայտություն պահպանել, էթն սերում ենք րնտանեկան տիպի կյանք ու մանրտություն, էթն սարսափում ենք օգտագործել թարսուրի բեճը, հրապարակը կամ ամֆիթատրոնը, պատճան այն է, որ աղմուկը մեր գործը չէ, որ խիստ մարդկային մի էջորհյով մեր ընկերությունից հատկապես պատճառում ենք մեր հոգևությունը վերացնել մասվորական հանույրով և գործի հոգաբեր փոխարինել օգտակար և հանելի ժամանցով: Մենք չենք սիրում փոշի փչել հանրության աչքերին, չենք վազում դատարկ ժողովրդականության ետևից և որպես պարկեշտ բուրժուաներ՝ սիրում ենք

հանցիտ ապրել ընտանեկան միջավայրում: Մենք այլ կերպ վարվելու ունիչությունը և ոչ էլ միջոցներն ունենք: Մենք միմյանց բաշտանքով ցանկանալով մի փոքր խումբ ենք և մեր աշխատած փողերից մի փոքր անդամավճար ենք վերցնում՝ մեր համար ընկերության գոյատևումն ապահովելու համար» (233, 97): «Բաշը ալ-Բաշիրի» հեղինակը ևս, թե-կուզ որոշ թարնասացությունք, մի տեղ ակնարկել է «Զահրաթ ալ-ադաբի» զեմ ընդհատակայնության հարցում ձևակերպված մեղադրանքնե-րին (29, 7—8):

Երեք պամֆլետներն էլ հարաբերաբար բորբորուն են և փոքր-ինչ ավելի հանգամանալից, ուրեմն և ավելի հետաքրքրական, իսահայաննե-րի հակապետական-հակասոմանյան զործուներության վերաբերյալ մե-ղադրանքին հակադրվելիս, ըստ որում երեք հեղինակների մոտ ինչպես հարցադրումները, այնպես էլ որոնված պատասխանները միմյանցից բավականին տարբերվում են:

Փրանսերեն պամֆլետի հեղինակը, ինչպես մյուս, այնպես էլ այս հարցում շարունակել է հիստորիաների հետ ուղղակի բանավեճելու իր ոճը. «Դուք մեզ մաստնականության հետ ամբաստանեցիք մեր երկրի օրինական կառավարության զեմ դավադրելու հանցանքով: Այդպիսի ստոր մի ամբաստանություն կատարելուց առաջ դրա ամբողջ ժանրությունը ու բոլոր հետևանքները կշտադատե՞նք է՛ր, արդյոք» (233, 97—98): «Քա-րաշիրուլ-Ֆաշրի» հեղինակը ևս փորձել է ոչ այնքան հանկի հար-ցարումը լիտուացնել և պատասխանի մեջ շատ լծավալվել. «Քրիստոսի բարբոռիչ անվավուղ այն մարդիկ, ովքեր իրենց ընկերությանը սովել են մարդկությունը մեղքից փրկողի անունը, անմեղ մարդկանց, ըստ որում բրիտանյա մարդկանց մի ամբողջ խմբի՝ Զահրաթ ալ-ադաբի ղեկավար անդամներին ուղում են կախաղանի վրա տեսնել, ըստ որում դավադրա-կան մի հանցանքի համար, որը նրանք իբր գործել են իրենց մահմեդա-կան իշխանավորների անձի և կառավարության հաստատություններ զեմ» (30, 23): «Բաշը ալ-Բաշիրը», ինչպես այլ կապակցությունք, այն-պես էլ այս առիթով, ավելի համարձակ է ու կտրուկ. «Եշխանություններն իրենց օրենքներն ունեն և դրանց սահմաններում կարող են պատժել իրենց պատամբ հպատակներին: Ամբողջ հարցն այն է, միայն, թե ի՞նչը պետք է սահմանել որպես պատամբություն, ո՞ւմ պետք է մատ-նանշել որպես ապստամբի: Զահրաթ ալ-ադաբի համար այս երկրին ու նրա զավակներին ծառայելը մի պարտ է, որը եթե ապստամբություն է, ապա կախաղան բարձրանալը նույնպես ծառայություն կարող է լի-նել: Մի՞թե մեր առաջամարտիկ Աղիբը շարունակեց ծառայել նույնիսկ

այն բանից հետո, երբ իր ամբողջ կյանքն արդեն ընծայել էր ժողովրդ-րին: Եվ մի՞թե նա կախաղանը չէր գերադասի այն բոլորին, ինչ իր հետ արեցին իր մահից հետո... Գծբխտաբար կախաղան բարձրանալուց հետո ապստամբը չի կարող լսել, թե իրեն զահմի ձեռքը մատնած մար-դիկ Արևմուտքում ինչպե՞ս են ողբում իրենց բրիտանյա եղբոր ու նրա բոլոր եղբայրների զմբախտություն վրա, ինչպես որ բավուրից տեսանք այս դարում, Հունաստանից մինչև սփրիական երկրամաս» (29, 13):

«Բաշը ալ-Բաշիր» պամֆլետի հեղինակը, իր արմատականության լրացուցիչ մի ապացույցը տալուց ավելի, մեզ համար համարյա զգասյա-ցունց մի հայտնություն է կատարել, Օսմանյան կայսրության նկատ-մամբ եվրոպական տերությունների մտադրությունների վերաբերյալ դա-տողությունների մի ընդարձակ շարքից հետո գրելով. «Որպես ապստամ-բի՞ պիտի դատու այս երկրի զավակներին, եթե նրանք պայտարում են ու պայքարելու են որպես կառավարության բարեկամ մեզ մոտ կեղոչ և սակայն մեր նկատմամբ թշնամությամբ լցված ու մեզ կործանման մատնել ջանացող մարդկանց զեմ, լինեն նրանք (հիստուսյան) բարոջա-կան ընկերության, թե՛ նրան հովանավորող կառավարությունների ներ-կայացուցիչներ: Ընդհանրապես նրանց զեմ, ովքեր չեն հարգում մեր երկրին ու մեզ, մեր լեզուն ու մեր պատմությունը, մեր պատիվն ու մեր հպարտությունը, նաև շատ ուրիշ ժողովուրդներինը. հույներինը, հայե-րինը, մյուսներինը, Մենք չենք մտառել, որ Աղիբը սովորեցնում էր մեզ, նվաստացնում և վիրավորանքների ճամբով բաշտող կարո՞ղ է հրժվել և հպարտանալ, որ ինքը հպարտ մի ժողովրդի զավակ է: Ուրեմն իրոք որ լավ է զարթնել և թուրը ձեռին՝ մեռնել որպես ապստամբ, քան թե քնել ու ձեռներին շղթա՝ ապրել որպես նվաստացված հպատակ» (29, 16):

Եթե աչքի առաջ ունենանք, որ վերջին ստղծերում «Բաշը ալ-Բաշիրի» հեղինակը փաստորեն միախառնել էր Ա. Իսահակ և Ի. ալ-Ֆադլիի այն-քան հուշակավոր և այնպես ժողովրդական երկու բերթվածներ, ապա չենք կարող շանդադանալ «Զահրաթ ալ-ադաբ» ընկերության և Քեյ-րութի հակասոմանյան ընդհատակյա կազմակերպության փոխանության հարցին, նույնիսկ սեղանի վրա շղեղի նրանց օրգանական միասնության վարկածը:

Ընդհատակյա այդ ի՞նչ կազմակերպության մասին է խոսքը: Մեկիմ Սարգիսը (մահացած՝ 1927 թ.) 1895 թ. Կահիրեում լույս տե-սած «Կայսրության գաղտնիքը» («Սըր մանլաբա») գրքուկում ընթերցո-ղին է ներկայացրել հեթանոսական մի պատում.—1887 թ. Դամասկո-

սում ապրելիս իմացել է, որ իր ժամանակին ընդհատակյա թուղիկներ տարածած բրիտանյա մի նրխասարգ մահանալիս թողել է ինչ որ թըզ-թըր, որոնք պահվում են մոր մոտ, հատուկ մի անդուկում: Մտեսի-նալով այդ թղթերի հետ և նկատելով, որ գրանք «թուղիկներ և կոչեր տարածող գաղտնի կազմակերպության նիստերի արձանագրությունների հմանող մի բան են», Սարգսի պատմիկն խորհուրդ է տվել ոչնչացնել գրանք, բանի որ վտանգավոր են ինչպես իր, այնպես էլ «բոլոր նրանց համար, ում անունները հիշատակված են»: «Պատմական այդ փաստա-թղթերը ոչնչացվեցին և մնացել են միայն բլերը, որոնք էլ են արձանա-գրում նմ այս պատմության մեջ», — գրել է Սարգսի, պատմության հա-մար «փրկելով» հետևյալ տեղեկությունը. — Միջնա փաշան ցանկացել է ստուգել, թե սփրիացիներն ինչքանով են պատրաստակա՞ն հեղափո-խական գործողությունների դիմելու, որպեսզի իրենց երկրամասին սպառնովեն եզրպատկանի տիպի անկախության մի վարչակարգ: Այդ նպատակով նա իր մերձավորներից Հասան Ֆաիք ալ-Զարիի և Ահմեդ Մահդի ալ-Ալուրիի միջոցով համախմբել է արքա ընդունակ երիտա-սարգիների, որպեսզի ստեղծեն գաղտնի մի ընկերություն և տարածեն այն թուղիկները, որոնցով փաշան ցանկանում էր փորձել սփրիացիների հա-կամները (172, 782—783):

Սարգսի այս հաղորդումից հետո արարական հրատարակություննե-րում տարածում գտավ տարտամ մի ակնարկ այն մասին, որ 1870-ական թթ. վերջերին սփրիական երկրամասում գործել է ընդհատակյա մի կազ-մակերպություն՝ «Կոչերի տարածման գաղտնի ընկերություն» («Զամիլա սերիլա լիսաշ ալ-աղան»), որը, սակայն, որպես օսմանյան մի փա-շայի նախաձեռնության արգասիք, անմիջականորեն ու սերտորեն չէր շաղկապվում արաբական ազգային-ազատագրական շարժման հետ:

Իրադրությունն ուղղակի հեղաշրջվեց չորս տասնամյակ անց, երբ «Կոչերի տարածման գաղտնի ընկերությունը» վերածվեց արաբագիտու-թյանը «Բելուրթի հեղափոխական գաղտնի ընկերություն» պայմանա-կան անունով ծանոթ կազմակերպության: Վերափոխությունն այնքան հրապուրելի էր, որ ոչ ոք հարկ չհամարեց արժարժել անխուսափելիորեն ծագած բազմաթիվ հարցանանները, թեկուզ՝ ուշադրություն դարձնել այն առավել տարօրինակ իրողության վրա, որ որպես հիմնադիր-առաջա-տուր թե շարքային անցած ներկայացված գործիչները, հատկապես նրանք, ովքեր արդու համիդյան և երիտթուրքական բռնակալության վախճանեց հետո դեռ երկար տարիներ ապրել ու ստեղծագործել էին, հակասամա-նյան պայքարին մասնակցության վերաբերյալ հաղորդումների խիտ

մտային գունատուց հետո իսկ լուսթյուն էին պահպանել ինչպես իրենց ձագորդի, այնպես էլ անձամբ իրենց անցյալի կարևոր և հպարտափոթ զբոյգի մասին:

Համենայն դեպս զիպրերից վաթսուն, իսկ Սարգսի գրքից բառասուն տարի անց, 1930-ական թթ. կեսերին լուսթյունը խղեց նահաջի շարժ-ման երևելի ներկայացուցիչներից մեկը՝ «ալ-Մուքթաբաթ» պարբերա-կանի հրատարակիչներից Ֆարախ Նըմրը (1856—1951): Հանդես գալով որպես հինգ հիմնադիր անդամներից մեկը (մյուս չորսը՝ Ֆախր Սար-բաթի 1852—1927, Իրրահիմ ալ-Շաուրանի 1844—1916, Իրրահիմ ալ-Շաղիթի 1847—1906 և Շահին Մակարիուս 1853—1910), Նըմրը կազմա-կերպություն, նրա անդամները, գործունեության ու կոչերի մասին պատ-մեց արևելագետ Ջորջ Անտոնիուսին: Վերջինս շուտով Անգլիայի ար-տաքին գործերի մինիստրության արխիվում, բրիտանական գլխավոր հյուպատոսությունների զեկուլագրերի թղթածրարներում հայտնաբերեց 1880 թ. հունիսի 27-ի և հուլիսի 3-ի միջև տարածված երկու և ղեկանե-րների 31-ի նախօրյակին հրապարակված մի երրորդ թուղիկ: Հենց դրա շնորհիվ էլ Անտոնիուսը 1938 թ. լույս տեսած «Արաբական զարթոնքը» մենագրության լեջերում ի վիճակի եղավ առաջինը, բավականին հանգա-մանորեն և օբյեկտիվորեն ներկայացնել այն, ինչը գնահատեց որպես «արաբական ազգային շարժման մեջ առաջին կազմակերպյալ միջոց» (201, 78—79): Նըմրը ավելի ուշ իր հիշողություններից բաժին հանեց նաև արևելագետ Ջեյն Ծ. Ջեյնին, որը, սակայն, նրա մասինց հետո միայն, 1958 թ. հրատարակված «Արաբա-թուրքական հարաբերություն-ները և արաբական ազգայնականության ի հայտ գալը» աշխատություն-ում, հարաբերարար թուղիկի հայացք գեղեղ կազմակերպության վրա, Անտոնիուսի ղեահատականը բնութագրեց որպես «շափազանցված» և «պատմական որևէ լուրջ ապացույցի վրա չհենվող» (276, 56—57 և 68, ծնթ. 14—16):

Բոլոր զիպրերում, թեև ուղ և Սարգսիի պատմիկ հեքիաթային թան-ձրը չէր, այդ թվում հատկապես սփրիական ազգայնականությունը հրահրելու միջհատյան շանքերի վերաբերյալ առասպելը հօսո ցնդեցին, սակայն 1870-ական թթ. հակասամանյան ընդհատակյա ինչ որ կազմա-կերպության գոյությունն ու գործունեությունը հաստատվեցին որպես պատմական իրություն: Մնում էր, միայն, որ այդ եղիությունը վե-րածվեր պատմական ավարտուն-ամբողջական ճշմարտության: Դրա հա-մար անհրաժեշտ էին փաստական նոր ու զերհավաստի տվյալներ, մա-նավանդ որ բիշ չէին հրամայարար պարզարանման կարիք զգացող հար-

ցեր՝ «Բեկյուքի (Նեղափոխական) գաղտնի ընկերության» բուն անունը (իերանվանումը), գործունեության ժամանակային ճշտորոշ շրջանակները, անդամների ցուցակն ու սոցիալական դեմքը, քաղաքական դաժանանքն ու պահանջները և այլն:

Փաստորեն Բեկյուքի ընդհատակայն կազմակերպությանը Ձեռնից տրված դուսպ, շասկու համար ժխտական զնահատականից հետո է, որ արքա Նեղինակներն սկսեցին առավել կամ նվազ ուշադրություն դարձնել պատմախորհարհարական Սիրիայի ազգաբնակչության հասարակական-քաղաքական մտքի զարգացման անդատանում մի նոր՝ հակասունջյան հարցադրումների և ազգային ինքնությունից յանձնելի ակտուր բացող նրա փաստաթղթերին: Եվ սակայն իմն զանց առնենք Արզ ալ-Լաթիֆի ալ-Ֆիրաուփի կողմից կոչերի արարերին բնագրերի հրատարակությունը (տե՛ս 172), այս արարերին աշխատությունների միակ «նեղորոշ» պիտի համարել այն, որ նրանք սկսեցին պարզապես արարական ազգային-քաղաքական զարթոնքի ընթացածում մի բանի առողով տեղ առլ նաև Բեկյուքի կազմակերպությանը, XIX դարի վերջին բուտորդի սկզբնադրյուններից ոչ մի նոր տվյալ չավելացնելով Անտոնիտուս և Ձեյնի պնդումներին: Իսկ զա՛ր՝ ըստ երևույթի այն պատճառով, որ ինչպես Անտոնիտուս ուսումնասիրած, այնպես էլ մյուս սեղգրեադրյուններից և ոչ մեկում ոչ մի հաղորդում գոյություն չունի Բեկյուքի գաղտնի ընկերության գործունեության վերաբերյալ» (201, 81):

Մեր արտազանները, շունենալով այդ հարցերին պատասխան հայթայթող ուրույն աղյուրերի, հասկանալիորեն պիտի բավարարվին առկա տվյալների հիմամբ կազմակերպությունը գիտական դիրքերից զնահատելով ու նրա փաստաթղթերը շաղկապելով նոր ժամանակներում արարների գաղափարական կյանքի համայնապատկերին: Ահիքը և Կոալովը, օրինակ, համապատասխանաբար առաջարկած լինելով պատկերել արարական հասարակական-քաղաքական մտքի և ազգային-ազատագրական շարժման կազմավորման հիմնական ուղղությունների ընթացքն ու զարգացումը, իրավունք ունենին սահմանափակվել առավել կամ նվազ մշակված փաստերի և ըստ էության հանրահայտնի երևույթների համազրբմամբ: Եվ սակայն չպարզաբանված հարցերի բանակական, առավել և որպակական կշիռ բոլոր զեպերում չէր կարող հետք վնդնել նրանց տված զնահատականների վրա: Ահիքը, իրավամբ գրելով, որ «ընկերության ծրագրերը հատուկ հետադրություն է ներկայացնում որպես առանց կրոնական հրանկավորման ազգային բնույթի ծրագիր», վերջինս որոշակիորեն աննշակցել է «1860 թվականից ինքնավար գոյակցելով վան-

լից կրթականի մարտնականների մոտ հատկապես զգացվող ինքնությունության նկրտման հետ» (119, 119—120), ինչը վկայում է Նեղինակի թյուրմտացության մեջ ընկնելու մասին: Կոալովն, իր հերթին, ընդունելով հանգրիմ, որ Բեկյուքի ընդհատակայն կազմակերպությունը «արարների սղգային ձգտումները ձևակերպած արարական քաղաքական առաքին ընկերությունն էր» և որ նրա «փաստաթղթերը կարող են բնութագրելի որպես արարական սկզբնական ազգայնականության բարձրագույն փուլը», ավելացրել է. «Դա ընդհանուր առմամբ արտակարգորեն անկերպարան մի կազմավորում էր, որը չուներ ոչ միայն կազմակերպական որևէ սկզբունք, այլև նույնիսկ անուն և «արտակարգորեն անորոշ մնացին նաև նրա քաղաքական իդեալները, լոզունգները և նպատակները» (113, 241 և 260—261):

Մեր կարծիքով սկզբնադրյունների, հատկապես իսահական ընկերության վերաբերող նորահայտ հաղորդումների տվյալները, ինչպես էլ կցկոտոր, ներկայումս ուղղի են մայրիս բավականին հիմնավորապես արարական ընդհատակայն կազմակերպությանը և զիստով մի հարց՝ քաղաքական ընկերության փոխանչման, որը իմաստով նույնիսկ նույնականությունից հարց, որը ոչ միայն բեկյուքյան ընդհատակի շուրջ տիրող առջովածայնությունը բացառելու, այլև նրա բացառիկ կարևորության գիտակցմանը հասնելու առ այժմ և՛ մատչելի, և՛ տրամաբանական միակ մեկնակետն է:

Առաջին հերթին ասե՛ք, որ անխորհ բոլոր հետազոտողներն առայսր գաղմանալի անհոգություն են դրսևորել ընդհատակայն կազմակերպության հիմնադրման ու լուծարման իվականների ճշտորոշման հարցում: Իսկ գրանք, ինչպես տեսնելու ենք, հանդուգային նշանակություն ունեն:

Անտոնիտուս հետևողությունը որպես կանոն հիմնադրման տարեթիվ է արձանագրում 1875-ը (119, 119: 113, 241 և 261): Իրականում առանձին զմվարություն չէր ներկայացնում պարզել, որ կազմակերպության ստեղծումը չէր կարող տեղի ունեցած լինել 1874 թ. ամառնասկզբից հետո: Բանն իսկ է, որ հանգես գալով որպես կազմակերպության առաջին ու առաջատար անդամներից մեկը, Նըմրը հասակորեն հիշել է, որ իրեն և իր ընկերներին գաղափարապես Նեղաշրջողն ու գործունեության մղողը եղել է Սիրիական բողոքական կոլեջում իրենց ֆրանսերենի ուսուցիչ Իլիաս Հարապիլիքը, որ «գառարանում ֆրանսերենի դասը կարճատև անցնելուց հետո... շուտ էր գալիս զեպի քաղաքականությունը,

խոսում Թուրքերի մասին, նրանց բոլոր անարդարությունների և նրանց փտուկ կատաղարումից ազատագրման մասին»: Նըմբը շեշտել է, որ «երա ուսանողները, որոնք բուրն էլ բրիտանյա էին, շուտով դարձան նրա խանդավառ հետևորդները, նրանցից ամեն մեկն ուզում էր Հարթալին դառնալ, նույնիսկ՝ ավելի բան Հարթալին և նրանք սկսեցին իրենց գաղափարների ուսուցանել ուրիշներին» (276, 68, ձևթ. 14): Արդ, նրանք վկայություն քն ալլ ավյալների հիմամբ Զեյնը հաստատել է, որ Հարթալինը կոչելում դասավանդել է 1871—1874 թթ. (276, 68): Ավելին. ինքը՝ Նըմբը, 1874 թ. ավարտել է կոչելում իր ուսումնասիրությունը, ստացել բակալավրի աստիճան և նույն թվականի աշնանից նշխարակրի դոկտոր վան-Պեյխի տեղակալ ու անցել դասախոսական աշխատանքի (169, հտ. 2, 139): Դժվար չէ կորակացնել, որ ընդհատակյա կազմակերպության ստեղծումը պետք է տեղի ունեցած լինի մինչև 1873—1874 ուսումնական տարվա ավարտը, որ և նույն է՝ 1874 թ. կեսերը: Այլ խոսքով այն նույն ժամանակաշրջանում, երբ «Զառափայլ ալ-ազաբի» շրջանակներում նոր-նոր գերակշռություն էր ստացել ալ-Բուսթանի փոխարեն նախագահ ընտրված նախկինում «կարևոր անդամ» (169, հտ. 2, 106) Իս՛ահկի արմատական նահալյականների խումբը և ջանում էր պաշտոնավերթի վերածել Յուսուֆ ալ-Շալֆունի հուճկվարի 1-ից լույս տեսնող «ալ-Քակաղզում» պարբերականը:

Ակզնադարյուններում ուղղակի վկայություններ չկան ըստ Նըմբի ընդհատակյա կազմակերպության հոգևոր հայրը հանդիսացած Հարթալինի և Իս՛ահկի սերտ անընկալ, ավելի շուտ անմիջական համազորմակցության վերաբերյալ: Եվ սակայն կարելի է որդյա անկասկածելիորեն հավաստի պնդել, որ Հարթալինը եղել է «Գրականության ժողովրդ» ընկերության անդամ: Դի Քարագին վկայել է, որ նա Սիրիական երկրորդ ընկերության ստավիլ երեկոյի անդամներից մեկն էր, «հաճախ կույսվներ էր ունենում և ծառայում գործով ու խոսքով» (169, հտ. 1, 116): Իսկ, ինչպես գիտենք, զարթափականներն ստաջին հերթին գիտական ընկերության Հարթալինի տրիպի երիտասարդներից էին հավաքաբարված: Կա, անշուշտ, ալ-Շալֆունի՝ որպես նրանց կապակցող օղակի հավանական իրողությունը. «ուսնաղ ալ-շահիր»—«երեսի վարպետ» Հարթալինը (169, հտ. 1, 74) «ալ-Քակաղզումի» խմբագրությունում զեռ «ալ-Լուրնանեթ» իրեն հոգեհարազատ ալ-Շալֆունի կողքին էր, իսկ Իս՛ահկը նույն խմբագրությունում հավակնում էր զիսավոր արժույն: Կան նաև մի շարք անուղղակի փաստեր, որոնք թելադրում են պնդել Հարթալին-Իս՛ահկ շատ սերտ կապերի անխուսափելիությունը: Առաջինը «տուրյեկություն»

մի ավյալ է. երկու գործիչների հանրահայտ և կրթի հասնող սերը Ֆրանսիական առաջավոր մտքի նկատմամբ: «Նա վրոտեր էր կարգացել և իր պողոփարներում շատ առաջացնել և հեղափոխական էր»,—Հարթալինի մասին վկայել է Նըմբը, ավելացնելով, որ «Նեղափոխական ստաջին պողոփարները, որ ինքն ու իր մի խումբ ընկերներ ստացան Սիրիական քաղաքական կոչելում, Ֆրանսիական ծագում ունեին և իրենց գաղտնորեն հանում էին Բիխա Հարթալինի միջոցով» (276, 68, ձևթ. 14): Ինչ վերաբերում է Իս՛ահկին, սպա նա, Նախրալայի վկայությամբ, նահալյական մտավորականության առաջ «աղափարական և ընկերային նոր հորիզոններ բացելու» համար «իր ուշադրությունը հատկապես բեռնաքրել էր» իր ժամանակակից Ֆրանսիական հեղափոխական մտքի վրա՝ «Գումպետտի, Լիտեր, զր Ժիրարդին և Լյուդո, որոնց դաղափարներից և վարդապետություններից լիարուսն բազում էր, նոր ու պաղտուն տեսքով բաշխելու համար դարմացած և հուզված Աբելյոյին» (236, 76): Հարթալին-Իս՛ահկ փոխառնման իրողություն լինելու վերաբերյալ մի այլ տրվյալ արգեն օրնկատիվ է: 1874 թ. կեսերին մանկավարժական աշխատանքը թողնելով, Հարթալինը, որ «Ֆրանսիացիներին զարմացնելու ուստիճան հրաշալի Ֆրանսերեն էր շարագրում և պեճախոսում», ստանձնել էր Բեյրութի Ֆրանսիական հյուպատոսարանի առաջին թարգմանի պաշտոնը, որը վարեց մինչև նդպատոս մեկնումը (169, հտ. 1, 116): Ընց նույն օրերին Իս՛ահկը Ֆրանսիական հյուպատոսարանում ստավիլ չեմ ընդունվող մտավորականներից էր ու նույնիսկ հյուպատոսի հատուկ խնդրանքով և երեսուն հազար դրոշի բարձր պարգևագումարով առաջապալալ արարիչների էր թարգմանում Բուսիին «Անդամակր» (21, 9, 169, հտ. 2, 106): Եվ վերջապես նշանակալից պիտի համարել այն իրողությունը, որ 1876 թ. համարյա միամամանակ նդպատոս փոխանվելու Իս՛ահկի և Հարթալինի ճանապարհների այնքան հաճախ խաչանվելում էին ու նրանք այնքան սերտ համագործակցելու էին, ջանի որ ոչ միայն համատեղ կապված էին հրապարակախոսությանը, այլև զրկեն պաշտոնակիցներ էին. Հարթալինը՝ միևնույնների խորհրդի, իսկ Իս՛ահկը՝ խորհրդարանի թարգմանական գրասենյակի վարիչ:

Բեյրութի ընդհատակյա կազմակերպության հիմնադրման թվականի նշարտում մեղ համար ելակետային նշանակություն ունի այն իմաստով, որ Ա. Իս՛ահկը, իր և Սեյիմ Նակիկաչի ջանքերով ստեղծված Թատերախմբի ուղեկցությամբ, 1875 թ. վերջերին կամ 1876 թ. սկզբներին (սկզբնադրյուններում խոսքը քնում է 1875—1876 Թատերաշրջանի մասին) մեկնելու էր Ալեքսանդրիա և ուրեմն մինչ Բեյրութից հեռանալը

կարող էր ընդհատակյա կազմակերպության հետ հաստատուպես և որոշակի մի տեղորոշումը անշուրթուն ունենալ այն ղեկավարման միայն, եթե այն հիմնադրված լինեի 1874 թ.: Այլ խոսքով այդ ղեկավարման միայն հնարավոր կգտնեա մոտավորապես իրենց սկզբնակետից իսկ զուգարդիկ երկու՝ բաղարական և գրական ընկերությունները, զուգարդում, որը, ինչպես տեսնելու ենք, ոչ թե պարզապես հրատարակել է ծագումով հայազգի Իսահակ զեմքը էլ ավելի պայծառացնելու փորձի տեսակետից, այլ խիստ անհրաժեշտ է քաղաքական կազմակերպության շուրջ վանձարացած անեղծվածը պարզելու տեսակետից:

Ընդհատակյա քաղաքական կազմակերպության մասին առաջինը խոսած Անտոնիուսը, վկայակոչելով օրոքսունամյա առաջացած տարիքի», սակայն «իր ընդունակությունները լրիվ պահպանած» Ֆ. Նրմբին, նշել է, որ «Բելյուսի Միրիական բողոքական կոյեջի հինգ երիտասարդներ», որոնք «բոլորը բրիտանոյա էին», «հիմնեցին մի զազանի ընկերություն» և «մի որոշ ժամանակ անց հաջողաբար անդամագրությունը շուրջ 22 անձերի, որոնք տարբեր զովանություններին էին պատկանում և ներկայացնում էին երկրամասի լուսավորչալ ընտրանին» (201, 79): Ջեյնը, որ առաջինն է թվաբանի, Մարրուֆի, ալ-Յազիչիի, Նըմբի և Մակարիոսի անունները, նրանց ներկայացրել է որպես «աչքի ընկեող անդամներից ոմանք» և շեշտել, որ «խմբակն սկզբում կազմված էր շուրջ 12 անդամներից, այլևիկ ուշ ամենյով մոտավորապես 70-ի», ըստ որում սկզբնական 12 անդամներից «շատերը բրիտանոյա էին և նրանցից ոմանք սովորել էին Բելյուսի Միրիական բողոքական կոյեջում» (276, 57 և 68, ծնթ. 14):

Անտոնիուսին և Ջեյնին Ֆ. Նրմբի կողմից կատարված հաղորդումներն ունեն որոշակի և նշանակալից տարբերություններ, որոնք սերտումների առերև ին տալիս: Այստեղ մեզ համար ավելի կարևոր է շեշտել, որ Բելյուսի ընդհատակյա կազմակերպության թվաբանված 5 «հիմնադիր» (Անտոնիուս) կամ 12 հիմնադիրներից «աչքի ընկեող» (Ջեյն) անդամները նույն 1874 թ. հաստատուպես անդամ էին նաև Իսահակ ղեկավարած «Գրականություն ծաղիկը» ընկերության: Ճիշտ է, խնդրո առարկա հինգ գործիչների հետ բազմամյա սերտագույն անշուրթուն ունեցած Ջրչի Ջեյզանը (1861—1914), «Գրականության ծաղիկը» ընկերության 11 առաջատար անդամների անունները թվաբանելիս, 5 ընդհատակայիններից հիշատակել է միայն ալ-Յազիչիին ու մեկ էլ՝ «ալ-Մուքթաբաֆի սորբուր» (156, հտ. 4, 70): Սակայն տվյալ ղեկավարման մասին, արդյոք, նկատի ունեցել Ջեյզանը. Նըմբին, թե՛ Մարրուֆին, քանի որ արարա-

կան մասունքի պատմությունը որպես «ալ-Մուքթաբաֆի տեր» որքան կրճարի, նույնքան և Մարրուֆին գիտի (169, հտ. 2, 52): Եվ կամ՝ արդյո՞ք նկատի է ունեցել միասնաբար երկուսին. այդ ղեկավարման «Գրականության ծաղիկը» առաջատար անդամների թիվը (ըստ Ջեյզանի) զարմանալիորեն կհամասարվի ընդհատակյա կազմակերպության անդամների թվին (ըստ Ջեյնի): Իրականում արարական մասովոր մշակույթի պատմության էջերում հասրայացի Նըմբի ու հաղեթցի Մարրուֆի նանուկն են դալիս որպես անբարկունքի մի երկմիասնություն, որը կայուն եռանկ է դառնում մերջայունցի Մակարիոսի, նույնիսկ քառյակ հոմանցի ալ-Շատրանիի միակցմամբ: Բանն այն է, որ հույն-ուղղափառ համայնքից սերած շորտ երիտասարդները համաժամանակյա սովորել են միևնույն կոյեջում, միասնաբար բողոքականությունն ընդունել և ապա մասնականություն հարել, գրեթե համահեղինակ դարձել ու կանգնել միևնույն պարբերականի օրոքոցի մոտ և, գոնե իրենց կյանքի բնութային հանգրվանում, գիտական առավել առաջավոր դիրքերից (հատկապես հասուն Գաղափար ուսմունքի) հետադուրություն զեմ համասոց զրապայար մղել ու նույնիսկ ձեռնամարտ տվել, ապա և միասնաբար գաղթել ներպատու ու նեղոսի ափին էլ շարունակել իրենց սերտ համագործակցությունը (128, 221: 119, 151: 169, հտ. 2, 110: 159, 802, 1095 և 1870):

Արդ, քառյակի նման հույն-ուղղափառ համայնքից սերած, բողոքականացած և մասնականացած, ավելի՞ն՝ պատմությանը քառյակի անդամներին աշակերտած և, իր իսկ խոստովանությամբ, 1880-ական թթ. սկզբներին նրանց փոթորկուս պայթյուններին անմիջականորեն մասնակցած Ջեյզանը (տե՛ս 158), որի ընդհատակյա կազմակերպության հարցում լուծյալներ (այն էլ այն ղեկավարման, երբ շուրջ երկու տասնամյակ անց, իր «Արարակուս մշակույթի պատմության» քառահատորյակի համար ուշից ուղեից փշուր-փշուր տվյալներ էր հավաքում՝ արարական «զգալունքի ընկերությունների» պատկերը տալու համար) ավելի քան զարմանալի, նույնիսկ անբացատրելի պիտի համարել, փաստորեն հուշել է, որ ոչ թե միայն ալ-Յազիչին ու մեկ էլ Նըմբի կամ Մարրուֆի, այլ՝ Անտոնիուսի և Ջեյնի կողմից որպես ընդհատակյա հաստատուպես անդամակցել է Ա. Իսահակի ղեկավարած «Գրականության ծաղիկը» ընկերության: Եվ մի՞թե ընդհատակյա կազմակերպության հարցում Ջեյզանի լուծյալներ, ավելի չու՞մ արարական ազգային ու մշակութային զարթոնքի՝ պատմության ամեն մի, նույնիսկ աննշան երևույթ այնքան բծախորտորեն ուղղափառ իր մատույններում այդ կազմակերպության վերաբերյալ բացարձակ «անդի-

առաջնությունը չի կարելի մեկնարանել որպես թեկուզ դեռ թույլ, այլ բոլոր դեպքերում կողմնակի ալյալ այն մասին, որ երկու կազմակերպությունները եղել են մեկ և նույն կազմակերպությունը, ավելի շուտ՝ «Բեյրութի (Նեղափոխական) գաղտնի ընկերություն» պայանական անունով ծանոթ ընդհատակյա կազմակերպությունը եղել է պարզապես «Գրականության ժողովրդ» պաշտոնապես թույլատրված գրական-մշակութային կազմակերպության բաղաբաղական ընդհատակյա թևը:

Կա և մասոնականության ծանրակշիռ փաստաթղթը, որի էությունը կայանում է հետևյալում:

Ց. Նըմրը Անտոնիուսին հայտնել է, որ «գաղտնի ընկերության նախաձեռնողները կարողացան, իրենցից մեկի միջոցով, հետաքրքրել նորահին եվրոպական տիպի մասոնական օբյեկտ իրենց գործունեությանը» և այդ ճանապարհով էլ ընդլայնեցին իրենց շարքերը (145, 79): Նըմրը Զեյնին էլ հաղորդել է, որ «գաղտնի ընկերության առաջատար անդամները հարեցին Բեյրութի մասոնական օբյեկտին՝ հուսալով այդ ճանապարհով իրենի մասնեղականների ներգրավել օբյեկտի մեջ և հետագայում նրանց մղել հարեւու իրենց ընկերության», ըստ որում «գործը թվով մասնեղականներ միացան օբյեկտին և լսեցին ընկերության մասին, սակայն... շուտով մասնեղականները և բրիտանացիները տարակարծիք դուրս եկան» (276, 58):

Արգ, հանրահայտ է, որ Սարդուֆը եղել է բարձրակարգ մասոնական, նըմրը՝ մի շարք օբյեկտների ղեկավար, իսկ Մակարիուսը՝ մասոնականության պատմաբան ու տեսաբան, որ հեղինակել է «Մասոնական մշակույթ», «Մասոնական արժանավորությունները», «Գործնական մասոնականության պատմության վերաբերյալ իսկական ճշմարտությունները» և «Մասոնական կազմակերպության թաքուն գաղտնիքները» գրքերը (159, 1095 և 1870): Սակայն մուսթաֆականների մասոնականությունը վերաբերում է 1870-ական թթ. երկրորդ կեսին և 1880-ական թթ. սկզբներին: Բուն իսկ 1870-ական թթ. առաջին կեսին և ստատական նահաջականների միջավայրում առաջինը մասոնական է դարձել Ա. Իսահակը, ըստ որում նրա մասոնական գտնույթը Ք. Խալաբալյան ապագե է ներկայացրել. «Շեյխ Իսբենդեր (այ-Ակարը) Միրխայում մասոնականության առաջինը հարածներըց մեկն է նա ֆրանսիական օբյեկտների քարոզիչն էր ու առաջարկ... Մի օր մի երիտասարդ եկավ իր օբյեկտին անդամացնելու հարցը դիմում տալու Գիմումի քննադիման մասնակ շեյխ Իսբենդերը նակարավելցե թեկնածուի ընդունելության, ասելով, որ նա խմող (հարբեղող) է: Կարճ ժամանակ անց այդ երիտասար-

դը այլի գարկավ իր գրություններով: Նա ոչ այլ որ էր, էթն ոչ Ադիբ Իսահակ: Մասոնացած լինելով շեյխ Իսբենդերի հետ, Ադիբը նրան իր ստուն հրավիրեց: Նա մասնավոր մի դասատուից անգլերենի դասեր էր ստանում: Այդ պարագայունքները տեղի էին ունենում երեկոյան և ավելի ջատ խմում էին, քան թե պարսպում: Շեյխ Իսբենդերը առաջին այցելությունը ուղղակի վրդովվեց: Կամաց-կամաց նա ընտելացավ և համոզակատարությունը իր հերթին խմող (հարբեղող) դառնալու աստիճանի ասաց մղեց: Այլ ծիծաղելով իր մտերմոր դարձած Ադիբին պատմեց իր գիմումի մերժման իսկական պատճառը, մերժում, որը օբյեկտը հետագայում վերանայեց» (236, 71):

Արաբական գրականության պատմությունից հայտնի է, որ Իսահակ «գրություններով այլի գարնելու» սկիզբը համարվում է 1874 թ. դարձնա-աման ամիսներին նրա առաջին արձակ ստեղծագործության՝ «Մեր հարեւուների բավականությունն ու աչքերի վայելքը» վիպակի առանձին գրքով լույս ընծայումը: Նշանակում է, որ Իսահակը մասոնական օբյեկտին անդամացել է շուրջ 1874 թ. կեսերին, այլ խոսքով հենց այն ժամանակ, երբ իր առաջին քայլերն էր նետում ընդհատակյա բաղաբաղական կազմակերպությունը և երբ «Գրականության ժողովրդ» կազմակերպությունը նախազգեսի պաշտոնում Ադիբը նոր-նոր փոխարինել էր Ս. ալ-Բուսանիին: Այդ դեպքում ընդհատակայինները այ-ժաղչիին և նըմր-Սարդուֆը նրկյալով հանդես եկող այ-Մուսթաֆայի սերը». «Գրականության ժողովրդ» շրջանակներում լինելով հենց նոր մասոնացած և օբյեկտի ղեկավար այ-Ազարի մտերմոր դարձած Իսահակի համախոհ-գործակիցները, կարիք ունեին մասոնական միջավայր թափանցելու համար կողմնակի ու զիմարին ճանապարհներ որոնելու իմ արդյոք հենց Իսահակն ինքը չէ ընդհատակյա կազմակերպության առաջատարներից այն «իրենցից մեկը», որ որոշակի նկատառումներով և հատուկ առաջադրանքով թափանցել է մասոնական միջավայր, ուղի հարթելով մուսթաֆականների հետագա ներթափանցմանը:

Կա և արտակարգորեն հետաքրքրական մի ուրիշ հանգամանք: Դա՝ ընդհատակյա կազմակերպության թուղիկների հեղինակի հաստատապես լրագրող և որպես «Տարբերող» հռչակված լինելու իրողությունն է: Եվ իբր, մեզ հասած թուղիկներից երկրորդը, պատասխանելով նախորդ թուղիկի վերաբերյալ հասարակության շրջանում տարածված վատ շուկաների, վրդովմունքով գրել է. «Եվ դուք (առաջին թուղիկի ընթերցողները—Ս. Ն.) ասում էք, որ այդ ազգի (նախորդ թուղիկի—Ս. Ն.) հեղինակը հարբեղող (հարբած) է և նրա խոսքը՝ գառանցանք

տարբեր զուգորդումներ են հուշում «Գրականության ծաղիկը» կազմակերպության վախճանի վերաբերյալ մեզ հասած հաղորդումների հետ, այն էլ անմիջականորեն աղերսվելով Իսահակ մահվան ու թաղման կապակցությամբ տեղի ունեցած անցուղաբժների հետ:

Զեյնը, պնդելով հանգեքձ, որ «Նաբավոր չէ ճշգրտա մի թվական առաջգրի», բնօճատակյա կազմակերպության «գործունեության դադարումը, արձանագրությունների հրկիզումը և ինքնալուծարքը» տեղադրել է 1882 թ. և 1883 թ. միջև ինչ որ ժամանակ» (276, 68): Ահիք փաստորեն պահպանել է այդ անորոշությունը, գրելով. «Շողովրդական հեռարան լուսնեցող ընկերության գործունեությունը դատապարտված էր տապալման և այն քայրային 1882 կամ 1883 թ.» (119, 120): Կոտլովն, ընդհակառակը, հետևելով Անտոնիտսին, որի կարծիքով կազմակերպությունը 1880 թվականից հետո «շարունակից զույտանելի ճաշորդ երեք կամ շորս տարիներին» (201, 88—89), կազմակերպության գործունեությունը ձգել է «մինչև 1883 կամ 1884» (113, 261): Եթե 1884 թվականը հաստատապես շեշտած լինեք, Կոտլովը երբեք էլ անիրավացի չէր լինի: Եվ ահա՛, թե ինչու:

Մեր արարագեաններն առանց բացառության Իսահակ մահվան թվական են արձանագրել 1885-ը (116, 195 և 555: 103, 7: 119, 59), անկասկած աչքի առաջ ունենալով սովյալ հարցում ընդհանրական սխալը ընդհանուր առմամբ հավաստի այնպիսի աշխատություններին, ինչպիսիք են դի Քարազդիի «Արարական մասնույի պատմությունը», Զեյզանի «Արարակեզու դպրության պատմությունը», Սարգիսի «Արարական տպագրության հանրադիրտարանը» են (169, հտ. 2, 108: 156, հտ. 4, 249: 159, 418: 236, 74): Իրականում ծագումով հայազգի գործիչը մահացել է 1884 թ. հունիսի 12-ին: Դա հաստատվում է առաջին հերթին Բեյրութի Ֆրանսիական շյուպատու Պատրիմոնիոյի 1884 թ. սեպտեմբերի 6 թվականի մի զեկուզացրով և հարակից Ֆրանսերեն պամֆլետով (233, 84): Դա հաստատվում է նաև Իսահակի մահվան կապակցությամբ իր համախոհների լույս ընծայած հակակաթոլիկ արարերին պամֆլետով, որի աղերսաբերվում հրատարակության տարեթիվը 1884 է (տե՛ս Ց1): Իսահակի մերձավորագույն գործակից Ս. Նակկաշի «ալ-Մահրուսա» թերթի 1884 թ. հուլիսի 3-ի համարում տպագրված մահխոսականի անկախության մասին վկայող Ն. Ալլյուր անվանի գրողի հասարակական-քաղաքական հոգվածների ժողովածուի առաջարանում, ամեն և՛ թյուրիմացություն փարատելու նպատակով, հարկ է համարել 1884 տարեթիվը գրել տառերով և ոչ թե թվանշաններով (21, 19):

1909 թ. Բեյրութում հրատարակելով հանգուցյալ եղբորից մնացած Կելիսիերի «ալ-Պուրաթ» («Մարգարտներ») ժողովածուն, կրտսեր Իսահակը՝ Աուսին, իր հարազատի մահվան և հատկապես թաղման ու հաջորդող բաժնեկի իրադարձություններին ակնարկելով, առաջարանում գրել է. «Աղիքի մահվան օրը տեղի ունեցավ խավար դարերին սազական մի դեպք, որը քիչ էր մնում հանդեպից անցանկալի հետևանքների: Թահանան, որից հանգուցյալի ծանոթները խնդրեցին աղոթել դազադի վրա և կատարել իր կրոնական պարտականությունը, մերժեց դազադին հետևել կամ թույլատրել, որ այն հեղեղեցի մտցի, էթի մեր հայրը իր իսկ ձեռով շարի ու շտորագրի մի նամակ, հայտարարելով, որ իր որդին կաթոլիկ էր և կաթոլիկ էլ մահացավ: Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ Աղիքի արհեստակից որոշ լրագրողներ, որոնց վրա նա կենդանության անգույն հարձակումից էր գործել, իր նկատմամբ առևտուր-վաճառ էին լցված: Նրանք շահագործեցին քահանայի ապիստությունը և նրան համոզեցին անել այն, ինչը արեց, որպեսզի իրենց վրիժառության ծաղաղը հազեցնեն անշունչ դիակի վրա: Նրանք ո՛չ հանգուցյալի նկատմամբ հարգանք, ոչ էլ սգավոր ծնողների հանգեալ խղճահարություն չցուցարեցին: Ավելի շուտ դատախազները նրանց մղեց այնպիսի ընթացքի, որը համարյա հանդեպից հանգուցյալի ընկերների և նրա հակառակորդների որոշ տղան կուսակիցների հրաբախումների: Այդ տարուղամ-փոքր հեռանկարով և (հավանաբար) արարերի կանխելու պատրվակով, իրք խուսափելու համար այն բանից, ինչը կարող էր պատահել, որոշ զավանաններ հաջողությամբ թացեցին (Աղիքի) գրական ժառանգությունը՝ զրկածները, ձտերը և հորինումները, ...որոնք նա որոշել էր վերանայել ու հրատարակել» (20, 10—11):

Այս տողերն աչքի առաջ ունեցած բոլոր արարագեաններն ընդգծել են նրանց տարածությունն ու գաղտնախոսական բնույթը, այն, որ Աուսին Իսահակը ոչ թե պատասխաններ է բերել մի շարք անորոշություններին, այլ՝ ավելի շուտ նոր հարցերի տեղի տվել և խճճել իրադրության պատկերը: Առավել զարմանալիս այն է, որ կրտսեր Իսահակը՝ Աուսին (որ ծերությանը դատախազ էր Արզալա) խնդրո առարկա իրազարձությունների ժամանակ լրագրողի անցյալ ունեցող հասուն երիտասարդ էր և ուրմն բառող դար անց նրա շարագրած տողերի ինչ որ տեղ երկրիմատության հասնող զսպությունը, իրերը մինչև վերջ իրենց անուններով կոչելուց ակնհայտ խուսափանք պիտի փորձել բացատրել՝ հին ու հանգած թյանանքները չվերագրողներ, կաթոլիկ միջավայրում հեղինակություն վայելի սկսած իրավարանի իր դիրքերը շտանդուլ ու ցանկու-

թյամբ: Բոլոր զեպրեբում փաստ է, որ նա հասել է իր նպատակին և թե-
կուզ ինչ որ չափով հեռանալով հանդերձ արքար կաթնուխիկների միջավայ-
րից, մեռացել է զավանանան համարյա նույն միջավայրում՝ անդամա-
զրկվելով հայ-կաթնուխիկ համայնքին, որի շրջանակներում հռչակվել է որ-
պես «ազգայն հայ, որ իր պատկանած հայ-կաթնուխիկ համայնքին կա-
րևոր ծառայություններ մատուցեց և իբրևանայան խորհրդարանում
որպես ազգային փոքրամասնությունների երեսփոխան «հայ ժողովրդին
հաճախ օգտակար հանդիսացավ» (93, 182):

Առնի Իսահակ տողերի դաշնամուսուսության վերածանմանը որոշ շա-
փով օգնող բանալին բարեբախտարար մեզ ապխ է «Թարս՝ շիրուչ-
Քաջը» պամֆլետի հեղինակը: Հաղորդելով, որ Իսահակի դազադի շուրջ
կաթնուխի եկեղեցու կազմակերպած բաշշուրփցի գայրացած, «հարված
ստացած մեղզափեթակի նման բզզում» էին ոչ միայն Բեյրութի առաջա-
վոր մտավորականությունն ու ուսանողությունը, այլև «ալ-Թակազոմ»
թերթի հավատարիմ ընթերցող շատ անտարականներ ու արհեստավար-
ներ, նա շարունակել է. «Անցանկալի զեպրեի ատաջն առնելու համար
գործին միջամտեցին բաղարային (օսմանյան—Ն. Ն.) իշխանություննե-
րը, նույնիսկ մահմեդական երեկոյներ, սակայն եկեղեցու ջոշերն ան-
զրբրվելի մնացին»: Ավելին, խանդարելու համար Իսահակի Բաշավան ժո-
ղովրդական ցույցի վերածույժը և ընդհանրապես նրա համախոհների
գալթույթի վերահանումը «փոթորիկ», նրանք զինուցին ահաբեկչության,
զրույց տարածելով, որ «իշխանությունները հաստատուպես որոշել են
խուզարկություն կատարել Ազիրի տանը», որից հետո միայն «կազմա-
կերպ կհաստատվեն կամ կփարստովեն»: «Եվ կր Ազիրի դազադը անից
զուրբ բերեցին և հուղարկավորների բաղմուսությունը ուղղվեց գերբզմանա-
տուն, խուճապի մատնված ընկերները հաղածկալով այրեցին մի թվերը,
որոնք վախի և ահուղոցի պատճառ էին, նաև թղթեր, որոնք ոչ մի պատ-
ճառ չունեին, քանի որ բակում լրտեսների ներկայությունն լատից շտա-
պում էին: Հետո ուրիշներ կհան ծերունի հոր մոտ, նրան ահուղոցի մատ-
նեցին և մնացած թղթերը բրբրելով ապահով տեղ տանելու պատրվակով
աարան որոշ բաներ, ձեռագիր, որոնք վախի պատճառ չէին բնավ: Եվ
կր նրանց այպանեցին, նրանք սասցին, որ ոչինչ չեն տարել և զրանք
զույցն թե այրված են: Իսկ լավատեղյակները, ովքեր իրականությունը
գիտեն, վկայություն չեն տալիս» (30, 12—13):

Պամֆլետի հեղինակը պարզորոշ վկայել է նաև՝ մատուցություն
տեղիք տվող որոշակի մի թղթմարաբի ու զրա հետ նաև բացարձակապես
անմեղ ձեռագրերի Իսահակի համախոհների կողմից ոչնչացման մասին,

այսպես նաև՝ որոշ «ընկերներին» կողմից մի շարք ձեռագրերի յուրացման
(զույցն թե իշխանություններին հանձնելու համար տարվելու) մասին:
Տվյալ զեպրում, անշուշտ, մեզ համար առավել հետաքրքրականը այր-
ված թղթապանակն է, որը զույցն թե չենց ընդհատակային կազմակեր-
պությունն ոչնչացված թղթապանակն է:

Բոլոր զեպրեում վարկածելով, որ «Ջահրաթ ալ-ազաբը» պաշ-
տանապես արտոնված այն կազմակերպությունն էր, որի առավել արմա-
տակուն անդամների ընդհատակային հակասունայան գործունեության
գրեկորումն է եղել այն, ինչը արարագիտությունը հայտնի է որպես «Բեյ-
րութի (հեղափոխական) գաղտնի ընկերություն», ավելացնենք, որ նրանի
վկայությունը ընդհատակայինները «իրենց նպատակին հասնելու ուղի-
ներն ու միջոցները քննարկող» գաղտնի հավաքներից բացի, «իրենց բա-
զարական գաղափարներ տարածում էին անձնական ուղիներով» և ի
վերջո առավել արդյունավետ միջոցը համարեցին «հրապարակել իրենց
կոչը» (201, 79; 276, 57), հիմնականում Բեյրութում, նաև Գամաղտում,
Տրիպոլիում և Մալազում գինըրով պատերին կայցնելով թուացիկներ:
Այնքան, որքան մեզ հասած նրեք թուացիկներն առ այսօր ամբողջական
թույլ են տեսել միայն արարերեն և սովետական թե արևմտյան արարա-
գեաների աշխատություններում մեջբերված բազմաձևները ավելի հաճախ
ծառայեցվել են խնդրի առարկա հեղինակների միջյանց զեմբնթաց տե-
սակետներն ամբապնդելու, այսպես նախածիչա ենք գտնում այստեղ տալ
զրանց առաջին ամբողջական թարգմանությունը:

Առաջին թուացիկն այսպիսին է.

«Սիրիայի որդիներ,

Յուրերի ուղղումն (խուճ) անհնարին է: Վերջին քսան տարինե-
րին ի՛նչ էր նրանց խանգարում ուղղվել: Նրանք բազմիցս իրենց հպա-
տակներին (ոսալ) պատվո երդումով խոստացան սարքեր բարենորո-
գություններ անցկացնելու: Էլ ի՛նչ կարելի է ակնկալել նրանցից:

Փճացածության և ագիտության մեջ խրված լինելով հանդերձ, եր-
կու միլիոնանոց Յուրերը շարունակում են առ այսօր տիրել սասնու
երեսունհինգ միլիոն արարածներին: Մի՛թե մեր իմաստունների և հայ-
կանների որդիների մեջ չկան մարդիկ, ովքեր, ունենալով մեր խանդա-
վառության հորից, կարողանան ստանձնել մեր զատը, պահպանել մեր
պատիվը և վերածնել մեր հայրենիքը: Մենք (սիրիացիներս—Ն. Ն.) թե-
պետ երկու միլիոն ենք, սակայն նույն հայրենիքի զավակներն ենք: Ձեք
մեծ խելքը... (բնադիրը վնասված է) ...արդեակում է իրականացնել

այն Իսկ մենք հանուն հայրենիքի զոհարենքն ենք մեր հարստութունն ու անձերը, որոնք այլևս չեն պատկանում մեզ, այլ՝ հայրենիքին: (Քուրքեր), երզվում ենք ամենագոր աստծով, որ կցնցենք ձեր անզորը: Քեկուզ և ցմբուր բմպենք մահվան բաժակը: Ով կպարի՝ կանսի:

Վե՛հ նպատակները թրով են նվաճվում, արեմն և որոնիր թուրը, եթե ցանկանում ես նպատակիդ հասնել: (172, 287):

Ստորագրութեան փոխարեն կորմիր թանաքով նկարված թրի մի պատկեր կրող այս թուռցիկը Բելյուսում հայտնվել է 1880 թ. հունիսի 28-ի առավոտյան կամ նախօրյակին: Ավելի ուշ, համենայն զեպս հուլիսի 3-ից առաջ հայտնվել է նաև երկրորդ թուռցիկը, որի բովանդակությունն այսպիսին է.

«Ազգ.

Ո՛վ Սիրիայի որդիներ,

Բարենորոգիչ Մովսեսը եզիպտացիներից զիվահար հայտարարվեց: Բարենորոգիչ Մովսեսներ սպանվեց հուշներ կողմից: Բարենորոգիչ Հիսուսը հրեաներից աստանայակերպ հորբողվեց: Բարենորոգիչ Մոհամմեդը նախահալածական արարների կողմից գիծ հուշակվեց: Եվ դուք ասում էք, որ այդ (նախորդ—Ե. Ն.) ազգի հեղինակը հարբեցող է և նրա խոսքը՝ զառանցանք: Եթե հարբեցողը հոգևտար է ձեր գործերի նկատմամբ, ապա նա ավելի ազնիվ է, քան՝ ձեր տերը, որին չի հետաքրքրում ձեր գործը և օրենքի պահպանումը: Երանի թե բուրդը էլ հարբեցող լինեիր: Մենք ողջ գիշերն անց ենք կացնում մարերի անիվը պտտեցնելով և ողջ ցերեկն անց ենք կացնում բացահայտելով իրազարծություններն ու նորությունները: (Եվ ասում ենք ձեզ)։ Եթե մենք հոգով մեռած չլինեիրք, ապա ստոր թուրքերի հլու ու հնազանդ ստրուկները չէինք լինի: Եվ եթե մեր պատակավորությունը շիխներ, ապա ֆրանկները (արևմտա-եվրոպացիներ—Ե. Ն.) համար չէինք լինի պարզապես բար ու երկաթ (հունքի արքայուր—Ե. Ն.): Որտե՞ղ է ձեր արարական արժանապատվությունը, որտե՞ղ է ձեր սիրիական բոցարշուները: Մթափիր, ո՛վ ժողովուրդ, քանի ղեռ ու չէ: Մի հուսալքվեք ձեր աստծու ողորմածությունից: Չի կարելի երբևէ բողածածակել լուսինը: Ով կպարի՝ կանսի: Վե՛հ նպատակները թրով են նվաճվում, արեմն և որոնիր թուրը, եթե ցանկանում ես նպատակիդ հասնել: (172, 288):

Նույն թվականի դեկտեմբերի 31-ին կամ նախօրյակին տարածված երրորդ թուռցիկի բովանդակությունը հետևյալն է.

«Վա՛յ.

Ո՛վ հայրենիքի ժողովուրդ,

Դուք տեղյակ էք թուրքերի անառակություններին ու զուլումին, այն բանին, որ նրանցից մի բուռ մարդիկ բռնել են ձեր կոկորդից և ստրկացնում են ձեզ: Նրանք ոչնչացրել են ձեր շարիաթը, անարգել են ձեր սուրբ գիրքը: Նրանք հրապարակեցին օրենքներ (նիզամաթ), որն անկասկած ակնարկում է Քանդիմաթին—Ե. Ն.), որոնք նախատեսում են ձեր արքայան լեզվի ոչնչացումը: Նրանք փակել են հաշտություն գտնելու և ստրուկ դարձնել ձեզ, կարծես դուք մարդկային ոչ մի հատկանիշ չունենաք: Անցյալում դուք եղել էք տեր ու տիրակալ, ձեր շարքերից դուրս են կկել գիտությունը և իմաստությունը պնձված մարդիկ, ձեզանով է երկիրը շեղացել և է ձեզանով են ձեռք բերվել նվաճումները: Ձեր լեզվի հիմքի վրա կատարվեցին խալիֆայության անկումաբարերը, խալիֆայություն, որը թուրքերը խլեցին ձեզանից: Տեսեք, թե ինչպե՞ս տաղանապալի պահե՛ն ձեր այրեղը բշվում են ռազմապաշտ և ենթարկվում բնաջնջման, թե ինչպե՞ս են վարվում նրանց հետ: Տեսեք, թե ինչպե՞ս են նրանք (թուրքերը—Ե. Ն.) խժուռ ձեր վակուՆները:

Ներկայումս, երկրի տարբեր վայրերի մեր եղբայրների հետ խորհրդակցելուց հետո, հանգեցինք մի որոշման, որը խնդիր է դնում, քանի ղեռ թրին չենք դիմել, պահանջել հետևյալները, որոնց լրավարարվելու զեպարտը դիմելու ենք զեկեր:

Մենք թրով կառաջադրենք մեր պահանջները և ոչ մի բան արգելք չի լինի մեզ հասնել մեր նպատակին,

Այդ զեպարտը թուրք դահլեններին, ի հատուցումն իրենց արարքների, կմատենենք ողբի ու կականի:

Այն խնդիրները, որ մեր խորհուրդը պահանջում է իրականացնել, հետևյալներն են.

1. Անկախություն, որին մենք մասնակից դառնանք իբրևանցի մեր եղբայրների հետ և որում ապահովվեն ազգային շահերը:

2. Արարներն լեզուն երկուստ պետք է զառնա պաշտանական լեզու: Մեր որդիներին պետք է լիակատար աղատություն տրվի տարածելու իրենց մտքերը, ստեղծագործությունները և պարբերականները, համաձայն քաղաքակրթության, առաջադիմության և մարդկայնության պահանջմունքների:

3. Մեր դիմորենր պետ է սահմանափակվեն (սիրիական—Շ. Ն.) հայրենիքի ծառայությամբ և ձերբազատվեն թուրք ղեկավարների սարք-հույժունից:

գործունեությունը պատմագրության էջերում կրբեր են բորբոքում, ար-
ժանատում լորձնաշուրթի փառաբանությունից մինչև հայհոյալից դատա-
փետում ոտստոտող հակառակական գնահատականներ: Մեր խնդրի մեջ
չեն մտնում, անշուշտ, հարցի ո՛չ պատմության շարադրանքը, ոչ էլ
պարզաբանումը: Եվ սակայն իրավունք էլ չունենք բավարարվել այն
խրոզության հաստատմամբ, որ Բամախիլն ժամանակաշրջանն ընդհանուր
սովամբ եղիպտոսի տնտեսական և մանավանդ մտավոր-մշակութային
առաջընթացի կարևոր հանգրվաններից մեկն եղավ: Ուրեմն և պարտա-
վոր ենք միաժամանակ արձանագրել, որ եղիպտոսը 1875 թ. փաստա-
րին ստանկացած էր ու ֆինանսապես սարկացված և որ 1876—1879 թթ.,
Բամախիլի իշխանության վերջին տարիներին, ապրեց ներքաշաքալան
այնքան խոր ցնցումներ, որ ուղի հարթվեց երկրի գաղութականացման
համար:

Եթև հաստատենք, որ Բամախիլի մարդկային թերություններից թե
դասակարգային էությունից բխող քաղաքական ու տնտեսական մի շարք
սխալներ (փաստաբրկական նկրտումներով թե ի հաճույս սուլթանի ար-
տաքին անխնաստ զինարարվելի մեջ միջովելը, օտարերկրյա ֆինան-
սամտնեսական ներթափանցման առաջ լայն դռներ բացող արտաքին
անհակազդեռ առևտուրը քաջալերելը, գիտաեխնիկական գիտելիքնե-
րի կիրառման և առևտրաֆինանսական հիմնարկների ղեկավարման մե-
նաշնորհ՝ օտարներին վտասելը են) իրենց անկասկածելի դերն ունե-
ցան երկիրն ի վերջո անելանելի տագնապի մատնելու գործում, ապա
պետք է պատասխանատվության բաժին հանենք նաև Աբրահամ 2-իմի ու
Մ. Սախի փաշաներին, որոնցից էր սկիզբ առնում ֆինանսական ճնշա-
մամբ, շտառնալով եկվոր-մա՛մնեղական պալատական-աղնվականե-
րին ու աստիճանավորներին, որոնք Տնչող մեծամասնությամբ եղիպտո-

սին կապված էին որպես ընչաբազց գանձագող մակարություններ միայն,
նաև իրարահաջորդ երեք փաշաների տարբեր ազդի բրիտանյա խոր-
հրդականներին ու գործակիցներին, որոնց շրջանում ձևահասներն ու
աղնվորեն նվիրակները հազվագեղ բացառություններ մնացին:

Դա աչգպես լինելով հանդերձ, չենք կարող համաձայնել Լուցիկ
այն գնահատականի հետ, որ Բամախիլի բոլոր գործակիցներն առանց
խտրության՝ «նուպարը, Ռիազը, Շերիֆը և Սուլթանը երկրի խոշորա-
պույն ռեակցիոն գործիչներն էին» (120, 194): Կուլիենն, օրինակ, որ
բրիտանական դիվանագիտությանը քիչ աճաճություններ ըլստճաճառ
Շերիֆի փաշային ատելու հիմնավոր պատճառներ ունենալով նրա հաս-
ցերին խիստ արճամարհալիք «նա թուրք էր» պերճախոս բնութագրեր է
ավել, հարկադրվել է խոստովանել, որ նա «տիպարն էր այն ամբողջ
ավիլի, որ օսմանցու մեջ կարող էր լինել» և որ նա «երկրի (եղիպտոսի) —
ն. ն.) իսկական բարեկամն էր և իր տիրոջ (Բամախիլի — Ն. ն.) հավա-
քըրում նուպար փաշան, որին միայն Լուցիկն չէ, որ հույսկել է «Բս-
մախիլի նման ռեակցիոներ» (123, 475): Ն. Եվանովը, օրինակ, «խոշոր
պալատական» և «լեանտական կոմպարադրական բուրժուազիայի շա-
հերի արտահայտիչ» հայ գործչի մասին գրել է, «Համարվում էր Անգ-
լիայի համբավված կողմնակիցը՝ հանդես գալով եղիպտոսի վրա անհա-
պաղ բրիտանական պրոտեկտորատ հաստատելու օգտին նրա մասին
ասում էին, որ ավելի բրիտանացի է, քան՝ անգլիացիներն իրենք» (107,
192—193):

Նմանօրինակ պնդումները բացարձակապես հիմնադրով են:
Իր տեղում շեշտեցիք, որ Մ. Ալիի նախաձեռնություններին թիկունք
կանգնող հայ գործիչներն անխոսափելիորեն պիտի բախվեին բրիտա-
նական ճավախություններին և որ 1844—1850 թթ. Եվրոպական գոր-
ծերի և եղիպտական վաճառականությունից զիմարի նազիրի պաշտոնը
վաքած Հ. Զրաքյանը ներկայացվում էր մինչև իսկ օրպես անգլիատույց:
Իսկ զա պատահական չէր, բնավ: Զրաքյանը սեղումներ էր ենթարկել
բրիտանական կապիտալին ընձեռված մի շարք առանձնաշնորհներ և
ուղղակի սանձահարել էր անգլիական չլուպատոսարանի թե ընկերու-
թարանդիտային թե մյուս եղիպտական պաշտոնատեներից ինքնազուլս
գործելու հավակնությունները: Լեոզոնի պետական-պաշտոնական շըր-
ջաններն էլ Զրաքյանին «աբմանին» էին հատուցում, նրան հայտարարե-
լով «Անգլիայի պատիվը» ոտնակրիող: Ինչ վերաբերում է բուն իսկ

Նուպար փաշային, ապա 1866—1874 և 1875—1876 թթ. վարելով արտաքին գործերի մինիստրի, իսկ 1878—1879 թթ.՝ միաժամանակ վարչապետի պաշտոնները, նա առամենքով պաշտպանում էր եզիպտոսի շահերը Պատմարան Սարքիի վկայությամբ, նա արևմտակերտական մայրաքաղաքների ներկայացուցիչներին «ռոշին» չէր զերում իր էլիանոսությունների ու նրանց պահում էր իր Տանճարեզ ղեկավարության ներքո» (208, 46), իսկ Ա. Շաֆիրի վկայությամբ՝ հատուկ խոստովյուն էր ցուցաբերում անգլիական աստիճանավորների նկատմամբ և «քննվողում էր, երբ նրանք փորձում էին սահման անցնել» (208, 155)։ Մի ամբողջ տասնամյակ (1867—1876) համառ ու անզիջում պայքար մղելով էլ, որ նա դուրս չաննեց իր դատական բարենորոգչությունները, պարտադրեց իր քրեական, բաղաբացիական և առևտրական օրենսդրությունը, չյուպատուական սանձաբժակ դատարանները փոխարինեց եզիպտացիների համար անճամեմատ ավելի նպատակավոր միջազգային (կամ խառը) դատարաններով։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում միանգամընդմիջտ ընդգծել հատկապես, որ Նուպար փաշան ու նրա տիպի մյուս հայ գործիչները պարզապես պատկանում էին հայրենի հողից կտրված այն հայերի թվին, որոնք իրենց երկրորդ հայրենիքը գործածեց ճշիպտոսին ու նրա կառավարող տոհմին ծառայեցին հավատարմորեն և նվիրումով, նաև պտղեղնորեն, այն աստիճանի, որ նույնիպի ընդհուպ մինչև դարավերջ նրանց շարքերից մատուցելի վրա հաջվողները միայն բարձրացան մինչև քիչ թե շատ խոշոր կալվածատիրոջ, ավելի շուտ ունեորության միջին աստիճանին (171, 330—332)։ Նրանք լծված էին իրենց որդեգրած երկրի առաջադիմության և բարգավաճման ու իրենց վստահող տոհմի հզորացման ու ամրապնդման գործին, տագնապակի ժամանակաշրջաններում էլ մնալով պաշտոնի գլխին ու պարզապես ջանալով բարիքն ատավելազույնի և շարքը նվազագույնի հասցնել, եվ մեր կարծիքով հայ գործիչների ինչպես դրական, այնպես էլ բացասական գծերի «սուկն միջինը» լավ է ձևակերպել Նուպար փաշային մտախից ճանաչած Ֆրանսիացի զբ Հենտոն, որ նրան «մեծ մինիստր» անվանելուց հետո այսպես է բնութագրել. «Ֆրանսիայում դատարարակված, բացի Ֆրանսերենից բայ տիրապետելով թուրքերենին, անգլերենին, իտալերենին, հունարենին, պարսկերենին և դասական հայերենին, Նուպար փաշան արդեն խիստ արիք զարնող մտավորական էր, երբ հորեբորբ՝ Պողոս քնյի հովանու ներքո 1848 թ. նշանակվեց Իրախիմ փաշայի բարտուղար։ Այդ ժամանակից նա մշտապես կառավարության կազմում մնաց և շուշաբավ մինչև 1879 թ. միմ-

յանց հաջորդող խոյվների համար դանալ անհրաժեշտ ու մտերիմ խորճ ճրրղակները Հատկապես Իսմայիլը նրանից շատ օգտվեց և նրան հարցարտական իր բարեբաաստիկ բարենորոգչությունների մեծամասնությունը... Մագումով հայ, համակրություններով Ֆրանսիացի, իր բաղաբանի հան ապարեզի վերջում հարկադրաբար անգլիացի, Նուպարը 261)։ Բունից վեր ու ամեն բանից առաջ եզիպտացի եղավ» (222, 260—261)։ Իսկ անգլիացի Միլներն, իր հերթին, հակադրաբար խնդրելով, գրել է. «Նուպարը մեծ առաջնորդ, մտքի բարձր կուլտուրալով, նրա լիբերալ հակունկնքով, փայլուն խոսքով, զազափարների աստատությամբ, իր հայրենիքին (եզիպտոսին—Ե. Ն.) բարիք գործելու անկեղծ ցանկությամբ» (222, 261)։

Համենայն զիպս եզիպտոսի զազովականացման հարցում խոյվների, Հատկապես Իսմայիլի, նաև Նուպարի տիպի նրա գործակիցների պատասխանատվության բաժինը տեսնել՝ ոչ մի զիպտոս կետք է նշանակի նրանց մեղապակից-շահակից ներկայացնել Ֆրանսիական, անգլիական և մյուս Ֆինանսատնտեսական կենտրոնների լեսպոսի տիպի կոփված ավազակներին, որոնց համար առանձին զովարություն չէր ներկայացվում շարաշահել բարեմիտ արևելացի խոյվի վստահությունը, նաև անձնական-փառասիրական թե հայրենասիրական նկրտումները՝ նրան իրենց մեղապայթյուններին հեղձուցիչ ճահճի մեջ ներգրչելու համար (137, 6)։

Այդ տեսակետից էլ մենք լիովին բաժանում ենք Իսմայիլին «անխիճատ շահյություններ» վերաբարող կրիմեական հակազորով Գուղորդին այն հաստատումը, որ խոյվի ծախսերի ճնշող մեծամասնությունն օգտագործվեց Մուսլիք բրանցքի բացման, երկաթուղիների, ճանապարհների և կամուրջների կառուցման, ոռոգման ցանցի ընդայնման ու բարեկարգման, շարքերի և այլ գործարանների հիմնադրման, նավահանգիստների արդիականացման, հեռագրագծերի հաստատման, զիստվոր բանակների կոնունալ տեսնություն և այլ ձևանարկումների իրականացման, նաև ժողովրդական կրթության զարգացման, առողջապահության զրավածքի բարելավման, զիտական և մշակութային հաստատությունների կազմակերպման, այդ թվում թանգարանների, կահիրեի օպերայի և թատրոնի ստեղծման, հրատարակական գործի ընդարձակման համար։ Հատկապես էլ, որ այդ բոլոր ծախսումների համեմատությամբ երկրորդ զմի վրա են ընկնելու եզիպտական բանակի նվաճողական արշավանքները, Բ. Գունից ինքնուրույնություն ձեռք բերելու համար սուլթանական աստիճանավորներին կաշտուելու և նմանարնույթ այլ նպատակներով

կատարված մեխանիզմները, առավել ևս պաշտօններ կառուցելու ու հարգարելու, տոնխախտութիւններ կազմակերպելու և այլ միջոցառումների համար բաց թողնված գումարները (116, 188, 386, 3)»

Այդ զեպարում ինչպե՞ս պատահեց, որ ավելի ու ավելի իմպերիալիստականացող կապիտալիզմին հաջողվեց ներկայումս ֆինանսատոտեսական փուլուման և դիտարկի ստրկացման ամբողջ ընթացքի պատկերը նենցափոխել Հենց մասնակալից-մասնակիների աշխի առաջ (116, 188) և շարքի մղողը կենտրոնացնել որպէս այսրիտո, հետամնաց ու անգրագետ, փողպաշտ ու փառասեր արևելյան փաշա ներկայացված Իսմայիլի անձի ու գործի վրա (120, 146), բոտ որում իր նենց գործը զուրի բերել ոչ միայն պրոպագանդայի արեմտյան-բուրժուական միջոցների օգնութլամբ, այլ և երկրպատկան հասարակական կարծիքի վրա ներգործութլուն ունեցող առջ մտավորականութլուն մասնակցութլամբ: Եթէ, ինչպէս գրել է Լուցիկին, «Իմպերիալիզմի շատագոյնների գրավմանը ու տարածվեց այն վարկածը, որ միլիոնները մեխանիզմի փողբ բամուն տվող Իսմայիլի բմահանուչքի, նրա պալատների, հարեմների, ցուցամու-նչան պերճանքի վրա», ապա ինչպե՞ս պատահեց, որ օտար-նենգամիտ դրչակների հետ միասին արար լրագորդների շրջանում ևս տարածուն դտավ այն պնդումը, որ «Իսմայիլը գործարաններին, երկաթուղիներին, կամուրջներին, նավահանգիստներին, հեռագրական գծերին, շրմեցքների կառուցման ձեռնարկից» առանց երկրի իրական և կամուտուները հաշիլի առնելու», այն էլ այն զեպարում, երբ մասնակալից-սականասաները լավ գիտէին, որ երկրի «բարտաբին պարտքերի ճնշող մասը հետևանք էր լեանպանների, օպեանհայեանների, ֆրուլիցիաների ու մլուաների հանցագործ խարդախութլունների» (120, 167):

Ոչ թէ Իսմայիլին արդար հատուցելու, այլ ավելի շուտ երկրպատկան ազգային-մշակութլային գարնոնքի ուրվանկարն ամբողջական դարձնելու նպատակով է, որ հարցի պատասխանը որոնելու կապակցութլամբ փորձելու ենք նեղուսի հովատուն հասարակական կարծիքի վրա ներգործութլան ուժ ունեցող հասանքների դիմադրին ու նրանց շրջանում ուժերի հարաբերակցութլունը բացահայտել:

Առաջին մի հոսանք, որի վրա հարկ է սեռուուն ուշադրութլուն դարձնել, Մ. Ալիի տունի երկրպատկանամբ առաջացած ներկերպատկան ազնրկանական ընդդիմադրութլունն էր, որ իր ներշնչանքն ու ուղղութլունը ստանում էր արաերկրից և բոտ էութլան երկրպատկան խնդիրներն ընկալում էր որպէս օսմանյան իրականութլան անիզելին բարդագրամաս: Ավելին, ուղղակի խղիվական տունին պատկանող այդ մար-

դիկ, նաև Մ. Ալիի հետնորդների հետ ծագամբ, շահակցութլամբ, խնամիութլամբ թէ հացկատակութլամբ կապված մլուս տունների ներկայացուցիչները, որոնք հանդես գալով որպէս երկրպատկան, կարող էին թլուրիմացութլամբ ընկալվել որպէս արար, իրականում իրենք իրենց զնո ոչ թէ հասարակ օսմանցի, այլ թլուր էէն զավանում: Դրա վառ ապացույցը Մուսթաֆա Տաղի փաշան էր:

Դեռևս 1860-ական թթ. երկրորդ կեսից նա դարձել էր երկրպատկան վերնախավային-աղնակական ընդդիմադրական շրջանակի զորչակակիրը, բանի որ թէպէտ Իսմայիլի կրտսեր եղբայրն էր, սակայն իշխանութլան ժառանգման վերաբերյալ 1866 թ. սուլթանական հրովարտակով զրկվել էր զահաժառանգման իր իրավունքից: Իշխանութլան ժառանգման հարցում տունում ավագի՝ թլուրբերի կողմից նվիրագործված իրավունք խախտել և եկրոպական միակատնութլունների օրինակով ամբողջ ու թէ տունի, այլ ընտանիքի նկրտում պահել ու հորիք ավագ արդուն փոխանցել թլուրարող այդ ֆերմաներ Իսմայիլ փաշայի սրտում էր, անշուշտ: Սակայն իրականում դա Արդու Ազիզի խորամանկ մի քայլն էր լու: Սուլթանը ցանկանում էր, որ եղբոր՝ Մուրադի փոխարեն իր զահաժառանգը լինի Իզլեզդիկի որդին: Քաշ իմանալով, որ թլուր պահանջողականներին շրջանում նման քայլը անպայման խոր հուլամունք առաջ կրերի, նա մտքերը նախապատրաստելու նպատակով որոշեց կարգափոխումն սկզբում փորձարկել Կահիրեի արքունիքում (49, 59), փորձարկում, որը խորացրեց երկրպատկան կառավարող տունի ներքին երկպառակութլունները և նրա մի թլուր անշուշտ սնոր օսմաններին շարժման հետ:

Երկրպատկան և Սիրիայում ընդարձակ կալվածքներին, նաև երկրպատկան շարքի մի բանի գործարաններին տեր, Տաղի փաշան մերվել էր օսմանական վերնախավին, վարել սուլթանական կառավարութլան լուսավորութլան և ֆինանսների մինիստրի պաշտոնը, եղել թ. Դոսն ֆինանսական գերադույն խորհրդի մեծագոյնից անդամներից մեկը (184, 28—29): Ինչպէս ընդգծել է օսմանագետ Մաֆրաստյանը, նրա՝ նոր օսմաններինի հետ համեմատած ավելի աշխարհականացած «Տալրենասիրական» կոնցեպցիան «հիմնված էր ոչ թէ կրոնական, այլ՝ ազգայնական զգացմունքների վրա»: Ըստ որում նրա կալկետը—ինչպէս ինքն էր նշում,—«թլուրբական ցեղին ներհատուկ վեհասարանը զգացմունքներն էին» (129, 87): Եվ ահա գժգժ՝ խղիվական պաշտոնի հարցում իրեն իրավարկող սուլթանական նորամուսլունից (124, 58—59; 105, 80, 386, 5), օսմանյան վերնախավից մասնակալորպայե

առաջխաղացրը հարկ էր ամեն զեռով կանխարգելել: Վերջին հաշվով օտարերկրյա կապիտալի գրոհի հետ ու նրանից ավելի ոչ թուրք ժողովուրդներին, այդ թվում և արաբների ազատագրական շարժումների, նաև որոշակիորեն Մ. Ալիի հարվածների ներքո ստանում Օսմանյան կայսրությունը փուլովան վասնզից զերծելու ամեն մի փորձ իր մեջ թաքցնում էր երբևմնի հզորության վերականգնման անկասկածելի միտում: Եղանակում է, որ կայսրության պետական վարչակառավարումը հիմնքերը պահպանելու և ռազմականորեն անպայման ամրապնդելու հառնադր հետևանքում հաստատուպես ենթարքում էր կորուստների վերջապահ ևնորոգումներ, 1830-ական թթ. հետաձգված հաշիվների մաքրման մտադրություն, որի գործնականացման ջրապտույտի մեջ եզրպատական փոխաբացալությունն անշուշտ որ առաջիններից մեկն էր ընկնելու:

Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ նաև խզիվ Իսմայիլի և Ֆազլի փաշայի մրցապայքարում 1869 թ. ամռանը «նոր օսմանների» առաջատար զեմերի, առաջին հերթին Քեմալի և Ջիալի երկփեղգման, որը չի վերպել Փխյայակովի ուշադրությունից: Վերջինս շեշտել է, որ Քեմալի և Ջիալի օտարակաթմության պատճառներից մեկը խզիվ Իսմայիլի անձի և բարենորոգչությունների ցնահատականն էր: Քեմալը խզիվին մեղադրում էր ինքնակալ դառնալու և Եզիպտոսը Օսմանյան կայսրությունից խզել ցանկանալու մտադրության մեջ: Նա 1866 թ. ընդդված Երեկոյնների ժողովը ներկայացնում էր որպես օսմանազրկանություն խաղալու մի փորձ, իսկ խզիվին՝ որպես ճնշված և իրավազոր կեցիպական ժողովրդից թլուսնված հարկերի հաշիվն օտարերկրացիներին հետ անամոթ խնչույրների կազմակերպիչ (105, 138): Ջիան, ընդհանրապես, Իսմայիլի նկատմամբ բարյացակամորեն էր տրամադրված և կողմանք էր խզիվի ինքնուրույնությունը սահմանափակել շանցող մեծ վեզիր Ալի փաշայի մեքենայությունները մերկացնելուն (249, 52): Ուրիշ հարց, թե Ջիալի կեցվածքն արդյո՞ք պայմանավորված էր ստակայն գործմանալի իրողությամբ, որ Ֆազլի փաշայ բարեխարյալ նորօսմանական թերթը նպաստ էր ստանում նաև Իսմայիլից, ինչպես Մարաթին վրա հենվելով ենթադրել է Փխյայակովը (105, 138): Բոլոր դեպքերում փաստ է, որ այդ շտի վրա «նոր օսմանների» ջրանուն պահպանում առաջացավ և Քեմալը խմբադրությունից հրամարված, մանավանդ որ սուլթանական իշխանությունների հետ հաշված Ֆազլի փաշան 1869 թ. օգոստոսի սկզբներին դադարեցրել էր իր նյութական

օժանդակությունը: Ջիան էլ, ապավինելով խզիվի առատաձեռնությամբ, «Նուրբիթը» սեպտեմբերի կեսերին վերածում էր եզիպտական իշխանապետի օսմանարան ամենաշեքեմունակ ջատագովի (105, 139):

Ի միջի ալլոց, խնորր ստարկա ժամանակաշրջանում Յըլլըզլի պատարի շուրջ հածում էին նաև «արաբ» այլ գործիչներ, որոնք գտնն բարենորոգչական Օսմանականության շանում էին կայսրության դրությունը վանազրկեթել, բարեկալի և ամրապնդել: Այզպիսի մի գործիչ էր նաև Նալը ալ-Գին փաշա ալ-Քունուսին (1810—1890):

Նալը ալ-Գինին ստպարեզ ժողո պզղակները հասկանալու համար կարևոր է հիշել, որ նա, Քունուրը 1837—1855 թթ. կառավարած Ահմեդ բեյի շեքեզ սարուկը, ստացել էր հիմնադրու ուսում, սովորել էր թուրքերեն, արաբերեն և ֆրանսերեն, բաղաբական և գինվորական իր գիտելիքները կատարելագործել Ֆրանսիայում (156, հտ. 4, 262—263): Գեպի Եվրոպա գիվանագիտական երկարատև առաքելությունից վերադարձին նա հեղինակել և շրատարակել էր «Երկրների իրավիճակին ժամանակակից կարուկ ճանապարհը» գիտատեսչողական աշխատությունը: Ավելի կարևոր է, անշուշտ, հիշել, որ նա ոչ միայն զիտոր, այլև միևնույնի պաշտոնով մասնակից էր եղել իր տիրոջ և նրա հաջորդներ բարենորոգչություններին, որոնք ճաննայն զեպս ոչ միայն շեյն կարողացել խոշնգրոտել թուևուսի Ֆինանսատեստական սարկացումը, այլև, ընդհակառակը, այն փութացրել էին: 1867 թ. թլանկայն փոխաբայությունը, Օսմանյան կայսրությունից և Եզիպտոսից առաջ, սնակել էր հայտարարված (իսկ 1881 թ. դառնալու էր պրոտակտորատ):

«Նաալորայլ բոնակալ» Ահմեդ բեյը, նապոլեոնի երկրպագու, շուրջ բառորդ դարի հեռավորությունից և առանց օրջկտիվ հիմքերի կրկնօրինակել էր Մ. Ալիի ռազմամեծ ժլուսավորականությունը», վերաբացրել էր սարկությունը, կառուցել պալատներ, գրուանցներ ու ամբարաններ, հիմնադրել ռազմական ուսումնարան, եվրոպական կրկերներից գեև ռազմանապիր ու հրանոթներ, հրավիրել մեծաթիվ հրահրազաններ իր 1839 և 1856 թթ. սուլթանական հաթթերը կրկնօրինակող «Մեզ ալ-աման» («Հիմնական դաշիք») և ստեղծել խորհրդակցական խորհուրդ: Մոհամեդ ալ-Մաղոկ բեյը (1859—1882), իր հերթին, հուշակել էր սահմանադրություն, կարգել խորհրդակցական գերագույն խորհուրդ, ձեռնարկել երկաթուղիներ, նավահանգիստների, կապի միջոցների նև ստեղծման (120, 162—163):

Խայր ալ-Գին փաշան, ահա, որ կցանկանար ոչ միայն Օսմանյան կայսրությունը զերծել իր երբեմնի բաղադրամաս Քուլուտի նախատա-գրից, այլև նրա վերահզորացմամբ բոլոր բաղադրամասերը, Քուլուտի հետ նաև Սեփյուսսը սուլթանի շուրջ համախմբված տեսնել և այդ ոգուց հրդաված էլ հարել էր «նոր օսմաններին» շարժման, բնյի սնանկացումից մի տարի անց՝ 1868 թ., Փարիզում ֆրանսերեն հրատարակում էր բա-վակահին ազմկահարույց իր բրոշյուրը՝ «Մամեղական պետություննե-րին անհրաժեշտ բարենորոգությունները» խորագրով (տե՛ս 65)։ Որի հիմնական մտքոր սամանարական բարենորոգություններն էին նախա-կառվածը լինելով, գլխավոր առաջադրանքն էլ դառնալու էր «նեֆորմ-ները»՝ Խլամի գրգռաներին դեմընթաց շինելը հիմնավորելը (249-389—395)։

Պետք չէ կասկածել, որ ինչպես Փաշիլ, այնպես էլ Խայր ալ-Գին փաշան ու նրանց հոգեզարյաները բավական լայն ունեւնդություն ունեին բողոհանքային օսմանյան, մասնավորաբար արաբ-մահմեդա-կան, այդ թվում առաջին հերթին եգիպտական հասարակության վերին ուղղանկում, ինչպես ֆեոդալ-ազնվականություն, այնպես էլ ալիմներին շրջանում։ Նրանց բարենորոգչականությունը շարժված Օսմանականու-թյունը, որն ըստ ինչյան արարական, որնեմն և եգիպտական ազգային զարթոնքի հերթումն իսկ էր, հասարակական ու մշակութային տարբեր նախադրյալների ու խթանների զրգմամբ սպանում էր վերնախավից իջնելի զնայի նորահայտ մտավորականների միջավայրը և այնտեղից էլ սփռվելի զնայի ազգաբնակչության լայն շրջաններ։ Սփռումն ճանապարհ-ներից մեկը, զուցն թև գլխավորը, Օսմանականությունը բարձրագ զար-բայելու մամուլն էր, անշուշտ, որի վրա, սակայն, սուլթանի խոսնակ-ները չէին կարող հուարանալ իրենց հաջողությունների պատկանելու-թյամբ։ Այդ տեսակետից բնութագրական է 1878 թ. Պոլիս հրավիրվե-լով Արդուլ Համիդի կողմից մեծ վեղոր նշանակված Խայր ալ-Գինի ծա-խորդ փորձը՝ Զիրրայի (1836—1892 կամ 1899) հրատարակութասական առաջնեղ օգտագործելու հարցում։

Գալլայը, հալեպցի մեծահարուստ առևտրական Արզալլայի թոռը և զրոյ ու փիլիսոփա, մտավորականները հովանավոր նսարալլայի սր-զին (164, 143—144), բազմակողմանի զարգացած մարդ էր։ Սովորել էր Այն Քուրայի լազարյան դպրոցում, տիրապետել ֆրանսերեն, իտա-լերեն ու թուրքերեն լեզուներին, սպա և ինքնաշարժությունը հմտացել էր արաբական դասական լեզվի ու գրականության ասպարեզում։ Հրա-պարակագրի իր նախաբայերը 1856 թ. նետելով Հասունի պոլսական

«Միրաութի» էջերում, քսան տարի անց նա Ա. Մարբաշի հետ Լոնդոնում հայազգի գործչին օգնել էր իր նույնանուն մյուս պարբերականը հրա-տարակելու գործում (116, 623)։ 1877 թ. Ֆրանսիայի կրթական նա-խարարությունում որպես թարգմանիչ աշխատելիս Գալլայը Փարիզում հունիսի 23-ից լույս էր բնծալում «ալ-Մադա» («Արձագանք») թերթը (169, հտ. 2, 253), երբ ծանոթացավ Խայր ալ-Գինի հետ, դարձավ նրա անձնական բարտուղարը և նրա հետ էլ տեղափոխվեց Պոլիս։

Մեծ վեղորի պաշտոնում Խայր ալ-Գինի առաջին գործերից մեկն էրավ Գալլայի խմբագրապետությունը լույս բնծալել «ալ-Մալամ» («Նազազություն») թերթը, որպեսզի նրա էջերում բացահայտի կայս-րության անտեսական, հասարակական ու բաղաբական կյանքը բարե-նորոգելու իր ծրագրերը և նպատակն առնց ազգային ու զավանական խտրության բուր սամանցիների սուլթանական զահի շուրջ համախմբ-մանը (156, հտ. 4, 222)։ Կրիմեական ու նրա հետևողությամբ Կոստովը «ալ-Մալամի» կարճակայացությունը բացատրել են այն բանով, որ փա-շան իր «բարենորոգչական նկատումներով» զուր չեկավ պալատական շրջաններին, «բախվեց նրանց բուռն դժմազրությունը» և 1879 թ. հե-ռացվեց պաշտոնից (116, 624; 113, 260)։ Իրականում, ինչպես վկայել է դի Քարրադին, Գալլայն ավելի շուտ թողեց խմբագրապետի, բան թե փաշան մեծ վեղորի աթոռը Հազականալիորեն նրան չէր կարող հարմու-րելի թուռնացի բարենորոգչականի Օսմանականությունը և որնուն ութներդը համարից հետո խմբագրությունը թողնելով ուն Արզալլա հալեպի, Պոլսից հեռացավ։ Փաշան էլ, զժողճ նոր խմբագրի օրոք թեթ-ի մակարդակից, զազաբեցրեց իր հովանավորությունն ու նպատը, ինչը և դարձավ պարբերականի հանգանակ պատճառը (169, հտ. 2, 193)։ Ավելայաներ, որ Գալլայի հետագա կյանքն ու ձակատագիրը ամենապերճախոս վկայությունն էին նրա հակասօսմանական էությունը Վիեննայում միառժամանակ դասախոսական աշխատանք կատարողց հետո, 1884 թ. նա Հալեպում հիմնադրեց մտավորականների մի պելումբ, որտեղ արաբական հայրենասիրական ոգով իր իլյուսթրների համար հե-տապեղդից, սակայն անցավ Պոլիս և Մունիք փաշայի կրաշխավորու-թյամբ դարձավ «մեղչի-ի մատերֆի» պաշտոնյա։ Սուլթանական բրա-նակալությունը բնագատող և պղտանական մտավորականության միջա-վայրում անստորագիր տարածված «Պահ և զոհանդան» («ալ-Արջ ուսու-հարալ») պոեմը պատճառ դարձավ, որ Գալլայը ձերբակալվի ու զցվի զնդան, որտեղ տարիներ անց մահանալու էր, ըստ Զեյդանի՝ 1899 թ. (156, հտ. 4, 222), իսկ ըստ Շելխուլի, Սարգսի հանրագիտա-

բանի և «Գալլիլի բերթողութան վրա անբուն զիշերներ» աշխատության հեղինակ Կոստակի Հոմասի 1892 թ. Ի միջի այլոց Սարգիսը նշել է, որ 151 տունից բազկացած «Գաճ և զոճանողանք» Փարիզում ապակետիպ հրատարակված է եղել զեռև 1864 թ. (159, 878; 164, 143):

Գծրատարար, սակայն, սովանյան իրականության մեջ Գալլիլի տիպի արար մտավորականները բացառություններ էին Այս կապակետությանը շտապներ շեշտել, որ մեզ համար առաջնային նշանակություն ունի այն իրողությունը, որ 1870-ական թթ. եզրփակական ներքաղաքական տացնայակի առաջացման, ավելի միջա կլիններ ասել՝ օրջեկտիվ իրադրությունը սուրյնկտիվորեն այլափոխելու և սրելու գործում իր ուշագրավ դերն է խաղացել հանգամանքների բերմամբ նեղոսի հովտում հասարակական կարծիքի վրա շատ մեծ ներգործություն ձեռք բերած սիրիական եզրփայտանու թերթիկները, շուրջ մեկ տասնյակ մասնագիտականների կողքին մոտ կես հարյուրյակի հասնող քրիստոնյա լրագրողների, գրողների ու մշակույթի խումբը: Սկսած այն հաստատուից, որ Կահիրեում և Ալեքսանդրիայում մասնների վրա հաշվվող եզրփայտանու-արարական թերթիկների կողքին վխտացող (1863—1879 թթ. ավելի բան քառասուն անուն) Ֆրանսերեն, իտալերեն և եզրփայտանու այլ լեզուներով պարբերականներին «ի հակակշիռ» 1871—1880 թթ. անպարզել իշած 21 արաբալեզու նոր թերթիկից 15-ը, բառրում առավել անկանխներև ու մանրակշիռները, համաձայն զր Քարթիի մոտ առկա տվյալների, հիմնադրվել ու խմբագրվել են սիրիացի (հիմնականում բելյուսիցի) գրողների կողմից:

Տասնամյակում Ալեքսանդրիային բաժնի հասնող ավելի քան մեկ տասնյակ պարբերականներն առանց բացառություն սիրիական էին: Նշանակում է, որ եզրփայտանու երկրորդ և անստրատեստեսական կյանքում առաջնային տեղ ունեցող նավահանգստային քաղաքում, որի արտաքին աշխարհի առաջ բաց դարբանի հանգամանքի հետ համեմատած Կահիրեին հազվիվ կիրառաց մի լուսատու էր, հասարակական-քաղաքական, սոցիալական ու մտավոր-մշակութային կյանքին շեշտ և ուղղություն տալու գործը եկվոր, հիմնականում քրիստոնյա մտավորականության մենանորձի էր վերածված: Այդ պարբերականների գլխավորներն էին և, Սարունդիի «այ-նահյա ալ-հուր» («Աղլառ մեղու») հանդեսը (1871), Սելիմ փաշա և Աբդո ալ-Համասի եղբայրների «ալեքսանդրյան հրապարակախոսության մայրը» համալրվող «այ-Քուուսը» ալ-շարք» («Արևելքի լուսատու») քաղաքական ու գրական շարժումները (1873), «Շուա ալ-քուուսը» («Լուսատուի ցուր») անստրատեստեսական օրա-

թերթը (1876) և «ալ-Խարանդարիա» («Ալեքսանդրիա») հասարակական շարժումները, բելյուսի Պատրիարքական դպրոցի և Այն Քուուսյի կղզեի նախկին դասատուներ Սելիմ (1849—1892) և Բշարա Քարա կղզայրների որպես արարական «քրազությունից դպրոց» հույակված «այ-Ահրամ» («Բուրգ») քաղաքական, գրական և անստրատեստեսական շարժումները (1876 թ. օգոստոս), որը շատով օրաթերթի էր վերածվելու, ինչպես նաև 1877 թվականից Ա. Խահկի լույս ընծայած «Մըսը ալ-Շալաթ» («Երիտասարդ եզրփայտ») քաղաքական շարժումներին ու «այ-Քիջարա» («Անսուր») օրաթերթը (169, հտ. 3, 48, 71—72 կն): Երկրորդ և երրորդ անգամ կահիրեում լույս ընծայված պարբերականներն էին շարքում սիրիականների ղեկավար եզրփայտանուներին՝ ավելի շատ քանահական էր, բան էր օրականան: Եվ իրոք, 3. Սահուի «Աբու Նադրա ալ-Քարա» («Կապույտ ապակով ակնոց կրող») երգիծաթերթի կողքին միևնույն 1877 թ. կարելի է հիշատակել Խահկի «Մըսը» («Եզրփայտ») և Անիս հուլիսի «Հակակետ ալ-ախրաթ» (Կուրբի հըր-«Եզրփայտ») և Անիս հուլիսի «Հակակետ ալ-ախրաթ» (Կուրբի հըր-«Եզրփայտ») քաղաքական շարժումները, իսկ 1879 թ.՝ Սելիմ Անհուրիի «Միբաթ ալ-շարք» («Արևելքի հայել») քաղաքական և գրական եռօրյան, արձանագրելով, նաև, որ «այ-վաթաթ» («Հայրենիք») քաղաքական շարժումները 1877 թ. որբան զլպատ Միխայիլ Աբդ ալ-Սեյիդին, նույնքան էլ սիրիացի Ռ. Օրբելյին էր պատկանում (169, հտ. 3, 9—12, 15—16, 18, 20):

Սիրիական, մասամբ նաև եզրփայտանու պարբերականների շուրջ հաճող եկվոր մտավորականության գործունեության թեկուզ պատկանում էր քանակականց ավելի օրականական կողմն է, որ արժանի է ուշառելի քանակականց հողի վրա առավել ուշագրավը հասարակադրություն: Իսկ օրականական հողի վրա առավել ուշագրավը հասարակական կարծիքի կազմավորումն է, անկանկատ: Բանն այն է, որ ինչպես Մ. Ալիի, այնպես էլ Աբրահամ-Հիլմիի և Մ. Սարիի իշխանության տարիներին եզրփայտանու հասարակական զանգվածը հիմնականում մնալով էր նեղ ստեղծագործող ներփակ խմբերի մի կույտ, որի ներսում զղեղությունն և համաձուլված նկրտումներն արտակարգորեն թույլ էին Շատ բանով միջնադարական մտայնության կապանքներում մասնող և տարածումով արժանի տեսակետ որպես հասարակական կարծիքը ներսում լճացած այդ զանգվածի խորքերում «այ-վաթաթ» պաշտոնները ձգվումն առաջացնելու համար իսկ պիտանի չէր, քանի որ, թո՛ղ իր պաշտոնականությունը, զանգվածն չէր էլ հասնում:

Պետք չէ կասկածել, որ արևմտամեթոդական, հիմնականում մոլ-սիսական-հրեա բանկիրների զարգելի մեքենայությունների ֆինանսա-

տնտեսական ուժեղանի մեջ ավելի ու ավելի կաշկանդվող խցով համա-
լիլը որշանալի մի պահի վերջը ի վերջո տեսավ իր (ավելի ճիշտն էր փո-
խարքալական իշխանութիան վերջին մնացուկների գլխին), նաև երկ-
րի միջաբազուցական ինքնուրույնության ճորձոնում փոթորկաբեր
ամպերի կուտակումը: Այդ պահից սկսած ավազախրումից չուրս գա-
լու իր ողորումներում նա Հասկանալիորեն ամենից շատ կարիք ուներ
ներքին Հասարակական կարծիքի անդորրություն և Տնարավորին շափ
շատ Հասարակական խմբերի իր շուրջ զանազանում: Իրավագիւ սո-
ցիալական առավելագույն լայնացած ու ամրապնդված Հնարանի օգ-
նությունը դիմառներ շարիքը, գոնե այն Հասցեներ նվազագույն շափերի:
Եվ ուրեմն խցովը չէր կարող չկանխազգալ, որ ազատ, ավելի շուտ
ինքնակուլով, իր միջավայրից բնօրնաւոր ուղղություն շտատցող ու շվե-
րանակվող մասուլը, որին մինչ այդ ինքնակալական նկատառումներով
չէր հանդուրժել բնավ, առավելագույն անցանկալի էր տվյալ պահին,
քանի որ այդ Հրապարակախոսությունը ստեղծված ծանր իրադրույնու-
նում անկասկած չէր սահմանափակվի լուսավորական «անմեղ» ստա-
շաղթարքների ոլորտով և անպայման ոտք կցներ Հասարակական-քա-
ղաքական խնդիրների խոտմահույց սպի:

Խցովի նկատառումները երբեք էլ անճիմն չէին: Եվ իրոք, եկվոր
մտավորականությունն իր ազատ-անպաշտոնական Հրապարակախո-
սությանը մակերեսով թե խորով տարզաթափ հուզելու, մինչև իսկ
փոթորիկու էր եզրիտական Հասարակական թմբած թվացող գանգ-
վածին: Սոցիալական, տնտեսական, Հասարակական, քաղաքական,
մշակութային, բարոյական, կենցաղային և այլ հարցերի վերաբերյալ
ճշդորդում-հաստատումներն ու դատում-մեկնաբանությունները, որոնք
սիրիական Հասարակության որոշակի մի հատվածի համար շուրջ քա-
տորդ դար էր, ինչ սովորական երևույթ էին զարձել, եզրիտական գանգ-
վածի համար արտասովոր, որոշ իմաստով ժամանակից առաջ ընկած
նորություն էին և բնականաբար օգնելու էին այն բանին, որ Հասարա-
կական տարրեր խմբեր հուզողի համարական Հասարակաց եզրեր գտնեն,
միմյանց մերձենան և ավելի ու ավելի կազմավորվի եզրիտական Հա-
սարակական կարծիքը:

Այդ Հասարակական կարծիքի հիմքը, սակայն, տարաբախտաբար
ու թե հասուն համոզմունքներն ու կայուն սկզբունքներն էին լինելու,
այլ հասուն զգացմունքներ և անցողիկ խոտվածներ: Իսկ դա՛ հիմնական-
նում այն պարզ պատճառով, որ Հասարակական այդ կարծիքը ոչ թե
եզրիտական Հասարակականության սոցիալական բնականոն զարգաց-

ման-հասունացման արդյունքն էր լինելու, այլ՝ զգալի մասամբ՝ սոցիա-
լական ուրիշ միջավայրից եկած և ոչ միշտ հուշարամիտ գործիչների
կողմից չեղմույթային-արագացված զարգացման-հասունացման հետե-
վանքը: Եվ հետո, ինչպես ամեն մի Հասարակական կարծիք, նոր-նոր
կազմավորվող եզրիտականներ ևս որոշակի ուղղություն էր ունենալու և
ուղղության հարցում սիրիական մտավորականությունը շատ էր ներ-
ուղղույթան լինելու թեկուզ այն պարզ պատճառով, որ տեղական դեռ փոք-
րաթիվ ու թուլակազմ մտավորականությունը տվյալ պահին ընդհանուր
առումներ իր մեջ ուժ չէր գտնում ստորակետով անգամ չեղվելու դեկա-
վար շրջանների պաշտոնական ուղղությունից: Իսկ անպաշտոնական
ամեն մի ուղղություն եզրիտական ժողովրդի գանգվածի համար հրա-
պուրելի ձգողականություն ուներ:

Այստեղ է, որ անուբանալի համարելով եզրիտական ազգային-
մշակութային Ջարթունքին սիրիական մտավորականության պատկանե-
լի, նույնիսկ որոշ ասպարեզներում որոշիչ ներդրումը, անհրաժեշտ է
ընդգծել եզրիտական Հասարակական կարծիքին 1870-ական տասնամ-
յակին երկուս ուղղություն կասկածելի, ազգային շահերին դեմընթաց
արահեստներ առաջադրելու գործում եկվորների զգալի մի հատվածի
խիտ ժխտական դերը:

Վերևում սիրիացիների հրապարակախոսությունը որպես ազատ-
անպաշտոնական բնութագրելիս հարկ էր, որ մի կարևոր վերապա-
հույն կատարելիք: Մեկը մյուսի նուկնց հրապարակ նետվող պար-
բերականներն ամենայն հավանականությամբ խցով համայնույն պար-
տազրվում էին: Իսկ պարտադրել կարող էին միայն ու միայն կամ
զեղու չէր ու ներգործուն Բ. Գուրը, կամ էլ Ֆրանսիական թե անգլիա-
կան գերհզորացած շրջանները: Ի՛նչ հիմամբ ենք այդ կենդանության
հակվում:

Առաջիկա ուշագրավ երևույթներից մեկն է լինելու այն, որ Արզույ
Համոզի գուլումը 1870-ական թթ. վերջին և հաջորդ տասնամյակի
սկզբներին Բելյուսի գերակշռաբար քրիստոնյա բուրժուականներին հար-
կազրելու է իրենց զրամազուլներով հանդերձ շարժվել գեպի նեղուսի
հովիտ, անխուսափելի ուղեկցությամբն իրենց զաղափարախոսների,
մանավանդ որ սուլթանի դատան վարչակարգը միջուղորտը մտավոր
ազատ գործունեության համար հեղձույցիչ էր դարձնելու: Սակայն 70-
ական տասնամյակի առաջին տարիներին արզուլհամոզյան ազդուկը
դեռ զրույթյուն չուներ: Ինչ խոսք, որ անկա էր եզրիտական անտարա-
անտեսական կյանքի անօրինակ աշխուժացումը և վերջինս շահութաբեր

Սկզբից ենթ անհրժեշտ է շեշտել, որ երկրում օտարերկրացիների նվազագույնը գերակայությունից ու թալանարար գործունեությունից խորապես զժգոհ էին եզրիպատական հասարակության ամենաբազմազան խավեր, սկսած ահալոր կեղծեման ենթարկվող ու սոսիալաբարձր ֆեյդալներից, ծանր հարկերի ներքո կրած և վարկատու-վաշխատունների կողմից զոգվող արհեստավորությունից ու մանր ու միջակ առևտրականությունից, կանոնավորաբար ուժեղի շատացող և ազգային խտրականություն ենթարկվող տեղաբնիկ ցածրաստիճան սպայությունից ու աստիճանավորությունից մինչև ազգային նորածնվող բյուրոկրատիան քաղաքներից տարրերը, որոնք սեփական երկրի տնտեսական կյանքում ու շուկայում ազատ ու անկաշկանդ զուլումյան իրավունքի համար էին մարտնչում, նոր կալվածատերերը, որոնք վերափոխություններ ու գործունեություն ասպարեզ, նաև իշխանություն իրենց բաժինն էին պահանջում, վերջապես խղիվն ու նրա շուրջ համախմբված ֆեոդալ-ազնվականները, որոնք իրենց քաղաքական ու ֆինանսատնտեսական մարտնչության էին կանխատեսում: Ինչ խոսք, որ իրադրություն պատկերներ, թեկուզ բազմաթիվ երեսներ բաց թողնելով, բավականին հաջող է սովել բնեւոր, գրելով. «Սովբ ֆեյդալների դոների առաջ էր: ...Շարիհամալարներ մեծ մասամբ խոսում էին մարտկաների լիզվով, դատավորները սարսափելի կաշտակներն էին, հողատերերը մինչև կոկորդները պարտքերի մեջ էին խրված և հողն իրենց վարկատուներին էին թողնում: Թուրքերի և շերբեզների օտար կաստան էր երկրին տիրողը» (47, 128):

Ներպատական հասարակության լայնագույն խավերում զժգոհների և ընդդիմադրական տրամադրությունները 1879 թ. սկզբներին գերաճել էին: Կրթերն էլ սովելի բորբորվեցին, երբ կառավարություն իրք խնայական նպատակներով որոշեց բանակից արձակել բնիկ եզրիպատացի, այլ խոսքով «էթնիկական պատկանելությունում ու ծագմամբ... որոշապես շրջագծված սոցիալական մի խմբի» (141, 69) պատկանող 2500 սպաների, որոնք, ի տարրերություն հրամկազմի ու տեղաբնիկ բարձրաստիճան սպաների, բանակում ծառայություն սկսել էին որպես զորակոչված ֆեյդալ շարքայիններ և սպայական ցածր կոչումներ ստացել էին 1860—1876 թթ. սուլթանական և եթովպական զինարարական ընթացքում: Կաթիֆ բնի Սելիմի առաջնորդությամբ փետրվարի 18-ին բողոքի դուրս եկած սպաների և նրանց թիկունք սովող զինվորների ու

քաղաքացիների խոսքից կառուցվել, խղիվը շեշտալ հայտարարեց հեռացումների հրամանը և մարտի 9-ին, պաշտոնազրկված Նուպար փաշայի փոխարեն, վարչապետ կարգեց իր ավագ որդուն՝ քանայթամյա գահաժառանգ Թաուֆիքին (107, 197):

Եվ սակայն այնքան, որքան վիշտն ու զր բլիները, նոր զահլիճում իրենց աթոռները պահպանելով, շարունակեցին կիրառել իրենց երկրների թալանարար քաղաքականությունը, բողոքի շարժումը ու միայն շինվածքով, այլև վերելք պահեց: Եարժումն իր գազաթնային-սին հասավ մարտի 28-ին, երբ վիշտը խղիվն պարտազրեց իր ֆինանսական ստրկացուցիչ պլանը: Բուռն կերպով բողոքում էին ոչ միայն ժողովրդական զանգվածները, ուլեման, աստիճանավորությունն ու սպաները, այլև նույնիսկ եզրիպատական «խորհրդարանի»՝ երկկյանների պատկերը, այլև ինչպիսի կոկորդներն Նախնականությունում էլ ծնունդ ժողովի անդամները: Հենց վերջիններս նախնականությամբ էլ ծնունդ ժողով 1879 թ. ապրիլի 2-ի «Ազգային հայտարար» («այ-Լահիա սուլթանիյա»):

Ներպատական «վաթանի» (ազգային) շարժման ծրագրային առաջին փաստաթուղթը հանդիսացող «Հայտարար» ստորագրեցին ոչ միայն վարչական Թաուֆիքի հրամանն անտեսելով իրեն լուծարքի ենթարկված շահաժարող երեկյանների ժողովի 75 անդամներից 60-ը, հիմնականում ինչ որ խոշոր ֆեոդալ-ազնվականներ ու միջակ կալվածատերեր, նաև նույն խոշոր ֆեոդալ-ազնվականներ ու միջակ կալվածատերեր, որոնք թվով գերական վերահամալսյաններ՝ օմդաներ ու շեյխեր Այն սուրազրեցին նաև 93 սպաներ (բնականաբար հիմնականում տեղաբնիկ—«վաթանի», սակայն և որոշ թվով եկվոր—«շերբեզ»), 72 ստաթիկ—«վաթանի», սակայն և որոշ թվով եկվոր—«շերբեզ»), մեծապետեր (մեծամասնությունում ֆեոդալ-ազնվականական ծագմամբ և միայն մասունների վրա հաշվվող ուսումնական պարզատոհմիկներ, որոնց լոկ բացառության կարգով էր թույլատրվում մուսր գործել պետական ծառայության ասպարեզի վերին ուղիները), 60 հոգևորականական ծառայության ասպարեզի վերին ուղիները, 60 հոգևորականական ծառայության մասնիկական մեծազգեցիկ ալիմ-շեյխեր, զերվիներ (զիլխալորարար մասնիկական մեծազգեցիկ ալիմ-շեյխեր, զերվիշական եզրայությունների առաջնորդներ և կաղիներ, սրանց կողմին նաև զյաթիների պատրիարքն ու հրանների ռարունապետը) և 42 քաղաքային կրեկիներ (ազնվատոհմիկ հարուստներ, վաճառականներ, քարանկ երեկյաններ (ազնվատոհմիկ հարուստներ, վաճառականներ, քաղաքների ազնվեցիկ առևտրականներ ու արհեստանոցների տերեր, նաև լրագրողներ և ազատ ասպարեզների մի բանի այլ ներկայացուցիչներ):

«Հայտարար» մասին խոսելիս Չեռնովսկայան իրավամբ է շեշտը դրել այն իրադրության վրա, որ նրանում «սահմանադրականության, խորհրդարանականության և արդարության գաղափարները զուգակց-

կուսակցություն», Գոյողրենի և Գուրբեր-Կիմ-Հեյֆեյցի մոտ՝ «Շրջր ալ-Վաթանի», սակայն առաջինի համար որպես «Հայրենական», իսկ վերջինների համար՝ «Հայրենիքի կուսակցություն», Սահփանյանցի մոտ՝ «Շրջր ալ-Վաթանի ալ-Նուրբ», սակայն որպես «Ազգային ազատ կուսակցություն» են, են (120, 183, 107, 194 և 200, 123, 473: 101, 325, 131, 91: 122, 32):

Մտորության աղբյուրը այն իրողության մեջ է, որ 1878 թ. օգոստոս ամսին «Էմբրոպական» առաջին (Նուպար փաշայի) դաշինքի կազմության հետ մի օրից մյուսը լայն տարածում գտավ մինչ այդ սակավազեպ «Շրջր ալ-Վաթան» զարմվածքը, սակայն ոչ թե որպես մերօրյա հասկացողությամբ «կուսակցություն» («Տայրենիքի կուսակցություն»), որն արարական հասարակական-բաղաբանական կյանքը զեռ շղիտիք, այլ որպես ազգային ըղձանքների (1878 թ. օգոստոսից հիմնականում ազգային-եզդպտական կառավարության ստեղծման) կուսակից-կողմնակիցներին տրվող հավաքական անվանում: «Վաթան — Հայրենիքի կուսակցիցներին» նկատու կամ համախմբումն» իմաստի այդ զարմվածքի ներքո տվյալ պահին հավաքականորեն ընկնում էին «Եզդպտուր եզդպտացի-ներին» յուզումնի ետևից բայոլղ և իրենք իրենց «վաթանի» զավանտղ տարաբան ու տարաբնույթ տարրեր, անկախ՝ իրենց ազգային ծագումից թե կրոնազավանական պատկանելությունից:

Իսկ այդ փաստի մեջ իրականում մի մեծ պարագորս էր թանձրված: Այնքան, որքան արարելնում «վաթան» բառը շարունակում էր պահպանել ծննդյան ու բնակության վայր» ավանդական իր իմաստը, ապա, ինչ խոսք, որ «վաթանի» իր մասնակցուն ուներ բուն իսկ «տեղաբնի-եզդպտացի» նշանակությունը, որը, սակայն, հետզհետե ավելի ու ավելի էր թաթախվում ազգային ծագման հասկացողություն մեջ, ստանում էին ոչ մերօրյա «ազգայնական-հայրենասեր» ընկալումը, ապա զուն «Հայրենիքի որդի ու սեր» նշանակությունը: Չմոռանանք, որ հենց 1870-ական թվականներին եզդպտական մտավորականությունը «վաթանի» սահմանման մեջ ներքնում էր նոր տարր՝ հայրենասերությունը, որը հանձնարարում էր ազգային կայր զերպարել կրոնականին և հավատքի ոչ պակաս աշխատել նաև ի փաստ հայրենի երկրին Ահա, օրինակ, թե այդ օրերին ի՞նչ էր գրում եզդպտական ճահաշալականների պարագլուխ ալ-Քաճաբուլի. «Այն ամենը, ինչ հավատացալին կատում է հավատքի իր եղբայրների հետ, փոխադարձ իրավունքներով կատակցում է նաև հայրենակիցներին, բանի որ նրանք միջև գոյություն ունի ազգային եղբայրություն, որ հավատքի եղբայրություն-

նից ավելի բարձր է ու կարևոր: Հայրենակիցներն ունեն բարոյական պարավորություն՝ համատեղ աշխատել հանուն հայրենի երկրի, հանուն նրա պատվի, փառքի ու հարստության» (228, 19):

Դասակարգային թե ազգային դիտակցություն մակարդակով իրենց շրջապատող եզդպտական միջավայրից անհամեմատ բարձր կանգնած և արբանակն ազգային-մշակութային Չարթուքն իրենց նպատակակետ և գործունեության ասպարեզ ընտրած բնյության արմատական նահագայականների համար, անշուշտ, իրենց իսկ հզուցած «Եզդպտուր եզդպտացիներին» յուզումնի ուներ համանեգիպական-ազգային ընդգիտում: Այլ խոսքով այն ուղղված էր որքան երկրի ամբողջ կյանքում եկվոր-Անճեղական զինվորականության՝ «շերքից փաշաների» ու նույնպես եկվոր-մահմեդական կալվածատեր ու աստիճանավոր արմավականության զերազմության և արեկյան-բրիտանյա (ոչ միայն լեանտական կամ արեկյան իշերիկական), այլև Նարմարեկյան եվրոպական ծագմամբ, այն է՝ իտալացի, հույն, մալթացի են) կոմպարզոր տևտարավաշխատուների հարաճող ճորություն ու ատտարատեսական կյանքին մենատիրելու նկատումների զեմ, նույնքան և ավելի եվրոպական դիվանատիրների սանձարձակ տոնճությունների և Ֆինանսատեսական թալանաբոր գործատուների անհակալիշտ տիրապետության զեմ:

Ինչքան էլ պարագորսային թվա, «վաթանի» շարժումը այդպիսի ընդգրկում տալու գործի առաջամարտի լինել տվյալ պահին հավակնում էին ծագմամբ եզդպտային-արաբ շերք երեք գործիչներ՝ աֆղան Ասելիջ Չեմալ ալ-Դին ալ-Աֆղանին, մովսիսական-հրեա Յակոբ Սահուն և հայազգի Ազիր Իսհակը: Ծրանց փոխկապակցված գործունեությունը պատկերելուց առաջ և պարզապես նրանց ստարելություն տիրանում էր հայազգի գեղե հիմնական այն երեք միջավայրերի վրա, որոնք համախմբումն ու գործուն մասնակցությունը սկզբնաղբյուրների «Շրջր ալ-Վաթան» ճակատին՝ կարող էր իր իսկական իմաստը սուլ «Եզդպտուր եզդպտացիներին» յուզումնի:

Առաջինը Ֆեռոպալ-աղնվականության միջավայրն էր, որի գագաթնակետին կանգնած էր խզիվ Իսմայիլը: Հենց այս միջավայրի հետ էլ շատ բանով էր պայանակալված «վաթանի» շարժման պարագլուր Բանն այն է, որ ինչպես խզիվի ստեճը, այնպես էլ նրա հենարան այն Բուհեճը, որոնք հիմնադիրները Մ. Ալիի կողմից Ֆեռոպալ ու աղնվատոհմները, որոնք հիմնադիրները Մ. Ալիի կողմից Ֆեռոպալ ու աղնվատ, կան էին գարմված և որոնք մենատիրում էին եզդպտական պետության, այդ թվում բանակին, եզդպտական-արաբական ծագում շունեին: Այլ

(երկրի) երևելի մարդկանց և իշխանների թվում» (110, 113): Տարբեր վկայությունների վրա հենվելով Ն. Իվանովը, իր հերթին, հաստատել է, որ «Պուտուտ ապրող, բրիտանյանների սո՛ւհաշա թշնամին համարվող և իրեն գահակալման իրավունքից զրկած Իսմայիլին առող Արդ ալ-Հալիմ փաշան էր կանգնած սպայական զավազրության ակունքների մոտ» և որ «բրտատ իշխանը» կանխօրոք եղիպտական միջավայրում իր համար կարևոր հենարան ստեղծելով Հանձին սմասոններին (այլ խոսքով մալ-Աֆղանի) հիմնադրած «Ազգային օթյակին»,—Ե. Ն.) հարած ու նրանց միջոցով իր հետ կապ պահպանող սպայական փոքրամասնության՝ «1879 թ. ապահովվեց Բ. Գուան աշակցությունը և պայքար շրջ-թայազեղծեց իր կորսված ազգային զեն, երազելով գրավել Եղիպտոսի գահը» (107, 196): Բնականաբար Արդ ալ-Հալիմը չէր կարող Բ. Գուան նկատմամբ հանձն շտանել մի պարտամուրհակ—եղիպտական խղիվոթյունը շեղել Օսմանյան կայսրությունից առավելագույն չափով ինքնուրույնացնելու իսմայիլական քաղաքականությունից և, թեև ուղ առանց համահարթելու արարական վիլայիթների շրջանակներում, հնարավորին չափ վերենթարկել սուլթանի զեբիշխանությանը:

Այս ամենից բխում է մի տարրական եզրակացություն. այն, որ 1879 թ. ապրիլին ստորագրելով «Ազգային հայտագիրը» և հարելով «հայրենիքի կուսակիցների» հիմքի վրա խզիվ Իսմայիլի շուրջ ստեղծված «վաթանի» միասնական ճակատին, որ և նույն է (որոշ վերապահումներով) «վաթանի» նորաստեղծվող կուսակցության, վերջինիս «զինվորական թևը» թեև ունի և փոքրամասնական, այլ զեղկավար դիրքերում կանգնած մեծազգեցիկ բարուդիականների ճանապարհով փաստորեն հետապնդում էր «վաթանի» ճամբարի առաջադրանքներին ու նկրտումներին հակընդդեմ և բառ էլօթյան հակազգային կուս, որի զբաղանակները գտնվում էին սուլթանի քաղաքական գործակնատրոնի ձեռքում:

Մի ամբողջ շարք պատմաբանների կարծիքով «զինվորական գավազրություն իսկական ղեկավարը հանդիսացող ալ-Բարուզիի հետ կապերի հաստատվում» է, որ 1879 թ. երկրորդ կեսին Օրարին «իրեն հաստիկ էներգիայով օտարերկրացիների դեմ պայքարի մեջ մտավ» (107, 201), այլ խոսքով գարձավ ոչ միայն սպայական կազմակերպության, ուրեմն և «վաթանի» կուսակցության «զինվորական թևի» պարագույնը, այլ և ընդհանրապես «վաթանի» շարժման առավել պրոտեցիվ ղեկավարը: Ալ-Բարուզիի կողմից Օրարիի առաջ մղման հարցում անկասկած իր դերն ունեցած պետք է լինի այն իրողությունը, որ ի տար-

բերություն «Երբեք» ալ-Ռուբիի, նա տեղաբնիկ էր և ուրեմն ավելի հարմար դեմ էր «վաթանի» լինել հավանոր շարժումը գլխավորելու: Եվ սակայն նույնքան անկասկածելի պետի համարել, որ նա, որպես խղիվական տոհմի փեսա, իր սուլթանախորության և հետադիմականության զոհ գնացած Աբրահ-Հիլմի 1-ի ավագ որդու՝ ալ-Համի փաշայի մեկ հատիկ աղբա ամուսինը, ալ-Բարուզիի կողմից առաջ է բաշվել որպես սուլթանական-խալիֆական խարդավանների թև հալիվական հավակնությունների կենսագործման հարմարագույն գործի:

Եվ սակայն Օրարին այստեղ մեղ համար նաև հարմարագույն թեկնածուն է «վաթանի» սպաների սցիտուական զինապատկերը պարզելու ատանկետից:

Ահմեդ Օրարի ալ-Մրարի ալ-Հուսեյնի (1839—1911), մամանականից վկայությամբ, իր բարտաբերի՝ «բարձր հասակի (մեկ մետր և ութսուն սանտիմետր), դեմքի ներքաշնակ գծերի, հաստ շրթների ու թավ հոնքերի» շնորհիվ (110, 123) Մ. Սաիդ փաշայի օրոք բանակում արագ առաջ էր ընթացել և բան տարեկանին փոխ-գեղապետի աստիճանով և կաշմական տիրուցավ գարձել էր փոխարքայի համահարգ, սակայն Իսմայիլի օրոք անուշադրության էր մատնվել ու ավելի բան և՛ տասնամյակ սպասելուց հետո երեսուներկու տարեկանին տրամանցել էր գեղապետի աստիճանին ու մերայայի տիրուցանի ի միջև այլոց, կիթ մեթոնի էն բուրժուական հեղինակների Օրարիին «հավանոտ ապաշուրհ» և «շատասխոս ու արեա իսմանիկ» ներկայացնելու ջանքերը (107, 201), ապա ոչ միայն Ռոտշուեյնի հետ կարող ենք հաստատել, որ Ահմեդ իսկ իր համազգեստի ներքո իրականում մեմում էր «հասարակ ու կիսազբազեա մի ֆելլահ» (127, 89), այլ և Իվանովի հետ կրկնել, որ նա «ազմական պրակտիկ փորձ ու զենվորական հասուն կրթություն չուներ» (107, 201):

Լուցիկն օրաբիական իբր թև «ֆելլահների շարքից» բարձրացած սպաներին «ազգային զենուկրատական տարրեր» որակելով ու նրանց զորական «ազնվականական փաշաներին» հակադրելով, փաստորեն ցանկացել է հուշել բանակի ներսում հակամարտության ինչպես ազգային, այնպես էլ սցիտուական ներքնածալը ունենալը, մասնավորապես որ այլուր ոչ միայն շեշտել է՝ «իրականում էլ նա (Օրարին—Ե. Ն.) Ստորին Եգիպտոսի Հարիա-Ռուզան գյուղից ֆելլահի որդի էր», այլ և սկսել նստեսի նման վկայել է, որ ամիսներով ուժնիկ շատացող սպաների «ընտանիքները սովմարվում էին» (120, 144 և 175—176):

Միջույն Օրարի բնի «Ֆելլաճուսյան» վերաբերյալ պնդումը, որը հանդիպում է ոչ միայն Լուցիու մոտ (տե՛ս 101, 325), հինգադարձ է նա, միջև հողասեփականատեր և բարեկեցիկ գյուղացու, իր գյուղի շինի ար-բայով նշանակված մարդու, այլ խոսքով օմդայն որդի, հորից Շարքիչյա նահանգում ժառանգած 8 ֆեդդան (շուրջ 3,5 հեկտար) հողը բանակում ժառայելիս իր «խնայողությունների» օգնությամբ և բարյալվող համադրողացիների հողատերերին հաշվին հասցրել էր 570 ֆեդդանի (240 հեկտար) և փաստորեն վերածվել էր խոշոր կալվածատիրոջ (110, 32): Արձանագրենք, որ միջին հաշվով 50 և ավելի ֆեդդանի հողասեփականատիրություն ունեցողները Սգիպտոսում մաս էին կազմում կալվածատերերի դասակարգին և հողասեփականատեր եգիպտացիների 1, 55 տոկոսը կազմելով՝ տիրում էին մշակելի հողային ֆունդի 43, 8 տոկոսին (137, 34): Կիրբեգն իրավամբ է Օրարիի սոցիալական դեմքը բնութագրել որպես «շահագործող անտեսառեր գյուղացու՝ կուլակի, որ ողորն է աստիճանաբար դառնալ ու դարձել էլ է կալվածատեր» (110, 32):

Օրարիի ախյի «Ֆելլաճուսներ» էին նաև բնդհատակյա կազմակերպության անդամակցող թև ոչ եգիպտացի արար մյուս «սովահարյալ» սպաները, որոնք, բոտ 2ևնունվակայի, «իրենց նյութական դրուսյամբ կարող էին լրիվ առնչվել ազգայնակուսյան ապահովված խավին» (141, 69), բոտ Բ. Ներսեսովի, սոցիալական անսակետից համարյա զիտովին կապված էին գյուղական մանրկալվածատիրական վերնախավի հետ (122, 33) և որոնց մասին Ա. Գուդոբինն իրավամբ գրել է. «Նրանք դուրս էին եկել նոր կալվածատերերի, հարուստ գյուղացիների շարքերից» (123, 473):

Այստեղ մատնանշենք ուշագրություն արժանի մի պտրագ. XIX դարի վերջին քառորդի սկզբներին Սգիպտոսում ետրածնվող բուրժուազիան սոսկ պայմանականորեն կարող էր «եգիպտական» համարվել: Այլառեղակ իրողություն էր այն, որ երկրի քաղաքարնակ ազգարնակչության կազմում կապիտալիստական հարաբերությունների կրողները համարյա զիտովին օտարերկրացիներ էին, իսկ դրանց միախառնված եգիպտացի-արար կամ եգիպտականացած-եկվոր (մասնեղական) տարբերը մասնների վրտ էին հաշվվում: Իրար էլ, այսպես ասած, եգիպտական «բուրժուազիան» ներմուծում-արտածումները, բանկային գործը, շինարարությունը, անետուրն ու նշգնիմ արդյունաբերությունը իրենց ձևորենում ամփոփած արևմտակիրողացիներն ու ոչ եգիպտական (հա-

բավային և արևելյան միջերկրականյան) ծագմամբ կոմպրադորներն էին կազմում:

Կապիտալիստական հարաբերությունների բուն իսկ եգիպտական կրողները՝ «կիսարբուժուս» (պարզապես գյուղացիության շահագործման ֆեոդալական և կիսաֆեոդալական դեռ գերակշիռ եղանակներին կապիտալիստական եղանակներ խառնող) հողատերերի շարքում օտարերկրացիների համեմատությամբ բացարձակ թվաշատը խոխվական սոհմի ներկայացուցիչները, մեծամասնությամբ եկվոր-մասնեղական խոշոր ֆեոդալները և արարական ծագմամբ միջևի հողասեփականատերերն էին: Հենց վերջիններս էլ, անկողմ քայքայվող հայրենակից ֆելլաճուսների հողակտորների հաշվին, գյուղացիության հարկադրական, ավելի հաճախ կուրբաշ-մարակի համոզիչ ուժով ապահովվող աշխատանքի հարցում աշակերտելով սեղական խոշոր ֆեոդալ-կալվածատերերին, շահագործման կապիտալիստական եղանակների հարցում էլ աշակերտում էին օտարերկրացի կալվածատերերին: Նրանք, այդ թվում և առաջին հերթին իրենց հրամանատարման հանձնված համազգեստավոր ֆելլաճուսների տարապարհակ բրտիները հարուստցման իրենց ետսդրակն ծառայեցնող «Ֆելլաճուս» սպաները, Լուցիու «ազգայնից» դեմոկրատիական տարբերը՝ բնութագրի հետ կարող էին առնչվել միայն այնքան, որքան հանուն գոյապահպանման ու պարարտացման-ամրապնդման իրենց պայքարում պիտի բխավելին իրենց հզոր մրցակիցների ետու գնդերը՝ ինչպես սեղացի «ակամա բուրժուս» ֆեոդալ-կալվածատերերի, այնպես էլ հատկապես օտարերկրացի «հարկադրարար կիսաֆեոդալ» խոշոր կալվածատերերի հետ:

«Ֆելլաճուս» սպաները «ազգային դեմոկրատական տարբեր» բնութագրի, այլ խոսքով «բուրժուական» միջուրտրի հետ կարող էին աղբյուրվել նաև խոշոր քաղաքների շրջանակներում: Այնտեղ, եկրոպական անբուրժուանների զաղութարարական նկրտումների և եկրոպական անետուրական մոնոպոլիստական դերհզոր ընկերությունների ձևուման պայմաններում գործող եգիպտական խոշոր անետրականությունը իր հոգեվորքը դեռ դարակկրբից մի կերպ շարունակում էր ոչ միայն տրնետական, այլև ներքաղաքական թև արտաքին-քաղաքական ընդհանուր ամամբ անբարենպաստ պայմաններում: Այդ պայմանների, նաև իր ֆինանսատեստեսական գործելակերպի միջնաշարականության ու պետական հովանավորման փշրանքների իսկ անդուության հետևանքով անխուսափելիորեն անկման դատապարտված այդ անետրականության, ինչպես և արհեստավորության համար հողեվարբը շարունակելու գրու-

ի միջի այլոց, սպայութեան շրջանում «ճգիպտոսը եղիպտացիներին» լուզուցի որդեգրումը կապված էր ակնբախ մի պարագործի հետ: Այդ դասի «հակաթուրքութիւնը» (եկվոր թուրքախոս տարրերի՝ բուն օսմանցի թուրքերի հետ նաև օսմանականացած չերթեղների, այբանա-ցիների, քրդերի ու մլուսների նկատմամբ թշնամանքը) չէր խանգարում համարժեքութեան թե շահախնդիր Օսմանականութեան աշխուժութեանը, սուլթանականութեան նկատմամբ առնվազն ցուցադրական համատար-մութեանը այն մարդկանց շրջանում, ովքեր մաս էին կազմում սուլթա-նապաշտ փորձաժամանակության: Բանը միայն սուլթան-խալիֆի հանդիպ-րարեկաշտ մասնեղականութեանց թելադրվող խոնարհութիւնը չէր, ոչ էլ՝ տեղական «թուրքերի» ամբապինդ և եկվոր գլխուր-ֆրանքների ամբապինդը՝ գերակայութեան դեմ ընդդիմադրական նկրտումների հա-ջողութեան համար Պոլսից ակնկալվող թևարկութեան կենսականութիւնը: Կար և ավելի անմիջական-աւսօրեական մի հանգամանք, որը նեղ-դասային կամ նեղ-արհեստակցական շահերին էր զոդվում. անազնա-կան բնական սպայութեանցի միջոցա-փաշալուստեան կամ ազնվական սպայութեան կարելի էր անցնել միայն ու միայն սուլթանի համամատ-թեամբ (54, 17, 212, 129):

